

ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ
2019



ՀՈ. ՏՆԻ


ՀԱՅԿԱՅԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՄԱՆԻՐ
ԱՐԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՅՐԻ ԱԹՈՒՄՅԱՆ ՄԻՔԻՅԵԱՆ ԷԶԵՐԻԱՇԻՆԻ

ԳԵԿԿԵՄԵԼԵՐ

2019


II. ԷԶԵՐԻԱՇԻՆԻ



ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական

Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ **Տ. Անդրեաս վրդ. Եզեկեան**


Խմբագիրներ՝ **Արփինէ Զանթիկեան,
Լուսինէ Վարդանեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Սրբագրիչ՝ **Նարինէ Սարգսեան**

Խմբագրական խորհուրդ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրեաս վրդ. Եզեկեան,
Ազատ Բօգոյեան,
Գեորգ Տէր-Վարդանեան,
Վարդան Դերիկեան,
Գոհար Աւագեան**





“Etchmiadzin”

Theological and Armenological Journal

Editorial staff

- Editor-in-Chief **Gevorg Madoyan**
Deputy Editor-in-Chief **Archimandrite Andreas Yezekyan**
Editors **Arpine Chantikyan,**
Lusine Vardanyan
Technical editor **Gor Grigoryan**
Corrector **Narine Sargsyan**
- Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,**
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Azat Bozoyan,
Gevorg Ter-Vardanyan,
Vardan Devrikyan,
Gohar Avagyan




«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав

- Главный редактор **Геворг Мадоян**
Заместитель главного редактора **Архимандрит Андреас Езекиан**
Редакторы **Арпине Чантикян,**
Лусине Варданиян
Технический редактор **Гор Григорян**
Корректор **Наринэ Саргсян**
- Редакционный совет **Архиепископ Езник Петросян,**
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекиан,
Азат Бозоян,
Геворг Тер-Варданиян,
Вардан Деврикян,
Гоар Авакян

ՀԱՅՐԱՊԱԵՏԱԿԱՆ
ԿՈՆԴԱԿԱՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ**

(29 նոյեմբերի, 2019 թ.)

Սիրելիներ,

Ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում այս գիտաժողովի մասնակիցներին, որ համախմբվել եք երախտիքի տուրք մատուցելու մեծանուն գրող, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին՝ մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակին, նրա ծննդյան 100-ամյակի առիթով:

Հոգեւոյս Սիլվա Կապուտիկյանը մեր նոր գրականության մեջ կարեւոր ավանդ ու ժառանգություն է թողել, որին մեր ժողովուրդը լավ ծանոթ է ինչպես հայրենիքում, այնպես եւ սփյուռքում: Ստեղծագործական առաջին քայլերից ի վեր նա արժանիորեն զգաց եւ վայելեց մեր ժողովրդի սերն ու գնահատանքը, քանզի իր աստվածատուր տաղանդը, բեղուն գրիչը ողջ նվիրումով ծառայեցրեց հարազատ ժողովրդին, նրա իղձերի արտահայտմանը, նրա իդեալներին ու արդար դատին: Նրա ստեղծագործությունը՝ արձակ, թե բանաստեղծություն, շնորհալի խոսքով գովքն է հայրենիքի, վերհուշը մեր պատմության, նրա սլացքների ու վշտերի եւ ապագայի հանդեպ լուսավոր հավատի: Արդարեւ, նրա ստեղծագործությունը պահպան զինվորի պես հսկում է հազարագանձ մեր լեզվի մաքրությանը, մեր ժողովրդի զավակաց սրտերում հայրենյաց սիրուն, որպեսզի ազգս հայոց միավորված լինի իր սրբազան, աստվածապարգեւ հայրենիքով եւ միշտ հարազատ իր ինքնությանը՝ կերտի իր կյանքը:

Հայրենակենտրոն ուղղվածության հետ բարձր արժեք ունեն տաղանդաշատ բանաստեղծուհու խոհական եւ քնարական ստեղծագործու-

թյունները, որոնք անձնական ապրումներից ու մտորումներից վերածվում են համամարդկային զգացումի: Այդ համընդհանուր ընդգրկումի շնորհիվ նրա գրական գործերը հարազատ են նաեւ այլազգի ընթերցողներին եւ թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

Իր բեղուն գրչով, իր գործունեությամբ, նաեւ շրջագայություններով հայկական գաղթօջախներ, Սիլվա Կապուտիկյանը նպաստեց աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականությանը, հայրենիքի եւ սփյուռքի կապերի ամրապնդմանը: Նա առանց վարանելու մասնակցեց Արցախի ազատագրման շարժմանը՝ իր ելույթներով ու հրապարակախոսություններով ջանքեր բերելով մեր ժողովրդի զավակաց իրավունքների պաշտպանությանը: Նա իր ուժերը նվիրեց նաեւ մեր նորանկախ պետականության ամրապնդմանը եւ մեր ժողովրդի առջեւ լեռնացած դժվարությունների հաղթահարմանը:


Այսօր առանձնակի զգացումներով ենք հիշում նաեւ, թե որքան ջերմությամբ էր Սիլվա Կապուտիկյանը կապված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, մեր Սուրբ Եկեղեցուն: Հիշում ենք գրական գործիչների ու մտավորականների հետ նրա այցերը երջանկահիշատակ Վազգեն Ա. Հայրապետին, ինչը խորապես արտահայտում էր մեր Եկեղեցու դարավոր առաքելության կարեւորումը մեր ժողովրդի կյանքում: Քաղցրությամբ ենք հիշում նաեւ, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծանուն բանաստեղծուհուն շնորհեցինք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանը՝ գնահատելով մեր լեզվի, մեր գրականության աննկուն ու նվիրյալ մշակի երախտիքն ու վաստակը:

Սիրելիներ, Սիլվա Կապուտիկյանի 100-ամյակը նշելով մեր ժողովուրդը արժեւորում է նրա կյանքն ու ստեղծագործությունը, անդրադարձ կատարում իր պատմության որոշակի շրջանին, հաստատում այն արժեքները, որոնցով ուզում է ապրել ու դրանք փոխանցել սերնդե սերունդ: Մենք հավատում ենք, որ Սիլվա Կապուտիկյանի գործերը այսօր եւ ապագայում ներշնչման աղբյուր են լինելու մեր շատ զավակների համար, ապրեցնելով ստեղծագործելու ջիղը մեր կյանքում եւ վառ պահելով մեր ժողովրդի իղձերն ու տեսիլքները:

Մեր գնահատանքն ենք բերում այս գիտաժողովի կազմակերպիչներին եւ վերստին Մեր բարեմաղթանքներն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում ձեզ բոլորիդ:

Թող մեր ժողովրդի սրտում մշտավառ մնա Սիլվա Կապուտիկյանի եւ ազգիս մեծանուն զավակների հիշատակը՝ նրանց պատգամներով եւ օրինակով ապրելու առ Աստված հավատքով, առ հայրենին աննվազ սիրով, պայծառ գալիքի հույսերով: Եւ թող Ամենակարողն Աստված Իր Սուրբ Աջի եւ շնորհների ներքո խաղաղության մեջ պահպանի մեր Հայրենիքը եւ օրհնի ու զորակից լինի աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ իրագործելու մեր ազգային նվիրական, դարավոր իղձերը:

Թող Փրկիչ մեր Տիրոջ, Հիսուս Քրիստոսի սերն ու ողորմությունը լինեն մեզ հետ եւ բոլորի՝ այսօր եւ միշտ, ամեն:





Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐՊԱՊԵՏԻ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 1 դեկտեմբերի, 2019 թ.)

Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Գոհունակ սրտով ողջունում ենք Կոմիտաս վարդապետի 150-ամյակի առիթով կազմակերպված այս համերգի մասնակիցներիդ: Մեր երաժշտության մեծ երախտավորի հոբելյանը այս տարվա մեջ նշվեց տարբեր միջոցառումներով, եւ այսօր մեկ անգամ եւս համախմբվել ենք մեծարելու մեր ժողովրդի երախտարժան զավակին, ներշնչվելու նրա ստեղծագործություններով, որոնք գրավում եւ հուզում են ճշմարիտ հայկական մեղեդայնությամբ ու բարձր արվեստով:

Մեր ժողովրդի եւ հայրենի ժառանգության նկատմամբ անհուն սիրով ու նախանձախնդրությամբ Կոմիտաս վարդապետը նվիրվեց մեր հոգեւոր եւ ժողովրդական երգի հավաքման ու մշակման առաքելությանը, որի իրագործումը հայտնություն եղավ ոչ միայն հայ իրականության մեջ, այլեւ ժամանակի համաշխարհային մշակույթի անդաստանում: Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում ուսումնառության տարիներից արդեն նա կարեւորեց հայոց հոգեւոր եւ ազգային երաժշտության անաղարտ պահպանությունն ու զարգացումը եւ կուսակրոն քահանայության ուխտը ստանձնելիս՝ ստացավ 7-րդ դարի երախտարժան Հայրապետի՝ շարականագիր ու բանաստեղծ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի մեծարելի անունը: Մեր Եկեղեցու հովանու ներքո հայրենի ավանդներով սնված Կոմիտաս վարդապետը, արդարեւ, եղավ գանձապահ մեր ժողովրդի երաժշտական արժեքների: Նա վերհանեց ու ներկայացրեց հայ երգի հնամենի ակունքները եւ մեր ժողովրդին վերադարձրեց սեփական երգարվեստի անխառն ու անկրկնելի բույրն ու երանգը եւ դասական գեղեցկությունն ու բարձր արժեքը: Նման տարողունակ, մանրակրկիտ ու նրբաճաշակ գործ կատարելու համար բավարար չէին երաժշտական մեծ կարողությունները, տաղանդը, որ մանուկ հասակից դրսևորվել էր նրա մեջ, լավագույն կրթությունը, որ նա կատարելագործել էր Եւրոպայում, այլեւ պետք էր նվիրյալ սիրտ՝ զգալու հարազատ ժողովրդի հոգին եւ ունենալու նրա առաջընթացի մեծ ու պայծառ տեսիլքը:

Այս գիտակցությունը ու նվիրումով էր Կոմիտաս վարդապետը ստեղծագործում, դասավանդում, հիմնում երգչախմբեր եւ հայ երաժշտությունը քարոզում տարբեր երկրների բեմահարթակներից՝ հնչեցնելով այն իր բարձրարվեստ մշակումներով, խմբավարությամբ եւ իր անզուգական կատարմամբ: Հոգեւոր երաժշտության հանդեպ խորին ականածանքով ու հիացումով՝ երանաշնորհ վարդապետը երկնապարգեւ իր տաղանդով ստեղծեց նաեւ երգեր ու մեղեդիներ, նոր մշակումով ներկայացրեց Սուրբ Պատարագի երգեցողությունը, որը հիասքանչ մեղեդայնությամբ պարուրում է հավատացելոց ներաշխարհը, առաջնորդում հաղորդվելու Աստծո հետ, զորանալու Քրիստոսով եւ Նրա պարգեւած փրկության հույսով:

Մեր նախնյաց սուրբ հավատքով ու ոգով, հայրենիքի բույր ու գույնով ներծծված իր ստեղծագործությամբ եւ նախանձախնդիր ու նրբաճաշակ երաժշտի իր բարձր արվեստով Կոմիտաս վարդապետը բերեց նաեւ հայկական երգարվեստի եւ մեր ողջ մշակույթի հանդեպ խնամքով վերաբերմունքի պահանջ: Մեր ազգային ժառանգության պահպանումն ու զարգացումը, առաջադիմության, կատարելագործման ձգտումն ու պահանջը մշտապես պիտի լինեն ատաղձը ազգային մեր հավաքական մտածողության եւ ուղեկիցը մեր կրթության ու մեր սերունդների, որպեսզի մեր ինքնության ամուր գիտակցությամբ շենացնենք մեր հայրենիքն ու ազգային կյանքը:

Հոգու բերկրանքով, սիրելիներ, այսօր Մեր բարձր գնահատանքն ենք բերում Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակի առիթով թողարկված նամականիշի նախաձեռնողներին՝ Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություններին, Հայփոստին եւ Կոմիտասի թանգարան-ինստիտուտին, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ կատարեցին նամականիշի մարման եւ պաշտոնական ներկայացման արարողությունը: Մեր բարձր գնահատանքն ենք բերում նաեւ հոբելանական այս հանդիսության կազմակերպիչներին, Հայրապետական Մեր սերը, օրհնությունն ու բարեմաղթանքները՝ շնորհալի բոլոր մասնակիցներին:

Աղոթում ենք, որ Տերը խաղաղ պահի մեր հայրենիքն ու ժողովրդին եւ օրհնի մեր ջանքերը՝ զորացնելու մեր երկիրը, ծաղկուն պահելու մեր մշակույթը եւ իրականություն դարձնելու ազգային զարթոնքի մեր նպատակները:

Թող Բարերար Աստված խաղաղ պահի աշխարհը, եւ թող մեր Տիրոջ շնորհները լինեն մեր ժողովրդի հետ եւ բոլորի, այսօր եւ միշտ. ամեն:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱՐԵՓԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

(5 դեկտեմբերի, 2019 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայաստանի գրողների միության 85-ամյակին նվիրված տոնական հանդիսության մասնակիցներին:

Հսկայական է գրականության դերը հասարակական եւ ազգային մեր կյանքում: Իբրեւ խոսքի մշակույթ՝ այն մտածողություն է կերտում, ձեւավորում հայացք կյանքի եւ աշխարհի նկատմամբ: Մեր գրականությունը դարեր շարունակ արտացոլել է հայ ժողովրդի կյանքն ու ձգտումները, հաղթանակներն ու տառապանքները, հաճախ նաեւ՝ որոնումներն ու վայրիվերումները: Այն կրթել է մեր ժողովրդի հոգին ու միտքը, եղել նրա ինքնության նախանձախնդիր պահպանը, ներգործուն ուժակալություն միավորել աշխարհասփյուռ մեր ժողովրդին ազատ ու անկախ հայրենիքի, հայոց բարօր կյանքի տեսլականի շուրջ: Գրականությունը յուրօրինակ դարբնոց է. գրողն իր անդուլ աշխատանքով արծարծում է ներկայի իրողությունները, կռում ազգի ամուր եւ անխզելի կապը անցյալի եւ ապագայի հետ, անշնչելիորեն դրվագում նրա արժեքները, նշմարում եւ հավերժացնում հերոսականն ու անանցը: Արդարեւ, մարդկային կյանքը միշտ կարիքն ունի անհրաժեշտ խոսքի՝ բարի խորհրդի, ազնիվ զգացումի, արդար գնահատման, քաջալերության, կարիքն ունի հույսի, հավատի, առ Աստված ապավինության, որպեսզի ընթանա դեպի ապահով, խաղաղ, երջանիկ ապագա:

Մեր ժամանակներում, երբ աշխարհում տարատեսակ համահարթեցման գործընթացների հետեւանքով խեղաթյուրվում են արժեքները, նահանջ ապրում հոգեւորն ու ազգայինը, առավել կարեւորվում է նաեւ գրականության դերն ու առաքելությունը՝ որպես մարդկային բարձր արժեքներ կրթելու, աշխարհայացք եւ ինքնություն ձեւավորելու միջոց: Հայ գրականությունը կոչված է նաեւ ազգային միասնության ամրապնդմանը:

Այս առումով չափազանց մեծ նշանակություն ունի սփյուռքի եւ սփյուռքահայ գրողների հետ համագործակցությունը, սփյուռքահայությունը հուզող խնդիրների արտացոլումը արդի գրականության մեջ:

Անգնահատելի է Գրողների միության դերը՝ համախմբելու գրական մշակներին, անդրադառնալու ազգային գրականության զարգացման հեռանկարներին, ճշմարիտ գնահատականը տալու ժամանակի բերած հարցերին, խրախուսելու գրական ասպարեզում առաջին քայլերը կատարողներին: Այսօր, սիրելիներ, ձերն է պատասխանատվությունը՝ միության տասնամյակների ավանդներին հավատարիմ՝ մեր գրականությունն ու մշակույթը հարազատ պահելու իր ճշմարիտ նպատակին, հարստացնելու արժեքավոր գրական գործերով, որպեսզի դրանք շարունակեն ուղենիշ լինել մեր հայրենիքի եւ ազգային կյանքի զորացման մարտահրավերներում:

Այս ուրախալի առիթով Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Գրողների միության նախագահին, վարչությանը, միության անդամներին՝ իրենց ներդրած ջանքերի, հայ գրականության մեջ բարի ավանդի համար: Աղոթքով ենք հիշում միության հանգուցյալ մեծանուն անդամներին եւ մեր ժողովրդին մատուցած նրանց նվիրյալ ծառայությունը: Գրական ասպարեզի բոլոր նվիրյալներիդ մաղթում ենք ստեղծագործական նոր ներշնչանքներ եւ ձեռքբերումներ՝ ի շահ մեր մշակույթի եւ ազգային կյանքի զորացման ու հարստացման:

Հայցում ենք Երկնավորից, որ Աստծո ամենախնամ Սուրբ Աջի պահպանության եւ օրհնության ներքո ծաղկեն ու բարգավաճեն հայրենի մեր երկիրն ու բարեսեր ժողովուրդը:

Շնորհ, սէր եւ ողորմութիւն Աստուծոյ եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան, այսօր եւ միշտ. ամէն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԵՒ 2019
ԹՎԱԿԱՆԸ «ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ» ՀԱՅՐԱԿԵԼՈՒ ԱՌԹՆԵՐՈՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ
«ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

(6 դեկտեմբերի 2019 թ., Սուրբ Էջմիածին)

Գիտաժողովի սիրելի՛ մասնակիցներ,

Հոգու բերկրանքով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ, որ սիրով ու պատրաստակամությամբ արձագանքել եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրավերին եւ այսօր մատենադարանի կամարների ներքո համախմբվել եք այս գիտաժողովին՝ նվիրված «Էջմիածին» ամսագրի 75-ամյակին: Ուրախ ենք, որ 2019 թվականը «Ընտանիքի տարի» հռչակված լինելու առիթով գիտաժողովը կարեւորելու է «Էջմիածին» ամսագրում եւ Մայր Աթոռի հրատարակություններում հայրենիքի եւ ընտանիքի գաղափարների արծարծումը: Արդարեւ, ազգը ամուր է ընտանիքով, եւ հայրենիքն ու պետությունը ամուր են ընտանիքներում խնամված արժեքներով ու սնուցված ոգով: Աստվածամբերժ տարիներին ընտանիքներում պահպանված քրիստոնեական ավանդներով մեր ժողովուրդը չհեռացավ իր Եկեղեցուց եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ միշտ անսալով իր հավատքի դարավոր օրրանի հոգեխնամ ձայնին եւ օրհնաբեր ներկայությունը իր կյանքի բոլոր բնագավառներում:

«Արարատ» ամսագրի ընդհատված լուսավորչական առաքելության շարունակողը եւ Հայ Եկեղեցու վերազարթոնքի բարելուր խորհրդանիշը դարձավ «Էջմիածին» ամսագիրը: Երկրորդ աշխարհամարտի ծանր տարիներին երջանկահիշատակ Գեորգ Զ Զորեքչյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով վերահաստատված Մայր Աթոռի պարբերականը՝ հակառակ առկա արգելքներին ու հետապնդումներին, համարձակ խոսեց իր հավատավոր զավակների հետ, նրանց ջամբելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենարար հավատքի լույսը, որը փոխանցել են մեր սուրբ հայրերը: Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր

խոսքը, գիտական միտքը շարունակեցին պտղաբերել նվիրյալ ու լուսամիտ եկեղեցականաց շնորհիվ, որոնք Աստծու բարերար կամոք այդ բարդ ժամանակներում կարգվել էին հովվելու Տիրոջ հոտը:

Եկեղեցականների եւ մտավորականների հոգեւոր, բարոյախրատական քարոզների, աստվածաբանական, հայագիտական, արժեքավոր ուսումնասիրությունների շնորհիվ անխաթար մնացին մեր ժողովրդի կայն ու հաղորդակցությունը նախնյաց սրբազան ժառանգության հետ: Ինքնաճանաչման ու շարունակ հոգեւոր նորոգության ու զարգացման այս ուղիով մեր ժողովուրդը պիտի մնա հոգեւոր ուրույն դիմագիծ եւ հզոր մշակույթ ունեցող ազգերի շարքում՝ միշտ հավատարիմ իր հավատքին ու սրբություններին, Արարատահայաց իր հայրենիքին, իր ինքնությունն ու արժեքներին:

Հայրենիքի խաղաղ կյանքն ու առաջընթացը եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի համախմբումը հայրենիքի շուրջ մշտապես եղել եւ մնում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության կարեւոր հանձնառություններից: Այդ առաքելությունից անմասն չեն մնացել Մայր Աթոռի պաշտոնական ամսագիրն ու մնացյալ հրատարակությունները:


Սուրբ Էջմիածնի ինչպես պարբերական, այնպես եւ ոչ պարբերական հրատարակություններում չեն պակասել հայրենաճանաչությանը, մայր հայրենիքի հանդեպ սիրո ու նվիրումի, ազգային ինքնության ձեւավորմանը վերաբերող նյութերը: Այդ ոգով «Էջմիածին» ամսագիրը իր նպաստն է բերել մայր հայրենիքում եւ սփյուռքում ազգային դիմագիծ ու գիտակցություն ունեցող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Երանաշնորհ Գեորգ Զ Զորեքչյան Կաթողիկոսի բնորոշմամբ՝ ամսագիրը այն միջոցն էր, որը պետք է համախմբեր սփյուռքի բոլոր հայերին իրենց սրբազան հայրենիքի ու Մայր Աթոռի շուրջ:

Այսօր մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ հայրենիքի եւ ընտանիքի ազգային մեր ընկալմանն առնչվող արժեքները տարատեսակ մտայնությունների եւ գաղափարախոսությունների պատճառով ենթարկվում են մշտական հարձակումների ու հարվածների: Եկեղեցին, որպես հոգեւոր անառիկ բերդ եւ ազգային միասնության ու ամրության անխախտ պատվար, պիտի շարունակի իր ջանքերը այդ արժեքների անխաթար ու հարատեւ պահպանման եւ, եթե հարկ է, նաեւ՝ առողջացման համար: «Էջմիածին» ամսագրի հոբելյանին նվիրված այս գիտաժողովը եւ նման նախաձեռնությունները նույնպես կոչված են ծառայելու

հոգեւոր եւ ազգային մեր դարավոր ժառանգության պահպանման ու զարգացման եւ սերնդեսերունդ փոխանցման բարձր նպատակին:

Այս տեսիլքով ու մաղթանքով Մենք գոհունակ սրտով Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Մայր Աթոռի հրատարակչական աշխատանքներում ներգրավված նախկին եւ ներկա բոլոր աշխատակիցներին: Զերմորեն շնորհավորելով «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագրին եւ ողջ խմբագրակազմին՝ պարբերականի համար պատկառելի այս տարիքի առիթով՝ մաղթում ենք ամենքին արդյունաշատ աշխատանք: Աղոթքով ենք հիշում բազմամյա այս ծառայության ընթացքում նվիրումով եւ սիրով ամսագրի անխափան լույս ընծայման պատասխանատվությունը ստանձնած բոլոր երախտարժան խմբագիրներին:

Մեր բարձր գնահատանքն ենք բերում սույն գիտաժողովի կազմակերպիչներին եւ բոլոր մասնակիցներին: Բարձրյալի օրհնությունն ենք հայցում ամենքիդ համար եւ գիտաժողովի աշխատանքներին մաղթում արդյունավոր ու բարի ընթացք:





Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՍՆՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 դեկտեմբերի, 2019 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս եւ ի սփյուռս,
Ամանորի տոնական այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից
Հայրական սիրով Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք
բերում ամենքիդ:

Ամանորը ժամանակի յուրօրինակ սահմանագիծ է հնի եւ նորի, ան-
ցյալի եւ ապագայի միջեւ եւ առիթ՝ գնահատելու անցած ուղին, արար-
ված լավն ու բարին, թույլ տրված սխալները, որովհետեւ դրանց անկեղծ
ու շիտակ գնահատականն է պայմանավորում այն տեսլականն ու ակն-
կալությունները, որոնցով մուտք ենք գործում 2020 թվական:

Անցնող 2019 թվականը պետական կյանքի վերակազմակերպման,
նոր ծրագրերի եւ իրագործումների ժամանակ եղավ: Հայրենական, ազ-
գային եւ հոգեւոր մեր անդաստանում ունեցանք հաջողություններ: Դրա-
կան իրագործումների կողքին տակավին առկա են հրատապ լուծման
կարոտ խնդիրներ եւ նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են մեր
ողջ ժողովրդի համատեղ ջանքն ու աշխատանքը: Յուրաքանչյուրիս ծա-
ռայանվիրումի ոգին, պատասխանատվությունն ու դավանած արժեք-
ներն են, որ պիտի իրական դարձնեն հզոր հայրենիքի, պայծառ ապա-
գայի մեր տեսիլքները:

Նոր տարին նոր սկիզբ է մեր կյանքը նորոգելու եւ վերելքի ուղիներ
բերում հաստատուն պահելու: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր
ապրած յուրաքանչյուր օրվա եւ տարվա համար: Պատասխանատու
ենք Աստծո, մեր պատմության, մեր նախնյաց եւ սերունդների առջեւ:
Հայրապետիս հորդորն ու պատգամն է, սիրելիներ, որ այս գիտակցու-
թյամբ անենք առավելագույնը Հայաստանն ու Արցախը հզորացնելու,
մեր կյանքը խռովող երեւույթները փարատելու, ամրապնդելու համե-
րաշխության ոգին մեր հասարակության մեջ եւ ազգային մեր կյանքում՝


միասնականությունը: 2020 թվականը հայրենաշինության եւ ազգային կյանքի պայծառացման տարի դարձնենք միմյանց հանդեպ սիրով, ամեն բարու մեջ մեր նախանձախնդրությամբ եւ միշտ ապավինելով Աստծուն. քանզի ինչպես սաղմոսերգուն է ասում,— «Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են Իրեն, բոլոր նրանց, ովքեր կանչում են Իրեն ճշմարտապես» (144:18):


Ամանորի այս հուսառատ պահին Մեր ջերմ բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ՝ պաշտոնյա, գործարար, մտավորական, արվեստագետ, հողի մշակ ու աշխատավոր, բոլոր բոլորիդ, ում ջանքերի, հավատքի, նվիրումի շնորհիվ զորանում են կամքն ու վճռականությունը կերտելու մեր հայրենիքի ու ժողովրդի անկասելի առաջընթացը: Հայրապետիս սերն ու բարձր գնահատանքը՝ Հայոց բանակի քաջարի յուրաքանչյուր զինվորին: Մեր աղոթքն ու օրհնությունը՝ նոր տարին ծառայության մեջ զիմավորողներին եւ այս պահին ընտանեկան օջախից հեռու գտնվողներին:

Աղոթենք միասնաբար Մերձավոր Արեւելքում դժվարություններ դիմազրավող մեր ժողովրդի զավակների, նաեւ նեղության մեջ գտնվողների, կարոտյալների, հոգով եւ մարմնով տկարների համար: Մեր աղոթքը բարձրացնենք աշխարհի խաղաղության համար՝ հայցելով, որ Բարին Աստված Իր Սուրբ Աջի ներքո պահպանի մեր հայրենիքը, մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ արդյունավորի Հայաստանի եւ Արցախի մեր իշխանությունների ջանքերը դարերով փայփայած անկախ պետականության զորացման ճանապարհին:

Թող Փրկիչ մեր Տիրոջ սերն ու առատ շնորհները միշտ ձեզ հետ լինեն, հովանի՝ ձեր կյանքին եւ ձեր ընտանիքներին:

Շնորհավոր նոր տարի:





Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԲ
ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՈՒԹԻՒՆ
Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՇԱԼԵԱՆ

Կենսագրական



Ամենապատիւ Տ. Սահակ արքեպս.
Մաշալեանը (աւագանի անունը՝ Շահին)

ծնունել է 1962 թ. մարտի 17-ին Կ. Պոլսում:
1979—1982 թթ. ուսանել է Ստամբուլի
գիտարուեստական (տեխնիկական) հա-
մալսարանի էլեկտրական ճարտարագի-
տութեան եւ հաղորդակցական ճարտա-
րագիտութեան ֆակուլտետում:

1983 թ. սկսած հոգեւոր սպա-
սաւորութեան է անցել Կ. Պոլսի Հա-
յոց պատրիարքարանում:

1983—1987 թթ. ուսանել է Ստամ-
բուլի համալսարանի փիլիսոփայութե-
ան ֆակուլտետում:

1986 թ. ձեռնադրուել է սարկաւագ ձեռամբ Կ. Պոլսի Հայոց պատ-
րիարք ամենապատիւ Տ. Շնորհք արքեպս. Գալուստեանի:

1988—1989 թթ. անցել է զինուորական ծառայութիւն:

1989—1994 թթ. ուսանել է Լօնդօնի համալսարանում:

1992 թ. յուլիսի 9-ին ձեռնադրուել է կուսակիօն քահանայ՝ ձե-
ռամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Գարեգին ար-
քեպս. Գազանճեանի:

1994—1997 թթ. եղել է Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան Թարգ-
մանչաց վարժարանի տեսուչ:

1997—1999 թթ. բարձրագոյն կրթութիւնը շարունակել է Դուբլինի
(Իռլանդիա) համալսարանում:

1999–2005 թթ. եղել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքութեան միջեկեղեցական եւ միջկրօնական յարաբերութիւնների բաժնի վարիչը, ինչպէս նաեւ հոգեւոր հովիւ Կ. Պոլսի հայոց եկեղեցիներում:

2005 թ. Նոր Կտակարանի ներածութիւն եւ մեկնութիւն, Քարոզխօսութիւն եւ վարդապետական աստուածաբանութիւն առարկաներն է դասաւանդել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում եւ Սեւանի վազգէնեան հոգեւոր դպրանոցում:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պաշտպանել է վարդապետական ատենախօսութիւն «Հաւատք եւ հրաշք» վերտառութեամբ եւ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերշ. Տ. Շահան արքեպս. Սուաճեանի, ստացել մասնաւոր վարդապետութեան շորս աստիճանները:


2007–2010 թթ. զբաղեցրել է Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսչի պաշտօնը:

2008 թ. օգոստոսի 24-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ստացել է եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում:

2011 թ. վերադարձել է Կ. Պոլիս եւ վերստին ստանձնել Կ. Պոլսի Հայոց պատրիարքութեան միջեկեղեցական եւ միջկրօնական յարաբերութիւնների բաժնի վարիչի պաշտօնը:

2019 թ. յուլիսի 4-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում կայացած եկեղեցական համագումարում ընտրուել է պատրիարքական տեղապահ:

2019 թ. դեկտեմբերի 11-ին Ազգային-պատգամաւորական ժողովի ընթացքին՝ ձայների ճնշող մեծամասնութեամբ ընտրուել է Կ. Պոլսի Հայոց 85-րդ պատրիարք:



**«ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ»**

**Գիտաժողով «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանում
(6 դեկտեմբերի 2019 թ.)**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանը նախաձեռնեց՝ «Էջմիածին» ամսագրի 75-ամեակի եւ 2019 թ. ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ հոշակելու առիթով «Հայրենիքի եւ ընտանիքի գաղափարները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակութիւններում» խորագրով գիտաժողով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակութիւնների դիտարկման միջոցով գիտաժողովը նպատակ էր հետապնդում ցոյց տալ հայոց կեանքում ազգային ինքնութեան եւ նկարագրի պաշտպանութեան կարեւորութիւնը, ընտանիքում ազգային եւ աւանդական արժէքների ամրապնդման ու տարածման կենսական նշանակութիւնը: Դիտել է, որ Մայր Աթոռի հրատարակութիւններն իրենց կրօնագիտական, եկեղեցագիտական, հայագիտական, պամաբանա-սիրական ուղղութիւններից զատ, մշտապէս առանձնայատուկ ուշադրութեան են արժանացրել եւ արժանացնում յատկապէս հայրենիքի եւ ընտանիքի գաղափարների սերմանելուն:

Մայր Աթոռի հրատարակութիւններն իրենց տարածմամբ ու հեղինակների լայն ընդգրկմամբ ստացել են համահայկական բնոյթ:

Գիտաժողովի հանդիսատւոյ մասն սկսուեց Տէրունական աղօթքով, որից յետոյ բացման խօսքով հանդէս եկաւ «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանի եւ Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրէն արժանապատիւ Տ. Արարատ Բահանայ Պօղոսեանը:

Այնուհետեւ գիտաժողովի մասնակիցներին իր օրհնութիւնը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը (տե՛ս էջ 12):

Հայրապետական օրհնութեան խօսքից յետոյ գիտաժողովն սկսեց իր աշխատանքները, որոնք ընթացան չորս զուգահեռ նիստերով, որոնցում ներկայացուեց մօտ 20 զեկոյց:

Գրեթէ իւրաքանչիւր զեկոյցից յետոյ մասնակիցները հարցեր էին ուղղում հանդէս եկողին, ապա ծաւալում էր հետաքրքիր եւ բովանդակալից ֆննարկում:

Գիտաժողովի ասարտից յետոյ որոշուեց ի մի բերել մասնակիցների զեկոյցները՝ առաջիկայում առանձին ժողովածուով տպագրելու նկատառումով:

Նշեմք նաեւ, որ սոյն գիտաժողովին անդրադարձ կատարուեց հայաստանեան տպագիր եւ համացանցային բազմաթիւ լրատուամիջոցների կողմից:

Պատրաստեց՝
ԱՐԱՐԱՏ ՔՀՆՅ. ՊՕՂՈՍԵԱՆԸ

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱՅ ՊՕՂՈՍԵԱՆԻ ԽՕՍՔԸ (6 դեկտեմբերի 2019 թ.)

Վեհափառ Տէր,

Գերաշնորհ Սրբազան հայր,

Հոգեշնորհ, արժանապատիւ հայրեր,

Բարեշնորհ սարկաւազներ,

Գիտաժողովի սիրելի մասնակիցներ եւ ներկաներ.

«Էջմիածին» ամսագրի 75-ամեակի եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 2019 թ. ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐԻ հռչակելու շրջանակներում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանը Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ նախաձեռնել է այս գիտաժողովը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դարեր շարունակ եղել եւ այսօր էլ մնում է հայ ժողովրդի ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ կարեւորագոյն կրթական, գիտական կենտրոններից մէկը: Մայր Աթոռը հայերէն ձեռագրի ծննդավայրն է, մեսրոպատառ առաջին ձեռագրերը եւ մայր գրատունը ստեղծուել են հէնց այստեղ՝ Սուրբ Էջմիածնում: Յետագայ դարերում, միջնադարեան գրեթէ բոլոր վանքերը հոգեւոր կենտրոններ լինելուց զատ, նաեւ գրքի ու դպրութեան տաճարներ էին: Ուստի, պատահական չէր, որ Մայր հայրենիքում Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի հետեւողական ջանքերի շնորհիւ հէնց Ս. Էջմիածնում հինուեց առաջին տպարանն ու հրատարակչութիւնը: Այլ խօսքով՝ Մայր Աթոռը հայրենիքում դարձաւ նաեւ հայերէն տպագիր գրքի ծննդավայրը:

Մայր Աթոռում թէ՛ անցեալում եւ թէ՛ այսօր տպագրուած գրքերը ծառայում են սերունդներին հայեցի՝ հայրենասէր ու եկեղեցասէր դաստիարակելու սուրբ գործին: Մայր Աթոռում ստեղծուած ու տպագրուած բոլոր գրքերում քրիստոնէական արժէքները միաձուլուած են հայրենիքի եւ ընտանիքի գաղափարներին հետ:

Աստուծի ապացոյցներն են Մայր Աթոռի գիտական երկու հսկաները՝ «Արարատ» եւ «Էջմիածին» կրօնագիտական եւ հայագիտական ամսագրերը: «Արարատ» անունը իւրաքանչիւր հայի համար եղել է ու կայ հայրենիքի գլխաւոր խորհրդանշը, իսկ հայի կեանքում Ս. Էջմիածնի կարեւորութեան մասին խօսելիս կը բաւարարուենք միայն մեծանուն բանաստեղծ Աւետիք Իսահակեանի՝ թեւաւոր խօսք դարձած մէջբերմամբ. «Հայ ժողովրդի մաշկը քերես, տակից Էջմիածին կերեալ: Էջմիածինն ազգային գոյութեան խարիսխն է, ազգային միութեան սիմուլը»:

Հպարտութեամբ կարող ենք արձանագրել, որ այս ամսագրերի անուններն արդէն իսկ հայրենասիրութեան քարոզ են: Բացի այդ՝ «Արարատ» ամսագրի անդրանիկ համարի առաջաբանում կարդում ենք. «ազգիս ընթերցող հասարակութիւնը բաժանորդ գրուելով ամսագրիս, ճշմարիտ հայրենասիրաց զգացմանցն եւս բաժանորդ կը լինի»: Միով բանիւ «Արարատ» եւ «Էջմիածին» ամսագրերի նպատակն է եղել եւ է հայ ժողովրդի պատմական անցքերը ներկայացնել այնպէս, որ սերունդները «քաջերից ազգ եւ հայրենիք պահելու քաջութիւն սովորեն, իսկ վատերից՝ իբրեւ հայրենիքի դաւաճաններ՝ խորշեն»:

Յատկանշական է, որ «Էջմիածին» ամսագրի առանցքային նպատակը եւ բուն առաքելութիւնն է՝ «սովորեցնել հայ հաւատացեալին իր դաւանութիւնը, իր Եկեղեցու արարողութիւններն ու կանոնները, տպագրուող յօդուածներով սերմանել ընտանեկան աստուածատուր սրբութիւնները պահպանելու ոգին»: Հրատարակման ողջ ընթացքում ամսագիրը լոյսի փարոս է եղել մեր Եկեղեցուն՝ հայրենիքում եւ նրա սահմաններից դուրս գտնուող հաւատաւոր զաւակների համար՝ նրանց համախմբելով Էջմիածնի անուան ու խորհրդի շուրջ: Ամսագրում մինչ օրս տպագրուել են ընտանեկան արժէքներ ու հայրենասիրութիւն սնող եւ ներշնչող բազմաթիւ յօդուածներ եւ քարոզներ: «Էջմիածին» ամսագիրը, ինչպէս նշեցինք, կրօնական ուղղուածութիւն ունենալով հանդերձ՝ իրաւամբ համարուում է հայագիտութեան առաջամարտիկներից մէկը: Բաւական է նշել միայն, որ այսօր Հայաստանում տպագրուող գիտական


ամսագրերի մէջ «Էջմիածինը» միական է, որ մէկ տարում 12 համար է հրատարակում:

Բացի պարբերական մամուլից, բոլորին է յայտնի, որ շնայած հայ ժողովրդի պատմութեան վայրիվերումների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1772 թուականից առ այսօր չի դադարել գրքերի տպագրութիւնը: Աւելին: Մայր Աթոռի հրատարակչական ոլորտը կարգաւորելու նպատակով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի տնօրինութեամբ 2006 թ. ստեղծուեց Մայր Աթոռի Հրատարակչական բաժինը: Վերջինս հաւատացեալների հոգեւոր կարիքները բաւարարելու նպատակով՝ համապատասխան գրականութեան հրատարակութեամբ իրականացնում է արդիւնաւէտ քարոզչութիւն:


Հրատարակչական բաժինը 2006—2019 թթ. ընթացքում լոյս է ընծայել շուրջ 350 անուն գիրք: Առանձնակի կարեւորութիւն ունեն աղօթագրքերի, քարոզգրքերի, մեկնողական եւ թարգմանական երկերի, բարոյագիտական, վարքաբանական, յուշագրական, կրօնագիտական-եկեղեցագիտական ուսումնասիրութիւնների, արխիւային նիւթերի ժողովածուների հրատարակութիւնները, որոնցում իրենց արժանի տեղն են գտել ընտանեկան արժէքներ ու հայրենասիրութիւն քարոզող գրքերը: Խորամուխ չլինելով բուն նիւթի մէջ՝ գիտաժողովի զեկուցողներին ենք թողնում Մայր Աթոռի հրատարակութիւններում հայրենիքի եւ ընտանիքի գաղափարների առաւել մանրամասն ներկայացումը:

* * *

Սիրելի՛ մասնակիցներ, վստահ ենք, որ այս գիտաժողովը եւս մէկ առիթ կը լինի խօսելու գրքի միջոցով ազգային նուիրական արժէքների տարածման ու պահպանման կարեւորութեան մասին: Գիտաժողովի ընթացքում ակնկալում ենք ունկնդրել հետաքրքիր եւ արժէքաւոր զեկուցումներ: Շնորհակալութիւն:







Տ. ԱՂԱՆ ԱՔԵՂԱՅ ԵՐԱՋԱԿԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՕՍՈՒԱԾ ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՔ. ԷՋՄԻԱՍՆԻ ՍՔՅ. ՅՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ
ԵԿԵՂԵՑՈՒՄ «ՍՐԲՈՅ ՅՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅՆ ՊԱՐԻԷԼԻ,
ՄԻՔԱՅԷԼԻ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐԱՅ» ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(9 նոյեմբերի, 2019 թ.)

Սիրելի՛ հաւատաւոր քոյրեր եւ եղբայրներ,

Այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին յիշատակում է հրեշտակապետաց, հրեշտակաց ու երկնաւոր ամբողջ զօրքի տօնը:

Մենք քրիստոնեաներս Քրիստոսի Սուրբ Եկեղեցու մէջ Մարտնչող եկեղեցին ենք կազմում, որ հաւատքի բարի պատերազմի մէջ ենք ու յոյս ունենք, որ այն յաղթանակով պիտի պսակենք եւ Երկնքի արքայութեան պիտի արժանանանք: Կան նաեւ անձեր, ովքեր այդ պատերազմն արդէն յաղթանակով պսակել են եւ այս կեանքից փոխադրուել. նրանք սուրբերն են: Եւ անցեալ շաբաթ օրը մեր Սուրբ Եկեղեցին նշեց Ամենայն Սրբոց՝ բոլոր յայտնի ու անյայտ սուրբերի յիշատակը, այսինքն՝ տօնախմբեցինք Յաղթանակած եկեղեցու տօնը: Այսօր էլ Հրեշտակաց դասի՝ Անդրանկաց եկեղեցու տօնն է:

Ըստ մեր Սուրբ Եկեղեցու վարդապետութեան Հրեշտակաց դասը կամ Լուսեղէններին, եւ կամ Զուարթուններին Աստուած արարուել է աշխարհի ստեղծման առաջին օրը՝ լոյսի հետ: Ինչպէս Սուրբ Գիրքն է ասում՝ նրանցից մի մասը հպարտութեան պատճառով ապստամբել է Տիրոջ դէմ. նրանք անկեալ հրեշտակներն են: Հրեշտակաց դասն՝ իր կամքով, իր ազատ կամքը Տիրոջն է յանձնել ու այժմ Տիրոջ փառքի յաւիտենական ծառայութեանն են բոլոր հրեշտակները:

Ուսանելի եւ հետաքրքրական է հետեւեալ պատմութիւնը: Մի վանականի մօտ են գալիս ու հարցնում, թէ ինչով էր ինքը զբաղւում վանքում, երբ վանական կեանքով նոր էր սկսել ապրել: Նա ասում է, որ վանականների համար ջուր էր բերում եւ վանքի համար փայտ կոտրատում: Այս լսելով հարցնում են, թէ հիմա, որ արդէն քսան տարի է ինչ վանքում է

ապրում, հիմա՛ ինչ է անում: Վանականն ասում է, որ այժմ նոյնպէս ջուր է բերում ի սէր իր վանական եղբայրների ու վանքի համար փայտ կոտրատում: Այս պատասխանից զարմացած ասում են, թէ այս քսան տարուայ տարբերութիւնն ու աճն այդ դէպքում որն է, եթէ քսան տարի է վանքում է ապրում ու նոյն գործն է անում: Վանականն ասում է, որ այն ժամանակ գործն անում էր զուտ որպէս պարտականութիւն, գործ, իսկ հիմա նոյնն անում է սիրով ու յօժարութեամբ, ազատ ընտրութեան արդիւնքում:

Միրելի՛ հաւատացեալներ, այսօր մենք հրեշտակներից սովորելիք ունենք: Նախ մեր կամքը Տիրոջը յանձնել, սեփական եսը թողնել ու յօժարութեամբ Աստծու բարի ու կատարեալ կամքը կատարել ու նաեւ մեր գործերով, մեր խօսքով ու մեր կեանքով Տիրոջն սպասաւորել, Տիրոջը ծառայել:

Մի թռչնաբուծարանի բակում մի օր աշխատողները տեսնում են արծուի փոքրիկ ճուտիկի ու վերցնելով տանում են թռչնաբուծարանի հաւերի մօտ, որ դրսում չմնայ ու չվնասուի: Արծուիկը մեծանում է եւ երկար ժամանակ մնում է թռչնաբուծարանում ու ապրում է որպէս հաւ: Մի օր, երբ բոլոր հաւերը բակում էին, յանկարծ երկինքը մթնում է, բոլոր հաւերը վախեցած սկսում են այս ու այն կողմ փախչել, որովհետեւ երկնքում էր յայտնուել մեծ արծիւր, որ թեւերը լայն տարածած սաւառնում էր: Այս տեսարանը զարմանալի է թւում փոքրիկ արծիւին, եւ նա զարմացած հարցնում է մայր հաւիկին, թէ ինչ թռչուն է, որ այդպէս հզօր է ու այդքան բարձր է ճախրում, ապա աւելացնում է, որ ինքն էլ շատ կցանկանէր այդքան բարձր ու ազատ սաւառնել: Մայր հաւը, «հետաքրքրասէր ձագուկին» արագ հաւաքուն տանելով, ասում է.

— Երկնքում սաւառնողն արծիւ է, գիշատիչ ու յոյժ վտանգաւոր մի թռչուն: Դու չես կարող այդպէս թռչել, որովհետեւ դու արծիւ չես, դու հաւ ես... դու հաւ ես, անցիր, քո բոյնը մտիր:

Այսօր այստեղ այս Սուրբ կամարների ներքոյ այժմ համախմբուել ու մէկտեղուել է Քրիստոսի Սուրբ Եկեղեցին Տէր Յիսուս Քրիստոսի Կենարար Մարմնի ու Արեան խորհուրդի մէջ. ահա մենք աղօթքի ենք կանգնած, մեզ հետ են բոլոր հրեշտակները, ովքեր սպասաւորում են Տիրոջ Սուրբ խորհուրդին եւ նրանց հետ միասին աղօթակից երգում ենք «Սուրբ, Սուրբ, Սուրբ...»: Մեզ հետ է նաեւ ողջ սրբոց դասը, որոնցից ոմանց էլ անուն առ անուն քիչ առաջ յիշատակեցինք: Սուրբ Առաքեալն ասում է. «Բայց դուք մօտեցել էք Սիրոն լեռանը եւ կենդանի Աստծու


քաղաքին, երկնային Երուսաղէմին, հրեշտակների բիւրաւոր բանակներին, երկնքում գրուած անդրանիկների հանդիսաւոր ժողովին, բոլորի դատաւոր Աստծուն, կատարելութեան հասած արդարների հոգիներին եւ Յիսուսին՝ նոր ուխտի միջնորդին, եւ Նրա արեան հեղումին, որ աւելի խօսուուն է, քան արիւնն Աբէլի» (Եբր. ԺԲ. 21–23): Եւ այս է մեր իրական վիճակը, մենք Տիրոջ ստեղծագործութիւնն ենք, մեր Երկնաւոր Հօր տունը արքայութիւնն է, ուր որ մենք մեր օթեւաններն ունենք, մեր տունը: Մեր Հօր տունը երկինքն է, մեր իրական վիճակը հրեշտակական ու սուրբ վիճակն է, մեր իրական պատկերը Աստծու պատկերն է: Մենք բաժնեկից ենք հրեշտակների ծառայութեանը եւ մենք ընտանիք ունենք՝ ողջ սրբոց դասը: Բայց աշխարհը մեզ ասում է, որ մենք կապ չունենք սուրբերի ու հրեշտակների հետ, փող, տներ, հարստութիւններ, իշխանութեան մարմաջ, աթոռներ...

Մի պատմութիւն կայ. ասում են մի օր Սուրբ Գաբրիէլ հրեշտակապետը հրեշտակների ժողով է գումարում, որպէսզի քննարկուի աշխարհում ապրող քրիստոնեաների հարցը: Ժողովին մասնակցում են գրեթէ բոլոր հրեշտակները եւ մեծամասամբ դժգոհութիւն են յայտնում քրիստոնեաների մասին, ասելով, որ բոլոր քրիստոնեաների միայն երկու տոկոսն է, որ իրական քրիստոնէական կեանքով է ապրում: Եւ ահա ժողովի ժամանակ որոշուում է, որ հրեշտակները պէտք է նամակ գրեն այդ երկու տոկոս քրիստոնեաներին:

Սիրելի՛ հաւատացեալներ, ես այդ բացիկ նամակներից չեմ ստացել, ու հիմա հարցս հռետորական է.

Դուք կարող էք ասել ինչ էր գրուած այդ բացիկների մէջ...

Տա՛ Աստուած, որ բոլորս էլ հրեշտակների պահպանութեան մէջ մնանք, որ Տիրոջ խօսքը կարդացող, ընկալող ու գործադրող՝ իրական հաւատացեալներ լինենք, ու թո՛ղ որ հրեշտակների միջոցով Աստծուց ուղարկուած խօսքերը մեր ականջներին եւս հասնեն. ամէն:



Տ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՒ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՏՈՒՌ-ՄԿՐՏԱՐԱՆՈՒՄ
«ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԻՈՐՉԱՅՆ
ՄԵՐՈՑ ԹԱԴԵՈՍԻ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ» ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(30 նոյեմբերի, 2019 թ.)

«Շրանելի սո՛ւրբ առաքեալ՝
 հրաւիրեալ ի սկզբանէ եւ ընտրեալ յորովայնէ,
 սպասաւորք եւ բարեկամք եւ վկայք Աստուածորդոյն,
 բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն անձանց մերոց»:
 Շարակնոց

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է իր առաջին լուսավորիչների, Հայոց Եկեղեցու հիմնադիր առաքյալների՝ Սուրբ Թադեոսի եւ Սուրբ Բարդուղիմեոսի տոնը:

Սուրբ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների վկայութիւնը սոսկ պատմական նշանակութիւն չունի մեզ համար, որը փաստում է Հայոց Եկեղեցու առաքելական ծագումը:

Այո՛, մեր Եկեղեցին առաքելական է, քանզի հիմնադրվել է առաքյալների կողմից եւ դաւանում է առաքյալների ուղղափառ վարդապետութիւնը: Սակայն մեր Եկեղեցին առաքելական է նաեւ իր էութեամբ եւ այդ առաքելականութիւնը դրսեւորվում է երեք հիմնական հատկանիշների միջոցով: Այսօրվա տոնի օրհնութեան շարականը մատնացույց է անում առաքելական լինելու այդ երեք հատկանիշները: Դիմելով առաքյալներին շարականագիր հեղինակն ասում է. «Սպասաւորք եւ բարեկամք եւ վկայք Աստուածորդոյն, բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն անձանց մերոց»:

Ա. Սպասաւոր Բանին Աստուծոյ. Առաքելական քրիստոնյա լինել առաջին հերթին նշանակում է լինել սպասավոր Աստծու կենդանի Խոսքի: Ինչպե՞ս Սուրբ Գրիգոր Լուսավորիչն է ասում իր Հաճախապատում ճառերի մեջ. «Լինել սպասաւոր Բանին կենաց եւ Արարչին կամաց ճշմարիտ փառգոյթեամբ. զանմոլար գիտութիւն սփռել ի լսելիս մարդկան, զարթոյցանել ի գործ բարեաց»:

Առաքյալ բառն ինքնին նշանակում է առաքված, Ավետարանը քառողելու ուղարկված: Ոմանք կարծում են, որ Աստծու Խոսքի տարածումը միայն հոգեւորականների գործն է, սակայն մեր Տիրոջ առակները երկրի աղը լինելու (Մատթ. Ե. 13) եւ աշտանակի վրա դրված ճրագի (Մատթ. Ե. 15) մասին վերաբերում են բոլորիս: Յուրաքանչյուր մկրտված՝ քրիստոնյա, Սուրբ Հոգուց կոչված է վկայություն բերելու, սփռելու Ավետարանի Բարի Լուրը իր սիրելիներին եւ ընտանիքին, հարեւաններին եւ գործընկերներին, խոսքով եւ գործով:

Բ. Բարեկամք. Սակայն Աստծու մասին խոսելուց առաջ պետք է նախ ճանաչել Նրան, խոսել Աստծու հետ եւ ունկնդիր լինել Նրա Աստվածային ձայնին:

Ինչպես Սուրբ Եզնիկ Կողբացին է գրում իր «Եղծ Աղանդոց» մատյանում. «Այլ ըստ Աստուծոյ արժանեաց զոչ ոք արժանատւ իցէ պատմիչ լինել, բայց եթէ Աստուծոյ բարեկամք՝ որք վասն Նորա սիրոյն եւ զկեանս աշխարհիս արհամարհեցին, եւ մահու չափ կենդանի յուսոյն՝ որ առ Աստուած»:

Հիրավի, մենք ստեղծվել ենք Աստծու հետ մտերմության համար: Աստված չի ցանկանում, որ մենք պարզապես իմանանք Իր մասին, այլ ճանաչենք Իրեն եւ կատարենք Իր կամքը:

Խաչելությունից ընդամենը ժամեր առաջ, մեր Տերը վերնատան մեջ, շրջապատված Իր աշակերտներով, դիմում է նրանց վերջին անգամ ասելով. «Դուք Իմ բարեկամներն էք, եթէ անեք այն, ինչ ես ձեզ պատուիրում եմ: Այլեւս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետեւ ծառան չգիտէ, թէ տէրն ինչ է անում. այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետեւ այն բոլորը, ինչ Իմ Հօրից լսեցի, յայտնեցի ձեզ» (Յովհ. ԺԵ. 15):

Աստծու հետ մտերմության ճանապարհը Նրա պատվիրանների գործադրումն է, հարատեւ աղոթքը եւ Աստծու կենդանի Խոսքի խոկումը, երբ մարդ, ինչպես առաքյալները, ապրում եւ գործում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հետ եւ Աստծու ներկայության մեջ:

Գ. Վկաներ. Եւ վերջապես, առաքելական լինել, նշանակում է լինել վկա: Վկա բառը հունարեն մարտուրոս բառի թարգմանությունն է, որ նշանակում է նաեւ նահատակ, խոստովանող:

Մատթեոսի Ավետարանի մեջ մեր Տերն զգուշացնում է մեզ ասելով. «Ով որ Ինձ կխոստովանի մարդկանց առաջ, ես էլ կխոստովանեմ նրան Իմ Հօր առաջ, որ երկնքում է: Եւ ով ինձ կուրանայ մարդկանց առաջ, ես էլ նրան կուրանամ Իմ Հօր առաջ, որ երկնքում է» (Մատթ. Ժ. 32–33):

Վկա են անվանվում բոլոր նրանք, ովքեր վկայում են իրենց հավատքը, խոստովանում եւ դավանում Հիսուս Քրիստոսին Աստծու Որդի եւ Տեր իրենց կյանքի գնով, իրենց մահվան գնով:

Մեր Եկեղեցին դարեր շարունակ այս երեք հատկանիշներն է դարձրել իր առաքելության առանցքը եւ դրա համար իրավամբ կոչվում է Առաքելական:

Մեր հայրերն Աստծու կենդանի խոսքի անխոնջ սպասավորներն էին: Թերթատեք մեր հարուստ մատենագրական ժառանգությունը, եւ կտեսնեք, թե ինչպես են մեր Եկեղեցու Սուրբ Հայրերը ջանադրաբար սպասավորել եւ մատուցել Աստծու կենարար խոսքը մեր ժողովրդին:

Ընթերցե՛ք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ապաշխարության շարականները, Սուրբ Գրիգոր Նարեկացու աղոթագիրքը, Սուրբ Ներսես Շնորհալու եւ Հովհաննես Գառնեցու աղոթքները եւ կհասկանաք, թե ինչպիսի ջերմ աղոթական մտերմություն են ունեցել մեր Սուրբ Հայրերը Աստծու հետ, իրենց սրտի խորքերից բխած խոսքը ուղղելով Ամենասուրբ Երրորդությանը:

Եւ այս ամենը նրանք արել են իրենց կյանքի գնով եւ իրենց մահվան գնով, խոստովանելով եւ դավանելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, ի հեճուկս պարսկական հալածանքների, արաբական նվաճումների, սելջուկ-թուրքական արշավանքների, մոնղոլ-թաթարական ասպատակությունների եւ օսմանյան թուրքերի կոտորածների եւ ցեղասպանության:

Սիրելիներ, այսօրվա խորհրդին համապատասխան Ամենայն Հայոց Հայրապետը եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր Տաճար բերեց աստվածամուխ Սուրբ Գեղարդը, որի վրա դրոշմված են մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար արյան հետքերը:


Տիրոջը խոցած Գեղարդը իր ձեռքերով շոշափած մեր ազգը դիմակալել եւ հաղթահարել է պատմության դաժան փորձությունները եւ շարունակ խոստովանել իր առաքելական հավատքը այն խոսքի համաձայն, թե՛ «Առդ. ո՛վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նք, թե՞ անձկութիւնը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մեղկութիւնը, թե՞ վտանգները, թե՞ սուրբ... Բայց այս բոլորից է՛լ աւելի յաղթական եմք դուրս գալիս նրա միջոցով. ով սիրեց մեզ» (Հռոմ. Ը. 35–37):

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, Աստված սիրեց մեզ եւ մեր ազգին՝ օծելով որպես առաքելական քրիստոնյաներ: Եւ այսօր մենք ենք կոչված ապրելու մեր Եկեղեցու առաքելականությունը: Մեզանից

յուրաքանչյուրը կոչված է լինելու սպասավորն Աստծու խոսքի, Նրա հետ աղոթական մտերմության եւ Նրա Սուրբ Անվան վկայության եւ խոստովանության:

Եկե՛ք, ուրեմն, միասին աղոթենք եւ հայցենք Սուրբ Թաղեոսի եւ Սուրբ Բարդուղիմեոսի բարեխոսությունը, որ նրանցից ստացած մեր սուրբ հավատքը եւ առաքելական կոչումը շարունակի արդյունավորվել մեր ժողովրդի մեջ՝ ի փառս Ամենասուրբ Երրորդության եւ ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն:



Տ. ՄԻՆԱՍ ԱՐԵՂԱ ՀԱՆՎԵՐԴՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(22 դեկտեմբերի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի,
եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի»
(Մատթ. ԻԳ. 12):

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ եւ քույրեր, Ավետարանը մեզ ավանդում է մի շարք օրինակներ, որոնք մեր առջեւ հավերժացնում են խոնարհության հաղթանակը:

Այսօր, Ս. Պատարագի ընթացքին, Ղուկասի Ավետարանից ընթերցված փարիսեցու եւ մաքսավորի առակում Հիսուս մեզ ուսուցանում է մարդկային հպարտության եւ խոնարհության մասին, թե Տերը պիտի խոնարհեցնի նրան, ով հպարտացած է, եւ կբարձրացնի մյուսին, որ ինքն իրեն խոնարհեցնում է Աստծո առջեւ (հմմտ. Մատթ. ԺԳ. 12):

Տաճարում աղոթքի ժամանակ, որտեղ հավաքված էին տարբեր խավերի մարդիկ, առանձնանում էին երկու հոգի, որոնք նույնպես կանգնած էին աղոթքի, բայց նրանց աղոթքները ականջատորեն տարբեր էին: Մեկը փարիսեցի էր՝ բոլորից օրինապահ եւ պատվավոր մի անձ, իսկ մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին, իբրեւ օրինապահ անձ, ինքն իր մասին շատ բարձր կարծիք ուներ, պարծենում էր իր բարեպաշտությամբ եւ Աստծուն աղոթելիս մատնացույց էր անում մաքսավորին, որին համարում էր հապշտակող եւ կեղեքիչ (հմմտ. Ղուկ. ԺԸ. 9–14):

Ահա մի ամբողջ ինքնագովություն եւ հպարտություն:

Բոլորովին հակառակն էր մաքսավորի աղոթքը: Այս առակում մենք տեսնում ենք մի խոնարհ անձնավորության, որ հիշում էր, թե քանի անգամ է անիրավ գործեր կատարել, զգում էր, որ մեղանշել է Աստծո առջեւ, բայց անկեղծ սրտով զղջում էր՝ մտածելով, որ բազումողորմ Աստված

չի ցանկանում մեղավորի դատապարտությունը, այլ դարձը եւ զղշումը. «Աստված, ներիր ինձ՝ մեղավորիս» (Ղուկ. ԺԸ, 13):

Ինչպիսի խոնարհ խոստովանություն, ինչպիսի գեղեցիկ աղերսանք, նա աղոթում էր՝ իր վերքերը ցույց տալով դարմանող բժշկին, ահա այս էր մաքսավորի ամբողջ աղոթքը: Թեեւ կարճ, բայց այնքան կրկնված եւ հավատքով լեցուն: Այն կարծես հիշեցնում է մեզ Գողգոթայի բարձունքին Տիրոջ կողքին խաչված ավազակի աղոթքը, որը եւս խոնարհեցրեց իր անձը եւ ընդամենը մեկ նախադասություն մրմնջաց՝ զղջալով իր ապրած մեղսալից կյանքի համար. «Հիշիր ինձ, Տէր, երբ գաս քո թագավորությամբ» (Ղուկ. ԻԳ, 42):

Անշուշտ հեռվից դիտողի համար այն կարծիքը պիտի ձեւավորվեր, որ Աստված գոհ պիտի լիներ օրինապահ փարիսեցուց եւ երես դարձներ անիրավ մաքսավորից: Սակայն Հիսուսի դատողությունը բոլորովին տարբեր էր: Տերը երկրային իր կյանքի ընթացքում մարդկանց մեջ փնտրում էր բարին՝ ցանկանալով արդարացնել նրանց, իսկ մենք չարն ենք փնտրում, որպեսզի դատապարտենք մարդկանց: Քրիստոս ցավ էր ապրում, երբ խոսում էր ուրիշների մեղքերի մասին, իսկ մեզ դա հաճելի է: Քրիստոս խոսքի զորությունը մեղավորներին դարձնում էր արդար, իսկ մենք նույն խոսքի միջոցով մեղավորներին ավելի մեծ մեղավոր ենք դարձնում: Մոռանում ենք, որ եւ խոնարհեցնողը եւ բարձրացնողն Ինքն Աստված է. նա մեզ երբեք չի անտեսում եւ մշտապես սպասում է մեղավորի դարձին, որպեսզի բարձրացնի մեզ ընկած վիճակից: Մի գեղեցիկ առակ կա, որ կցանկանայի ձեզ փոխանցել:

Մի անգամ հայրը դատեր հետ անցնելիս է լինում կամրջով եւ վախենալով, որ դուստրը կարող է ընկնել կամրջից, խնդրում է ամուր բռնել իր ձեռքը: Սակայն փոքրիկը պատասխանում է. «Ո՛չ, հայր, դու բռնիր իմ ձեռքը»: «Բայց ո՞րն է տարբերությունը»,— զարմանում է հայրը: Աղջիկը պատասխանում է. «Մեծ տարբերություն կա: Եթե ես բռնեմ քո ձեռքը, եւ ինչ որ բան պատահի, միգուցե ես բաց թողնեմ ձեռքդ, բայց եթե դու բռնես, ես համոզված եմ, որ ինչ էլ պատահի, դու իմ ձեռքը ոչ մի դեպքում բաց չես թողնի»:

Սիրելիներ, այսպես է նաեւ Աստված. ինչքան էլ մեղավոր լինենք, Տերը մեզ երբեք մենակ չի թողնում, եւ Իր համար առավել կարեւոր է ապաշխարության պատրաստ մեղավոր մաքսավորը, քան կեղծ բարեպաշտությամբ արդար ներկայացող փարիսեցին: Ահա այս իսկ պատճառով Աստծու առաջ մաքսավորն արդարացավ եւ դուրս եկավ տաճարից

ներված ու սրբված, այնինչ արդար, բարեպաշտ երեւացողը նոր մեղքի տեր դարձավ եւ տաճարից դուրս եկավ ավելի մեղավոր:

Սիրելիներ, տարբերությունն աղոթքում արտահայտված հոգու դրսեւորման մեջ է: Ինքն իրենից գոհ եղողը զղջում չունի, մարդկանց խաբելով՝ կարծում է, թե Աստծուն էլ հնարավոր է խաբել: Միայն ուրիշներին երեւալու համար բարեպաշտությունը առաքինություն չէ. կեղեւը փայլուն է, միջուկը՝ փտած:

Սիրելիներ, եթե մենք այսօր զգում ենք մեր հոգում ու մտքում, որ մենք էլ ենք այս փարիսեցու պես, ապա պիտի կանգնենք խոնարհության ճիշտ ճանապարհին: Մարդկային մեր եսը մեր առջեւ կանգնած մի հսկա պատնեշ է, իսկ խոնարհությունը թույլ է տալիս ցատկել այդ պատնեշի վրայով եւ առաջնորդվել դեպի կատարյալ զղջում, դեպի մաքրագործում, դեպի Քրիստոս, որովհետեւ Տերը չի խաբվում արտաքին երեւույթներից: Աստծո համար արժեքավորը ներքին ապրումն է, սիրտն է եւ ոչ արտաքին ձեւերը: Եթե ավելի պատկերավոր ասելու լինենք, արտաքին ձեւերը՝ զուրկ բովանդակությունից, նման են ցրտահարված ծաղիկների, որոնք թեւեւ կորցրած իրենց կենսունակությունը, բայց տակավին մնալով ցողունի վրա՝ պահում են կենդանության խաբուսիկ տեսքը:

Ուրեմն, թող այնպես չլինի, որ մենք տաճար մտնենք, աղոթենք եւ փարիսեցուն նմանվենք, մեզ ճանաչելու, մեզ ուղղելու, մեր միտքն ու հոգին, էությունը դեպի Տերը դարձնելու փոխարեն սկսենք դատել ու դատափետել մեր նմանին՝ թե՛ ծանոթին, թե՛ անծանոթին: Աստված է միայն սրտերը քննում, Տիրոջ իրավունքը չհամարձակվենք մեր ձեռքն առնել, այլ մաքսավորի նման մշտահոս արտասուքով դիմենք Փրկչին՝ ասելով. «Աստուած, քաւեա զիս զմեղաւորս» (Ղուկ. ԺԷ. 13):

Մոտենում է ամավերջը: Բոլորս գնահատում ենք մեր արածները, ձեռքբերումներն ու նվաճումները՝ անձնական, ընտանեկան, աշխատանքային կյանքում, ըստ մեր կարողության ու սահմանի, սակայն եկեք ուսանենք այսօրվա ավետարանական դրվագից ու չհպարտանանք դրանցով, այլ հայցենք Աստծո ողորմածությունը, ինչպես մաքսավորներ՝ ստանալու Տիրոջ շնորհներն ու արդարությունը՝ վասն մեր բարօրության, որովհետեւ «Ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի, եւ ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա» (հմմտ. Մատթ. ԺԳ. 12):

«Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն»:



ԳՈՎԵՍՏ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԵՒ ՄԻՇՏ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄԻ*

Քրիստոսասեր հավատացյալներ, նորապանչ ուրախությամբ տոնեցե՛ք այս օրը [Ս. Ծնունդի] եւ մեծահրաշ ցնծությամբ բերկրեցե՛ք, որովհետեւ ահա երկիրքը երկրին ձայն է տալիս ու Բեթղեհեմում ծագած փառքն է ավետում:

Այսօր մեզ համար ցանկալի է Բեթղեհեմում գտնվող Դավթի ջրհորը, քանի որ Աստծուց իջած գետը [Քրիստոս] այնտեղից հորդահոս բխումով արբեցնում է տիեզերքը: Արդարեւ, Դավթի օրինակը նախապես մատնանշեց գալիք ճշմարտությունը, քանի որ Տիրամայրը կենդանի ջրի [Քրիստոսի] ինքնաբուխ ջրհորը եղավ, որից չհամարձակվեց խմել նրան պահողը [Հովսեփը], որովհետեւ անաղտ սրբությամբ կնքվեց կուսական մարմինը, որից էլ ծագեց արդարության Արեգակը եւ իր ճառագայթավետ լույսով լուսավորեց աշխարհը:

Արդ, ի՞նչ ասեմ կամ ի՞նչ խոսեմ, քանի որ միտքը եւ լեզուն չեն կարող արժանի պատիվ ընծայել կուսական այս տոնին, որովհետեւ հնարավոր էլ չէ խոսքով Աստծու մարդասիրությունը չափել եւ ոչ էլ թվով հաշվել այն բազմամեծար հարգանքը, որին արժանի է Մարիամը: Ո՞վ, ուրիշ ո՞վ լսեց այսպիսի սքանչելիք, որ Տերը եւ Ստեղծիչը հանձն առավ որպես մանուկ ծնվել աղախնից՝ հողեղեն ստեղծվածից: Այո՛, Նախահորն ու առաջին կույսին (Ադամին ու Եւային) իրենց գլորումից կանգնեցնել կամենալով՝ Աստվածորդին իսկապես ծրարվեց Մարիամի որովայնի մեջ ու այսօր ճշմարտապես ծնվեց որպես մանուկ: Ուստի եկեք ամեն խոսքից

* Բնագիրը տե՛ս «Երանելւոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ Կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին. եւ ի Սուրբ Գրոց լուծմունք նոցին», գիտաքնն. բնագիրը՝ Գ. Տէր-Մկրտչեանի, լրացումները՝ Յ. Քէսեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. Գ., Զ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 389—395: Առկա է նաեւ այս երկի արեւմտահայերէն փոխադրումը (տե՛ս ՊԵՏՐՈՍ ՔԵՐԹՈՂ ՄԻՆԵՍԵՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Գովեստ Սուրբ Աստուածածնի եւ միշտ Կոյս Մարիամի, արեւմտահայերէնի վերածեց՝ Զարեհ վրդ. Ազնաւորեանը, «Հասկ», 1978, էջ 374—378):

էլ առավել պատվենք այս օրը՝ երկիրը երկնքից բարձրացած իմանալով: Արեւելքից ավելի հրաշափառ տեսնենք Սուրբ Կույսին եւ հրեշտակներից առավել հովիվներին մեծարենք ու քերովբեներից էլ ավելի լա՛վ ճանաչենք մսուրը: Երուսաղեմը եւս շատ ավելի պայծառացավ, քան հրեղեն կառքը:

Այս արտահայտությունները ճարտասանական խոսքեր չեն, որ շարադրել ենք մտածումի ճիգով, քանի որ աստվածադիր մատչանները շատ վաղուց նույն բանը քարոզեցին: Քանի որ ահա ինքնագո չաչրը, որ Դավթի բերանով խոսերգեց՝ «Դու ես իմ որդին, եւ ես այսօր ծնեցի քեզ» (Սղմ. Բ. 7) եւ հրեշտակներին ու մարդուն ստեղծեց՝ նրանց բանավոր բնություն պարգեւելով, այսօր կարծես վերստին իրենից ծնում է Բանին:

Արդ, ասա՛, թե ո՞ր խոսքը կարող է հյուսել գովքն այս օրվա, երբ օրերի ու խոսքի ստեղծիչը հանձն առավ վերստին ծնվել: Մի՞թե սնափառ պարծանք է ասելս, թե երկիրը երկնքից ավելի բարձր իմանանք: Չէ՞ որ երկինքը սպասավոր հոգիների [հրեշտակների] բնակարանն է, մինչ երկիրը ամենքի Աստծու սեփական քաղաքը եղավ, ինչպես որ մարգարեն էլ էր նախապես հայտարարում, ասելով՝ «Այս է մեր Աստված, որի հետ չի կարելի բաղդատել որեւէ մեկին... ապա երկրի վրա երեւաց ու շրջեց մարդկանց հետ» (Բարուք Գ. 36, 38):

Կամ «Կույս Մարիամին արեւելքից շատ ավելի մեծ փառքով տեսանք», ասելով՝ արդյոք մեծամտությունմբ պետք եղածից ավելի՞ չափազանցրի: Քա՛վ լիցի, քանի որ թեպետ արեւելքը պատվական է տունչենի լույսը մեզ վրա ծագեցնելու համար, բայց ո՛չ աղախին Տիրամոր չափ, որի մեջ բնակվեց ամենքի Աստվածն ու որից արեգակնաբար ծագեց աշխարհի վրա:

Քերովբեներից էլ ավելի ընտիր կոչելով մսուրը՝ մի՞թե տհասությունմբ տարբեր բաների մասին չբարբառեցի: Չէ՞ որ ահա նա, ումից վեցթեւյան [սերովբեները] հեռվից իսկ հիացումով սարսուռն են, այսօր բազմում է մսուրի մեջ այնպես, ինչպես իր Հոր ծոցի մեջ: Ուստի եւ մարգարեական շնորհների շուրթերը, քերովբեների ճախրը դիտելով, ճշմարտաբար երկիրը երկնքի հետ համեմատեցին ու մանավանդ մարդկանց էլ հրեշտակներից գերազանց ներկայացրին: Քանի որ նա, ում տեսքից երկինքը մոմի պես հալվում է, այսօր ամփոփվում է քարայրի մեջ: Սրա համար է, որ առկավոր խոսքը զարմացական հիացումով հարցնում է, թե «ո՞րն է լույսի բնակարանը» (Հոբ ԼԸ. 19), քանի որ հայրենի ծոցից որպես հուր փայլակնացավ ու խոսուն հողի [Մարիամի] մեջ անվնաս ծրարվեց, ըստ

նույն կանխասացության, թե՛ «երկիրը, որից հաց է ելնում, իր տակ կրակի նման բաներ ունի» (Հոբ ԻԸ. 5), ինչն էլ մյուս մարգարեն հայտնապես մեկնում է, թե՛ «Հաց ես տալիս երկրից» (Սղմ. ՃԳ. 15), այսինքն՝ նա իր մարմինը սուրբ Կույս Մարիամից առավ:

Ինչպիսի՜ անպատում երանիններ տրվեցին սուրբ Կույսի որովայնին, որը մարգարեության հոգին Դավթի բերանով «սուրբ լեռ» կոչեց. «Նրա հիմքերը սուրբ լեռան վրա են» (Սղմ. ԶԶ. 2): Արգարեւ, այս լեռան մեջ էր, որ մարդեղությանը երկու աշխարհներ՝ աստվածություն ու մարդկություն, սկիզբ ունեցան անբաժանելի միավորությամբ: Հետեւաբար թող ոչ ոք չհամարձակվի սուրբ Կույսից ծնվածին սոսկ մարդ կոչել, որովհետեւ Բարձրյալն ինքը նետեց հիմքերը նրա [Կույսի] մեջ, ինչպես որ հրեշտակն էլ հայտարարեց, որ «նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մտթ. Ա. 20): Սաղմոսագիրն էլ ասում է. «Տերը Հակոբի բոլոր բնակարանների միջից Սիոնի դռներն ամենաշատն է սիրում» (Սղմ. ԶԶ. 2): Անսկիզբ Բանն Աստված իր համար Սիոնի դուռ դարձրեց սուրբ Կույսի մարմինը, հրեշտակի տված ողջույնի հետ Մարիամի լսելիքից ներս վազեց, ու իննամսյա ժամանակով մարմնի մեջ ինքն իրեն թանձրացնելով՝ անմահացնող Տերն առանց զգվելու դուրս ելավ այնտեղից, որտեղից բոլոր մահկանացուներն են ծնվում: Ինչպիսի՜ մեծ խորհուրդ, քանի որ մտավ ու ելավ եւ կուսության դռները փակ պահեց:

Արդ, ինչպիսի՜ օրինակներով քեզ ներկայացնենք ու գովենք, սուրբ Աստվածածին, որովհետեւ ահա եղար Աստվածատունկ դրախտ, Վայելուչ այգի, Անկիզելի մորենի, Սուրբ լեռ, Զրաբուխ ժայռ, Ծաղկյալ գավազան, Ոսկի սափոր, Անուշահոտ խունկերի տուփ, Կենդանագիր ուխտի տապանակ, Կենդանի ջրի ջրհոր, Բարի բույս, Շափյուղայի վայր, Աստծու քաղաք, Փակված պարտեզ, Կնքված աղբյուր, Կնդրուկի բլուր, Շուշանի հովիտ, Անջրդի հող, Թեթեւ ամպ, Անկոխ անապատ, Կողպված դուռ, Անընթեռնելի տոմար, Բանավոր երկիր, Խաղաղության առավոտ:

Այս բոլոր կոչումները մարգարեները շնորհեցին կանխավ: Իսկ մենք սկսենք բացատրել սրբերի կողմից քեզ տրված այս քսանչորս վկայությունները:

Ա. Ուրախացիր, Մարիամ, Աստվածատունկ դրախտ, որովհետեւ աստվածաբույս մարմինը՝ որպես կյանքի ծառ, քո մեջ արմատացավ ու Բարձրյալի զորությունը քեզ անհպելի տաղավարի վերածեց բոցեղեն սրի կողքին:

Բ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Վայելո՛ւչ այգի, որում ճշմարիտ որթը տնկվեց Հոր կամքով: «Իր էջը որթին պիտի կապի,- գրված է,- եւ իր ավանակը՝ որթի ոստին» (հմմտ. Ծննդ. ԽԹ. 11): Այստեղ Բանն Աստված «որթ» է կոչվում, իսկ մարմինը՝ «ոստ»: Եւ Միածինն ինքն էլ ասում էր. «Ես եմ ճշմարիտ որթը» (Հովհ. ԺԵ. 1):

Գ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Սխրալի՛ մորենի, որ աստվածության կրակով վառվելով՝ անկեզ մնացիր:

Դ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Սո՛ւրբ լեռ, որտեղ Ստեղծիչը՝ առաքաստով վարագուրված, նորահրաշ տնօրինությանը երեւաց Մովսեսին:

Ե. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Ապառա՛ծ վեմ, որից հորդահոս վտակը հոսելով համայն աշխարհի ավետիսն է հնչեցնում. «Եթե մեկը ծարավ է, թող գա ինձ մոտ ու խմի» (Հովհ. է. 37):

Ձ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Ծաղկա՛ծ գավազան, որի վրա Հեսսեի արմատից բուսնեց մշտադալար ծաղիկը, որի նախատիպն էր Ահարոն քահանայապետի ցուպը, որն էլ, վկայության խորանի մեջ բողբոջելով, ճյուղ արձակեց:

է. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Ոսկի՛ սափոր, որ ոչ թե մահկանացու ուտելիքը կրեցիր, այլ անմահացնող կերակուրը, որի համար աստվածային բերանն ինքն ասաց. «Ձեր հայրերը անապատում մանանան կերան եւ մեռան, բայց ով որ իմ մարմինն ճաշակի, հավիտյան մահ չպիտի տեսնի» (հմմտ. Հովհ. Ը. 51–52):

Ը. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Խնկաբույր յուղով լցվա՛ծ տուփ, որից մեծագին նարդոսը բուրեց ու աստվածային անուշահոտությանը լցրեց տիեզերական տունը:

Թ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Շարժո՛ւն տապանակ, որի մեջ կենդանագրվեց մշտնջենավոր Բանը եւ նորոգեց փշրված մովսիսակերտ քարեղեն տախտակները՝ նրանց փոխարեն աստվածային օրենքները չորս բանավոր տախտակների վրա դրոշմելով:

Ժ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Կենդանի ջրի՛ տուն, որի մասին մարգարեն ասում էր. «Տիրոջ տնից աղբյուր պիտի ելնի եւ հեթանոսների բաժինը ոռոգի» (հմմտ. Հովել Գ. 19), ինչպես Միածինն ինքը եւս ասաց. «Ես եմ կենդանի ջուրը» (Հովհ. Դ. 10–11):

ԺԱ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Բարի բույս՝ ըստ իր մահճի մեջ կենարար Քրիստոսին ակնարկած Հակոբի, թե՛ «Շառավղից ելար, որդյակ՝» (Ծննդ. ԽԹ. 9):

ԺԲ. Ուրախացիր, Մարիամ, Աստծու քաղաք՝ ըստ երանելի Դավթի, որ դեռ շատ առաջ երգեց. «Տերը փառավոր բաներ խոսեց քո մասին, Աստծո՛ւ քաղաք» (Սղմ. 22. 3):

ԺԳ. Ուրախացիր, Մարիամ, Շափյուղայի բնակարան, որովհետեւ աստվածախառն մարմինը քո մեջ գոյացավ իբրեւ պատվական ակն, որը՝ որպես ընտիր քար, դրվեց Սիոնի հիմքում:

ԺԴ. Ուրախացիր, Մարիամ, ըստ ամենիմաստ Սողոմոնի՝ Կնքյա՛լ աղբյուր (հմմտ. Երգ Երգոց Դ. 12), որից, առանց կոուսության կնիքը լուծելու, բխեց ամենալից գետը:

ԺԵ. Ուրախացիր, Մարիամ, Փակվա՛ծ պարտեզ, որ բազմաբերք ձիթենին վերընձյուղեցիր, որի մասին Եսային մարգարեացավ, թե՛ «Դալիք օրերին Հակոբը նոր տունկեր պիտի բուսեցնի, Իսրայելը պիտի ծաղկի եւ ընձյուղվի, ու ամբողջ աշխարհը նրա պտղով պիտի լցվի» (Ես. Իէ. 6):

ԺԶ. Ուրախացիր, Մարիամ, Անվա՛ր հովիտ, որից տերունական մարմինը բուսեց վայրի շուշանի պես եւ որի մասին խոսեց հոգեւոր մարգարե Ովսեն՝ ասելով. «Իսրայելի համար ցող պիտի լինեմ, եւ այն շուշանի պես պիտի ծաղկի» (Ովս. ԺԴ. 6):

ԺԷ. Ուրախացիր, Մարիամ, Խունկի բլու՛ր, ուր Տերը մտնելով մահականացու նյութն անմահության հոտով համեմեց ու կենդանիների եւ մեռյալների այս աշխարհում ծնվելով՝ հավիտենական կյանքի խոնկը ծխեց, ինչպես որ մարգարեությունն էր նախագուշակում. «Այն կնդրուկի պես պիտի բուրի» (Ովս. ԺԴ. 7):

ԺԸ. Ուրախացիր, Մարիամ, Հո՛ղ անջրդի, որի շոր բնությունը որեւէ արվական բնություն չհամարձակվեց խոնավեցնելով աղարտել: Այդ իսկ պատճառով մարգարեն Քրիստոսին նրա վրա ծլարձակած նկարագրեց, ինչպես ապառաժի վրա ծլած մի բույս՝ ասելով. «Նա մեր առջեւ բացվեց մատղաշ տունկի նման, անջրդի հողում բուսնած արմատի պես» (Ես. ԾԳ. 2):

ԺԹ. Ուրախացիր, Մարիամ, Ա՛մպ թեթեւ՝ ըստ Եսայի մարգարեի կանխասացության. «Ահավասիկ Տերը, թեթեւ ամպի վրա նստած, Եգիպտոս պիտի գա» (Ես. ԺԹ. 1): Արդարեւ, ցամաք ամպ ես դու, քանի որ աշխարհային ցանկություններով չխոնավացար ու չծանրացար:

Ի. Ուրախացիր, Մարիամ, Անկո՛խ անապատ, որում ո՛չ թե մի պարզ մարգարե կանգնեցրեց վկայության խորանը, այլ Աստվածորդին Ինքը՝ մեծ, կատարյալ եւ անձեռագործ խորանը, այսինքն՝ տիրական Իր

մարմինը, որն առանց արվական սերմի ստեղծեց եւ որը, լուսազգեստ արգանդում սաղմնավորելով, կանգնեցրեց, ինչպես հոգեհնչող քնարը՝ [Դավիթն] է ասում. «Արեւի մեջ կանգնեցրեց իր խորանը» (Սղմ. ԺԸ. 6):

ԻԱ. Ուրախացիր, Մարիամ, Կողպւած դուռ, որից միայն հրեշտակների Տերը մտավ ու ելավ եւ կուսական արգանդը չլուծեց, ինչի մասին մարգարեացավ Եզեկիելը. «Արեւելյան կողմի դուռը փակ պիտի մնա, պիտի չբացվի, ու այնտեղից որեւէ մեկը չպիտի մտնի կամ դուրս գա, որովհետեւ այնտեղով Իսրայելի Տեր Աստվածը պիտի մտնի ու ելնի, բայց դուռը փակված պիտի մնա» (Եզեկ. ԽԴ. 1–2):

ԻԲ. Ուրախացիր, Մարիամ, Անընթեռնելի՛ տոմար, որովհետեւ թեպետ Հովսեփը կարգաւ գիտեր, քանի որ այլ կին ուներ եւ անփույթ էլ չէր մարմնական միավորության գործում, սակայն չհամարձակվեց քեզ կարգաւ, ինչպես որ մարգարեն ասաց. «Թուղթը պիտի տրվի մի մարդու, որը կարգաւ գիտի, սակայն չպիտի կարողանա այն կարգաւ» (հմմտ. Ես. ԻԹ. 12):

ԻԳ. Ուրախացիր, Մարիամ, Բանավոր երկիր, որովհետեւ աստվածը նկալ քո որովայնը ոչ միայն աթոռ, այլեւ ճշմարտապես մայրը եղավ լուսի, ուստի եւ շնորհալից վարդապետներից մեկը գրեց, թե՛ «որպես Աստված եւ ճարտարապետ, երկիրը վերստեղծելով, երկնքի վերածեց»:

ԻԴ. Ուրախացիր, Մարիամ, Գեղեցիկ առավոտ, որով ծագած մեր խաղաղությունը զարմանալի հորինմամբ երկուսը մեկ դարձրեց եւ ըստ սուրբ Զաքարիայի՝ «արեգակնաբար ծագեց մեզ վրա՝ մեղքերի խավարը փարատելու համար» (Ես. ԻԹ. 12):

Արդ, ուրիշ ի՞նչ նմանատիպ օրինակ կարող ենք ընծայել սուրբ Աստվածածնիդ: Չէ՞ որ ահա գերազանց ես խոսքերից, գերիվեր ես բոլոր էակներից եւ բարձր ես մարդկային մտքից, որովհետեւ Սուրբ Հոգին իջավ քեզ վրա, եւ Բարձրյալի զորությամբ տաղավարացար: Քանի որ Աստծուն ընդունեցիր, Աստծուն հղացար, Աստծուն երկնեցիր, Աստծուն ծնեցիր: Քանի որ անպարագրելի Աստծուն գրկիդ մեջ կրեցիր, կաթով սնուցեցիր ու կերակրեցիր, Աստծուն գգվեցիր եւ որպես մանկան՝ խանձարուրով պատեցիր Նրան, ում համար երկինքը աթոռ է եւ երկիրը՝ ոտքերի պատվանդան, եւ ում իսկությունը երկինքներն իսկ չեն կարող պարփակել:

Սակայն ի՞նչ կարիք կա այսպես ինքս ինձ չարչարելու, կամ ինչո՞ւ ինձ շփոթեցնեն երանության արտահայտությունները, քանի որ ահա երկինքը, որ Սինա լեռան վրա բոցավառ կրակով դրդալուով՝ սանդարամետի

հիմքերը սասանեց, եւ ձեռքերը, որոնք երկինքն ու երկիրը ստեղծեցին, այժմ իբրեւ մատների մեջ բաժակ բռնած պարմանի՝ մատուցում են այն մի աղջկա:

Արդ, գովուլթյան այս խոսքերը ոչ այլ ինչ են, քան քո իսկ մարգարե-
ությունը, թե՛ «այսուհետեւ բոլոր ազգերը երանի պիտի տան ինձ» (Դուկ.
Ա. 48): Արդ, աղաչում ենք քեզ, սո՛ւրբ Աստվածածին, բարեխոս եղիր քո
Որդու եւ մեր Աստծու մոտ, որ Նա քո միջոցով միշտ փրկի Իրեն հավա-
տացող մեր ժողովրդին, եւ մենք Նրան, որ ծնվեց քեզնից, փառավորենք
այժմ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

Աշխարհաբարի վերածեց
ԳԵՒՈՐԳ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ



Տ. ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԱՎԱԳՅԱՆ

ՋՐՅՈՐԻ ԵՒ ԹՈՆՐԻ ՀԵՏ ԿԱՊԱՍԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՆԻՔՆԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ջրհորի եւ թոնրի հետ կապված ժողովրդական մի շարք հավատալիքներ հոգեւոր վերաիմաստավորմամբ ծիսականորեն արտահայտվել են եկեղեցական տարբեր արարողությունների միջոցով:

Ջրհորը եւ թոնիրը որքան էլ իրար հակադիր, սակայն գտնվում են սերտ կապակցության մեջ, որը պայմանավորված է հետեւյալ երկու հանգամանքներով:

Առաջին՝ կրակը եւ ջուրը, լինելով հակոտնյա, չորս տարրերի՝ օդի, հողի, ջրի եւ հրի շրջանակում միաժամանակ իրար լրացնում են: Դրանք, որպես օդի խոնավությանը չորություն հաղորդող եւ հողի չորությանը խոնավություն հաղորդող տարրեր, սերտորեն կապված են միմյանց:

Երկրորդ՝ նախնադարյան մարդու համար կյանք պարգեւող երկու գլխավոր հասկացությունները կրակն ու ջուրն էին: Կրակը գիշերաչին լույսով եւ պարգեւող ջերմությամբ նաեւ ծիսական պաշտամունքի առարկա էր եւ երկար ժամանակ պաշտվել է:

Հեթանոսական տոհմացեղային բազինում կրակը պետք է միշտ վառ մնար: Մեծագույն հանցանք էր համարվում կրակը վիրավորելը: Այնուհետեւ այս ըմբռնումն ավելի նեղ՝ տոհմային շառավղով փոխանցվեց գերդաստանի ակուծին, որի հաջորդ սահմանափակ արտահայտությունը դարձավ տան թոնիրը:

Տանը կրակը դադարում էր վառվելուց միայն այն ժամանակ, երբ ընտանիքը հեռանում էր այդ տնից կամ ոչնչանում էր: Այդ իսկ պատճառով էլ սոսկալի արտահայտություն էր «ակուծիդ կրակը (կամ ծուխը) մարի» անեծքը:

Կրակի պաշտամունքի մթագնած հետքերն արտահայտվել են կրակի հետ կապված ժողովրդական սովորությունների, ինչպես նաեւ գերդաստանի ակուծի եւ տան թոնրի հետ կապված արարողությունների մեջ: Վարանդայի օրինակը նկատի ունենալով՝ Ե. Լալայանը կրակի

պաշտամունքի մասին գրում է. «Կրակի պաշտաման վերաբերեալ դեռ եւս շատ մնացորդներ կան. այսպէս, շատ սովորական է կրակով երդուիլը. միշտ ասում են՝ կրակը օրհնի, մեղք համարելով ասել կրակը հանգցրու: Եւ գրեթէ բոլոր պառանները նախ քան կրակ հանգցնելը խաչակնքում են եւ «Յիսուս ու Քրիստոս» ասում»¹: Նույն այս պատճառով Վասպուրականում «Յերեկը վառուած նրազը փշելով չեն մարում, մեղք է, այլ ձեռքի շարժումով օդի հոսանք յառաջ բերելով, այլապէս տան նրազն էլ կը մարի»²:

Կրակի երբեմնի պաշտամունքի հիշողության դրսեւորումներից է նրան որեւէ ձեւով չվիրավորելը. «Կրակը չեն ծեծում եւ ոչ թֆնում վերան եւ կամ ոտը դնում, մեղք համարելով այդ. ինչպէս եւ չեն անցնում վերայից»³: Կրակին չվիրավորելն ավելի ընդգծված ձեւով է արտահայտվել Վասպուրականում. «Կրակի վրայ թֆնելը մեղք են համարում եւ կարծում են, որ թֆնողի բերանում վերքեր են գոյանում, այս պատճառով եւ պառաւ կանայք հաց կամ բաղաւջ թխելիս բերանները կապում են, որպէսզի նոյն իսկ պատահմամբ թուփ կաթիլներ չցայտեն կրակի վրայ»⁴:

Ինչպես կյանքի երկու կարեւոր բաղադրիչներն էին կրակը եւ ջուրը, այնպես էլ տնային ընտանեկան կենցաղն էր անպատկերացելի առանց ջրհորի եւ թոնրի: Ժողովրդական ավանդույթյուններում ոչ միայն ջրհորն է հաճախ փոխակերպվում թոնրի, այլեւ անգամ մի շարք սրբազան ջրհորներ թոնիր են անվանվում, ինչպես կտեսնենք ստորեւ:

Ակուլթը խորհրդանշել է որդուց որդի փոխանցականությունը, որով ընդգծվել է գերդաստանի եւ ընտանիքի շարունակականությունը՝ ակուլթի շեն մնալուն վերաբերող բարեմաղթանքներով: Ակուլթի գաղափարն ու պաշտամունքն ընտանիքում արտահայտվում էր թոնրի միջոցով: Ակուլթի եւ կրակի՝ ընտանիք խորհրդանշելն արտահայտվել է նաեւ եկեղեցական-համայնքային կյանքում, ուր ընտանիքն անվանվում է «ծուխ», իսկ համայնքի անդամները՝ ծխականներ: Եկեղեցական համայնքի այսքան տուն կամ ընտանիք ունենալու մասին ասվում է, որ այսքան ծուխ ունի:

Հարսանեկան ծեսը երեք գլխավոր բաժիններից էր կազմված: Առաջին՝ հարսին հայրական տնից դուրս հանելը, երկրորդ՝ հայրական տնից

¹ Ե. ԼԱՆՅԵԱՆ, Վարանդա, «Ազգագրական հանդէս» (այսուհետ՝ ԱՀ), գիրք Բ., Թիֆլիս, 1897, էջ 194:

² Ե. ԼԱՆՅԵԱՆ, Վասպուրական, ԱՀ, գր. ԻԵ., Թիֆլիս, 1908, էջ 50:

³ Ե. ԼԱՆՅԵԱՆ, Վարանդա, ԱՀ, գր. Բ., էջ 194:

⁴ Ե. ԼԱՆՅԵԱՆ, Վասպուրական, ԱՀ, գր. ԻԵ., էջ 50:

մինչև փեսայի տուն տանելը, որի գլխավոր կետն էր եկեղեցում Ս. Պսակի արարողությունը, երրորդ՝ նորահարսին փեսայի տուն հասցնելուց մինչև առագաստ մտնելը:

Այս երեք բաժիններում էլ կարելու տեղ էր հատկացվում թոնրին: Գանձակում հարսը, շրջապատված ընկերուհիներով, դուրս էր գալիս իր սենյակից եւ մոտենում տան ակութին, ծնրադրում եւ այնտեղից մոխիր էր վերցնում: Աղջկա հայրը բռնում էր նրա ձեռքից եւ հանձնում փեսայի հորը: Հարսն ու փեսան, ձեռք ձեռքի տված, պտտվում էին թոնրի շուրջը, որից հետո աղջիկը համբուրում էր թոնիրը որպես հրաժեշտ հայրական տանը: Հետո նրան հանում էին հայրական տնից: Ս. Պսակի արարողությունից հետո՝ հարսի տնից փեսայի տուն գնալու ճանապարհին, մինչև փեսայի տուն հասնելը նախ գյուղի ընդհանուր ակութն էին գնում համբուրելու, որով ստանում էին ողջ տոհմի նախահոր օրհնությունը: Հարսն ու փեսան տղայի տուն հասնելուց հետո նախ տան ակութի կամ թոնրի շուրջն էին երեք անգամ պտտվում, ապա գնում համբուրում էին թոնիրը⁵:

Հարկ է նշել, որ միայն ժողովրդական հավատալիքներում չէ, որ թոնրին ու ջրհորին մեծ տեղ է հատկացվել: Նրանց ծիսական պաշտամունքի մասին հիշատակություններ ենք գտնում նաեւ Հին Ուխտի նահապետների շրջանից՝ սկսած Աբրահամից ու Մովսեսից: Սուրբ Գրքի հայերեն համաբարբառում թոնիրը հիշված է 7 անգամ: Առաջին անգամ հիշվում է Ելից գրքում: Աստված Մովսեսին պատվիրում է ասել փարավոնին, որ եթե նա թույլ չտա հրեաներին դուրս գալ եգիպտական գերությունից, ապա Մովսեսը գավազանով կխփի, եւ գետ կբխի, որը կհոսի դեպի փարավոնի տունը, ինչպես նաեւ «... ի շտեմարանս սենեկաց քոց եւ ի գահոյս քո, եւ ի տունս ծառայից քոց եւ ժողովրդեան քո, եւ ի թոնիրս քո» (Ելք Ը. 3):

Ջրհորն Աբրահամի ժամանակ արդեն ընկալվել է որպես սրբազան վայր, ուր չէր կարելի սուտ երգում տալ: Դա երեւում է Ծննդոց գրքի այն հատվածից, ուր ասվում է, որ Աբրահամը Աբիմեղիքի հետ երգվեց ջրհորի մոտ «...անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ Ջրհոր երգման, զի անդ երգուան երկոքին միմեանց: Եւ անդ եղին ուխտ առ Ջրհորին երգման» (Ծննդ. ԻԱ. 31–32):

Ջրհորի հանդեպ հարգության կամ որոշակի պաշտամունքի դրսեւորում կարելի է համարել այն, որ նրա մոտ երգվելուց հետո «...տնկեաց

⁵ Տե՛ս Ե. ԼԱՆՅԱՆ, Վարանդա, ԱՀ, գիրք Բ., էջ 195:

Աբրահամ տունկ առ Ջրհորովն երգման, եւ կարդաց անդ զանուն Տեառն, Աստուած յաւիտենական» (Մննդ. ԻԱ. 33—34):

Թոնիրն ու ջրհորն ունեն պաշտամունքային վայրերին բնորոշ մի շարք հատկանիշներ: Նրանց վիրավորելը ծանր եւ պատուհասող մեղք է: Նրանք բուժիչ հրաշագործ հատկություն ունեն եւ ուխտագնացության վայրեր են:

Ժողովրդական մտածողության մեջ թոնիրն ուղղակիորեն որպես եկեղեցի է ընկալվել, որը վկայակոչել են երգվելիս: Թոնրի մոտ Ս. Մկրտություն եւ Ս. Պսակ է կատարվել: Սուրմալուի գավառին նվիրված ազգագրական ուսումնասիրության մեջ Ավ. Ահարոնյանը գրում է. «Հացի թոնիրը համարում է «տանառ». դրանց վրայ երդուելով ասում են՝ «այս տանառը վկայ»: Թոնրի շուրջն են կատարում շատ անգամ երեխայի մկրտությունը»⁶:

Վասպուրականում «Եթէ գիտում եկեղեցի չի լինում եւ կամ շատ հեռու է լինում, պսակը կամ մկրտությունը կատարում են թոնրի կամ բուխարիկի առջեւ»⁷, Վարանդայում «Եկեղեցի չեղած տեղում պսակը այդպիսի օճախի վրայ է կատարում»⁸:

Գյուղական տան համակարգում թոնրի դիրքը նույնպես վկայում է, որ այն, նախատեսված լինելով հաց թխելու համար, եկեղեցու խորանին բնորոշ կառուցվածքային որոշակի հատկանիշներ ունի, որոնք նկատելի են ԺԹ. դարից պահպանված գյուղական տների թոնիրներում եւ մեզ են հասել ազգագրական ուսումնասիրություններից:

Զավախքում թոնրատունը եկեղեցու խորանի նման բարձր է գետնից. «Թոնդրօնախը տան հատակից 0,5—1 արշին բարձր եւ հանախ բոլորակաձեւ է լինում»⁹:

Դիմահայաց կանգնողն ակամա իրեն զգում է Ս. Խորանի առջեւ, որի կենտրոնում Ս. Սեղանի նման թոնիրն է: Ինչպես որ Ս. Սեղանի երկու կողմերում գտնվում են խոշոր ավանդատները, որոնցից մեկում Ս. Պատարագի նշխարն է պահվում եւ մյուսում՝ գինին, այնպես եւ թոնրի երկու կողմերում երկու ավանդատուն-պահարաններ կան. «Պատերի մէջ սովորաբար լինում են երկու փոփոխ անդուտ պահարան, որոնց մէջ դրում են թթմորը, բաթաթը, գրդընակը, թաթակիշը, դաստրակը եւ այլն: Մի անկիւնում էլ դրուած է լինում շիշն ու ակիշը»¹⁰:

⁶ Ա. ԼԱՍՏԻՍԵԱՆ, Ժողովածու երկերի, հտ. Գ., Հոօ կինը, Պոսթըն, 1948, էջ 77:

⁷ Անդ, էջ 51:

⁸ Ե. ԼԱՍՏԵԱՆ, Վարանդա, ԱՀ, գիրք Բ., էջ 195:

⁹ Ե. ԼԱՍՏԵԱՆ, Երկեր, հտ. Ա., Երեւան, 1983, էջ 131:

¹⁰ Անդ:

Ինչպես փոքր մատուռում Ս. Սեղանի վրա բարձրանում են գմբեթով պսակվող 4 սյուներ տաղավարի ու ամպհովանու նման, այնպես էլ ազգագրական տարբեր շրջաններում թոնրատունը ոչ միայն երեք պատեր ունեն, այլև թոնրի չորս կողմերում չորս սյուներ են բարձրանում, որոնց վրա տանիքից բացվում է երգիկը: Սա թոնրատուն-հորան զուգահեռի մի կարեւոր ընդհանրություն է: Ավելին, այս չորս սյուները ոչ թե պարզապես հողի մեջ էին թաղված լինում, այլև հիմնված էին քարե պատվանդանի՝ «սընաքարի» վրա¹¹:

Թոնիր — Ս. Սեղան զուգահեռին նպաստել է նաեւ այն հանգամանքը, որ երկուսն էլ իրենց գործառույթով հարաբերվել են եւ հացի թխման, եւ Ս. Խորհրդի կատարման համար պատրաստվող նշխարի հետ:

Թոնիր — Ս. Սեղան զուգահեռն առավել ցայտուն է արտահայտվել ջրհորի վերածված թոնրում երեցկնոջ՝ ձուկ դառնալու պատմության մեջ: Ժողովրդական այս հեքիաթ — պատմությունն օգնում է նաեւ ամբողջացնելու թոնիր — հացի թխում — եկեղեցու Ս. Խորան — եկեղեցուն կից հրաշագործ աղբյուր — ջրհոր փոխակերպումների շղթան, որն իր հերթին օգնում է հասկանալու ջրհորի, թոնրի եւ թխվող նոր հացի օրհնության կանոնների՝ ժողովրդական հավատալիքով եւ պաշտամունքով պայմանավորված շերտը:

Այս պատմությունը ոչ միայն հեքիաթ է, այլև մի շարք տեղավայրերի ջրհորների հետ կապված ստուգաբանական բնույթի հրաշախառն ավանդություն: Ասվում է, որ մի երեցկին լավաշ էր թխում, մի օտարական է ներս մտնում եւ հաց խնդրում, կինը տալիս է: Հետո հյուրը ճաշ է խնդրում, սա էլ կինը չի մերժում: Ապա մի համբույր է խնդրում, եւ երեցկինը բարկանում է: Այդ ժամանակ օտարականը համբույրն Աստծու անունով է խնդրում, եւ երեցկինը երկյուղելով թողնում է, որ օտարականը համբուրի: Պատմության ավարտը երկու տարբերակով է պատմվում: Մի տարբերակում ասվում է, որ այդ պահին ներս է մտնում քահանան, եւ երեցկինն ամոթից իրեն թոնիրն է նետում: Երկրորդ տարբերակում ասվում է, որ քահանան, իմանալով երեցկնոջ արածի մասին, բարկանում է, երեցկինը որպես արդարացում ասում է, թե համբույրն Աստծու անունով խնդրեց: Քահանան պատասխանում է, որ եթե ինքը կնոջն ասի՝ Աստծու անունով քեզ թոնիրը նետիր, արդյոք կնետի: Այս խոսքերի վրա

¹¹ Տե՛ս ՍՏ. ԼԻՍԻՅԱՆ, Զանգեզուրի հայերը, Երեւան, 1969, էջ 99:

երեցկիներն իրեն թոնիրն է նետում, որը ջրհորի է փոխվում, իսկ կինը դառնում է այնտեղ լողացող ձուկ¹²:

Այս ավանդույթյան մի քանի տարբերակներում ուղղակիորեն զուգահեռ է գծվում Ս. Սեղանի եւ Թոնրի ու Ս. Պատարագի հացի՝ նշխարքի եւ թոնրում թխվող հացի միջեւ: Եկեղեցում Ս. Պատարագ է մատուցում քահանան, եւ նույն այդ ժամանակ թոնրի առջեւ հաց է թխում երեցկիներ: Թոնրի մոտ հացի առջեւ մեղք է գործում երեցկիներ, եւ Ս. Պատարագի Ս. Սեղանի մոտ այն արտահայտվում է նշխարի չկտրվելով:

Ե. Լալայանը կատարել է այս տարբերակի լավագույն գրառումը, որը դարձյալ վերաբերում է Վասպուրականի Լեզք գյուղի մոտ գտնվող ջրհորին: Լեզքի մոտ գտնվող թոնիր — աղբյուրն անվանվում է «Նօթ թոնիր», որոնց մասին Լալայանը գրում է. «Լեզք գիւղի հիւսիս — արեւելեան կողմը մի քանի աղբիւրներ կան, որ «Նօթ թոնիր» են կոչում: Այստեղ գալիս են առաւելապէս կանայք եւ ամէն տեսակ հիւանդութեան համար բժշկութիւն հայցում»¹³:

Տեղագրական բացատրություն մեջ ասվում է. «Աւանդաբար պատմում են, թէ այս աղբիւրների տեղում մի ժամանակ մի շատ բարեպաշտ քահանայի տուն էր բարձրանում, ուր ամէն օր եօթը թոնիր էր վառում, թէ գերդաստանի անդամների եւ թէ բազմաթիւ հիւրերին հաց մատակարարելու»¹⁴:

Այս տարբերակն սկսվում է ոչ թե երեցկնոջ հաց թխելով, այլ քահանայի՝ Ս. Պատարագ մատուցելով. «Մի օր քահանան պատարագ մատուցանելիս նկատում է, որ իւր կտրած նշխարը սովորականի պէս չի կտրում, մնացել է միակտուր»¹⁵: Նա հասկանում է, որ այդ օրն իրենց տանը մեղք է գործվել: Հավարտ Ս. Պատարագի շտապելով տուն՝ հարցնում է երեցկնոջը, թե արդյոք նա որեւէ մեղք չի գործել: Երեցկիներ պատմում է համբույրի մասին հետեւյալ հարցադրմամբ. «...մի՞թէ կարելի էր մերժել, քանի որ Քրիստոսի սիրոյն համար էր»¹⁶:

Եթե նախորդ տարբերակներում միայն երեցկիներն էր թոնիրը նետվում, եւ կամ քահանան եւս նետվելով այրվում էր, ապա այստեղ նա ձուկ է դառնում երեցկնոջ հետ միասին¹⁷:

¹² Տէն ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ, 4. Պոլիս, 1874, էջ 53–54:

¹³ Ե. ԼԱԼԱՅԵԱՆ, Վասպուրական, ԱՀ, գիրք ԻԵ., էջ 33:

¹⁴ Անդ:

¹⁵ Անդ, էջ 33:

¹⁶ Անդ:

¹⁷ Տէն անդ, էջ 34:

Թոնրի՝ ջրհորի փոխվելու նախօրինակներից կարելի է համարել Մա-կաբայեցիների գրքի պատմությունը, ուր երեք երիտասարդներ հնոցն են նետվում, ինչպես նաեւ քրիստոնեության առաջին դարերի նահա-տակներին հնոցը նետելու մասին պատմությունները (Ս. Երեւթերիո-սի վկայաբանությունը): Ասվում է, որ երբ սրբին ցանկանում են նետել «...ի վառեալ թոնիր երկաթի», բանտապանը, տեսնելով նրա հավատքը, դարձի է գալիս եւ սրբի տեղը «...իմքն առկա ի թոնիր անդր վասն Քրիստո-սի եւ անառատ պահեալ զօրութեամբն Աստուծոյ՝ կատարեցաւ սրով»¹⁸:

Թոնրի եւ ջրհորի ժողովրդական պաշտամունքը հանգեցրել է ընտա-նիքի համար կենսական եւ պաշտամունքային այս երկու կառույցների եկեղեցական նվիրագործմանը օրհնության առանձին կանոններով: Այդ կանոնները վերաբերում են ոչ թե անմիջապես նոր կառուցված ջրհորի եւ թոնրի օրհնությանը, այլ դրանց մեջ որեւէ կենդանու ընկնելուց հետո կատարվող մաքրման արարողությանը: Օրհնում էին ոչ թե նոր կառույց-ված ջրհորը եւ թոնիրը, այլ դրանց օրհնությունը կատարվում էր ընկած կենդանու պատճառով պղծված կամ անմաքուր դառնալուց հետո:

Այս օրհնությունները, սակայն, չի կարելի նույնացնել կարասի, ամ-բարի ու անմաքուր կենդանիներով սննդի պահպանման այլ շտեմարան-ների մաքրման ընդունված կանոնի հետ: Վերջինիս վերաբերող կանոնով պարզապես կատարվում էր մաքրման ծեսը: Ջրհորի եւ թոնրի դեպքում, սակայն, օրհնության կանոնը միջանկյալ դիրք էր գրավում դրանց օրհ-նության եւ դրանք մաքրելու համար օրհնելու միջեւ: Կարելի է ասել, որ ջրհորի կամ թոնրի մեջ կենդանու ընկնելն առիթ է դարձել, որպեսզի կա-տարվի այս երկու կառույցների օրհնությունը եւ կատարվի ծիսական այնպիսի ձեւերով, որոնք բնորոշ էին Տնօրհներին եւ պաշտամունքային կառույցների օրհնությանը:

Հիշյալ երկու կանոններից ավելի հին է ջրհորի օրհնության կանո-նը, որը գալիս է ջրի օրհնության կանոնից, որն էլ իր հերթին կրում է Հռոմեական Եկեղեցու ազդեցությունը: Պատահական չէ, որ այն գտնվում է հայկական եւ լատինական ծեսերի միախառնումից առաջ եկած եւ «Սսեցւոց» անվանվող «Մաշտոցի» ձեռագրային տարբեր ընդօրինակու-թյուններում, ինչպես Սսում 1345 թ. գրված եւ դարձյալ «Սսեցւոց» անվան-վող Մաշտոցում: Այստեղ այն ունի հետեւյալ խորագիրը եւ սկսվածքը.

¹⁸ ՄԿՐՏԻՁ ՎՐԴ. ԱԻԳԵՐԵԱՆ, Ծաղիկ վարուց սրբոց զորս տօնէ եկեղեցին Հայաստանեայց, Վենետիկ, 1803, էջ 100:

«Կանոն արհնություն ջրոյ, զոր յամենայն կիրակէ քահանայն արհնէ եւ ցանէ ի վերայ ժողովրդեանն: Քահանայն դիցէ զուրարն ընդ պարանոցան, իսկ կէս սարկաւագն, բերէ ջուր եւ աղ. եւ քահանայն արհնէ այսպէս»¹⁹:

Աղն օրհնվում է եւ խառնվում ջրին, որովհետեւ թե՛ հոգեւոր իմաստով (Հիսուսի՝ աղի մասին խոսքերով՝ «Դուք էք աղ երկրի» (Մատթ. ե. 13) եւ թե՛ աղի բնական հատկանիշներով այն մաքրող եւ համեմող էր: Ինչպես կտեսնենք, ջրի եւ աղի օրհնությունն ու պղծյալ ջրհորի եւ թոնրի մաքրումը կատարվել է օրհնված ջրով եւ աղով:

Ջրի եւ մասամբ թոնրի օրհնության կանոնն անշատվել եւ առանձին կանոն է դարձել Խաչավաչի՝ օրհնված ջրով արտերը, հանդերը եւ այգիները բարեբեր դարձնելու եւ մորեխից ու տարբեր վարակներից ազատելու կանոնից: Խաչավաչի կանոնը, որ նաեւ ջրհորին է վերաբերել, երեւում է խորագրից: Ջրհորը Խաչավաչում օրհնվող հասկացությունների թվարկվող շարքում հիշվում է ջրհորին վերաբերող առանձին կանոնի ստեղծվելուց եւ տարածվելուց հետո նույնպես, ինչպես 1648 թ. գրված «Մաշտոցի» հետեւյալ կանոնի նկարագրությունում. «Կանոն Խաչալուայ առնելոյ, այգւոյ կամ անդոյ դրախտի, կամ պարտիզի կամ խաշանց կամ ջրհոր արհնելոյ, եւ այլ ամենայն պատահարաց զինչ որ լինիցի»²⁰:

Ջրհորի օրհնության կանոնի վերջում ասվում է, որ այն կազմել է Ներսէս Լամբրոնացին. «Տեառն Ներսէսի արքեպիսկոպոսին Տարսոնի Լամբրոնեցոյ է շինեալ զՋրհորարհնէքս ի լուսն եկեղեցական կարգաց, նմանեալ առաջնոցն [այսինքն Շնորհալոյն-Ն[որայր] վ. [Պողարեան] ըստ սրբութեան եւ գիտութեան: Եւ հաւատացաք, թէ յԱստուծոյ է պարգեւս այս, զոր Հոգւովն Սրբով տպաւորեաց ի միտս նորա. զի սա պակասէր ի գրոց: Եւ զանուն տեառն իմոյ մի պակասեցուցանէք ի գրելեացս»²¹:

Ալիշանը ջրհորի օրհնության կանոնը Լամբրոնացու կողմից կազմված լինելու մասին գրում է, որ լրացրեց «...եւ զկանոնս Օրհնութեանց պակասեալս ի Մաշտոցի»²²: Տողատակում տրված ծանոթագրության մեջ վերստին ասվում է, որ Լամբրոնացին լրացրեց Օրհնության «Մաշտոց» ծիսարանում պակասող մի շարք կանոնները՝ «...որպիսիք են

¹⁹ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Գ., Վենետիկ, 1966, էջ 155:

²⁰ Անդ, էջ 480:

²¹ Անդ, էջ 450, 388: Տէս նաեւ ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ՊՈՂԱՐԵԱՆ, Ծիսագիտութիւն, Նիւ-Եորք, 1990, էջ 116, Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ, Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի, Վիեննա, 1956, էջ 186:

²² Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սրտուան, Վենետիկ, 1885, էջ 90:

կանոն ինչ ջուր օրհնելոյ, Պղծեալ ջրհոր օրհնելոյ եւ Զեռնադուրօթեան կարգաւ լրմումն»²³։

Կանոնն իր կանոնականությունը պահպանել է ԺԳ. եւ հաջորդող դարերում՝ տեղ գտնելով նաեւ Վաղարշապատի 1894 թ. քահանայական «Մաշտոցում»։

Կանոնի վերնագիրը հանդիպում է մի քանի տարբերակներով։

Կանոնի մի տարբերակի ծիսական հրահանգում ասվում է. «Գա՛ն Բահանայքն ի ջրհորն եւ նշանաւ սուրբ խաչին եւ սուրբ իւզովն հանեն Խ (40) դոյլ ջուր»²⁴։ Վաղարշապատի «Մաշտոցում» ասվում է. «Առնու Բահանայն զխաչն եւ զաւետարանն եւ երթայ ի պղծեալ ջրհորն, եւ տայ հանել Բառասուն դոյլ ջուր. եւ ապա դոյլ մի այլ՝ հանէ եւ դնէ առաջի իւր»²⁵։

Տպագիր եւ ձեռագիր օրինակների համեմատությունը միեւնույն ծիսական հրահանգի շրջանակում վերհանում է երեք էական տարբերություն։ Առաջին՝ ձեռագրում ասվում է, որ քահանաներն են գալիս, իսկ տպագրում՝ քահանան։ Կարելի է ենթադրել, որ հնում կանոնը կատարվել է ավելի հանդիսավորությամբ եւ մի քանի քահանաների մասնակցությամբ։

Երկրորդ՝ հօգուտ ասվածի է եւ այն, որ ըստ ձեռագրի՝ քահանաները ջրհորի մոտ են գալիս Ս. Խաչով եւ Ս. Յուզով, իսկ ըստ տպագրի՝ Ս. Խաչով եւ Ս. Ավետարանով։ Սուրբ Յուզով գալը ենթադրում է, որ մաքրման համար յուզը եւս հեղել են ջրհորի մեջ, այլապես այն բերելն անիմաստ կլիներ։ Եթե Սուրբ Յուզ ասելով՝ Ս. Մյուռոնն է նկատի առնվում, ապա այն հեղելը ջրի մեջ արտառոց կլիներ եւ կնշանակեր, որ ջրհորը ոչ թե օրհնվում է, այլ օծվում է Սրբալույս Մյուռոնով։ Այստեղ Ս. Մյուռոնը նկատի չի առնվել, այլ Բյուզանդական եւ Կաթոլիկ եկեղեցիներում հիվանդների եւ ջրի օրհնության համար նախատեսված յուզը։ Քանի որ հայոց եկեղեցին Սրբալույս Մյուռոնից բացի այլ յուզ չի ընդունում, ուստի Լամբրոնացու կազմած կանոնը հետագայում վերախմբագրման է ենթարկվել, եւ Սուրբ Յուզը փոխարինվել է Ս. Ավետարանով։ Ուստի ջրհորը յուզ հեղելը փոխարինվել է այն Ս. Ավետարանով օրհնելով։

Երրորդ՝ այս փոփոխությունն իր հերթին հանգեցրել է ծիսական այն փոփոխությանը, որ ջրհորի ջուրը պետք է մաքրվեր այնտեղ հեղվող

²³ Անդ։

²⁴ «Մայր ցուցակ ի վենետիկ», հտ. Գ., էջ 486։

²⁵ «Մաշտոց», Վաղարշապատ, 1894, էջ 409։

սրբագործված հեղուկով: Լամբրոնացու կազմած օրինակում դա օրհնված յուղն էր: Հետագայում, համաձայն հայ եկեղեցական ծեսի վերախմբագրված կանոնի, օրհնված յուղը փոխարինվել է պղծված ջրհորից 40 դուլլ ջրից հետո եւս մեկ դուլլ հանելով: 40 թիվը Հին եւ Նոր Կտակարաններում կապվում է որոշակի խորհուրդների կատարման եւ տարբեր հասկացությունների ու վերջիններիս չափ ու քանակի լրման հետ: Ջրհորից 40 դուլլ ջուր հանելը խորհրդանշում էր ջրհորը պղծված ջրից մաքրելը, որից հետո մաքրված ջրհորից հանված առանձին 1 դուլլ ջուրը համապատասխան օրհնության էր ենթարկվում եւ նորից ջրհորը հեղվում, որպեսզի նրանով մաքրվեր եւ օրհնվեր ջրհորի ջուրը:

Ասվածը հաստատվում է կանոնի՝ Վաղարշապատի օրինակով, ուր այս մեկ դուլլ ջուրը քահանան դնում է իր առջեւ եւ ասում. «Ձայն Տեառն ի վերայ ջուրց» սկսվածքով սաղմոսը: Ապա խնկարկում է ջրհորի հորի բերանը եւ երգում ԴԿ «Աղբիւր կենաց» շարականը: Սաղմոսով ջուրն է օրհնվում, շարականով՝ ջրհորի բերանը, որտեղից անմաքուր կենդանի էր ներքեւ ընկել: Հորի բերանն անմաքրության սկիզբն էր, որն այնուհետեւ շարունակվում էր ջրհորի պղծված ջրով: Օրհնված ջուրը քահանան ջրհորն էր լցնում հորի օրհնված բերանից. «Ապա լնու զջուրն խաչանման ի ջրհորն»²⁶:

Այնուհետեւ ընթերցվում է «Չորրորդ Թագավորության» այն հատվածը, որում պատմվում է, թե ինչպես Եղիսե մարգարեն մի կուժ ջրով, ուր աղ էր լցված, բժշկում է աղբյուրի ակերը: Հետո ընթերցվում է Նոր Կտակարանից՝ Եբրայեցիների թղթից ու Մատթեոսի Ավետարանից: Դրանց հետեւում է սարկավագի քարոզը, ուր, ջրհորի մաքրման կանոնին համահունչ, ասվում է, որ բարերարն Աստծուն աղաչեք, որպեսզի «...մաֆրեսցէ զջուրս զայս յամենայն աղտեղութենէ, եւ տացէ ի պէտս ծառայից իւրոց շնորհօք ողորմութեան իւրոյ»²⁷:

Հաջորդող քահանայական աղոթքում ջրհորի մաքրությունն է հայցվում Աստծուց. «...սրբեա՛լ ամենակարող զօրութեամբդ զջրհորս զայս՝ եւ զոր ի սմա զջուրս մաֆրեա՛լ յամենայն կարծեալ պղծութենէ ի մերմէ հիւանդամտութենէս. եւ զօրացո՛ւ զսկար միտս մեր առնուլ զսա առանց խղի վայելս մարմնական պիտոյից մերոց»²⁸:

²⁶ Անդ, էջ 412:

²⁷ Անդ, էջ 415:

²⁸ Անդ, էջ 417–418:

Այստեղ չի հասկացվում, թե ընդգծված «հիվանդամտություն» բառն ինչով է կապվում ջրի մաքրման հետ: Թերեւս ջրհորի հետ կապված ժողովրդական հավատալիքներն ու սնոտիապաշտությունները նկատի ունի՝ որպէս հիվանդամտության արտահայտություն: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա նշանակում է, որ ջրհորի պաշտամունքի ժողովրդական դրսեւորումներն իրենց արձագանքն են գտել քահանայական աղոթքում:

Ի տարբերություն ջրհորի օրհնության կանոնի՝ պղծյալ թոնրի օրհնության կանոնը հանդես է գալիս ավելի ուշ շրջանի «Մաշտոցներում» եւ անհամեմատ քիչ ընդօրինակություններով: Այն տեղ չի գտել նաեւ տպագիր «Մաշտոցներում»:

Թոնրի օրհնության եւ մաքրման մասին առանձին հիշատակություններ ենք գտնում ավելի վաղ շրջանում, ուր թոնրի օրհնությունը հանգում է այնտեղ ընկած կենդանուց մաքրմանը: Առաջին հիշատակությունը գտնում ենք Դավիթ Ալավկա Որդու կանոնախմբում, որի է. կանոնն ունի հետեւյալ վերնագիրը. «Վասն մկան, որ ի թոնիրն անկցի»²⁹:

Երեւանի Մատենադարանի Հ^մր 972 «Մաշտոցը», որը գրված է ԺԶ դարում, ունի երկու կանոն, որոնց վերնագրերն ուղղակիորեն վերաբերում են կենդանու՝ ջրում խեղդվելուն եւ թոնրում այրվելուն: Զրհորին վերաբերող կանոնը որոշակիորեն համընկնում է ջրհորի օրհնության կանոնի հետ, սակայն միանգամայն այլ է կանոնի խորագիրը. «Կարգ ի վերայ ջրհորի, թէ շուն կամ կատու, կամ մուկ, կամ հաւ, կամ այլ այսպիսիք անկանի եւ հեղձու եւ խեղդի ի նա»³⁰:

Այս կանոնին անմիջապէս հաջորդում է թոնիրն ընկնելու կանոնը, որի նկարագրությունում ասվում է. «Եւ թէ յագղմանէ չարին ի փուռն կամ ի թոնիրն շուն կամ կատու, կամ մուկ, կամ հաւ անկեալ սատակեցի»³¹:

Չնայած վերնագրային տարբերությանը՝ այս կանոնը համընկնում է թոնրի օրհնության կանոնի հետ: Վերջինս, ինչպէս ասացինք, գրեթե չի հանդիպում «Մաշտոց» ծիսարանի նկարագրությունների կանոնների շարքում:

Մեզ չհաջողվեց այն գտնել Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի նկարագրություններում: Միւթարյանների ձեռագրացուցակի՝

²⁹ Ա. ԱՅՐԱՆԱՄՅԱՆ, Դավիթ Ալավկա որդու կանոնները, «Էջմիածին», 1952, Թ.—Փ., էջ 56:

³⁰ «Մայր Յուդակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Գ., էջ 1533:

³¹ Անդ, էջ 1534:

«Մաշտոց» ծիսարանին նվիրված հատորում այն հանդիպում է ընդամենը երկու ձեռագրում: Մեկը վկայակոչում է Նորայր արք. Պողարյանը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ձեռագրից: Երուսաղեմի օրինակը, ինչպես նշում է Պողարյան սրբագանը, եւ ինչպես երեւում է բերված նկարագրությունից, համընկնում է Վենետիկի Մխիթարյանների՝ ԺԷ. դարի վերջով թվագրվող Հ^ր ՃԺԲ. «Մաշտոցի» Թոնրի օրհնություն կանոնի հետ: Այս կանոնը պարունակող Մխիթարյան երկրորդ ձեռագիրը 1725 թ. գրված Հ^ր ՃԺԹ. «Մաշտոցն» է: Եթե նկատի ունենանք նաեւ Երեւանի Մատենադարանի՝ ԺԶ. դարում գրված «Մաշտոցը», ուր գտնվում են Թոնրի եւ ջրհորի օրհնությանը վերաբերող կանոնները, ապա կարող ենք ասել, որ Թոնրի օրհնության կանոնը տեղ է գտել ԺԶ.-ԺԸ. դարերում գրված «Մաշտոցներում»:

Թոնրի օրհնության կանոնի վերնագրին հաջորդում է բավականին ծավալուն ծիսական հրահանգը, որը որոշակի տարբերություններ ունի Վենետիկի եւ Երուսաղեմի «Մաշտոցներում»: Ծիսական հրահանգի տարբերություններն այնուհետեւ արտահայտվել են ծեսի հետագա կատարման մեջ: Վենետիկի «Մաշտոցում» ասվում է. «Առնու քահանայն զՄաշթոցն եւ երթայ ի տունն յայն, եւ տայ սաստիկ ջեռուցանել զթունիրն՝ որ սպիտակի, ըստ Տեառն մերոյ հրամանին՝ թէ. Ամենայն ինչ հրով յաղեսցի: Եւ դնէ զաղն եւ զջուրն առաջի»³²:

Ինչպես որ ջրհորի ջուրը մաքրելու համար խորհրդանշական 40 դույլ էին հանում եւ նոր օրհնության ծեսը կատարում, այստեղ նույնպես ասվում է, որ Թոնիրն այնպես ուժեղ են վառում, որ քարն աղակալելու պես սպիտակի, որպեսզի այն ախտահանվի: Թոնիրը հրով սպիտակեցնելու համար վկայակոչվում են Հիսուսի խոսքերը հրով աղալու՝ կրակի բոցով մաքրելու մասին:

Ինչպես ջրհորն էին օրհնում՝ նրանից հանված եւ օրհնված ջուրը նորից ջրհորը լցնելով, այնպես Թոնրի մաքրման օրհնությունն էին կատարում օրհնված ջրով եւ աղով:

Սուրբգրային ընթերցվածքներից հետո քահանան օրհնում է ջուրն «Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս» բանաձեւով, ապա որպես հրահանգ ասվում է. «Դի՛ր զաղն առաջի եւ զաղաւրննէփ աղօթքն ի վերայ աղին»³³: Աղն օրհնվում է «Մաշտոց» ծիսարանի առանձին կանոնով: Այնուհետեւ իրար են խառնվում օրհնած աղն ու ջուրը, եւ նրանցով օրհնվում են Թոնրի ջուր-

³² «Մայր ցուցակ ի Վենետիկ», հտ. Գ., էջ 608:

³³ Անդ:

թերն ու կափարիչը. «Եւ ապա խառնէ զաղն եւ զջուրն յիւեաւ, եւ խաշանման լուայ զթոնիրն շրթամբք՝ եւ զխոսփն»³⁴: Զրհորի օրհնությունն սկսվում է հորի բերանի օրհնությամբ, այստեղ էլ թոնրի շուրթերն են օրհնվում:

Թոնրի օրհնության կանոնում աղին կարեւոր տեղ է հատկացվում թե՛ հոգեւոր առումով եւ թե՛ աղաջրով թոնիրը լվանալիս: Օրհնության ժամանակ աղի կիրառվելով է, թերեւս, պայմանավորված հետեւյալ հավատալիքը. «Երբ թոնրի մուխը լցւում է տունը, չի քաշւում, ասում են. «Մուխ բռնէ՛ աղ բառնանք» որպէսզի մուխը սոսկալով սպառնանքից շուտով փաշուի»³⁵:

Թոնրի օրհնության՝ Երուսաղեմի «Մաշտոցի» կանոնում նախ ասվում է. «Եւ տայ պեղել զթոնիրն, զհողն հանել, եւ ապա վառեն կրակ»³⁶, հետո լավ վառում են՝ հրահանգելով թոնիրը սպիտակության աստիճանի շիկացնել: Թոնիր պեղելը՝ փորելով հողը հանելը, ջրհորից 40 դույլ ջուր հանելու համարժեքն էր: Ինչպես որ ջրի նեխած շերտն էր հանվում, այնպես էլ այրված կամ սատկած կենդանու մոխիրն ու մնացորդները կրող հողից ֆիզիկապես մաքրվում էր թոնրի հատակը, ապա այն օրհնվում էր, որի նյութական դրսեւորումն էր աղաջրով լվանալը:

Հաջորդ տարբերությունն աղը եւ ջուրն իրար խառնելն էր: Վենետիկի «Մաշտոցի» կանոնում ասվում էր, որ ջուրն ու աղն առանձին են օրհնում, ապա իրար խառնում եւ լվանում թոնրի շուրթերը: Այնինչ Երուսաղեմի «Մաշտոցում»՝ «...լնու աման մի ջուր, եւ ափ մը աղ ձգէ ի մէջն»³⁷: Երկուսի համար միասնաբար աղոթք է ասվում եւ ապա «...նոյն աղջրովն լուանան զթոնիրն»³⁸:

Թոնրի եւ ջրհորի օրհնության կանոնների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ երկուսն էլ իրենց մեջ որեւէ կենդանի ընկնելիս օրհնվել են՝ թոնիրը կրակով եւ քահանայի աղոթքով, ջրհորը ջրով ու քահանայի աղոթքով մաքրվելուց հետո:

Այս երկու օրհնությունները, ներքին մի ընդհանրություն ունենալով, միաժամանակ որոշակի ընդհանրություններ ունեն տնօրհներքի եւ պղծյալ եկեղեցու կանոնների հետ: Այս հանգամանքն իր հերթին վկայում է, որ ժողովուրդը թոնիրն ու ջրհորն ընկալել է որպես կենսատու

³⁴ Անդ:

³⁵ Ե. ԼԱՆԱՅԵԱՆ, Վասպուրական, ԱՀ, գիրք ԻԵ., էջ 52:

³⁶ ՆՈՐԱՅՐ ԱՐՔ. ՊՈՂԱՐԵԱՆ, Ծիսագիրտութիւն, էջ 117:

³⁷ Անդ:

³⁸ Անդ:

սրբություններ, որոնք այնուհետև իրենց արտացոլումն են գտել եկեղեցական կանոններում:

РЕЗЮМЕ

В статье показано, как исходящий из дохристианского периода культ тандыра и колодца впоследствии проявился в церковных канонах, посвященных благословению тандыра и колодца. Сопоставлением фактов показывается, что колодец и тандыр соединяются друг с другом так же, как вода и огонь, находящиеся в противоположности, и превращаются друг в друга. В качестве примеров из Ветхого Завета приводятся истории отроков и святых, ввергнутых в печь и оставшихся там в небесной росе, а также ряд других историй. Показывается поклонение колодцу и тандыру как церкви, и совершение перед ними различных церковных церемоний.

Так же, как благословляли оскверненную церковь, так и благословляли колодец и тандыр, оскверненный падением какого-либо животного.

SUMMARY

The article shows how the pre-Christian worship of tandoors and wells was further expressed in Church canons dedicated to the blessing of tandoors and wells.

The combination of the facts shows that the wells and tandoors are related the same way as the water and fire and are converted into one another. Examples include stories of three infants taken from the Old Testament and then of those taken from the lives of saints being thrown into a furnace and staying in the heavenly dew there, and a number of other stories.

The worship of wells and tandoors as a church and the celebration of various church ceremonies before them are shown. Wells and tandoors defiled by the fall of an animal into them were blessed with the same Church canons used in the case of a profaned church.



Տ. ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

«Ուրտեղ որ ամուսինն ու կինը եւ երեխաները պարուրված են ներդաշնակությամբ եւ սիրով, կապված են առաքինություններով, այնտեղ՝ նրանց մեջ է Քրիստոս»
Հովհան Ոսկեբերան:

Աստիճանակարգությունը կամ հիերարխիան¹ (հմմտ. Ծննդ. Ա. 5, 8, 13), աստվածային գեղեցկության համեմատ՝ սրբազան կարգ է, որը հեղվում է երկնքից եւ նպատակամիտված է մարդուն խորհրդաբանորեն տանելու դեպի Աստված: Աստվածային գեղեցկությունը, որպես կատարելության նախասկիզբ, հաղորդակցվում է յուրաքանչյուրի հետ արժանի կերպով, իսկ յուրաքանչյուր մեկը՝ իր աններդաշնակության համեմատ²: Հիերարխիան կամ աստիճանավորությունը աստվածային հրամանի եւ հաստատության՝ աշխարհակարգի արդյունք՝ պատճառ եւ հետեւանք է, ինչպես նաեւ բոլոր ողջամիտ մարդկանց³, ընտանիքի⁴, հասարակությունների, ազգերի ու պետությունների գոյության

¹ Հուն. ἱεραρχία, ἱερός — իսոս՝ «սուրբ», եւ ἀρχή — արխի՝ «իշխել»:

² Հմմտ. «Описание книги Д. Ареопagit», Москва, 2012, էջ 16:

³ Մարդն անձնավորվում է իր ներնաշխարհով եւ գոյավորվում է որպես Աստծու պատկեր, իսկ ստեղծագործելու ձիրքով միանում (համացեղ), է դառնում Տիրոջը» (տե՛ս «Մատյան ողբերգության» Բան ԼԹ., Ա., Բ., ՀՐ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Բանաստեղծության հարակալության խորհուրդն ըստ Գրիգոր Նարեկացու, Երեւան, 2015, էջ 36):

⁴ «...ազգի հոգեւոր (կրոնական) փորձից ելնող ազգային-մշակութային ավանդույթները դիտելի են որպես գերագույն արժեք, հետեւաբար՝ նաեւ մարդու եւ հասարակության լիարժեք կյանքի անհրաժեշտ տարր: Հենց սեփական հոգեւորով, մշակույթով ազգի «ներփակվածություն» է հնարավոր դարձնում ազգի ինքնության (որ մշակութային չափանիշ է) պահպանումը եւ, միաժամանակ, նրա արձագանքումը համամարդկային մշակույթին» (Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, Պատմափիլիսոփայական հայեցակարգերը ԺԹ. դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդաբանական վերլուծություն., Երեւան, 2003, էջ 147):

«Իրավական պետության իդեալի՝ ազատականների մշակած արժեհամակարգում ընտանիքը բնութագրելի է որպես ազգի գոյության հիմք, ազգային ավանդույթների պահպանման եւ ժառանգորդման խթանիչ, հետեւապես՝ նաեւ ազգի ինքնատիպության պահպանման գրավական. (տե՛ս Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, Ընտանիքը և՛ որդեկանի քաղաքական տեսության մեջ, «Էջմիածին», Զ., 2013, (այսուհետ՝ Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ), էջ 56–58):

հիմնարար սկզբունքը⁵: Ընտանիքն⁶ աստվածահաստատ կառույց է (հմմտ. Ծննդ. Ա. 27), եկեղեցու մանրակերտը (հմմտ. Մատթ. ԺԹ. 6, Եփես. Ե. 29), որի երաշխավորն ինքը՝ Աստված է (հմմտ. Մատթ. ԺԹ. 6, Սաղմ. ԽԶ. 1), եւ որի հիմք հանդիսացող ամուսնական կապը թույլատրելի է երկուսի՝ բացառապես տղամարդու եւ կնոջ⁷ միությունով⁸ (Ծննդ. Բ. 24):

⁵ Ընտանիքը, իբրեւ կառույց եւ տուն, եւ հավասարապես իբրեւ յուրօրինակ տաճար, մարդու ինքնատիրություն վայրն է կամ այն սահմանը (հմմտ. Բ. Օր. Ի. 5–7, ԻԿ. 5, Սաղմ. ՃԻԷ. 3–4, Առ. ԻԿ. 15, Նեեմի Դ. 14, Ղուկ. Բ. 49, Յովհ. 2. 16), որտեղ ծնող-զավակ հարաբերությունները համակարգվում եւ կարգավորվում են հարեւնման Աստված-մարդ հարաբերություններին (Ծննդ. Բ. 24, Սիր. Գ. 14–15, Է. 25–27, Լ. 13, Տոբիթ Ժ. 12, Դեւտ. ԺԹ. 3, 32, Ղուկ. ԺԵ. 18, 21, Յովհ. ԺԹ. 26–27, հմմտ. Առ. Գ. 12, ԺԳ. 24, եբր. ԺԲ. 6). (տե՛ս Ռ. ՊԱՊԱՅԱՆ, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները (այսուհետ՝ Ռ. ՊԱՊԱՅԱՆ), էջ 174):

⁶ Ինչպես բնորոշում է հողվածագիրը, ընտանիքը՝ «երկու մարմնոյ մէջ նոյն իսկ մէկ հատիկ միութիւնը կկազմեն: Այո՛ ծնած զաւակնին ուրիշ բան չէ՝ եթէ ոչ իրենց երկուքին գոյութեան շարունակութիւնը, կամ երկարումը, անոնցմով կվերակենցաղին, եւ յաջորդական ծննդագործութեամբ յանհունս կմշտնջենաւորին: Ուրեմն ամուսնութիւնն ըստ հաճոյս հաստատուած սահմանադրութիւն մը չէ, այլ միոյ առն ընդ միոյ կնոջ բնական եւ բարոյական միաւորութիւնն է» (Խ. ԱՇԷԽԵԱՆՅ, Առտնին ընկերութիւն, «Յոյս» (յնրմաշ), 1864, թիւ 4, էջ 91): «Աստուած Աւետարանը մեզի տուած է իբրեւ անփոփոխ օրինադիրը ընտանի կենաց՝ յորում աւելի արդարութիւն, գթութիւն եւ քաղցրութիւն կայ, քան իրմէ յառաջ երեւցած օրէնսդրութեանց մէջ: Աւետարանի օրինաց պէտք է յարմարցունեն իրենց կեանքը ամէն ընտանիքներ» (ՆՈՒՅՆԻ Ընտանիք, «Յոյս», 1876, թիւ 10, էջ 597): «Աստուծոյ հաստատել ուզած սոյն միութիւնը, առանց որոյ երջանկութիւնը լոկ առօրեայ պատրանք մէ, սրտից միութիւնը, մանաւանդ թէ հոգւոց միութիւնն է, որովհետեւ, առանց հոգւոց միութեան, ինչ կարժէ սրտից միութիւնը, ոչ ապաքէն կը լուծուի գերեզմանին եզերքը, գուցէ մինչեւ հոն ալ չի տեւէ: Առանց Քրիստոսի, որ ճշմարտութեան, գեղեցկութեան եւ կենաց առատահոս աղբիւրն է, մարդիկ կը մերձենան, կը շղթայուին, այլ սակայն չեն միանար: Աստուածային հողերը միայն անմահ տունկեր կը բողբոջեն, եւ քրիստոնեական մթնոլորտը միայն ծաղիկներն անթառամ կը պահէ: Առանց աստուածային սիրոյ, լոկ մարդկային սէրը, յարդի խարոյկ մէ միայն» (ՆՈՒՅՆԻ, Կին քրիստոնեայ, «Յոյս», 1877, թիւ 11, էջ 656–664, թիւ 12, էջ 718):

⁷ Նա բարոյական էակ է, ընդունակ կատարելագործվելու. (տե՛ս T. ZAHN, Ignatius von Antiochien, Gotha, 1873, էջ 332–337, 580–585):

⁸ Եկեղեցական օրենքով ամուսնացած զույգը «բարեկամութիւն» է հաստատում Աստուծո հետ եւ երկնային ժառանգության կնիք ընդունում... Դա նշանակում է, որ ամուսինների փոխհարաբերությունները չեն կարող գնահատվել համարժեքային ծառայությունների փոխանակման սկզբունքով. դրանք պետք է ըմբռնվեն իբրեւ աստվածատուր պարտականություն... արեւմտյան նորաթուխ վարդապետությունները (բողոքականությունը, աղանդավորությունը եւ դրանց առնչակից ազատականությունը) ունեն գաղափարական խախուտ հիմք եւ չեն բովանդակում ճշմարտության նշույլ անգամ... Ընտանիքում կնոջ եւ երեխաների ազատություն եւ տան անդամների միջեւ հավասարություն քարոզող այդ ուսմունքները ռոռացություն են տալիս հայրության նվիրական իմաստը... ընտանիքի անկյունաքարը հեղինակությունն է. այն միավորում է ընտանիքի բոլոր անդամներին եւ օգնում նրանց հասնելու միասնական նպատակին: Առանց հեղինակության հասարակությունը ամբոխի է վերածվում: Մինչդեռ «մեծարելի թագաւորութիւն» կոչվող

Ամուսնության մեջ եւ ընտանիքում⁹ տղամարդն ու կինը¹⁰ փոխադարձաբար լրացնում են միմյանց¹¹ (հմմտ. Ծննդ. Բ. 18, Իէ. 45, Յովհ. ԺԶ. 22) «Հետեւաբար բռնություն եւ ստրկություն չկա ամուսինների մեջ, այլ կատարյալ սեր եւ հավասարություն, անձնվիրություն ու հնազանդություն, միություն ու միասրտություն»¹²:

Ընտանիքի¹³ կարեւորագույն գործառույթներից մեկը որդեծնությունն է (Ծննդ. Ա. 28, Առ. Ժէ. 6, Մատթ. ԺԹ. 19): Հին Ուխտում ամուսնության եւ ընտանիքի կարեւորությունը գերազանցապես սերնդագործության՝ որդեծնության մեջ էր (հմմտ. Ծննդ. ԻԲ. 17–18): Նոր

ընտանիքում, որը հիմքն է ցանկացած «թագաւորութեան», խիստ անհրաժեշտ են հայրության գավազանը կրելու ընդունակ ձեռքեր» (Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, էջ 61):

⁹ Համաձայն Հայ Եկեղեցու աստվածաբանության՝ Աստծու պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդու բանականությունը եւս փոխալսմանավորված է ընտանիքի գաղափարով: Որովհետեւ, եթե բանականությամբ մարդը տիրապետում է շրջակա աշխարհին, ապա ընտանիքով է պայմանավորվում «ազգի աճը», դաստիարակությունը, ավանդության, լեզվի ու մշակույթի պահպանությունն ու փոխանցումը: Հետեւաբար՝ առանց ընտանիքի, չի կարող լինել կարգավորվածություն, ուրեմն եւ կարգավոր հասարակություն:

¹⁰ Ներսես Շնորհալի հայրապետն իր «Թուղթ ընդհանրական»-ում, մասնահատուկ անդրադարձ ունի նաեւ ուղղված կանանց՝ «...Պատուէր տամք եւ կանանց ազգի պարկեշտութեամբ եւ բարեձեւութեամբ լինել յամենայնի, որպէս եւ վայել է քրիստոնէից, եւ առաւել քան ոսկով եւ արծաթով՝ ամօթխածութեամբ եւ պատկառանք գարդարել զանձինս ձեր...» (տե՛ս ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ ընդհանրական, աշխ. է. Բաղդասարյանի, Երեւան, 1995): «Թուղթ ընդհանրականը», ըստ էության, Շնորհալի հայրապետի՝ կաթողիկոս ընտրվելուց հետո գրված առաջին կոնդակն է, ուղղված՝ համայն հայության բոլոր շերտերին:

¹¹ «...ընտանեկան (տղամարդ-կին, ծնողներ-երեխաներ) հարաբերությունները պետք է կառուցվեն «պարտք-իրավունք» բարոյական օրենքից բխող սկզբունքների հիման վրա (փոխադարձ սեր եւ հավասարություն, անձնվիրություն եւ րնկերակցություն՝ օգնելու միմյանց): Ընտանիքի բարոյական խորհրդի հետ շաղկապվում են մի շարք փոխկապակցված խնդիրներ՝ եկեղեցական ամուսնության հաստատության պահպանումը, բազմակնության եւ ամուսնալուծության ավանդույթի հերքումը, ազատ բարքերի դատապարտումը եւ այլն: Ընտանիքի՝ իբրեւ կնոջ եւ տղամարդու բարոյական միության, սահմանումը անհրաժեշտորեն ենթադրում է երկու սեռի բարոյական հավասարության հաստատում: Նման կողմնորոշման հիմքում դիտելի է անձնավորության ազատության քրիստոնեական հայտնի գաղափարադրույքը: Հստ այդմ, կինն ու տղամարդը թեպետ տարբեր են իրենց կարգավիճակով եւ առաքելությամբ, սակայն, հավասար են իրավունքներով (Ռ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, էջ 60):

¹² Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. էջմիածին, 2007, (այսուհետ՝ Քրիստոնեական), էջ 466:

¹³ Պատմագրությունն ու մատենագրական վաստակն ուղղակիորեն հավաստում են, որ ազգային առաջնահերթությունների ու բարոյական չափորոշիչների պարտադիր ընդգրկումով՝ մեր ժողովրդի խոհականություն-մտածողությունն առավելաբար պատմական է, իսկ հիշողությունը՝ համընդհանուր-ընդհանրական: Ազգն ու ազգային ինքնությունը եւս հաճախաբար դիտարկվում են հոգեւորի եւ ընտանիքի համապատկերում՝ առաջնակարգ տեղ ու դեր վերապահելով կնոջն ու այր-կին օրինաչափ փոխհարաբերություններին: Հարաբերությունների անհրաժեշտ ու արժանավայել գործակցություն-առնչակցությունը, ազգային, քաղաքակրթական ու կենցաղային հարթության մեջ, ավանդաբար համարվում է ընտանիքն ու ազգային մեծ ընտանիքը լրացնող-ամբողջացնող կարեւոր տարր:

Կտակարանում ամուսնությունն ու ընտանիքը¹⁴ (հմմտ. Յովհ. Բ. 2, Կող. Գ. 21) հավասարապես միջավայր են կարգավորելու եւ ներգաղնակելու ո՛չ միայն ընտանեկան, այլեւ միջանձնային ու հանրային հարաբերությունները (հմմտ. Ղեւտ. ԺԹ. 18, Մատթ. 2. 14, ԻԲ. 39, Մարկ. ԺԱ. 25, 12. 31, Ղուկ. 2. 37, Ժ. 27), որտեղ երաշխավորվում է թե՛ մարդկության ներկան ու ապագան (հմմտ. Յովհ. ԺԵ. 13, հմմտ. Ղուկ. ԻԳ. 34), եւ թե՛ դրա շարունակականությունը (Ա. Յովհ. Բ. 10–11, հմմտ. Գործք Բ. 42, Գաղ. Ե. 22–23): Աստծու ստեղծագործությունը հավաստում է, որ մարդն¹⁵ է Աստծու արարածների առանցքը¹⁶: «Այդ պատճառով եւ բոլոր արարածները ստեղծվեցան մարդուց առաջ, եւ բոլորի պատրաստվելուց հետո միայն ստեղծվեց մարդը: Եւ մարդու այս մեծ առավելությունն արտահայտվում է այնով, որ Աստուծո Որդին ոչ թե հրեշտակացավ, այլ մարդացավ

¹⁴ Աստվածաշնչում, ինչպես որ տարբեր առիթներով ներկայացվում է Քրիստոս-փեսա եւ եկեղեցի-հարս զուգահեռը (Մատթ. Թ. 15, ԻԵ. 1, Մարկ. Բ. 19, Ղուկ. Ե. 34, Եփես. Ե. 25, Յալտ. ԺԹ. 6–7), այնպես էլ Երկնային Արքայությունը հաճախ համադրվում է իրիկնային համատեղ հացի հետ՝ «Ահա՛նախկ ես դռան առաջ եմ եւ բախում եմ. եթե մէկը ականջ դնի իմ ձայնին եւ բաց անի դուռը, կը մտնեմ նրա մօտ եւ կ'ընթերեմ նրա հետ, եւ նա՛ ինձ հետ...» (Յալտ. Գ. 20–22, հմմտ. Ռ. ՊԱՊԱՅԱՆ, էջ 149. Ա. ДЖУССАНИ, Путь христианского опыта, Милан, 1977, էջ 37):

¹⁵ «Հայ Առաքելական Եկեղեցու աստվածաբանության մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում մարդու մասին ուսմունքը՝ մարդաբանությունը (անթրոպոլոգիա) ... Քրիստոնեական մարդաբանության ճիշտ ընկալման համար ուշագրավ է թվում Ս. Բարսեղ Կեսարացու հետեւյալ խստորոշ միտքը. «Աստված մարդուն ստեղծեց որպէս կենդանի էակ, որ կոչված էր աստված լինելը... Աստծու եւ մարդու կամքի մեկտեղումը, որով մարդը հարատեւում էր դրախտում, ընդհատվեց զայթակղության հետեւանքով գլուխ բարձրացրած հավակնոտ անհնազանդության միջոցով... Արամորդու գործած մեղքերի պատճառով նրա վրա ծանրացած անեծքի պարտամոլորհակը պատուվում է Աստծու տիեզերարծարծ կամքով եւ անսահման ողորմությամբ: Այն դրսեւորվում է Բանի մարմնավորումով եւ փրկագործական սխրանքով: Խոսքով Անձեւացին «Ժամակարգության մեկնության» մեջ գրում է. «Գթածաբար զմերս զգեցավ (Որդին) մարմին կամաւ Հօր եւ հաճութեամբ Սուրբ Հոգւոյն...» (Հրահանգ քրիստոնէական հաւատոյ՝ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, աշխ. Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիւտնացւոյ, Մոսկուա, 1850, էջ 175–176). Յ. ՔՆՈՍԵՅԱՆ, «Էջմիածին» Դ, 1993, Հայ Եկեղեցու աստվածաբանությունը շարականներում եւ տաղերում, էջ 109–112:

¹⁶ «Մարդակենտրոնության ուսմունքը (անգլ. «Antropocentrism»), այն տեսությունն է, որը դավանում է մարդուն, որպէս տիեզերքի առանցքը եւ մարդկության բարօրությունն ու բարեկեցությունը դիտում է որպէս վերջնանպատակ՝ առաջ է եկել դեռեւս Հին աշխարհում: Ուսմունքի շատագոյն է նաեւ Եգնիկ Կողբացին: Համաձայն իմաստասերի (ինչպէս նաեւ Հայ Եկեղեցու ուղղափառ վարդապետության), Աստված ամեն բան արարել է մարդու համար՝ «Նախ գտունն, եւ ապա գտնական... նախ զծառայան, եւ ապա գտէին» սկզբունքով, որպէսզի վերջինս էլ, վայելելով աշխարհի բարիքները, փառավորի Աստծուն «Հայեցեալ ընդ նոսա (եւ թէ ջուր թէ հօւր թէ երկիր թէ օդ...)» փառաւորեմք զկարգին նոցա...զի մեզ ի պէտս են...»: Նաեւ ընտանի կենդանիները մարդկանց սնվելու համար են, իսկ մարդուն Աստված ստեղծել է մեծարելու համար, եւ մարդն ամեն բանին տեր է (տե՛ս «Երգնկալ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց», (այսուհետ՝ ԵՂՄ ԱՂԱՆԴՈՅ), Վենետիկ 1826, էջ, ծնթգ. 51. այս մասին տես էջ 14, 75, 147, 157, 239:

(Եբր. Բ. 16)...»¹⁷ Աստված տղամարդու եւ կնոջ միջոցով ստեղծեց ընտանիքը¹⁸ (Ծննդ. Ա. 27): «Այս կոչումն սուրբ եւ նուիրական է: Արարչին տիրական օրէնքն է, Դրախտի օրհնութեան ձայնն է, երկուզուգակցաց միութեան հրաման եւ հրաւէրն է, որով զհարսն ի մայրութիւնը կը կոչէ, փեսայն ի հայրութիւն...»¹⁹: Ապա պատգամեց «աճել ու բազմանալ» (Ծննդ. Ա. 28): Երբ Ադամն ու Եւան մեղանշեցին (կամ՝ ըմբոստացան), Աստծու վերահաս պատիժը նրանցից յուրաքանչյուրին հասավ տարբեր կերպ: Աստիճանակարգութեամբ՝ նախ պատուհասվեց օձը: Աստված ասաց, «Քանի որ այդ բանն արեցիր, անիծեալ լինես երկրի բոլոր անասունների ու գազանների մէջ: Քո լանջի ու որովայնի վրայ սողաս, ողջ կեանքումդ հող ուտես: Թշնամութիւն պիտի դնեմ քո եւ այդ կնոջ միջեւ, քո սերնդի ու նրա սերնդի միջեւ: Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը» (Ծննդ. Գ. 14–15): Այլ խոսքով՝ մի կողմից օձը դատապարտվում է սողալու (ինչը ենթադրել է տալիս, որ ի սկզբանե այդպես չի եղել), իսկ մյուս կողմից՝ խախտվում է նրա եւ մարդու միջեւ գոյություն ունեցող ներդաշնակությունը (հմմտ. Միք. է. 17, Ես. ԺԱ. 6–9, 39, Սաղմ. ՀԱ. 9, Օսէէ Բ. 19):

Ի սկզբանե, ընտանեկան հիերարխիայում²⁰, Աստված կնոջը վերապահում է օգնականի դերը (Ծննդ. Բ. 18): Եւային չի ասում «անիծյալ լինես» կամ այսօրինակ մեկ այլ բան, այլ նրա «պատիժը» դառնում է՝ ցավերի ու

¹⁷ Քրիստոնեական, էջ 101:

¹⁸ Որոշ խորհրդապաշտական ուղղություններ, ինչպես նաեւ առանձին մտածողներ այն տեսակետն են զարգացրել, թէ «սկզբնական մարդն» օժտված է եղել եւ տղամարդու, եւ կնոջ (հերմոֆրոդիտ, երկսեւ կամ որձեւէգ) սեռային (hermaphrodit կամ androgyn) հատկանիշներով: Այս գաղափարը հայտնի է եղել դեռեւս Հին Հունաստանում (տես PLATONS, Gastmahl, köln, 1978, էջ 28–31), իսկ հետագայում՝ Ավստրալիայում (տես MIRCEA, Eliade, Patterns of Comparative Religion, 1958, էջ 423): Ի դեպ, այստեղից (մասնավորապես գնոստիկյան եւ կաբբալիստական գրություններից) է երեւան եկել նաեւ այսպես կոչված երկու ադամների, երկնային նախամարդու եւ հողածին Ադամի, ինչպես նաեւ Լիլիթի (որից ծնվել են հսկաներն ու դեւերը) մասին գաղափարը (տես DR. W. VOLLMER, Antologie aller Nationen, Stuttgart, 1836, էջ 1143):

¹⁹ ՄԿՐՏԻԶ Ա. ԽՐԻՄԵԱՆ, Բարոյախոսական երկեր. (այսուհետ՝ Խրիմյան Հայրիկ) Ս. էջմիածին, 2019, էջ 67:

²⁰ «Դավթին ուղղված Աստծու խոսքում խտացած ներկայացված են ընտանեկան իրավունքի հիմնական սկզբունքները, ընտանիքի հոգեւոր լինելու պարագան, նրա ամրությունը գաղափարը, նրա հիմնական իմաստը՝ որպես տոհմի շարունակությունն ապահովող հաստատություն, եւ այս հարթության վրա տունն իմաստավորվում է որպես միանալու եւ համատեղ ապրելու վայր եւ, ուրեմն, ընտանիքի գոյության հիմնական ատրիբուտ: Ընդհանրապես քրիստոնեական ուսմունքը լիովին կառուցված է այն հիմնադրույթների վրա, որոնք անմիջապես կապված են ընտանեկան հարաբերությունների հետ» (Ռ. ՊԱՊԱՅԱՆ, էջ 183):

հառաչանքների բազմացումը, ցավերով երեխաներ ունենալը, ամուսնուն ենթարկվելն ու ամուսնու իշխանության մեջ լինելը²¹ (հմմտ. Ծննդ. Գ. 16): Այստեղ, Արարչի կողմից հատկանշվում է Եւայի ոչ միայն օգնականի, այլև մայր լինելու (առաքելությունը) դերակատարությունը (Ծննդ. Գ. 16, հմմտ. Ծննդ. Գ. 25, ԻԱ. 6)²²: Հետաքրքրական է, որ թեպետեւ միմյանց լրացնելու եւ օգնական լինելու գործառույթն Աստված չի վերացնում, սակայն հիմնական պատասխանատվությունը թողնում է տղամարդու վրա, համաժամանակ նրան տալով՝ առաջնորդողի եւ ծառայություն կատարողի դերը (հմմտ. Մարկ Ժ. 45)²³, ասելով՝ «Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին... թող անիծեալ լինի երկիրը քո արածի պատճառով: Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կեանքի բոլոր օրերին²⁴: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը, եւ դու դաշտային բոյսերով սնուես: Քո երեսի քրտինքով²⁵ ուտես հացդ մինչեւ հող դառնալը, որից ստեղծուեցիր, որովհետեւ հող էիր եւ հող էլ կը դառնաս» (Ծննդ. Գ. 17–19): Ծննդոց գրքի շարունակության մեջ հանդիպող՝ «Տէր Աստուած ասաց. «Ահա Ադամը դարձաւ մեզ նման մէկը, նա գիտի բարին եւ չարը: Արդ, գուցէ նա ձեռքը մեկնի, քաղի կենաց ծառից, ուտի եւ անմահ դառնայ» (հմմտ. Սաղմ. Բ. 4, ԼՁ. 14,

²¹ «Եւ քեզ սկզբից եւեթ տղամարդուն համապատիվ ստեղծեցի... քանի որ դու չսովորեցիր իշխել, այժմ սովորիր պարկեշտորեն ենթարկվել...» (JOHANNES CHRYSOSTOMUS, Homilien zur Genesis 17, (Texte der Kirchenväter), München, 1963, p. 323–324):

²² Եւ Ադամն իր կնոջ անունը դրեց Կեանք, որովհետեւ նա է բոլոր մարդկանց նախամայրը (Ծննդ. Գ. 20): Այլ կերպ ասած՝ Ադամը գիտակցաբար ընդունում է թե՛ վերահաս պատիժը, եւ թե՛ Եւային վերապահվածը:

²³ «Որովհետեւ մարդու Որդին էլ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու եւ տալու իր անձը որպէս փրկանք շատերի փոխարէն» (Մրկ. Ժ. 45): Այլ խոսքով՝ տղամարդն ընտանիքում պետք է ունենա նույնքան պարտավորություն ու պատասխանատվություն, որքան որ Քրիստոս եկեղեցում:

²⁴ Ս. Բարսեղ հայրապետը գրում է. «...մարդ պետք է իմանա, որ աշխատողը տքնելու եւ ոչ թե պարզապէս իր կենցաղային կարիքները հոգալու պահանջից թելադրված, այլ Տիրոջ պատվիրանը կատարած լինելու համար (հմմտ. Մատթ. ԻԵ. 40, Բ. Թես. Գ. 8, 11–12)... նա, ով ձգտում է կատարելության, պետք է գոր ու գիշեր աշխատի, որպեսզի կարողանա տալ նրան, ով կարիքի մեջ է» (BASILIUS DER GROSSE, Ausführliche Regeln, 42, 1–2 (Texte der Kirchenväter), III, München, 1964, p. 228):

²⁵ Հայտնի է, որ մարդն ի սկզբանե կոչված էր մշակելու երկիրը, եւ որ ծուլությունը՝ մեղք է, իսկ աշխատանքն աստվածադիր օրենք եւ օրհնություն, սակայն երբ աշխատանքն առկա է, իսկ վարձն ուշանում կամ առհասարակ չի հետեւում, աշխատանքից սպասվող երջանիկ ապրումը կարող է տուժել: Վազգէն Ա. Վեհափառը գրում է. «Յիրաւի սխալ է կարծել, թե աշխատանքը զուտ տնտեսական երեւոյթ մըն է: Ո՛չ: Աշխատանքը, ինչպէս նաեւ այն բոլոր երեւոյթները, որ մարդկային են, ամէն բանէ առաջ հոգեկան երեւոյթներ են, մարդկային գիտակցութեան մը արտայայտութիւններն ու գրասերութիւններն ըլլալով... տնտեսական կեանքը չէ, որ ծննունդ կու տայ աշխատանքին, այլ մարդկային հոգեկան ունակութիւնները...» (Վազգէն Ա. Հայրապետ Հայոց, գիրք Գ., էջմիածին, 1976, էջ 211):

ԾԸ. 9), արտահայտությունն ավելի շրջասացություն է²⁶ (հիշեցնում): Այդուհանդերձ, Աստծու եւ մարդու միջեւ իրապես գոյություն ունի հավասարության մի եզր. մարդը բաժնեկից է Աստծու տերությանն ու օժտված է ազատ կամքով, դրա համար էլ նա «դուրս է գալիս կախյալ վիճակից, մերժում է հնազանդվել Աստծուն եւ իր կամքի շնորհիվ ինքն իրեն անկախ է հռչակում: Հետաձգելով նրա կյանքի սկզբունքը ոչ թե հնազանդությունն է, այլ իր ազատ գիտակցությունն ու ցանկությունը, որով նա գործնականապես դադարում է իրեն իբրեւ արարած նկատելուց»²⁷: Սակայն, սանձահարելու համար մարդու հանդուգն մրցակցությունը, Աստված արգելում է նրան ձեռք մեկնել կենաց ծառին եւ այդպիսով անմահության հասնել: Գալով Աստծուց նշանակված պահապաններին՝ նրանք ոչ թե դրախտի, այլ կենաց ծառի պահապաններ են²⁸:

Անդրադառնալով Պսակին՝ ինչպես տեսանելի է սուրբ խորհրդի էությունից ու ներքին՝ հոգեւոր բովանդակությունից, այն մեկ անգամ է կատարվում: Պսակվելիս՝ ամուսինները խոստանում են ցմահ միմյանց օգնական, տեր եւ պաշտպան լինել²⁹: Ավետարանական հորդորով՝ տղամարդը, որպես ճշմարիտ սրտակցի եւ իբրեւ մի մարմին նրա հետ, խոստանում է հարեւման իր անձի, բոլորանվեր սիրել կնոջը՝ «Կնոջ ու տղամարդու բնական խառնվածքն ու դիրքն անհրաժեշտապես որոշում են այս երկու տեսակ հարաբերության որպիսությունն, ըստ որում եւ կինը պսակվելու ժամանակ խոսք է տալիս հնազանդ լինելու տղամարդին ու երկնչելու կամ ակնածելու նորանից: Իսկ այս հնազանդությունն ու երկյուղը ոչ թե ստրկական է, այլ այն վերաբերմունքն, որ սովորաբար ուրախությամբ ունենում ենք դեպի անձնագոհությամբ մեզ սիրող եւ մեզ համար ապրող ու շնչող ընկերը կամ մտերիմը: Նա, որ սիրում է, չի կարող բռնակալ լինել, իսկ նա, որ սիրվում է, չի կարող չպաշտել, չհնազանդվել յուր անձնվեր սիրող կողակցին: Որքան էլ բարձր լինի տղամարդը, նա, երգվելով Աստուծո եւ ժողովրդի առաջ՝ սիրել յուր կողակցին, չի կարող

²⁶ Ինչպես որ ժամանակին իրավացիորեն նկատել է էդ. Ջրբաշյանը, «...այլաբանությունը եւ սիմվոլը բոլոր դեպքերում չէ, որ հնարավոր է սահմանադատել» (ԷԴ. ՋՐԲԱՇՅԱՆ, Գրականության տեսություն, Երեւան, 1967, էջ 232): Այս իրողությանը կարելի է հանդիպադրվել նաեւ հայկական էպոսի զանազան դրվագներն ուսումնասիրելիս:

²⁷ GERHARD VON RAD, Das erste Buch Mose, Göttingen, 1981, p. 70:

²⁸ ՏԵՍ ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ, Մեկնություն Արարածոց, Կոհելէթ կամ գիրք Ժողովողի (հետադարձ Ֆակոբ արք. Գլնճեան), Երեւան, 2016, էջ 170—171:

²⁹ Հնդհանրական եկեղեցու քաջահայտ դեմքերից՝ Ս. Հովհան Ոսկեբերանը նկատել է տալիս, որ «ամուսնության մեջ միշտ կա երրորդ կողմ (դեմք)՝ Աստծու կողմը (դեմքը)» (С. В. Троицкий, Христианская философия брака, М., 2015, էջ 38):

որեւիցե կերպով արհամարհել նորան կամ բռնանալ նորա վրա»³⁰։ Աստվածաշունչը հատակորեն սահմանում է, թե՛ «աստիճանակարգություն»³¹ դրույթները, թե՛ պատճառներն ու նպատակը (հմմտ. Եփես. Ե. 21–33, տե՛ս նաեւ Մատթ. ԺԹ. 6, Ա. Յովհ. Դ. 21, Ա. Տիմ. Ե. 8)։ Այդ է վկայում նաեւ Տիրոջ անդրադարձը (հմմտ. Մարկ. Ժ. 42–44)³²։

Տիրոջ կողմից իրագործված եւ պատվիրակված սույն սկզբունքը բնականաբար եւ անհրաժեշտաբար գործադրելի է հատկապես ընտանիքի համապատկերում, ընտանիքի ներսում տղամարդն ու կինն իրավահավասար են (հմմտ. Ծննդ. Ա. 28)։ Տղամարդու պարտականությունն է անձնագիր ու զոհաբերական կերպով սիրել կնոջը (Եփես. Ե. 25), հոգ տանելով՝ ինչպես սեփական մարմնին (Եփես. Ե. 28–29), այդ թվում՝ Աստծուն՝ արգելքներ չհարուցելու նպատակին ընդառաջ, ապրել կնոջ հետ «իմաստությունամբ, հարգանքով, իբրեւ դուրաբեկ անոթի եւ իբրեւ կեանքի շնորհի ժառանգակցի» (հմմտ. Ա. Պետ. Գ. 7), ապահովելով՝ զավակների մեջ «Տիրոջ խրատն ու ուսուցումը» (Եփես. Զ. 4)։ Այսու՝ Աստված տղամարդու ուսերին լիարժեք պատասխանատվություն է հաստատել, որպեսզի ընտանիքն առողջ լինի, եւ սրա հետ ամուսիններն ու հայրերը հաշվի նստելու սուրբ պարտականություն ունենան³³։ «Մարդոյն Արարիչը ամուսնութիւնը միայն

³⁰ Քրիստոնեական, էջ 465–466։

³¹ Թեեւ աշխարհիկ իմաստով, կամ բացառապես աշխարհիկ մեկնաբանությամբ, հեռու կամ ապահովագրված չենք այնպիսի գայթակղությունից, համաձայն որի, «աստիճանակարգություն» եզրը կարող է տեղիք տալ տարատեսակ մեկնաբանությունների, համարժեք կամ հոմանիշ նկատվել «տիրապետություն», «հսկողություն» կամ «գերազանցություն», եւ «իրավացիորեն» առաջ բերել շոշափելի թյուրմեբնողություն, այդուհանդերձ, քանի որ խնդրո առարկա նյութը հոգեւոր դաշտում է, մենք էլ հորդորում ենք հարցին անդրադառնալ բացառապես բիբլիական կամ հոգեւոր դիտանկյունից, հիմնված՝ ուղղափառ վարդապետության դրույթների վրա, որպես պատգամում է Աստվածաշունչը. «Հնազանդուեցէք միմեանց Քրիստոսի երկրպագու։ Կանայք իրենց մարդկանց թող հնազանդ լինեն, ինչպէս կը հնազանդուեն Տիրոջը... Եւ ինչպէս եկեղեցին հնազանդուում է Քրիստոսին, նոյնպէս եւ կանայք թող հնազանդուեն իրենց մարդկանց ամէն ինչում։ Մարդիկ, սիրեցէք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար...» (հմմտ. Եփես. Ե. 21–33)։

³² Քրիստոս, նկատել տալով, թե ինչպես պետք չէ, որ լինի, միանգամայն հստակ ուղղենշում է թե՛ քրիստոնեական հանրության (թե՛ մասնավորապես առաջնորդի), եւ թե՛ ընտանիքի համապատկերը. «Գիտէք, որ հեթանոսների մէջ իշխանաւորներ համարուածները տիրում են նրանց. եւ նրանց մեծամեծներն իշխում են նրանց վրայ. ձեր մէջ այդպէս չպէտք է լինի. այլ ձեզնից ով կամենայ մեծ լինել, թող լինի ձեր սպասաւորը. եւ ձեզնից ով կամենայ առաջին լինել, բոլորին ծառայ թող լինի. որովհետեւ մարդու Որդին էլ չեկաւ ծառայութիւն ընդունելու, այլ՝ ծառայելու եւ տալու իր անձը որպէս փրկանք շատերի փոխարէն» (Մրկ. Ժ. 42–45)։

³³ Հմմտ. Ծննդ. ԻԱ. 10–12, Մատթ. ԺԹ. 1–10, Ա. Կոր. Է. 1։ Քրիստոնյայի համար, թե՛ Հին Կտակարանի փորձառությունը, եւ թե՛ Նոր Կտակարանի հորդորները, ըստ էության, պատգամներ եւ հրահանգներ են։ Սակայն դրանք ոչ թե ինքնանպատակ հրամաններ

մարդոյն համար սահմաններ է. եւ ամուսնութիւն Աստուծոյ խորհրդաւոր, ձեռագործ եւ բնական օրէնք է: Մովսիսին օրէնքները Տէր Աստուած Սինայի սարէն տուաւ, իսկ ամուսնական օրէնքը դրախտէն կը սկսի: Անդրանիկ մարդն Ադամ եւ նորա ամուսին Եւայի երբ արարչութեամբ աշխարհ եկան, այս բնական օրէնքը իրենց գոյութեան հետն էր: Եւ ինչ է այս արարչադիր օրինաց զօրութիւն եւ նպատակը: Այդ ինքնին յայտնի է, զօրութիւն բնական սէրն է եւ նպատակը մարդկային սեռին բարգաւաճումն ի փառս իւր Արարչին...»³⁴: Ընտանիքի կենսականությունը, ինչպէս նաեւ աստիճանականագոյն կարեւորությունը տեսանելի է դեռեւս Մովսիսական ուխտի³⁵ դրույթներում՝ «Եթե որեւէ մեկը շնություն է գործում ամուսնացած կնոջ հետ, ապա երկուսն էլ թող դատապարտվեն մահվան» (Ղեւտ. Ի. 10–21, հմմտ. Սաղմ. 2. 32, Մատթ. ԻԲ. 22–24): Տասը պատվիրաններից երկուսը վերաբերում են ընտանիքի համակեցության պահպանմանը³⁶: Հինգերորդ պատվիրանը նախատեսված է պահպանելու համար ծնողների լիազորությունները, իսկ շնությունն արգելող յոթներորդ պատվիրանը, տրված է՝ պաշտպանելու համար ամուսնության սրբությունը³⁷: Ըստ էության, այս երկու պատվիրանների վրա են խարսխված Մովսիսական օրենքի դրույթները: Մի կարեւոր հանգամանք եւս. Հին Կտակարանում տեսնում ենք, թե ինչպէս Տէր Աստված իր ստեղծած դաշտային բոլոր գազաններին, երկների բոլոր թռչուններին բերում է Ադամի մոտ, որ Ադամն անուններ տա (Ծննդ. Բ. 19): Ադամը բոլոր անասուններին, երկների բոլոր թռչուններին

են, կամ դրանց նպատակը ո՛չ թե մեկի-մյուսի ազատ կամքին բռնանալն է, այլ վերահաս փորձանքներից ու դժվարություններից հեռու պահելը եւ գործնականում քրիստոնեական բարոյական արժեհամակարգին առընչակցելը:

³⁴ ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿ, էջ 28:

³⁵ Թեեւ Աստվածաշնչում Աստված-մարդ եւ մարդ-Աստված հարաբերությունը նկարագրող, պատկերագրող, հիմնական բանալի-բառը «ուխտ»-ն է (հմմտ. Ծննդ. ԺԵ. 18, 17, 19, Բ. Օր. է. 9, Նաում Ա. 2, Երգ Երգոց Ը. 6), սակայն միաժամանակ հատկանշելի է նաեւ «հավատք» բառի կիրառությունը, ինչպէս նաեւ հավատք-հնազանդություն եւ հավատք-հավատարմություն բառերի աղբյուր (հմմտ. Եսայ. 66. 12–13, ԽԹ. 13–15, Եփես. Ա. 15, Ե. 21–33, Զ. 14–16):

³⁶ Մարդկանց ծնունդը սաղմնաոլության շնորհիվ է նորոգվում» (այլ խոսքով՝ յուրաքանչյուր ծնունդ սերնդագործության արգասիք է), Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ, Յաճախապատում ճառք, Վենետիկ, 1954, էջ 240:

³⁷ Նյութի հետագա շարադրության մեջ պիտի տեսնենք, որ դիցուք՝ մեզանում, որոշ բացառություններով, դեռեւս Դ.–Ե. դդ. սկսյալ, (Մովսիսական կանոնների) սույն արժեհամակարգը պահպանվել, լրացվել, սրբագրվել ու գործնական կիրառություն է ունեցել: Հայտնի է, որ դեռեւս առաջին դարերում, տարածված երեւույթ է եղել, թե եղբոր մահից հետո մյուս եղբոր կողմից մահացած եղբոր կնոջը կնոթյան առնելը, թե՛ դեռահասների ու մերձավորների ամուսնությունը, եւ թեկնանց եւ օրիորդների առեւանգումը: Սակայն Հայոց եկեղեցին երբեւէ չի խրախուսել այսօրինակ վարքուբարքը (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա., Երեւան, 1964, Երեւան, Բ. 1971):

եւ դաշտային բոլոր գազաններին անուններ է տալիս³⁸, բայց չի գտնում իր նմանութիւնն ունեցող մի օգնական: Ապա Տերը թմրութիւն է բերում Ադամի վրա, հանում է նրա կողոսկրերից մեկը եւ այդ տեղը մաշկով է ծածկում: Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին է արարում եւ բերում է Ադամի մոտ: Հետապնու ականատեսն ենք Ադամի անդրադարձին. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչուի կին...»: Այդ իսկ պատճառով տղամարդը. «պէտք է միանայ իր կնոջը...» (հմմտ. Ծննդ. Բ. 19–24): Այլ խոսքով՝ Ադամն է, որ բնորոշում է կնոջը կամ անուն է տալիս՝ ասելով. «Թող սա կոչուի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծուեց»: Եւ այս ամենից հետո է միայն («Աստուած տեսաւ, որ բարի» է), որ հետեւում է աստվածագիր հրամանակարգութիւնը. «...տղամարդը թողնելով իր հօրն ու մօրը՝ պէտք է միանայ իր կնոջը, եւ երկուսը պէտք է լինեն մի մարմին»: Աստվածագիր օրենքի եւ սույն տրամաբանութեան շարունակականութիւնը տեսանելի է նաեւ ինչպես հետեւող՝ «Յաւերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ նա պիտի իշխի քեզ վրայ... Եւ Ադամն իր կնոջ անունը դրեց Կեանք, որովհետեւ նա է բոլոր մարդկանց նախամայրը» (Ծննդ. Գ. 16, 20), այնպես էլ՝ հետագա իրադարձութիւններում (տե՛ս Ծննդ. Ժե. 5, 15, հմմտ. Եփես. Ե. 23, 33): Հանապազ ու անմերժելի է բովանդակային սույն կապը Նոր Կտակարանում եւս. մասնավորապէս, երբ Քրիստոս խոսում է ամուսնութեան սրբութեան, ներքինիների, օրենքի անկատար լինելու եւ ամուսնալուծութեան օրենքի գործադրութեան մասին (Մատթ. ԺԹ. 1–12, Մարկ. Ժ. 1–12): Պողոս առաքյալը եւս ամենատարբեր առիթներով խոսում է ամուսնութեան ու ընտանիքի կարեւոր դերակատարութեան մասին (Եփես. Զ. 1–4, Կողոս. Գ. 20–21, տե՛ս նաեւ Գործք ԺԶ. 11, 15, 16, 31–33). որտեղից կրկին հետեւում է, որ ընտանիքը Աստծու մեծագույն պարգեն է, եւ որ ընտանիքի անդամները պատասխանատվութիւն ունեն միմյանց հանդէպ: Հետեւաբար, աստիճանակարգութիւնն ընդհանրապէս եւ ի մասնավորի՝ ընտանեկան աստիճանակարգութիւնն Աստված հաստատել է մեր սեփական բարիքի համար³⁹ (հմմտ. Ա. Կորնթ. ԺԱ. 3)

³⁸ Ա. Գրիգոր Տաթեւացին, բաժնական հանգամանալից անդրադառնալով այն փաստին, թե ինչու է Աստված Ադամին վերապահում կենդանական աշխարհին անուններ դնելու պատիվը, ի շարս այլ մեկնաբանութիւնների, նշում է նաեւ մարդու շնորհ ունենալու, իշխան եւ տեր լինելու հանգամանքը, ինչպէս նաեւ, որ մարդու անհնազանդութիւնը տարածվեց նաեւ կենդանական աշխարհի վրա (տե՛ս Գիրք Հարցմանց Երեցս երանեալ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն (այսուհետ՝ Հարցմանց), 1993, Երուսաղէմ, էջ 219–220):

³⁹ «Իսկ որ կրօնն էապէս ազդում է ընտանիքի ձեւավորման եւ կազմավորման, ընտանեկան հարաբերութիւնների վրա, երեւում է դեռեւս Նղիշե վարդապետի տողերից, ուր հեղինակը

«Մանուկ կաթնկեր, որ թէպէտ նա դեռ իմացականութիւն չունի. բայց բնազդեցիկ բերմամբ մօր գրկին մէջ առաջին անգամ կզգայ եւ կճանչնայ սէր: Մանուկը, եթէ չեմ սխալիր⁴⁰, մօր միջնորդութեամբ եւ վկայութեամբ կճանչնայ նաեւ իւր հայր. եւ արհաւիր ճանաչման մէջ կծնի ծնողասիրութեան զգացումն եւ որչափ ինքն կաճի ու կզարգանայ, պէտք է այնչափ մեծնան իւր սրտին մէջ ծնողասիրութեան պարտիքը... Բնական եւ Աստուածային պարտիք է նախ եւ առաջ ճանչնալ, թէ իւր կենաց եւ գոյութեան պատճառը՝ իւր ծնողքն են, եթէ չլինէին ծնողք, ինքն այս աշխարհիս վերայ ո՛չ լոյս պիտի տեսնար, ո՛չ արեւ, եւ ո՛չ մարդ պիտի կոչուէր, եւ կամ մարդկային ընկերութեան կարգ խառնուէր. այլ պիտի մնար չգոյութեան մէջ անծնունդ եւ անանուն: Այո՛, զաւակաց պարտիքն է ճանչել զծնողս, եւ ծնողական ծայրագոյն սէր չափել պէտք է, թէ չկայ աշխարհիս վերայ ուրիշ ոք, ո՛չ եղբայր, ո՛չ քոյր, ո՛չ բարեկամ, ո՛չ ազգական եւ ո՛չ իսկ ամուսին, որ զինքն այնչափ գորովով սիրէ ու խանդաղատի. անձն՝ անձին, եւ հոգին՝ հոգւոյն փոխան տայ, ինչպէս ծնողք: Ուստի ծնողական սիրոյ այս մեծ իրաւունքը, նոյն փոխադարձ սէր կպահանջէ զաւակներէն. զոր սրտի մտօք պէտք է հատուցանեն ու պարտական չի մնան»⁴¹:

Աշխարհի արարումից ի վեր երբեւէ չի եղել ավելի նվիրական, ներդաշնակ միութիւն, քան ամուսնական ընտանիքը: Այսպիսով՝ թելադրելի է, որպէսզի նոր կյանքի ձգտող ու ընտանիք կազմելուն նպատակադրված զույգը, նախ համատեղվի եւ մեկ դառնա սուրբ Պսակի

դժգոհութիւնն է հայտնում, որ մոգերի ուսմունքն ընդունելով՝ ոմանք ոտնահարեցին սուրբ ամուսնութեան օրենքը, որ «ունէին ի նախնեաց»՝ քրիստոնեական կարգի նմանութեամբ, եւ մի կնոջ փոխարեն սկսեցին «բազում» կանանց հետ լինել. «Դարձեալ եւ կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգացն: Ուստերք եւ դստերք ազատաց եւ շինականաց կրթեցցին ի հրահանգս նոցուն մոգաց: Կարճեցցին եւ արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան, զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեան. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն»: Այսինքն՝ պարսկական զրադաշտականութիւնն ընդունելով՝ ոչ թե պարզապէս սկսում էին կրակ, բարդի կամ կաղամախի երկրպագել, այլ փոխվում էին նրանց ընկերային եւ ընտանեկան հարաբերութիւնները. նվազագույնը անցում էր կատարվում դեպի բազմակնութիւն, ինչպէս տեսնում ենք Յովիշի տողերից: Նոյն ժամանակների վերաբերյալ Վահան վարդապետ Բաստամյանցը գրում է՝ «եթէ բազմակնութիւնը չէ գտել հայերի մէջ ընդհանուր գործածութիւն, ուրեմն դա հակառակ է եղել ժողովրդական վարքութեան» (Հայկական ընտանիք. Երեւան, 2018, էջ 19. տե՛ս նաեւ Խ. ՍԱՄՈՒԷԼՅԱՆ, Հայ ընտանեկան պաշտամունքը, «Ազգագրական հանդէս», 1904, ժ.Բ., էջ 205, 1906, ժ.Գ., էջ 123):

⁴⁰ Միանգամայն ակնհայտ է, որ Խրիմյան Հայրիկը (ինչպէս որ ժամանակին Խաչատուր Աբովյանը), իր աշխատութիւններում, ժողովրդին (եւ մասնավորապէս հասարակ մարդուն) հասկանալի կերպով, երբեմն՝ կենցաղային օրինակներով եւ որ պակաս կարեւոր չէ՝ ուղղափառ մեկնաբանութեամբ, ներկայացնում է Ավետարանական ճշմարտութիւններն ու դրանց առավելութիւնները:

⁴¹ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ, էջ 104:

խորհրդակատարություններ⁴² (որպեսզի Աստված ճանաչի ամուսնացողների միությունը), միաժամանակ գիտակցելով այն դրույթները, որպիսիք բխում են Ս. Գրքից եւ մեր Ս. Եկեղեցու վարդապետությունից, այն է՝ մշտական կենակցության ուխտը՝ հարեւնման Քրիստոսի եւ Իր Եկեղեցու միության օրինակի. ամուսնությունն ունի հոգեւոր նպատակ (հմմտ. Ա. Կորնթ. է. 29): Ամուսնությունը անդամագրվում ենք երկնային արքայությանը (հմմտ. Ա. Տիմ. Գ. 1–8, Եբր. ԺԳ. 4):

Ընտանիքը սիրո վարժարան է, որտեղ ամուսիններն իրավահավասար են, ունեն հավասար պարտականություններ միմյանց, զավակների ու այլոց նկատմամբ եւ այլն: Ասվածաշնչան՝ «Որովհետեւ ոչ թէ մարդն է կնոջից, այլ կինը՝ մարդուց» (Ա. Կորնթ. ԺԱ. 7) գերակա սկզբունքը, տրված է ո՛չ թե երկվության կամ երկպառակելու, ինքնագոյություն կամ պարծանքով տոգորվելու, այլ՝ պարտադիր կերպով պատասխանատվություն ստանձնելու, առաջնորդության եւ ինքնագոյության մեջ ծառայելու համար⁴³: Այնպես որ, ինչպես ընթերցում ենք «Հայ եկեղեցու քրիստոնեականում»՝ «առաջինը պետք է փայլի պարկեշտությամբ, իսկ երկրորդը՝ հոգատարությամբ»: Դրա մասին են վկայում նաեւ սուրբգրային մի շարք այլ թելադրանքներ ու լուսաբանումներ. «ուվ կին ունի, հոգում է, թէ ինչպէս հաճելի լինի իր կնոջը: Իսկ ամուսնացած կինը հոգում է... թէ ինչպէս հաճելի լինի իր մարդուն» (հմմտ. Ա. Կորնթ. է. 33–34): «Նոյնպէս եւ տղամարդիկ թո՛ղ իմաստութեամբ ապրեն իրենց կանանց հետ, յարգեն նրանց, իբրեւ գիրաբեկ անօթի, իբրեւ կեանքի շնորհի ժառանգակիցների» (Ա. Պետ. Գ. 7): «Մարդիկ, սիրեցէ՛ք ձեր կանանց եւ մի՛ դառնացրէ՛ք նրանց: Որդիներ, ամեն ինչում հնազանդ եղէ՛ք ձեր ծնողներին,

⁴² «Կեանքի եւ գոյութեան պարտքը բառնալու համար սահմանուած լծակցութիւնն արուի եւ իգի [միջեւ]» (Բ. Քեզեւս, Ամուսնաթողութիւն, «Մասիս», Կ. Պոլիս, 1884, թիւ 3731, էջ 34): «Արարիչն առաջին ամուսնութեան սուրբ ըլլալու սկզբունքն ու օրէնքն այր եւ կին Աստծոյ նման ըստեղծուելուն մէջ դրած էր: Յիսուս Քրիստոս փրկիչն մեր եւս աւելի նոր վսեմութիւն մը տալու համար, ամուսնաց միութիւնն իրեն եւ եկեղեցւոյն մէջ եղած միութեան նմանեցոյց (Ն. ԱՇԼԵՆԵԱՆՑ, Քրիստոնէական ամուսնութիւն, «Յոյս», 1876, թիւ 2, էջ 98):

⁴³ Քրիստոնեական ընտանիքը կառուցված է նահապետական կամ հայրիշխանական ավանդույթի վրա: Թեեւ ընտանեկան հիերարխիայում առաջին տեղը պատկանում է ամուսնուն, սակայն այս իշխանությունը սահմանված է ծառայության համար: Քանի որ, ըստ էության, իշխանությունը պատկանում է միայն Աստծուն (հմմտ. Հռոմ. ԺԳ. 1), եւ եթե մեկը, մոռացության տալով իր ծառայական պարտավորությունը, կամայականորեն փորձի գործածել այն իբրեւ արտոնություն, կնշանակի, որ վերջինս փորձում է իր անձին վերագրել մի բան, որն իրեն չի պատկանում: Այլ խոսքով՝ անպատասխանատու կերպով իրեն վերապահելով աստվածային իշխանություն, մարդը (ինչպես սատանան), ընդդիմանում է Աստծուն, խախտում է հավասարության սկզբունքն ու ալլասերում ընտանիքի համապատկերը:

որովհետեւ հաճելին այդ է Տիրոջ առաջ: Հայրեր, մի՛ զայրացրէք ձեր որդիներին, որ չուսալքուեն» (Կող. Գ. 19—22):

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՒ ՄԵՂՔԸ (մեղքի հետեւանքը)

«Մեղքն սահմանօրէն այս է:

Մեղք է դարձուցանել զերեսս անփոփոխելի բարոյն որ է՝
առ Աստուած, եւ դառնալ առ փոփոխելի բարին որ է արարածքս».

Գրիգոր Տաթեւացի:

Ընդհանուր (կառուցվածքային ու ֆիզիկական) եւ աստվածաբանական իմաստով ընտանիքի⁴⁴ հայեցակարգը տրվում է Աստվածաշնչի հենց սկզբում (հմմտ. Ծննդ. Ա. 28): Տղամարդն ու կինը, ամուսնական միություն միջոցով (հմմտ. Ծննդ. Բ. 24), դառնում են ընտանիք կամ այլ խոսքով՝ մարդկային ընդհանրության կառուցվածքային միավորում, ինչպես վկայում են ընդհանրական եւ մասնավորապես Հայ եկեղեցու մտածողները⁴⁵: Ընտանիքի նահապետական կառուցվածքի վերաբերյալ մի շարք

⁴⁴ Ընդհանուր առմամբ, հայկական բառարանները (հորը նկատելով ընտանիքի գլուխ) հետեւյալ բացատրությունն են տալիս ընտանիքի մասին. արյունակցությամբ կամ ամուսնությամբ իրար հետ կապված եւ միասին ապրող մարդկանց խումբ (հայր, մայր ծնողներ ու զավակներ), ընտանեկան հարկ-ընդ տանիք, բ. տոհմ, ցեղ, ազգատոհմ, գերդաստան, գ. համարժեք կամ միատեսակ միավորների խումբ: Փոխաբերական իմաստով՝ ընդհանուր շահերով, ձգտումներով, գործողությամբ իրար հետ կապված մարդկանց խումբ: Տնտեսություն, ծուխ, երդ, օջախ եւ այլն (Է. Գ. ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Երեւան, 1969): Հազվադեպ՝ ընտանիք իմաստն ունի նաեւ կինը (տե՛ս Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երեւան, 1967, Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երեւան, 2009): ՄԿՐՏԻՁ Ա. ԽՐԻՄԵԱՆ, Բարոյախոսական երկեր, Ս. Էջմիածին, 2019, էջ 28:

⁴⁵ Համաձայն Հաճախապատում ճառերի հեղինակի՝ «Մարդը կենդանական աշխարհից տարբերվում է ոչ միայն բանականությամբ, այլեւ ամուսնության (ընտանիքի) կարգավորվածությամբ: Բանականությամբ մարդը տիրում է «հողածիններին» եւ բնության (շրջապատող աշխարհի) վրա, իսկ ամուսնությամբ ապահովում է «ազգի աճը»: Բացի այդ, ընտանիքն է դաստիարակում նոր սերունդը, որպեսզի զավակներն «ընդօրինակեն եւ ամեն ինչում հետեւեն հայրենի ավանդություններին»: Ընտանիքի անդամները անընդմեջ համատեղում են տնօրինություն (տնտեսավարություն) եւ տեսչության (կառավարման) հարցերում: Հետեւաբար՝ ընտանիքն իրականացնում է այն խնդիրները, որոնք անհրաժեշտ են արդար եւ կարգավորված հասարակության համար» (Ս. Արեւշատյան, Կ. Միրումյան, Հայ միջնադարյան փիլիսոփայություն (այսուհետեւ՝ Հայ միջնադարյան փիլիսոփայություն), Ս. Էջմիածին, 2014, էջ 340):

ընկալումներ արդեն իսկ տեսանելի են վաղեմի ընտանիքի պարագայում⁴⁶ (հմմտ. Ծննդ. Բ. 23, Դ. 9): Ս. Գրքում տեղ գտած Աստծու եւ Կայենի երկխոսությունը՝ «Ո՛ր է քո եղբայր Աբէլը»,— հետեւում է,— «Չգիտեմ, միթէ ես իմ եղբոր պահակն եմ»,— պատասխանը,— իրականության մեջ փոխաբերություն-ընթացություն է, քանի որ Կայենի պատասխանն առավելաբար շփոթված լինելու եւ իրեն մեղավորությունը հասկացած կամ ընդունելու հակված մեկի հոգեգիճակի արդյունք (նկարագրություն) է⁴⁷: Ընտանիքը, եւ ի մասնավորի՝ եղբայրությունը, ի սկզբանե ենթադրում է պատասխանատվություն ու պահպանություն⁴⁸: Դրա վկայությունն է նաեւ Կայենի

⁴⁶ Հայ ժողովրդական հերոսավեպի «Սասնա ծռեր»ի հերոսներից, Սանասարի եղբոր մասին համանուն գրավոր ավանդույթը պահպանվել է Աստվածաշնչում, հետագայում՝ Մովսես խորենացու եւ Թովմա Արծրունու երկերում: Իսկ Դավթի եւ Խանդավթի մասին գրույցների, Սասունում կատարված դեպքերի մասին որոշ հիշատակություններ պահպանվել են ժ.Չ. գ. Պորտուգալացի ճանապարհորդների (Ա. Տենրեյրո, Մ. Աֆոնսո) ուղեգրական նոթերում: Հին հեթանոս աստվածությունները քրիստ. սրբերի (Գաբրիել հրեշտակ, Ս. Սարգիս) անուններով հանդես են եկել որպես սասնա հերոսների գործակիցներ եւ հովանավորներ: Աստվածապաշտությունը, քրիստոնեական բարեպաշտությունն ու եկեղեցասիրությունը Սասնա հերոսներին բնորոշ հատկանիշներ են: Դավթի համար «Աստված էն է, ինչը որ իրեն ստեղծել ու պահում է», նա «բարերար է եւ ողորմած», «օրհնյալ է եւ միշտ հիշյալ» ... Նախամայր Ծովինարը, ամուսնանալով կռապաշտ թագավորի հետ, իր հետ է տանում ծպտված վարդապետի կամ տերտերի, որպեսզի նա ալյադական միջավայրում ժամ ասի, կնքի իր զավակներին, պահպանի հավատը: Նորահայտ մի պատումում նա անգամ հղիանում է կաթողիկոսի տված ցորենի երկու հատիկից... Դավթի վերակառուցում է նախնիների կառուցած Մարութա բարձր Աստվածածնի վանքը, կարգում բազմամարդ վանական միաբանություն, հոգում վանքի բոլոր ծախսերը, ապահովում շքեղ գույքով ու հանդերձանքով, պաշտպանում վանքը օտար ոտնձգություններից: Ի վերջո այն դառնում է Սասնա դյուցազունների մեծագույն ու հեղինակավոր սրբատեղին, որի զորությանն են ապավինում վեպի հերոսներն իրենց բոլոր նախաձեռնություններում, աղոթքի հատուկ բանաձևով նրան են դիմում ու միշտ ստանում ակնկալվող օգնությունն ու հովանավորությունը: Սասնա յուրային հերոսները ճշմարիտ աստվածապաշտ են ն, իսկ բոլոր ալյադական օտարները՝ անհավատ կամ կռապաշտ: Այսինքն՝ էթնիկական տարբերակման առաջնությունը տրված է կրոնական հատկանիշին («Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան» (այսուհետ՝ Քրիստոնյա Հայաստան), Երեւան, 2002, էջ 891—893):

⁴⁷ Ընտանիքը նախնական սուրբ դաշինքն է, որին մարդ դաշնակցում է անհրաժեշտության ուժով: Մարդը կոչված է կառուցելու այդ դաշինքը սիրո, հավատի եւ ազատության վրա, սովորելու բարեխիղճ սրտի առաջին շարժումները եւ ապա բարձրանալ մարդկության հոգեւոր միասնության հետագա ձեւերին՝ հայրենիքին եւ պետությանը (տես թարգմ.՝ Ա. ՀԱՆՈՒՅԱՆ, «Էջմիածին», Դ., 2018, էջ 21 (բնագիրը՝ ИВАН ИЛЬИН, Путь духовного обновления, М., 2011):

⁴⁸ Դիցուք՝ հայկական ընտանիքում առօրյան եւ հարաբերությունները կարգավորվելիս են եղել հնավանդ սովորույթներով, այն օրենքներով, որ սահմանել էր արդար Նոյը, որի ուղենշած արահետով ընթացել են Հայկն ու իր ժառանգները, ինչպես որ Մկրտիչ Ա. Խրիմյանն է նշում. «Մեր ազգին եւ Հայոց աշխարհին ընտանեկան կազմութեան առաջին հիմնադիր Նոյ նահապետն է... մեք Հայկալ անունով՝ Հայ կը կոչուինք, Արամայ անունով Արմէնեան. եւ երբեմն եւս Թորգոմական կամ Ասքանագեան. բայց այս նահապետները բոլորն եւս Նոյի կրտսեր որդի Յաբեթի սկզբնական սերունդէն են, ասոր համար մերթ եւս Յաբեթական ազգ

հաջորդ պահին ունեցած անդրադարձը՝ «Գործած մեղքս մեծ է թողութեան արժանի լինելու համար...»⁴⁹ (Մանգ. Դ. 10–13):

Նոր Կտակարանի մի շարք դրույթներ (մեղքն անօրինություն է, մեղքի վարձը՝ մահը, հմմտ. Ա. Յովհ. Գ. 4, Հռոմ. 2. 23) եւ մասնավորապես Մատթեոսի Ավետարանի՝ «Օրենքի ճշմարիտ ուսուցումը» վերտառությունները զետեղված թելադրությունները, թեեւ առաջին հայացքից հեռավոր, բայց եւ ուղիղ կերպով աղերսվում են այս երկխոսություն հետ⁵⁰: Կայենք եւս, նախապես իր սրտում դրեց, որ պետք է սպանի եղբորը, ըստ որում գիտակցելով, որ մեղք է գործում⁵¹ (Մանգ. Դ. 5–7), եւ ապա՝ փոխանակ ապաշխարելու, իրականացրեց այն (Մանգ. Դ. 8): Հետեւապես, թե՛ ֆիզիկական, եւ թե՛ մանավանդ հոգեւոր օրենքի խախտումը տանում է (աստիճանական կամ անմիջական) ինքնառնջացման: Այս անվրեպ սկզբունքը գործում է բոլոր պարագաներում (այլ խոսքով՝ աշխարհի արարումից ի վեր, եւ Աստծու ծրագրից, եւ նախախնամական⁵² օրենքից ո՛չ մի շեղում չկա): Այսպես է նաեւ ընտանիքի պարագայում. «...Իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ իր կնոջն արձակում է առանց պոռնկությունից, նա՛ է, որ նրան շնութեան է մղում. եւ ով որ արձակուածին է առնում, շնանում է» (Մատթ. Ե. 31–32, հմմտ. Մատթ. Ե. 20, 33–48, ԺՀ. 7, Եփես. Ե. 18): Ուրեմն՝ կարելի է արձանագրել, որ որեւէ հարաբերություն եւ հաղորդակցություն մեջ (այդ թվում՝ ընտանիքում) կապակցությունների խաթարումն ու փլուզումը, որպես կանոն, արդյունք կամ

կը կոչուինք» (տե՛ս ՄԿՐՏԻՁ Ա. ԽՐԻՄԵԱՆ, Դրախտի ընտանիք (այսուհետ՝ Դրախտի ընտանիք), Երկեր, Երեւան, 1992, էջ 18):

⁴⁹ Աստվածաշնչյան անդրադարձի մեջ, ավելի վաղ, քան Կայենք կիրագործեր եղբայրասպանությունը, Աստված, որպես սիրող Հայր, զգուշացնում եւ անգամ զորակցում է նրան, որպեսզի վերջինս հետ կանգնի իրեն մտադրությունից (տե՛ս Մանգ. Դ. 7), սակայն Կայենք, ինչպես որ ժամանակին լույս, այդպես էլ չի կարողանում հաղթահարել իր մեջ ծայր առած նախանձը: Այս եւ հետագա իրադարձությունները մղում են այն մտքին, որ Աստված, հաճախ, խստացնում է օրենքը, ոչ այլ բանի, քան մարդուն մեղքից հեռու պահելու համար:

⁵⁰ «Եթէ սեղանի վրայ քո ընծան մատուցելու լինես եւ այնտեղ լիշես, թէ քո եղբայրը քո դէմ մի ոխ ունի, քո ընծան թող սեղանի առաջ եւ գնա՛ նախ հաշտուի՛ր քո եղբոր հետ եւ ապա եկ քո ընծան մատուցի՛ր... Լսել էք, թէ ինչ ասուեց. «Մի՛ շնանար». իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդէն շնացաւ նրա հետ իր սրտում» (Մատթ. Ե. 23–24, 28):

⁵¹ Բարու հեռացումն է, որ ծնունդ է տալիս իր հակառակին (չարի այս ըմբռնումը վերագրում են Որոգիիներին, որ իր հերթին այն վերցրել է Պլատոնից). (տե՛ս Ս. ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՅԻ, Ս. Էջմիածին, 2007, էջ 29, ծան. 129):

⁵² Նախախնամություն մասին տե՛ս Օ. ՎԱՐԳԱՋԱՐՅԱՆ, Հովհան Որոտնեցու «Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, որ «Յաղագս նախախնամութեան» // «Բանբեր Մատենադարանի», 2006, թիւ 17, էջ 213–257, հմմտ. Ս. ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ, Մեկնողական իմաստասիրական ճառեր, 2009, Ս. Էջմիածին, էջ 6:

հետեւանք է մեղքի: Հետեւապես, անհասկացողությունները, խզումն ու բաժանումը՝ լուկ հետեւանք են, քանի որ պատճառը մեկն է՝ մեղքը: Այսպես է նաեւ Կայենի պարագայում, թեեւ վերջին անդրադարձի մեջ՝ «...ես կը թաքնուեմ քեզնից, ահ ու դողի եւ երերման մէջ կլինեմ երկրի վրայ, եւ ուլ հանդիպի, կսպանի ինձ» (հմմտ. Ծննդ. Դ. 13–15), արդեն տեսանելի են կատարված մեղքի գիտակցման եւ զղջման տարրեր, սակայն, ընդհանուր առմամբ, Կայենի կողմից կատարված եղբայրասպանությունը ծանրանում եւ ծայրաստիճան է դառնում այնքանով, որ իր տեսակի եւ բովանդակության մեջ առաջինն էր, եւ իրավացիորեն դիտարկվում է որպէս Աստծու, սեփական ինքնության եւ հավասարապես մարդկության դեմ կատարված հանցագործություն: «Երբ մեղքի մասին խոսվում է կրոնական իմաստով, նկատի է առնվում այն հարաբերությունը, որ գոյություն ունի մարդու եւ Աստծու միջեւ, ի տարբերություն մարդու զգացումների եւ գիտակցության միջեւ եղած հարաբերության: Մեղքը, կրոնական տեսանկյունից դիտած, ամենեւին կապ չունի մարդկանց կողմից երեւույթների սուբյեկտիվ ընկալման հետ, ըստ որի, ինչ որ մեկի համար մեղք է թվում, մյուսի համար հակառակն է: Եւ եբրայական, եւ քրիստոնեական մտածելակերպը մեղքն ընդունում է որպէս իրականություն, որպէս գոյություն ունեցող աններդաշնակություն մարդու եւ Աստծու միջեւ»⁵³: Համադրելով աստվածաշնչական պատմությունները, միանգամայն պարզորոշ կերպով տեսնում ենք, թե ինչպէս է պատահում, որ մեղքի պատճառով ընտանեկան հարաբերությունները խաթարվում են: Սակայն այդօրինակ ընթացքը սկսվում է դեռեւս նախածնողներից: Մեղքի մասին խոսելիս՝ բնականաբար չենք կարող շրջանցել Սուրբ Գրոց արդի մեկնաբանների, այդ թվում եւ մի շարք հայտնի աստվածաբանների այն տեսակետները, որոնք մթազնում են մեղքի եւ նրա ծագման վերաբերյալ ավանդական տեսությունները: Ըստ այդմ, մեղքը դիտվում է որպէս մարդկային ընկերության եւ վարք ու բարքի արտադրանք կամ որպէս յուրատեսակ մի հիվանդություն, որն ինքնին դատապարտելի չէ: Սրանով տկարանում է մեղքի բարոյական հասկացությունը եւ այն դառնում է ինչ-որ հարաբերական ախտանիշ⁵⁴: Երբ Ադամն ու Եւան մեղք գործեցին, Ադամն անուղղակիորեն մեղադրեց Արարչին, իսկ ուղղակի կերպով՝ կնոջը. «Այս կինը, որ տուեցիր ինձ, նա՛ տուեց ինձ ծառի պտղից, եւ ես կերայ» (Ծննդ.

⁵³ ՀԱԿՈԲ ՎՐԳ. ԳԸԼԸՆՃՅԱՆ (այսուհետ՝ ՀԱԿՈԲ ՎՐԳ. ԳԸԼԸՆՃՅԱՆ), *էջմիածին*, 1982, ժ., էջ 37:

⁵⁴ Անդ, էջ 37:

Գ. 12): Եւան եւս իր հերթին փորձեց մեղքը բարդել օձի վրա⁵⁵: Հետաքրքրականն այն է, որ Հայր Աստծու առաջ քաշած բոլոր ճանապարհներին՝ «Ո՛ւր ես,— ինչն աւելի համարժէք է՝ ինչպէս ես եւ կամ ինչով ես զբաղուած,— Ո՛վ յայտնեց քեզ, թէ մերկ ես: Արդեօք կերա՞ր այն ծառի պտղից, որից պատուիրել էի, որ չուտես...» (հմմտ. Ծննդ. Գ. 12–13),— չհետեւեց եւ ոչ մի համարժէք անդրադարձ, ո՛չ մի զղջման խոսք⁵⁶: Տիրոջ հարցադրումները, ըստ էութեան, այլ բան չեն, եթե ոչ սիրո արտահայտութիւն. մեղանշածին, ընկածին վերադարձնելու, կանգնեցնելու բացառիկ հնարավորութիւն, մինչդեռ ապաշխարելու փոխարեն մարդու կողմից հետեւեց լոկ ինքնաարգարացման պատասխան⁵⁷: Այնինչ՝ «Որչափ Աստված մերձենա մարդուն, բաժնեկից դարձնի նրան իր գութին ու սիրուն, այն չափով էլ. մարդն ավելի ու ավելի կսկսի ճանաչել իր մեղավոր վիճակը: Աստծու հետ

⁵⁵ Աստվածաշնչում անհերքելի են «օձ»-ի մասին նաեւ դրական բնութագրումներն ու մեկնաբանութիւնները (տե՛ս Թվեր ԻԱ. 9, Առ. ԺԲ. 16, 23, ԺԳ. 16, ԺԴ. 8, 15, 18, Մատթ. Ժ. 16), ինչպէս նաեւ այլեւս փաստեցինք, որ Աստծու ստեղծագործութեան մեջ ոչ մի չար բան չկա: Իսկ Կուրեղ Երուսաղեմացին ասում է. «Մարդիկ դեղեր են պատրաստում իժերի թուլնից: Դու պիտի առարկես՝ «օձը սարսափելի է»: Այո՛, սակայն Աստծուց վախեցիր, այն ժամանակ նա քեզ չի կարող վնաս պատճառել...» Առյուծն արշունարբու է: Այո՛, սակայն Աստծուց վախեցիր, եւ դու պիտի տեսնես, որ առյուծը մոտոջ հանգիստ պիտի մնա, ինչպէս որ Դանիէլ մարգարեի մոտ էր» (CYRILL VON JERUSALEM, Taufkatechese 9, (Texte der Kirchenväter), I, München, 1963, p. 160):

⁵⁶ «Զի ի սկզբան մարդն ցանկացաւ աստուածանալ եւ անդ ոչ հասաւ, Իսկ Արարիչն եկեալ մարդացաւ, վասն այնորիկ մարդն աստուածացաւ»,— գրում է տաղագիրը (ՆՁԲ, հտ. Ա., Վենետիկ, 1837, էջ 327): Մարդու համար սկզբունքային նշանակութեան հարց էր՝ ձգտել անել այն, ինչ որ Աստված կանխորոշել է: Մարդու կոչումն էր «աստված լինել» (Ս. Բարսեղ Կեսարացի): Առտնին տրամաբանութեամբ տարօրինակն այն է, որ հիշյալ կոչումը նվաճելու համար (Աստծու կողմից մարդուն տրված ազատ կամքի արդարացի գործադրումով) հարկ է հրաժարվել դրանից: Վերոբերյալը տեղի չունեցավ եւ խաթարվեց մեղքի հետեւանքով (մեղքից ձերբազատվելու եւ աստվածանալու համար անհրաժեշտ է Աստծու կամքի եւ մարդու կամքի լիակատար մեկտեղում). (հմմտ. Յ. Քեռսեան, «Մարդու անկումը եւ նորոգումը», «Գանձասար», Դ., 1993, էջ 109): «Քրիստոնեական մարդաբանութեան ճիշտ ընկալման համար ուշագրաւ է թւում նաեւ Ս. Բարսեղ Կեսարացու հետեւեալ խստորոշ միտքը. «Աստուած մարդուն ստեղծեց որպէս կենդանի էակ, որ կոչուած էր աստուած լինել»: Սակայն... այդ կոչումը նուաճելու համար հարկ է հրաժարուել դրանից... «... մարդն ստեղծվել է Աստծու կամքով, սակայն ...Աստծու սէրը մարդու նկատմամբ այնքան մեծ է, որ այն չի կարող բռնանալ նրա վրայ...» (տե՛ս В. ЛОССКИЙ, Догматическое богословие, сб. 8, М., 1972, էջ 157)»:

⁵⁷ «Դորա (պատվիրանազանցութեան) հետեւանքն էր, որ մարդը մարմնապէս եւս զրկվեց հավերժական աստվածային փառքի վայելքից եւ ապականացու կյանքի կերակուր դարձավ: Այդ կորստական վիճակ էր, որի հիմնական հետեւանքն էր եւ մահը՝ «մեղաց թոշակը» (Հռոմ., Զ. 23), որ ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ հոգու բաժանվիլը կենդանութիւն ու երջանկութիւն տվող Աստուծուց եւ անկումն մարմնավոր ցավերի ու լուծման մեջ (Բ. Կոր. ԺԱ. 3, Ա. Տիմ. Բ. 14)»։ (Քրիստոնեական, էջ 138): Մարդու անկման (եւ պատճառի) մասին անդրադարձ ունեն եւագր Պոնտացին, Կիրակոս Երզնկացին, Վարդան Այգեկցին (մանրամասն՝ տե՛ս ԶԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, Կիրակոս վարդապետ Երզնկացու՝ Ս. Եւագր Պոնտացու ութ մեղքերի մեկնութիւնը, «Էջմիածին», ԺԲ., 2013, էջ 75–114):

ունեցած իրենց մերձավորությունն էր, որ մաքրազարդեց սրբերին մեղքի տիղմից, այլապես նրանք էլ այլոց նման պիտի նստեին «ի խավարի»։ Երբ մեղքով է լցված մարդու սիրտը, աստվածայինը չի կարող այնտեղ բնակություն հաստատել։ Մարդը կորցնում է Աստծուն ընդունելու իր ունակությունը։ Այլ խոսքով՝ մարդն ի վիճակի չի լինում իր կարողության չափով փոխադարձել Աստծու անսահման գուլթն ու սերը։ Աստծու գուլթի կամ շնորհքի նկատմամբ անտարբեր չլինել եւ փոխադարձաբար սիրել նրան՝ կնշանակի հեռանալ մեղքից, ավելին՝ պարտավորություն ստանձնել մեր նմանների նկատմամբ⁵⁸։ Այդ պարտավորությունը կայանում է միմյանց սիրելու մեջ, որովհետեւ «ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա. Յովհ. Դ. 20)⁵⁹։

Բավական հետաքրքրական են Աստվածաշնչում պատվիրանագանցությանը նախորդող եւ հաջորդող անմիջական իրողությունները, ինչպես նաեւ մասնավորաբար թե ինչ կերպով է փորձիչն իրականացնում իր մտադրությունը, նախ ուղենշվում են օձի⁶⁰ որակական հատկանիշները «Օձը երկրի վրայ Աստծու ստեղծած բոլոր գազաններից աւելի խորամանկ էր», ապա հետեւում է փորձիչի հարձակումը «...Ինչո՞ւ Աստուած ասաց, թէ դրախտում գտնուող բոլոր ծառերի պտուղներից չէք կարող ուտել»։ Ըստ էության, այս խորամանկ հարցադրումն այլ բան չէ, քան իմաստության շարաշահում, իսկ ավելի հստակ՝ սուտ, քանի որ Տեր Աստված նման պատգամ չէր տվել (հմմտ. Յովհ. Ը. 44)։ Այսպես, փորձիչը ներկայանում է, որպես ոչ մեկից (մասնավորապես Աստծուց) եւ որեւէ բանից անտեղյակ, իրենից ոչինչ չներկայացնող մեկը, որը պատահակա՜նորեն եւ իրեն համար մի անարժեք ու գրեթե աննպատակ հարց է ուղղում։ Սակայն սա բավական է լինում, որպեսզի կինը գայթակղվի⁶¹։

⁵⁸ «...զի հաճույցեալ Աստուծոյ ժառանգորդ լիցի անվախճան երանութեանցն... Եւ անձնիշխան կամօք մեծարեաց զմարդիկ որպէս զհրեշտակս, եւ ելից իմաստութեամբ եւ գիտութեամբ...», «Եւ զի արարածոց կամք հաղորդեալ իցէն ընդ նորա բարի կամացն...եւ որ ի նոսա արարածք իցեն...» (Ս. ԳԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ, Յաճախապատում ճառք, Վենետիկ, 1954 (այսուհետ՝ ՀԱՃԱՆԱՊԱՏՈՒՄ), էջ 24, 34)։

⁵⁹ ՀԱՎՈՐ ՎՐԳ. ԳԸԼԸՆՃՅԱՆ, էջ 36։

⁶⁰ Եբրայեցերենում «օձ» բառն ունի բազում հոմանիշներ, որոնցից ընդհանրացվածն է «նախաշը», ինչը տեղիք է տվել, որ տարբեր աստվածաբաններ ու մտածողներ հանգեն ամենատարբեր մեկնաբանությունների (չարի մարմնացում, սեռական խորհրդանիշ եւ այլն)։ սակայն մեզ համար ավելի կարեւորվում է գերմանացի աստվածաբանի հետեւյալ մեկնաբանությունը. «Մեզ պետք է զբաղեցնի ոչ թե օձը, այլ նրա ասածը»։ (G. VON RAD, Das erste Buch Mose, Göttingen, 1981, էջ 62. (հմմտ. ՀԱՎՈՐ ՎՐԳ. ԳԸԼԸՆՃՅԱՆ, էջ 144–145)։

⁶¹ Փորձիչն հաջողվում է (Օձն ասաց կնոջը. «Ինչո՞ւ Աստուած (էլոհիմ) ասաց...») շահել կնոջ համակրանքն ու դեպի իրեն տրամադրել։ Դրա վկայությունն է՝ պատասխանի մեջ Աստծուն

Կինը պատասխանում է, որ՝ «Դրախտի ծառերի պտուղներից կարող ենք ուտել: Սակայն դրախտի մէջտեղի ծառի պտղի համար Աստուած ասաց. «Դրանից չուտէք եւ չմօտենաք, որպէսզի չմեռնէք»: Կնոջ պատասխանի մեջ նաեւ առկա է այն հանգամանքը, որ վերջինս կամ բավարար չափով չգիտի, կամ կարեւորութիւն չի տալիս ծառի հետ կապված հանգամանքին: Կնոջ կողմից տարվող խոսակցութիւնն ավելի շատ հիշեցնում է երեսխայկան ու անմեղսունակ մի գրույց: «Օձն ասաց կնոջը. «Չէք մահանայ, որովհետեւ Աստուած գիտէր, որ այն օրը, երբ դրանից ուտէք, կը բացուեն ձեր աչքերը, եւ դուք կը լինէք աստուածների նման՝ կ'իմանաք բարին ու չարը»»: Սակայն հաջորդ հանգրվանին կասկածատնութիւնն ու նախանձն իշխում են նրա վրա: Եւ ի դիմաց Արարչի հիրավի ծնողական բազմախորհուրդ հոգածութեան, կինը հանդես է բերում ապերախտութիւն: Իսկ տղամարդը, փոխանակ անհրաժեշտ հետեւութիւններ անելու (ինչը ցույց է տալիս երկուսի մեկ լինելը), ո՛չ միայն չի ընդգիմանում, այլեւ ուղղակիորեն ընդունում է իրեն հրամցվածը, բաժանելով՝ սիրեցյալի ճակատագիրը. «...կերաւ եւ տուեց իր մօտ կանգնած ամուսնուն, եւ նրանք կերան: Երկուսի աչքերն էլ բացուեցին, եւ նրանք հասկացան, որ մերկ են...» (հմմտ. Ծննդ. Գ. 1—7):

Նախածնողների բնավորութեան նույն այս գիծը տեսնում ենք Աբելի եւ Կայենի պատմութեան մեջ⁶²: Ըստ որում, եղբայրասպանութեան՝ արդարի արդուն թափելու պատճառով, ուղղակի նզովքի է արժանանում ո՛չ միայն Կայենը, այլեւ (որպէս օթեւան ծառայող, եւ կերակրի աղբյուր հանդիսացող) երկիրը: Բացի դրանից, բավական ուշագրավ է Կայենի անդրադարձումը՝ «...ով հանդիպի, կը սպանի ինձ» (Ծննդ. Գ. 14): Ուրեմն, անհերքելի է, որ «մարդը բնութեամբ արդեն իսկ գիտե թե՛ բարին, եւ թե՛ չարը... Քանի որ Կայենը, ծածկելով իր ստոր նպատակադրութիւնը,

բնորոշող կնոջ նախընտրած տարբերակը. «դրախտի մէջտեղի ծառի պտղի համար Աստուած (էլոհիմ) ասաց...»: Փաստացի վերջինս հրաժարվում է իրեն հայտնի՝ (Յահվե էլոհիմ-Տեր Աստված) դիմելաձեւից եւ կրկնում փորձին (հմմտ. ՀԱԿՈՒ ՎՐԴ. ԳԵՐԵՆՅԱՆ, էջ 148—149):

⁶² Շփոթմունքի արդյունքում, բայց եւ ավանդաբար քրիստոնեական մտածողութեան մեջ արգելված պտուղը համեմատվել է խնձորի, արգելված խնձորի (լատիներեն՝ malus, նշանակում է չար, վատ, իսկ malum՝ խնձոր), իսկ մեզանում նաեւ թզի հետ: Նդիշե վարդապետը, պատասխանելով նրանց, ովքեր համարում են, թէ մեկ թզի համար Արարիչը մահ ստեղծեց, գրում է. «...մի կտոր մագաղաթն ավելի աննշան բան է, քան թուզը, բայց երբ թագավորի խոսքը գրվում է նրա վրա, ով այն պատռում է, մահվան պատիժ է ստանում: Աստված... Իր բնական սերն ու գույքը ցույց տվեց նրա (մարդու) նկատմամբ, իսկ մարդը, արհամարհելով այն, մահվան պատիժ ընդունեց». (ԵՂԵՆ, Վարդանանց պատմութիւն, Երեւան, 1958, էջ 34):

առաջարկում է գնալ դաշտ: Արտաքինից տեսնում ենք մի բան՝ անձնավորված ընկերասիրություն, իսկ մտքում՝ եղբայրասպանություն: Եթե Կայենը չգիտենար, որ իրեն դիտավորությունը չար է, ապա ինչու՞ պետք է ծածկեր»⁶³: Սրա շարունակությունն «անհրաժեշտաբար» եղավ «Աստծու դատաստանը», սակայն մարդը կրկին շունեցավ պահանջված անդրադարձը: Գրիգոր Նյուսացին «Լեռան քարոզ»-ի մասին գրած իր մեկնության մեջ նշում է. «Փոխանակ դրախտային բերկրալի կյանքի, ժառանգեցինք մի երկիր՝ լիքը տառապանքով եւ հիվանդությամբ: Փոխանակ այն երանելի դրության, բազմապիսի դժբախտություններ հնձեցինք: Փոխանակ հրեշտակների հետ լինելով՝ վեհագույն ընկերակցությունը վայելելու, դատապարտված ենք ապրելու երկրի կենդանիների հետ, որովհետեւ մենք հրեշտակային եւ բերկրալի կյանքը փոխանակեցինք կենդանիների կենաց հետ»: «Չարը որոշ չափով դարձել է մեր բնության բաղկացուցիչ մեկ մասը՝ մեր նախահոր եւ նախամոր կատարած հանցանքի հետեւանքով: Նրանք իրենք իրենց մեղքին հանձնեցին եւ իրենց անհնազանդությամբ ընթացք տվեցին հիվանդությանը»: Եփրեմ Խուրի Ասորիի «Մծբնական երգեր»-ում մարգարեներն ու արդարները սատանայի կողմից նկատվում են Ադամի մարմին զգեցած մարդիկ, սակայն նրանցում գոյություն ունի նաեւ աստվածայինը»⁶⁴: Այսկերպ, նախածնողների որդիներից մեկը սպանեց մյուսին, ընտրյալ նահապետ Աբրահամը պառկեց երկու կնոջ հետ, Հակոբ նահապետն ամուսնացավ (իրենից երիտասարդ) մի քանի կանանց հետ, Դավիթ թագավորը եւս շատ կանայք առավ, իսկ որդին պառկեց քրոջ հետ եւ այլն եւ այլն: Մարդկային պատմության այսօրվա նկարագիրը եւս շատ չի տարբերվում: Մեղքը կամ մարդկության որդեգրած մեղավոր կենսակերպը տակավին շարունակում է ոչնչացնել ինչպես ազգերի ու ժողովուրդների մեջ առկա աստվածայինը, այնպես էլ հանրությունների մեջ՝ մարդկայինը⁶⁵ «Մեր հավատքը հիմնված է աստվածային հայտնությունների վրա, եւ

⁶³ «Описание книги Д. Ареопagit», с. 143—144.

⁶⁴ ՀԱՅՈՐ ՎՐԳ. ԳՐԼԵՆՃՅԱՆ, էջ 39, հմմտ. GREGOR VON NYSSA, München, 1927, էջ 204:

⁶⁵ Չարը որպես աղբյուր, ի սկզբանե առկա էություն չէ. այն չունի էութենական (սուբստանցային) կեցություն... Չարը նման է էությանմբ գոյություն չունեցող խավարի. այն, ազատ կամքի մեղսագործության հակված արգասիք է: Կամքի ազատությունը՝ «անձնիշխանությունը», մարդը պետք է գործադրի բարի գործեր կատարելու համար: Դրանում է նրա փրկության բանալին, մինչդեռ ազատ կամքով կատարվող չար գործը մարդուն տանում է դեպի կործանում. (հմմտ. «Յաճախապատում ճառք սրբոյ հօրն մերոյ երանելոյն Գրգորի Լուսաուրչի» (աշխ.՝ Ա. Տէր-Միքէլեանի), Էջմիածին, 1894, էջ 77. տե՛ս նաեւ Հայ Միջնադարյան Փիլիսոփայություն, էջ 109, 110):

մեղքի գիտակցությունն էլ մեր մեջ առաջացել է շնորհիվ այդ հայտնությունների: Ուրեմն աստվածային առաջին հայտնությունը զուգընթաց գործվում է նաեւ Ս. Գրքում հիշատակված առաջին մեղքը, որը Եկեղեցին սկզբնական (Peccatum originale), աղամական կամ ժառանգական (Peccatum hereditarium) մեղք է անվանում... Ինչպես գրում է Գրիգոր Նազիանզացին. «Նա, որ սկզբում մարդուն ստեղծեց՝ ազատ ու ինքնիշխան անելով, միայն պատվիրանի օրենքին ենթարկեց նրան եւ դրախտային բերկրության առատությունը օժտեց: Առաջին մարդուն հատկացնելով եւ նվիրելով... շնորհները՝ դրանք նվիրած եղավ նաեւ հաջորդող բոլոր սերունդներին: Միայն նրան, ով պահում էր պատվիրանը, տրված էին առատությունն ու ազատությունը, պատվիրանազանցությանը սակայն հետեւում էր աղքատություն եւ ստրկություն»⁶⁶:

Անհամերաշխություններն ու անհասկացողությունները, պատերազմներն ու կեղծ արժեհամակարգերն իրենց «ուրույն ու անառարկելի կնիքն են թողնում» նախեւառաջ ընտանեկան հարաբերությունների եւ ընտանիքի ինստիտուտի վրա: Պողոս առաքյալի՝ կողոսացիներին (Գ. 9—10) ու եփեսացիներին (Բ. 6, Դ. 25, Ե. 1—2) ուղղված անդրադարձն ավելի ընդհանրական ու ընտանեկան բովանդակություն ունի, քան անհատական: Հին մարդուն մերժելու, Աստծուն նմանվելու, մեղքից հրաժարվելու եւ երկնային Արքայությանը որդեգրվելու պատվիրանադրությունները, ինչպես աստվածաշնչական մի շարք այլ պատգամներ (Ծննդ. ԻԸ. 14, Յովհ. ԺԶ. 22, Սաղմ. ԼԴ. 18—19, ԽԶ. 1), նախ՝ գրեթե միշտ հոգնակի կերպով են հանդես գալիս, եւ երկրորդ՝ ենթադրում են ինչպես առաջնահերթություններ, անպես էլ՝ փոխհարաբերություններ:

«Իրենեոս Լիոնացին «Ընդդեմ հերետիկոսաց» գրքում գրում է. «Բայց սա Ադամն է, եւ եթե մարդ ճշմարտությունն է ուզում ասել, սա այն առաջնաստեղծ մարդն է, որի մասին, համաձայն Սուրբ Գրքի, Տերն ասում է. «Հորինենք մարդուն մեր պատկերի նմանության համաձայն»: Մենք բոլորս նրանից ենք եւ այդ իսկ պատճառով նրա անունն ենք ժառանգել: Բայց եթե մարդը փրկվելու է, ուրեմն փրկվելու է նաեւ այն մարդը, որն սկզբից գոյացավ: Անմտություն կլիներ, եթե նա, ով ուժգինս խոցված էր թշնամուց եւ ով գերվածների առաջինն էր, չփրկվեր նրանից (այսինքն՝ Քրիստոսից), ով հաղթեց թշնամուն, այլ փրկվեին միայն նրա զավակները, որոնց նա միեւնույն գերության մեջ էր ծնել»: Լիոնացու

⁶⁶ Հմմտ. ՀԱԿՈՐ ՎՐԴ. ԳԸԼՆՃՅԱՆ, էջ 37:

հիշյալ հատվածում ցույց է տրվում մինչև Ադամ հասնող մարդկային բոլոր սերունդների առնչվածությունը միմյանց հետ: Այս իսկ պատճառով Քրիստոսով եղած փրկությունը վերաբերում է բոլորին, այդ թվում եւ Ադամին: «Նրա զավակները» արտահայտությամբ Լիոնացին նկատի ունի Ադամին հաջորդող սերունդները, որոնք թեեւ մեղքի գերության մեջ են ծնվում, սակայն Քրիստոսով փրկվում են⁶⁷:

Այսօր, արդեն անթաքույց տեսանելի է, թե ինչպես (հաճախ նաեւ արհեստականորեն) մարդկանց ու հասարակություններին իրարից բաժանելու եւ հեռացնելու, մարդկային հարաբերություններն անհատականացնելու միտում կա: Սա, ըստ էության, մարդկային խաթարված կոչման եւ աստվածային սկզբունքը մերժելու դիտավորության (հետեւանքն է) շարունակությունն է⁶⁸:

«Նախամարդու մեղանշումը, ինչպէս տեսանք, ապականիչ կերպով ներգործեց նորա ամբողջ գոյութեան վրայ թէ՛ հոգեպէս եւ թէ՛ մարմնապէս: Նա գոյութեան սկիզբ պէտք է լինէր ամբողջ մարդկութեան, ըստ որում՝ իւր մեղքի հետեւանքներով եւս աւերիչ սկիզբ եղաւ իւր ժառանգների համար: Նորանով բոլոր մարդիկ գոյութիւն ստացան եւ նորանով նոքա իւրեանց նախահօր մեղքը ժառանգեցին...»⁶⁹: Այնինչ, ինչպես ավելի առաջ էլ անդրադարձանք, Աստվածաշնչի ընկալումը մարդու վերաբերյալ շատ ավելի համամարդկային ու ընդհանրական է, քան անհատական⁷⁰: Երբ Աստված ջրհեղեղից Նոյին փրկեց, փրկեց նաեւ վերջինիս ընտանիքը (Ծննդ. 2. 18): Նույն սկզբունքով՝ Աստված Աբրահամին ընտանիքի հետ կանչեց խառանից (Ծննդ. ԺԲ. 4—5): Աբրահամյան ուխտի նշանի (թլփատության) կիրառությունը տարածվեց նաեւ այլոց վրա (Ծննդ. ԺԷ. 12—13): Այլ խոսքով՝ Աստծու ուխտը⁷¹ Աբրահամի հետ եւս անհատական չէր: Նոր Կտակարանում նույնպես (մասնավորաբար Լիդիայի եւ Փիլիպպեի համայնքների պարագայում) մարդ-Աստված դաշնադրության

⁶⁷ ՀԱՅՈՒՐ ՎՐԳ. ԳՐԸՆՃՅԱՆ, էջ 39. հմմտ. IRENAEUS, München, 1912, էջ 311:

⁶⁸ «Նուիրապետական զգացումը այսօր ամեն կողմանէ հարուած կրած եւ գրեթէ ամենուրեք յաղթուած է. ասոր համար է որ ծերունեաց յարգանք չի տրուիր, ծնողաց առ մեզ ցրցուցած խնամքները կը մոռցուին, մեր նախնի հարց պատմութեան եւ գործոց կարեւորութիւն չընծայուիր, եւ, մէկ բառով, ընտանիք եւ ընտանեաց սէր միանգամայն կ'անհետանան: Այս է վտանգը, այս է մեր ընտանեաց սպառնացող վտանգաց գուցէ ամենէն ծայրագոյնը» (Խ. ԱՇԼԽԵԱՆՅ, Կին քրիստոնեայ. «Յոյս», 1877, թիւ 12, էջ 719):

⁶⁹ Քրիստոնեական, էջ 141:

⁷⁰ Հասարակության ու ընտանիքի բարեկեցությունը սերտորեն կապվում են միմյանց հետ եւ չեն պատկերացվում զատ-զատ» (տե՛ս Ռ. ՊԱՊԱՅԱՆ, էջ 182):

⁷¹ Տե՛ս անդ, ծնթգ. 37:


(մկրտություն) կիրառությունը կամ անդամակցությունը համայնքին ավելի ընդհանրական բնույթ ունի: Ու թեև հայտնի է, որ փրկությունը հավատքով (շնորհով) է պայմանավորված, ոչ թե որոշակի գործառույթով (հմմտ. Յակ. Բ. 17), այդուհանդերձ ուստի նշանը (մկրտություն) կիրառվել է ընտանիքի կամ համայնքի բոլոր անդամների նկատմամբ (հմմտ. Եփես. Բ. 8–9):

РЕЗЮМЕ

В статье представлены причины, необходимые для сотворения и, в частности, семейной субординации, значения и цели, рассматривая вышеизложенное также в контексте личности, общества и общности. В соответствии с пониманием Ветхого и Нового Заветов анализируется семейный контекст, сложность функций мужчины и женщины, принципиальные различия и параллели семьи-церкви. В творческом комплексе создание определенного человека является центральным, важна также священная тайна провозглашенного венца. Акцент ставится на то, что весь мир — это единая семья с учетом особенностей каждой патриархальной семьи и, в целом, источника власти и особенности распространения.

SUMMARY

The article presents the reasons necessary for the creation of the family and in particular, for the family subordination, their meaning and purpose. The foregoing is also addressed in the context of the individual, the society and communities. In accordance with the understanding of the Old and New Testaments, the family context, the entirety of the functions of men and women, the fundamental differences and parallels between the family and the church are analyzed. The human being is specified as the center of the whole creation and the marriage is proclaimed as one of the most important sacraments. The fact is emphasized that the whole world is a single family, at the same time, the peculiarity of each patriarchal family and in general, the source of power and distribution features are taken into account.



ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԱԴՈՅԵԱՆ

ԱՍՏՈՒՍԱՆՉԻ ԱՆՊԵՐԷՆ ՍԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՀԱՆՈՒՐՅ ՀԻՒՍԻՍԱԿԱՆԱՅ ՎԵՅԱԳՈՅՆ» Ի ՄԱՍԻՆ

Նայ քերթութեան Հօր Ողբի տողերից («Պատմութիւն Հայոց», գ. Գ., գլ. ԿԸ.) մենք մեզ ճանաչում ենք իբրեւ հիւսիսային ազգ, որովհետեւ ինչպէս Մովսէս Խորենացին է բնորոշել՝ մենք «համուրց հիւսիսականաց վեհագոյն» ենք: Արդէն նրանից վերցնելով՝ ի թիւս այլ եւ այլոց «Բազմավէպը» դրոշմում է. «Վիպագիրն «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» ճանաչէ զաշխարհ իւր»¹: Սակայն այսօրուայ հայի համար բնական հարց պիտի առաջանայ. ինչո՞ւ ենք մեզ հիւսիսային համարում, եւ արդեօք միայն մենք ենք մեզ ճանաչում որպէս այդպիսին: Իր առաջին գրքում՝ Հայկի պատմութիւնը շարադրելիս, Խորենացին նշել է, որ մեր Նահապետը Բաբելոնից հեռացաւ դէպի հիւսիս՝ «չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ» (գ. Ա., գլ. Ժ.): Պատմահօր այս տողը լիովին բացատրում է, թէ ինչու պիտի կոչուէինք «հիւսիսական»: Հատուածը զուգահեռաբար տեղեկութիւն է տրամադրում, թէ հիւսիսականութեան աւանդութիւնն ինչ պահի է ծագում (Բաբելոնից հեռանալիս), հետեւաբար նաեւ ի՞նչ տեղանքի կամ որտեղի՞ ժողովրդի պատկերացմամբ պէտք է Հայկի բնակութեան վայրը հիւսիս համարուէր: Նոյն աւանդութեամբ Հայկի հետ բանակցելու համար Բելը հիւսիս պիտի ուղարկէր իր որդիներից մէկին՝ «ի հաստատել Տիտանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայկ» (գ. Ա., գլ. ԺԱ.): Թերեւս հէնց միայն այսօր քանով կարող ենք եզրակացնել, որ առնուազն այն պահին, երբ Հայկ Նահապետը հեռացաւ Տիտանեանից եւ իր սերունդների հետ հաստատուեց Արարադի երկրում, Բաբելոնում մնացողների պատկերացմամբ

¹ Տե՛ս «Բազմավէպ», 1844, էջ 368:

նա դարձաւ հիւսիսաբնակ: Սակայն առաւել համոզուելու համար փորձենք հիւսիսականների մասին հնագոյն աւանդութեան բեկորների հետ համադրել Քերթողահօր վկայութիւնը:

Գիտենք, որ աշտարակաշինութեան երկրում եղած պատումներն արձագանք են թողել տարբեր ազգերի մշակոյթներում: Ի թիւս այլոց՝ հնագոյնից դրուագներ են պահպանուել նաեւ Աստուածաշունչ Մատեանում: Հիւսիսականների կապակցութեամբ հետաքրքրական է, օրինակ, Շսայիի մարգարէութեան հետեւեալ հատուածը, ուր յիշատակուած են հիւսիսի բարձր լեռները. «Դու ասէիր ի մտի քում. «Ելից յերկինս, ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ. նստայց ի լերինն բարձու, ի վերայ լեռանց բարձանց հիւստոյ: Ելից ի վեր քան զամպս, եղէց նմանաւ բարձրելոյն» (Շսայ. ԺԴ. 13—14): Նախ նկատենք, որ քաղուածն այլընթերցուածներ ունի. մէկով ի մտի բումն է փոխարինելի ի սրտի բում ձեւով², իսկ միւսը լերինն բարձու կապակցութեան որոշիչին է վերաբերում՝ լերինն ժողովոյ³: Եւ եթէ այդ փոփոխութիւններն ընդունուենք, մեր բնագիրը կմօտենայ օտար տարբերակներին, որ, ինչպէս երեւում է ստորեւ բերուող աղիւսակից, նոյնպէս միասնական չեն:

Սինոդական թրգմ.	Ջէմսեան թրգմ.	Ամերիկեան նոր թրգմ.
¹³ А говорил в сердце своем: «взойду на небо, выше звезд Божиих вознесу престол мой и сяду на горе в сонме богов, на краю севера; ¹⁴ взойду на высоты облачные, буду подобен Всевышнему».	¹³ For thou hast said in thine heart, I will ascend into heaven, I will exalt my throne above the stars of God: I will sit also upon the mount of the congregation, in the sides of the north: ¹⁴ I will ascend above the heights of the clouds; I will be like the most High.	¹³ “But you said in your heart, ‘I will ascend to heaven; I will raise my throne above the stars of God, And I will sit on the mount of assembly In the recesses of the north. ¹⁴ ‘I will ascend above the heights of the clouds; I will make myself like the Most High.’

Նկատելի է՝ ռուսական թարգմանութեան մէջ «աստուածներ» բառն է յաւելուած, որ անկախ որեւէ թարգմանութեան մէջ առկայ լինելուց, ցանկացած դէպքում հասկացում ու պատկերացում է շարակարգից:

² ԱՄ, Վենետիկ, 1805:

³ ԱՄ, Կոստանդնուպոլիս, 1895:

Այստեղ, ամենայն հաւանականութեամբ, գործ ունենք մի պատառիկի հետ, ուր հրէաները պահպանել են բաբելական ականդութեան մէջ փայփայած՝ հիւսիսին առընչուող մեծագոյն երազանքը՝ արժանանալ հիւսիսի բարձր լեռանը բազմելու պատուին, լինել հիւսիսային այն տարածքում, ուր բաբելացիների պատկերացմամբ խմբուած են աստուածները: 1878-ին Հարթֆորդում տպուած մեկնութեան երեք հեղինակները հատուածի կապակցութեամբ ընդգծում են, որ Բաբելոնի արքայի պատկերացմանն ենք այստեղ ականատես լինում, ոչ թէ հրէաների երեւակայական պատկերի: Նրանք նաեւ թէական կարծիք են յայտնում, որ հիւսիսային լեռը հաւանաբար Հայքում է, եւ այնտեղ է աստուածների հաւաքատեղին. «However, the parallelism supports the notion that the Babylonian king expresses himself according to his own, and not Jewish opinions (so in Isa 10:10) thus “mount of the congregation” will mean the northern mountain (perhaps in Armenia) fabled by the Babylonians to be the common meeting-place of their gods»⁴: Այս մեկնութիւնից դեռեւս չորս տասնամեակ առաջ (1834 թ.)՝ Աստուածաշնչի իր տասնչորսհատորանոց մեկնութեամբ յայտնի Ալբերթ Բարնէսը կարծիք է յայտնել, որ մարգարէի յիշատակած հիւսիսայինով՝ Հայաստանեան լեռները կարող էին պատկերացուել իբրեւ աստուածների բնակատեղի. «Thus in Babylon, some of the mountains north in Armenia may have been supposed to be the special dwelling-place of the gods»⁵: Անշուշտ պէտք է յիշենք՝ Աստուածաշնչի մեկնիչները երբեք միասնական չեն եղել, եւ չի կարելի ականակալել, թէ բոլորը համաձայնած կլինեն, որ վաղ-վաղնշական պատկերացմամբ աստուածների հաւաքատեղին Հայոց հիւսիսային աշխարհի լեռներից մէկն է: Թերեւս այս հարցում կարելոր հանգամանք է, թէ մեկնիչը որքանով է գիտակցում կամ ընդունում՝ ա) «Իմ գահը կղնեմ Հիւսիսի բարձր լեռան վրայ՝ աստուածների ժողովում» արտայայտութեան բաբելական ծագումը, բ) բաբելացիները գիտէին կամ պատկերացնում էին, թէ որտեղ են խմբուած աստուածները կամ գերբնական ուժերը, եւ դրա արձագանքը յաճախ նկատելի է Սուրբ Գրքում: Քէմբրիջեան բացատրութեան մէջ նշուած է, որ Աստուած յայտնուում է ամպի եւ մրրիկի ուղեկցութեամբ, լոյսով շրջապատուած: Եւ բերում են օրինակներ, ուր Աստուածութիւնը յատկաբար գալիս է հիւսիսից. «Եւ տեսի՝ եւ ահա հողմ վերացեալ գայր ի հիւստոյ, եւ ամպ մեծ ի կողման նորա. եւ լոյս շուրջ զնովաւ, եւ հուր փայլատակէր ի նմանէ. եւ ի մէջ նորա իբրեւ զտեսիլ բազմագունի

⁴ *See* REV. R. JAMIESON, REV. A. R. FAUSSET, REV. D. BROWN, *A Commentary, Critical and Explanatory, on the Old and New Testaments*, vol. I, Hartford, 1878, էջ 446:

⁵ *See* <https://sacred-texts.com/bib/cmt/barnes/isa014.htm>:

ականց, եւ ճառագայթք ի նմա» (Եզեկ. Ա)⁶: Աստուածութեան (թիւնների)՝ հիւսիսում հաստատուած լինելու մասին վկայութիւն գտնում ենք նաեւ Եւսեբիոս Կեսարացու մատեանում, երբ հեղինակը վերաշարադրում է մեծ ջրհեղեղի եւ դրանից փրկուած Նահապետի պատմութիւնն ըստ Բերոսոս Քաղդէացու: «Եւ ըստ յաջորդականութեան գրելով՝ պատմութիւնը նկարագրում է այսպէս. «Կրովն [Կրոնոս, Քրոնոս],— ասում է [Բերոսոսը],— որին Արամազդի հայր են անուանում, իսկ ուրիշները՝ Ժամանակ, քնի մէջ յայտնեց նրան [Քսիսութրոս-Նոյին], որ տասնհինգերորդ օրը դէսիոս ամսի, որ մարացն է, մարդկութիւնը կկործանուի ջրհեղեղից: Նաեւ հրամայում է բոլոր առաջին, միջին եւ վերջին մատեանները փորել եւ դնել սիպարացիների Արեգ քաղաքում: [Հրամայում է] նաեւ նաւ կառուցել եւ մէջը մտնել ազգականների եւ կարեւոր բարեկամների հետ մէկտեղ: Ներսում ամբարել պարէն եւ ըմպելիք: Ներս տանել նաեւ գազաններին, թռչուններին եւ շորքոտանիներին եւ ողջ կազմով պատրաստ լինել նաւարկելու: [Քսիսութրոսը] հարցրեց, թէ դէպի ո՞ւր պիտի նաւարկի, եւ [Կրովն] պատասխան տուեց, թէ՝ աստուածների մօտ՝ [Արարատի երկիրը՝ Հայոց աշխարհ]»⁷: Բնագրում չի ճշգրտւում, որ Քսիսութրոս-Նոյը պէտք է նաւի «Արարատի երկիր՝ Հայոց աշխարհ», այլ միայն «առ դիսն» նշումն է, սակայն ուղիղ փակագծով մեր յաւելումը կատարելու իրաւունք տալիս է հետագայ շարադրանքը, ուր նաւի հանգրուանի մասին ասուած է՝ «...տեղին՝ յորում վայրի ելեալ կային, Հայոց աշխարհն է»⁸: Դէպի Հայք նաւելու Քսիսութրոսի նպատակադրուածութիւնն առաւել որոշակի է Եւսեբիոսի հետեւեալ քաղուածում. «...առագաստ բարձրացնելով՝ կամենում էին նաւել դէպի Հայք...»⁹: Փաստօրէն հելլենական շրջանի բաբելացի հեղինակ, Բէլ-Մարդուկի տաճարի գլխաւոր քուրմ Բերոսոս կամ Բերոս Քաղդէացու (Ք. ա. 350/340 — 280/270 թթ.) տողերը, որ Աբիւղէնոսի (Ք. ա. ≈ 200 թ.) Ալեքսանդր Բազմավէպի (Ք. ա. 100 — Ք. ա. 40 թթ.) շնորհիւ հասել են Եւսեբիոսին, ցոյց են տալիս, որ իրապէս բաբելական աւանդութեամբ աստուածների հաւաքատեղին պատկերացուել է Հայոց լեռներում:

⁶ Տե՛ս <https://biblehub.com/commentaries/ezekiel/1-4.htm>: Մեկնութիւնները, որոնք չենք ներկայացնում առանձին յոդւմով, կարելի է գտնել ներկայ հասցէում՝ համապատասխանաբար նշելով Գիրքն ու տողը:

⁷ Տե՛ս «Յետջրհեղեղեան օրերն Արարատի երկրում», Երեւան, 2016, էջ 41–42. հմմտ. «Եւսեբիոսի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք», մասն Ա., Ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818, էջ 31–33:

⁸ «Եւսեբիոսի...», էջ 36. հմմտ. «Յետջրհեղեղեան...», էջ 44:

⁹ «Եւսեբիոսի...», էջ 49. հմմտ. «Յետջրհեղեղեան...», էջ 37:

Վերելում յիշելով Բարնէսի մեկնութիւնը՝ անկարելի է չանդրադառնալ եւրոպական լեզուներում յայտնուած դրախտ բառի նրա ստուգաբանութեանը: Նա համոզուած է, որ paradise (յուն. παράδεισον) բառը՝ յունարէնը, լատիներէնը եւ այլ արեւմտեան լեզուներ փոխառել են Արեւելքից: Մեկնիչը մանրամասնում է, որ սանսկրիտում պարադէշա-ն հերկուած-մշակուած հողն է, հայերէնում այն պարտէզ¹⁰ է հնչում, իսկ պարսկերէնում նշանակում է պարտէզ-գթօսայգի. «It is a word which had its origin in the language of Eastern Asia, and which has been adopted in the Greek, the Roman, and other western languages. In Sanscrit, the word *paradesha* means a land elevated and cultivated; in Armenian, *pardes* denotes a garden around the house planted with trees, shrubs, grass, for use and ornament. In Persia, the word denotes the *pleasure-gardens and parks* with wild animals around the country residences of the monarchs and princes»¹¹: Իսկ մեր յիշած միւս մեկնութեան հեղինակներն արդէն բառն ստուգաբանում են հիմնուելով սանսկրիտեան, հայերէն եւ արաբերէն¹² արմատների վրայ. «Sanskrit, “a place enclosed with a wall”; Armenian and Arabic, “a pleasure ground with flowers and shrubs near the king’s house, or castle»¹³: Պարտէզ բառի ստուգաբանութիւնը յիշելիս երեք կարելոր հանգամանք է պէտք ի մտի առնել՝ ա) հետազօտողները բառը չեն նշում իբրեւ հնդեւրոպական արմատ, այլ յատկապէս հին հնդ., հպարս., արաբ. կամ հայերէնից փոխառեալ: Իսկ փոխառեալութեան մասին խօսելիս պէտք է ուշադրութիւն սեւեռենք նաեւ այն պարագային, որ՝ բ) յոյները, լատինները եւ բոլոր միւսները ոչ թէ պարզապէս բառաձեւ են վերցրել, այլ գաղափար-նախագիտելիք աստուածատունկ այգու մասին: Այսինքն տուեալ պատումը հնդ., պարս. կամ հայկական ծագում ունի: Եւ վերջապէս՝ գ) պատումի ծագման հայրենիքը որոշակիանում է ոչ միայն այգուն տրուած անուան լեզուական հայրենիքով, այլ նաեւ աշխարհագրութեամբ՝ թէ որտեղ, ինչպիսի երկրում է այն պատկերացուել: Յոյժ տեղին է յիշելը մէկ այլ ուշագրաւ ստուգաբանութիւն էլիքութեան մեկնութիւնից, ըստ որի

¹⁰ Հրաչեայ Աճառեանը նախ բերում է հին պահլաւերէն ձեւը, իսկ յետոյ նաեւ Schröder-ի՝ պարս սէզ ստուգաբանութիւնը՝ յաւելելով, որ հեղինակը մեզնից փոխառեալ է դնում միւսները. տես «Հայերէն արմատական բառարան», հտ 4:

¹¹ Տես «Barnes New Testament Notes», Michigan, 1949, էջ 3148:

¹² Արաբերէնի կապակցութեամբ տես Վ. ՈՒՐԻՇԵԱՆ, Մեր արմատները նոր լոյսի տակ, Գրանադա Հիլլս, 1995, էջ 133:

¹³ Տես REV. R. JAMIESON..., A Commentary..., էջ 404:

Արարատ անունը սանսկրիտում նշանակում է սուրբ երկիր. «The name Ararat is Sanscrit, and means “the holy land”»¹⁴:

Հիւսիս բառի՝ Աստուածաշնչում հանդիպող մէկ այլ կիրառութիւն Իսահակ Նիւտոնին է առիթ տուել յիշելու Հայաստանը. «Անդ ամենայն իշխանք հիւստոյ, եւ ամենեքեան նոքա զաւրավարք Ասորեստանոյն, իջեալք վիրաւորք հանդերձ ահիւն զաւրութեամբ իւրեանց, ամաթալից ննջեցին անթլփատք ընդ վիրաւորս սուսերաց, եւ տարան զտանջանս իւրեանց ընդ իջեալսն ի խորխորատ» (Եզեկ. ԼԲ. 30): Այս հաստուածի կապակցութեամբ Իսահակ Նիւտոնը գրում է, որ իշխանք հիւստոյ ասեւրով՝ ինքը հասկանում է Յուդայի հիւսիսում գտնուողներին՝ յատկապէս Հայաստանի եւ Կապադոկիայի տիրակալներին. «Here by the Princes of the North I understand those on the north of Judæa, and chiefly the Princes of Armenia and Cappadocia, who fell in the wars which Cyaxeres made in reducing those countries after the taking of Nineveh»¹⁵:

Նիւտոնը Հայաստանը յիշում է նաեւ Տովբիթ Ա. գլխին անդրադառնալիս՝ Սենեքերիմի որդիներին՝ Հայոց լեռները հեռանալու կապակցութեամբ. «Upon this defeat Sennacherib returned in haste to Nineveh, and his Kingdom became troubled, so that Tobit could not go into Media, the Medes I think at this time revolting: and he was soon after slain by two of his sons who fled into Armenia, and his son Asserhadon succeeded him»¹⁶:

Երեմիայի մարգարէութեան Ա. գլխում դարձեալ յիշուած է հիւսիսը (15-րդի ահաւասիկ ես միախուռն կոչեցից զամենայն թագաւորութիւնս թագաւորութեանց՝ ի հիւսիսոյ երկրէ), որ Բէնսոնեան մեկնութեան մէջ մեղացիք, հայք եւ քաղդէացիք են:

Վկայութիւն կայ նաեւ Եզեկիէլի մարգարէութեան ԼԸ. գլխում, բայց արդէն ոչ թէ վերացական, որ կարող է ընկալուել իբրեւ մեղացւոց կամ քաղդէացւոց յիշատակութիւն, այլ յատկապէս շեշտուած է՝ Տունն Թորգոմայ, եւ հետազօտողների մեծագոյն մասի պատկերացմամբ Հայոց մասին է ակնարկը. «Գոմեր՝ եւ ամենեքին որ շուրջ են զնովաւ. եւ տունն Թորգոմայ ի ծագացն հիւստոյ, եւ ամենեքին որ շուրջ զնովաւ, եւ ազգք բազումք ընդ քեզ»: Ընդհանրապէս Եզեկիէլի ԼԸ. եւ ԼԹ. գլուխները

¹⁴ Տէս «Ellicott's Commentary on the Whole Bible», Edited by Charles J. Ellicott, vol. V, Cassell, 1897, էջ 170:

¹⁵ Տէս Sir ISAAC NEWTON, The Chronology of Ancient Kingdoms, London, 1728, էջ 318:

¹⁶ Անդ, էջ 282: Ինչպէս գիտենք, այդ պատմութիւնը հանդիպում է նաեւ այլ Գրքերում (Դ. Թագաւորութեանց (ԺԹ.) եւ Եսայու (ԼԷ.):)

վախճանաբանական պատերազմի առաջին յիշատակութիւնն են, ուր հիւսիսականները հանդէս են գալիս իբրեւ Աստծու ժողովրդի ախոյեաններ, որ պէտք է կործանուեն: Այս տեսանկիւնից, բնականաբար, հիւսիսականների հետ նոյնացումը ցանկալի չի կարող լինել: Բայց, ինչպէս առիթ ունեցել ենք նկատելու, Աստուածաշնչի մեկնութիւններում միասնականութիւն չկայ, եւ իշխողը բազմակարծութիւնն է: Եւ ինչպէս նշում է Յովհան Ոսկեբերանը, Գոգի եւ Մագոգի մասին մարգարէութիւնը «ոմանք այլաբանօրէն են ընկալում»¹⁷: Իսկ Ալեքսանդր աւագերէց Մէնը կարծում է, որ Եզեկիէլը «Աստծու ժողովրդի ախոյեանների անունները փոխառել է հիւսիսի ռազմատենչ թագաւորների եւ ցեղերի մասին աւանդութիւններից (Գովգը մեղացւոց արքայ Գիգէսն է, Ռովսմեսովքը՝ Ուրարտուի արքայ Ռուսան, Մագովգը եւ Թուբալը՝ Հիւսիսային Միջագետքի եւ Կովկասի ժողովուրդներ)»¹⁸: Իբրեւ փոխառութեան աղբիւր, այսինքն Եզեկիէլին նախորդած աւանդութիւն, թերեւս կարող ենք ընդունել նաեւ Եսայու մարգարէութիւնը, ուր բացառապէս դրական կողմից են հանդէս գալիս «Այրարատեան թագաւորութիւնները եւ Ասքանագեան գունդը» (պարզապէս Եզեկիէլի տողերում անունները փոխարինուել են «Տունն Թորգոմայ» ձեւով), եւ նրանց միջոցով է, որ «եկն եհաս ի վերայ Բաբելոնի խորհուրդ Տեառն» (ԾԱ. 27)¹⁹: Եզեկիէլեան հատուածի կապակցութեամբ էլիքոթեան խմբագրութեան մէջ նշուած է, որ Գոմերը նոյնացւում է կիմմերների հետ (Գոմերի՝ մեզ հարազատ կամ օտար լինելու կապակցութեամբ պարզապէս յիշենք Մովսէս Խորենացու համապատասխան տողը, ուր նա խոստովանում է՝ «հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինս մեր եւ զբուն հին նախնիս: Արդ ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետոթէ, Մերոդ, Սիրաթ, Թակլադ. որ է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ» (գ. Ա., գլ. Թ.), իսկ Թորգոմի Տուն ասելով՝ հայերին է պէտք հասկանալ. «Gomer... Togarmah.—Again the address turns to the extreme north. Gomer, like Magog, a people descended from Japheth (Genesis 10:2; 1 Chronicles 1:5), is identified with the Cimmerians; and for the house of Togarmah, the Armenians»:

Այնուհետեւ անգլերէն մեկնութեան մէջ յղում է արւում Եզեկիէլի մարգարէութեան Իէ. գլխի 14-րդ համարին, ուր բացատրուած է, որ Թորգոմը հայերին տրուող անուններից է: Թորգոմեանները Յաբեթեան շառաւիղ

¹⁷ Տէս Ա. МЕНЬ, Исагогика, М., 2000, էջ 404:

¹⁸ Տէս անդ:

¹⁹ Այս հատուածի կապակցութեամբ տէս «Նետակալ բառի ստուգաբանութեան փորձ Հայկի առասպելի լոյսի ներքոյ», Բեշ, 2004, հ. 2:

են՝ հին աշխարհում յայտնի՝ ձիաբուծութեան ասպարէզի իրենց ձեռքերումնեքով՝ «Togarmah.—A name for the Armenians, a race of Japhetic descent (Genesis 10:3). They dealt from most ancient times in horses and asses»: Այստեղ պէտք է նշել, որ Աստուածաշնչի ոչ բոլոր մեկնիչներն են ընդունում Թորգոմի եւ Հայոց կապը: Այս հանգամանքը լաւագոյնս ձեւակերպուած է «Pulpit Commentary» վերտառութեամբ յայտնի բազմահատորեակում: Ի մասնաւորի մատնանշուած է, որ Հիերոնիմոսը Թորգոմեան Տունը նոյնացնում է փոխկրիացիների հետ, ուրիշները կապադովկացիների, սակայն առաւել լայն ընդունելութեան է արժանացել Հայոց հետ առնչակցելու տեսակէտը, որի օգտին պատշաճ վկայութիւններ են նշուած Քսենոփոնից, Ստրաբոնից եւ Հերոդոտոսից. «Togarmah.—The name appears in Ezekiel 38:6 as an ally of Gog, in Genesis 10:3 as a son of Gomer. Jerome identifies it with Phrygia, others with Cappadocia, but there is a wider consensus for Armenia, which was famous for its horses and mules (Xenophon, 'Anab.,' 5. 34; Strabo, 11:14. 9; Herod., 1:194)»: Եզեկիէլի մարգարէութեան մէջ հանդիպող «Տունն Թորգոմայ ի ծագացն հիւսւոյ» արտայայտութիւնը պարտաւորեցնում է նաեւ յիշել, որ ԼԸ. եւ ԼԹ. գլուխներում Գոմերից ու Թորգոմից բացի հանդիպում են նաեւ այլ անուններ՝ «Որդի մարդոյ՝ հաստատեա՛ղ զերեսս քո ի վերայ Գովգայ, եւ երկրին Մագովգայ, իշխանին Ռովսմեսովքայ եւ Թոբեւայ»²⁰: Անգլիացի անհամակերպ (nonconformist) աստուածաբան եւ մեկնիչ Մէթիու Փօլը (1624—1679 թթ.) իր վարկածով եւս մէկ անուն է աւելացնում եղածներին, հնարաւոր նկատելով, որ «իշխանին Ռովսմեսովքայ» կապակցութեան «իշխան» թարգմանուող բաղադրիչը կարող է Արաքս գետին տրուող յատուկ անունը լինել. «Prince; what we render prince may well be the proper name of Araxes in Arabic, the principal river of Armenia, and so that the first country mentioned under the command of Gog, or the Scythians of Mount Taurus, which were called Rhos»:

Գոգի եւ Մագոգի մասին մեր շարադրանքին օգտակար է ռաբբի Փեթահիայի ճամփորդութեան գրառումը²¹, ըստ որի Ռատիսբոնցի հրէայ հոգեւորականը ԺԲ. դարավերջին «Բաղդադում տեսաւ Meshech-ի արքաների հիւպատոսներին, որովհետեւ Մագոգը մօտ տասն օրուայ հեռաւորութեան վրայ է այնտեղից: Երկիրն այնքան հեռու է, որքան Մթին սարերը»²²: Անգլերէն թարգմանութեան մէջ հատուածը ծանօթագրուել է.

²⁰ Անունները հմմտ. Մնաց. Ա. 5—6:

²¹ Մանրամասն տե՛ս «Միջնադարյան մի ուղեգրական անդրադարձ Հայաստանին», «էջմիածին», 2011, ժԲ., էջ 101—107:

²² Տե՛ս անդ, էջ 104:

բացատրում է, որ Գոգի ու Մագոգի մասին խօսելիս Կարդինալ Պլասիդո Զուռլան (1769–1834 թթ.) նշում է, թէ Արեւելքի միտումն էր՝ մեկուսացած ժողովուրդներին լեռներին տեղաւորելը եւ նրանց նկարագրելը իբրեւ պատնէշուած, յաճախ Կասպիականի հարեւանութեամբ: Ծանօթագրողն անդրադառնում է նաեւ Մթին սարերին, ընդգծում, որ դրանք ակնառու դեր են խաղում ռաբբիների առասպելական աշխարհագրութեան մէջ. դրանց եւ Սամբատիոն գետի (Շամբատիոն, հմմտ. Շամբիան գետ Խոնաւ՝ նոյնն է՝ Մթին լեռներում²³) մերձակայքում էին հրէայ հոգեւոր հայրերը տեղաւորում տասն ցեղերին: ՌԱՇԻՆ (RAbbi SHlomo Itzhaki—ԺԱ. դարի այս հեղինակն անուան յապաւեալ ձեւով է յայտնի), իր՝ Ամովսի մեկնութեան մէջ (Դ. 3) ha-har-mō-w-nāh ընդ Հարմոն-ը (հայերէն թարգմանութեան մէջ՝ անկանիցիփ ի լեռնն Ռեմանայ) մեկնում է իբրեւ «Մթին սարեր», մինչդեռ Սողոմոն Եհուդա Լէյբ Ռապպոպորտը (1786–1867 թթ.) նոյնացնում է Հայաստանի հետ: Թալմուդը (Kiddushin, 72a) հաւաստում է, որ նոյն Հայաստան գերի տարուեցին տասն ցեղերից շատերը: [Թալմուդը] հէնց այդ վայրում է տեղաւորում նաեւ Մեսովքը եւ Մոշաւնին²⁴: Սրան յաւելելով, որ դեռեւս Բ. դարում է Սիմաքոս Թարգմանիչը Ամովսեան Հարմոնը Հայաստան հասկացել²⁵, նկատենք, որ թուացեալ օտար՝ Հարմոն-Հարմոն-Հարման անունը, գոնէ արմատական տեսանկիւնից, ամենեւին խորթ չէ մեզ. բաւական է յիշել Հայկ Նահապետի կրտսեր որդի կամ Գեղամ Նահապետի յաջորդ Հարմաներին, կամ Հայկի թոռ Կադմոսի կին Հարմոնիային, որի անունը Հայաստանի հետ է նոյնանում²⁶: Խորթ չէ նաեւ Ռեման (Ռեմանա) ձեւը, որ հարազատութիւն է դրսեւորում Հայոց (Վերին) Միջագետքի լեռնային շրջաններում եղած երկրին՝ Ռեմենէ ու ժողովրդին՝ Ռեմենէն տրուած անուանը²⁷: «Մ. Բրոսէն գրել է. «Մ. թ. ա. XVII դարում՝ XVIII հարստութեան ժամանակաշրջանում, եգիպտական հիէրօգլիֆ (մեհենագրոշմ) արձանագրութիւններում Միջագետքի հիւսիսում յիշատակուող երկիրը կոչւում էր Ռեմենէ (Remene), իսկ ազգը, որն ապրում է այնտեղ՝ Ռեմենէն (Remenen)»: Ըստ Մ. Բրոսէի՝ այն պէտք է Արմէնիայի եւ արմէնների եգիպտական անուանաձեւը լինէր (nom égyptien de l'Arménie et

²³ Տէն «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան», կազմ. Թ. Յակոբեան եւ ուրիշներ, հտ. 3, էջ 813 եւ հտ. 4, էջ 67:

²⁴ Ն. տ.:

²⁵ Տէն <http://bible.optina.ru/old:am:04:03>:

²⁶ Այս մասին մանրամասն տէն «Կադմոս, Հարմոնիա եւ Հայաստան», «Էջմիածին», 2018, Դ., էջ 46–60:

²⁷ Տէն «Հայաստանի եւ յարակից...», հտ. 4:

des Arméniens)»²⁸: Ինչպէս նկատուած է Քէմբրիջեան ուսումնական Աստուածաշնչում, դիտարկուող կապակցութիւնը մշտապէս դժուար է ընկալուել եւ ստուգաբանուել: Հներից ոմանք «Հարմոնահ» ասելով Հայաստանի ականարկ են նկատել, ուստի Թարգումը «Հարմինի լեռներ» է փոխադրել, Փէշիթթան (Peshitta Etheridge Translation, 1849) «Հայաստանի լեռ». «Some of the ancients saw in ‘Harmonah’ an allusion to Armenia: thus the Targ. renders, ‘And they shall carry you into exile beyond the mountains of Harmini’; Pesh. ‘And they shall be cast to the mountain of Armenia’»:

Քննարկուած նիւթն ի մի բերելով՝ դիտելի է, որ Սուրբ Գրոց հիւսիսը միշտ չէ, որ նոյնանում է Հայոց հետ. աւելին՝ միշտ չէ, որ հիւսիսն ընկալուում է իր բուն նշանակութեամբ: Ուշագրաւ է «Բառարան Սուրբ Գրոցի» համապատասխան յօդուածը՝ «Հիւսիս: Տէս Արեւելք», իսկ Արեւելքը բացատրուած է՝ «Բաց ի հասարակ նշանակութենէ արեւելք բառին հրեայք կգործածէին յաճախ այն բառը ցուցնելու համար ընդարձակ երկիր մը Պաղեստինու հիւսիսային արեւելեան եւ հարաւային արեւելեան, նաեւ արեւելեան դին, զորօրինակ Ասորիք, Արաբիա, նաեւ Բաբելոն, Ասորեստան, Հայաստան, այլովքն հանդերձ, նոյնպէս բոլոր երկիրը Կասպից ծովէն մինչեւ Արաբիոյ ծոցը»²⁹: Հետեւաբար հիւսիսականներն Աստուածաշնչում կարող են յիշուած լինել նաեւ որպէս արեւելեաններ: Մեր երկիրն արեւելքում տեղաւորելու ամենայայտնի օրինակը, Թերեւս, Ծննդոցի Բ. 8-ն է. «Եւ տնկեաց Աստուած զգրախտն յԵփեմ ընդ արեւելս»: Շատ աստուածաշնչագէտներ համոզուած են, որ այգին Հայոց աշխարհում է եղել: Անշուշտ կան նաեւ կասկածողներ կամ չկողմնորոշուածներ: Օրինակ՝ Զօն Դիլլը (1697–1771 թթ.) առաւել հաւանական է կարծում, որ այգին լինէր Տիգրիսի եւ Եփրատի միացման վայրում, քան նրանց ակունքի մօտ՝ Երից եկեղեաց (կամ էջմիածնի) յարակից հարթավայրում. «...it [the garden] was by the rivers Tigris and Euphrates, when they were become one stream... and it seems to be much better to place it here than in Armenia, where the fountain of these rivers is said to be: so Tournefort thinks it lay in the country, or plain of the Three churches (or Ejmiadzin), in Armenia»: Իսկ Ադամ Քլարքը (1762–1832 թթ.) համամիտ է նիգերլանդացի արեւելագէտ, քարտէզագիր եւ լեզուաբան Ադրիան Ռելանդին (1676–1718 թթ.)՝ համաձայնելով,

²⁸ Տէս Ա. ԴՈՒՄԻԿԵԱՆ, Հին Հայաստանի մասին հիերոգլիֆ եւ սեպագիր արձանագրութիւնների վկայութիւնները XIX դ. ֆրանսիացի արեւելագէտների լուսաբանմամբ. «Հայոց պատմութեան հարցեր». (Գիտական յօդուածների ժողովածու), Երեւան, 2009, էջ 4:

²⁹ «Բառարան Սուրբ Գրոց», Կոստանդնուպոլիս, 1881:

որ դրախտը չորս գետերի ակունքների շրջակայքում՝ Արմենիայում է պետք որոնել, ըստ այդմ մատնանշելով նաեւ երկու անյայտ գետերը: Ի մասնաւորի աշխարհագրական եւ լեզուաբանական գիտելիքներն ի գործ դնելով՝ Ռելանդը եզրակացրել է, որ Գեհովմն Արաքսն է, ստուգաբանելով, որ երկու անուններն արագագնաց են նշանակում. «The most probable account of its situation is that given by Hadrian Reland. He supposes it to have been in Armenia, near the sources of the great rivers Euphrates, Tigris, Phasis, and Araxes... The Gihon he thinks to be the Araxes, which runs into the Caspian Sea, both the words having the same signification, viz., a rapid motion»³⁰: Արեւելքի յաջորդ յիշատակութիւնը Ծննդոցի Ժ. գլխում է. «³⁰Եւ եղեւ բնակութիւն նոցա ի Մասեաց մինչեւ ի գալ ի Սովփերա լեռոնն արեւելայց»: Մեր Սուրբ Հայրերը Մասեաց են թարգմանել Mesha բառը: «Եկեղեցի եւ ազգ: Եկեղեցի եւ պետութիւն»³¹ գրքում ականարկուած է, որ դասական հայերէնին տիրապետողի համար Մասեաց բառը Մասիս տեղանուն բացառականն է, ուստի մեր Սուրբ Թարգմանիչները հատուածն ընկալել են՝ հմերը (մրանֆ) «բնակութիւն հաստատեցին (հեռացան-ցրուեցին) Մասիսից» ձեւով: Ընդ որում, գրքի յիշատակած՝ 1711 թ. Լօնդօնեան Համաշխարհային պատմութիւնը վկայում է, որ միայն հայ միջավայրում չէ, որ նման ընկալում է եղել: 1816-ին տպուած մէկ այլ ուսումնասիրութեան հեղինակ Յովսափատ Ասփինը Բենեդիկտեան նշանաւոր հայր էնթընի Աւգուսին Քալմէթի (1672—1757 թթ.) կարծիքն է բերում, թէ Մեշան Արմենիայի արեւելքի Մասիս կամ Մասիոս սարն է՝ Մովսէսի Արարատը: Իսկ Սեփարը (Սովփեր) Սափիրիսն է՝ նոյն երկրի արեւելքում. «Calmet supposes Mesha to be mount Masis, or Masius, in the west of Armenia, the Ararat of Moses; and mount Sephar, the mountains of the Saphirs, on the east of the same country»³²: Աւելի վաղ է շօտլանդացի մտածող, Չարլզ Ա. արքայի տաներէց Ալեքսանդր Ռոսսի (1590—1654 թթ.) աշխատութիւնը, ուր հարց ու պատասխանի ձեւով է ներկայացուած Ծննդոցը: Mesha-ի հնարաւոր բացատրութիւնը տալով՝ հեղինակը նաեւ նշում է, որ Մարտին Լիթերը նաեւ Մասիսի տարբերակն է հնարաւոր համարել³³: Բերուած օրինակները մեզ լիովին համոզում են, որ գրաբար թարգմանութեան մէջ

³⁰ <https://biblehub.com/commentaries/clarke/genesis/2.htm>

³¹ Երեւան, 2019, էջ 52:

³² S^{én} J. ASPIN, A Systematic Analysis of Universal History from the Creation to the Present Time", vol. I, Liverpool, 1816, էջ 313:

³³ S^{én} <https://quod.lib.umich.edu/e/eebo/A11058.0001.001/1:15.41?rgn=div2;view=fulltext>:

հանդիպող Մասեաց ձեւը ոչ թէ թարգմանական պատահականութեան արդիւնք է, կամ հնչիւնական լիակատար նմանութեան (նոյնպէս պատահական), այլ լիովին գիտակցուած եւ նպատակային կիրառութիւն:

Հիւսիս եւ արեւելք բառերի աստուածաշնչեան այլ օրինակներով չկամենալով ծանրաբեռնել շարադրանքը՝ պարզապէս նկատենք, որ կանոնից դուրս մնացած գրքերի պարագային եւս Հայաստանն ու Արեւելքը որոշ օրինակներում նոյնացուած են: Յոբելենից գրքում³⁴ (Ք. ա. 153–105 թթ.) նշուած են Տիրոջ սիրելի վայրերը. «Որովհետեւ Տէրը չորս [հաճոյ] վայր ունի երկրի վրայ. Եդեմական այգին, եւ Արեւելքի Լեռը, եւ Լեռն այս, որի վրայ [գտնուում] ես այսօր՝ Սինայը, եւ Սիոն Լեռը, որ յանուն երկրի օրհնութեան կօրհնուի նոր արարչութեան ժամանակ»: Չարլզի ծանօթագրութեամբ՝ «Որոշակի հաւանականութիւն կայ [Hermann] Rönsch-ի (Das Buch der Jubilden, 1874.— Գ. Մ., Ս. Մ.) առաջարկում (էջ 505–506), թէ Արեւելեան Լեռ ասելով՝ պէտք է հասկանանք Արարատի գագաթներից մէկը, ուր կանգ առաւ տապանը եւ Նոյը ողջակէզ մատուցեց... Կամ Արեւելքի Լեռն այն է, որ նկարագրուում է իբրեւ Տիրոջ Գահ երկրի վրայ... որի վրայ կբազմի Տէրը, երբ այցելի երկիր: Այն Եդեմական այգու հարեւանութեամբ գտնուող լեռներից ամենաբարձրն է...»:

Տիրոջ համար հաճոյ-սիրելի վայրի, կամ Տիրոջ՝ երկրային գահի մասին աւանդութիւնն ստիպում է դիտարկել վերելում յիշուած (Եսայ. ԺԴ. 13–14)՝ աստուածների ժողովման լեռան հետ նմանութիւնը: Արդեօք տարբեր են այս պատկերացումները: Դրանցից մէկը բաբելական է, միւսը՝ հրէական: Առաջինում բազում են աստուածները, միւսում՝ միակն է Տէրը: Եւ վերջապէս՝ մի դէպքում լեռը գտնուում էր հիւսիսում, մինչդեռ երկրորդն արեւելքում էր տեղաւորում այն: Իսկ հակառակ դիտանկիւնից՝ տարբեր ժողովուրդների պատկերացումներն են գերբնական ուժերի հաւաքատեղիի մասին, որն ստորգետնեայ կամ ջրային չէ, նաեւ երկնքում չէ, այլ շատ որոշ լեռ է: Եւ վերջապէս երկու պատումների պարագային էլ հետազօտողները, հնարաւոր տարբերակները քննելով, միեւնոյն՝ Մասիս-Արարատ լեռան հետ են կապում շարադրանքը, դրանով իսկ մեր աշխարհը նկատելով թէ՛ որպէս հիւսիսական, թէ՛ իբրեւ արեւելեան, որովհետեւ, ինչպէս տեսանք վերելում, Սուրբ Գրքում

³⁴ Մանրմասն տէս «Յոբելենից գիրքը՝ Հայքի մասին», «էջմիածին», 2012, Բ., էջ 58–70: Թարգմանութիւնը բերում ենք նշյալ աղբիւրից. հմմտ. բնագրի՝ 39–40 էջերը. «The Book of Jubilees or The Little Genesis», Translated from the Editor's Ethiopic Text and Edited, with Introduction, Notes and Indices by R. H. Charles, London, 1902:


հիւսիս եւ արեւելք բառերը կարող են միմեանց փոխարինել: Սա, հաւանաբար, հին եւ համեմատաբար նոր աւանդութիւնների տարբերութիւններով է առաջանում: Մեր պարագային նոյնպէս հնի եւ համեմատական նորի ազդեցութեամբ է, որ Մովսէս Խորենացու «հանուրց հիւսիսականաց վեհագոյն»ին արդէն Գրիգոր Տաթեւացին յիշում է «արեւելեանք կոչին հայք» արտայայտութեամբ³⁵:

РЕЗЮМЕ

В статье обсуждаются те отрывки из Библии, где упоминается Север. Авторы приводят несколько комментариев на английском языке, в которых фразы, включающие слово Север, отождествляется с Арменией. Кроме того, упоминается, что в Библии слова Север и Восток могут заменять друг друга. Следовательно, рассматриваются также похожие отрывки, где упомянут Восток. Особое внимание уделяется тем местам, где Север и Восток упомянуты как место «соборания» или «сонмы» Бога(ов), подразумевая Армению.

SUMMARY

The article discusses passages from the Bible, in which the word north is mentioned. The authors provide several English commentaries, in which phrases including the word north are identified with Armenia. Besides, it is mentioned that in the Bible the words north and east can replace each other. So, similar passages with the word east are also discussed. Particular attention is paid to those places, where the words north and east are mentioned in connection with God(s) and state the tradition of ancient times, according to which the “congregation” or the “assembly” of God(s) was in Armenia.



³⁵ «Գրիգոր Հարցմանց», Երուսաղէմ, 1993, էջ 555:

ԱՍՏՂԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐԳԻՆ ԵՒ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ
«ԱՆԵՂԻՆ ՏԱՃԱՐ» ՏԱՂԸ

Գրիգորիս Ա. Աղթամարցին (ԺԶ. դ.), Աղթամարի կաթողիկոս՝ 1512—1544 թթ., հայ մշակույթի ականավոր գործիչներից է, երաժիշտ, բանաստեղծ, գրիչ ու մանրանկարիչ։ Կրթությունն ստացել է Արճեշի Ուռնկարի Ս. Նշան վանքում՝ աշակերտելով Գրիգոր վարդապետ Արճիշեցուն։ Ուսուցիչն ու վանական տարիները խոր հետք են թողել Աղթամարցու՝ հոգեւորականի ու ներհուն արվեստագետի հոգում։ Իր գրած տաղերում մեծ երախտիքով է հիշել Գրիգոր վարդապետին՝ նրան կոչելով «երջանիկ ռաբունապետ, արթուն հսկող, քաջ հռետոր, անյաղթ փիլիսոփա, երիցս երանեալ մեծ վարժապետ» («Անծին եւ անսկիզբն է Հայրն Երկնային») («Ի Սուրբն Մարինոս ճգնաւոր») եւ «Այբէն մինչեւ ի քէն»)¹։ Գեղեցկահյուս քերթվածներ է ձոնել նաեւ Ուռնկարի հրաշագործ Ս. Նշան վանքին՝ այն անվանելով «Քաջբերունեաց պարծանաց նշան» (տե՛ս «Գերակատար Աստուած համայնի» գանձը, «Խոստովանիմք զՄիածին Բարձրեալ» մեղեդին եւ «Վառեալ լուսովն Աստուածային» հորդորակը, որոնց սկզբնատառերը հոգում են «Գրիգորիս Աթթամարցի Խաչի ի խնդրոյ Վարդանա» ծայրակապը)²։ Աղթամարցու ուսումնառության տարիների մի ամփոփ նկարագիր է տվել Ն. Ակինյանը՝ պատկերավոր կերտելով նաեւ նրա ստեղծագործական դիմանկարը՝ «Հմուտ էր Աստուածաշունչ գրոց, ընթերցած էր Յայսմաւուրքն եւ Հարանց վարքը, աղօթած էր Նարեկացւոյ հետ, հրահանգուած էր Շարականներ, Գանձեր, Տաղեր երգելու. իրեն ծանօթ էին Ներսէս

¹ Հ. ՆԵՐՍԷՍ ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի. կեանքն եւ քերթուածները, Վիեննա, 1958, էջ ԻԶ, 38 եւ 62:

² Անդ, էջ 100—111:

Շնորհալու Յիսուս Որդին, Առաքել Սինեցույ եւ համանուն Բաղիշեցույ քերթուածները, ինչպէս նաեւ ժողովրդական Տաղարանները»³:

Իր կաթողիկոսության տարիներին Աղթամարցիին շրջել եւ կանգ է առել մերձակա վանքերում: 1524-ին հանգրվանել է Մեծոփում, որտեղ վանքի առաջնորդ Աստվածատուր Մեծոփեցու խնդրանքով գրել է «Ծաղկունքն ասեն» տաղը⁴: 1526-ին որոշ ժամանակ հաստատվել է Խառաբաստավանքում եւ նկարագարել «Աղեքսանդրի վարքը»⁵, իսկ 1530-ին գտնվելով Արճեշում՝ ծաղկել է Մաշտոց-Գանձարանը:

Գրիգորիս Աղթամարցիին եղել է փայլուն մանրանկարիչ՝ աշակերտելով Հակոբ Զուղայեցուն⁶ եւ Հովսեփ վարդապետ Աղթամարցուն: Վերջինիս նվիրել է «Դովեալ սուրբ հայր» տաղը՝ «Գրիգորիսե Յովսէփին է» ծայրակապով⁷: Մեզ են հասել եւ աշխարհասփյուռ ձեռագրական հավաքածուներում են գտնվում նրա նկարագարագծ ձեռագրերից մի քանիսը.

1. «Պատմութիւն Աղէքսանդրի», 1526 թ., Խառաբաստայ Ս. Աստուածածին, գրիչ՝ Մարգարայ Արճիշեցի: Աղթամարցիին եղել է օրինակի շնորհողը, ինչպէս նաեւ կաֆաներ հորինել. «ստուգեալ եւ սրբագրեալ էր ինքն՝ բազում աշխատութեամբ՝ ի սխալ յաւրինակէ, եւ ասացեալ ի յառատ մտացն. բէթ.: [...] եւ զծաղկագիրն անձանձիր ուսոյց ծառայիս, եւ զգիրգ նկարեց»⁸: «Պատմութիւն Աղէքսանդրի»՝ «գունագեղ գրչութեամբ, ծաղկուններով եւ մանրանկարներով այս ընտիր ու եզական ձեռագիրը» այժմ գտնվում է հայտնի բանասեր Հ. Քյուրտյանի անձնական հավաքածուում⁹ եւ նրա պնդմամբ՝ հնագույնն է «Պատմութեան» ձեռագրերի մեջ¹⁰:

³ Անդ, էջ ՃԼԲ—ՃԼԳ:

⁴ Անդ, էջ ԼԲ:

⁵ Անդ, էջ ԼԳ:

⁶ Անդ, էջ ԼԲ, Խէ:

⁷ Անդ, էջ 36:

⁸ Ձեռագրի հիշատակարանը, ի թիվս այլ նյութերի, 1868 թ. արտագրել է Հ. Բ. վրդ. Եսայանը Կ. Պոլսում գտնվող Արզումանյանց տան հարուստ հավաքածուից եւ զետեղել «Հաւաքումն բանից նախնեաց ե» պրակում (թ. 5բ). տե՛ս Մալր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (այսուհետեւ Յուցակ Վենետիկի), յօրինեց Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեան Մխիթարեան Ուխտէն, ի Վենետիկ, 1924, ձեռ. Հ^մ 298 (սյուն. 1097—1098): Տէս նաեւ Հ. Ն. ՎՐԳ. ԱՎԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ ԼԳ—ԼԶ, ԿԸ:

⁹ Յ. Ք. ՔԻՐՏԵԱՆ, Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցիի կաֆաները «Պատմութիւն Մեծի աշխարհակալին Աղեքսանդրու Մակեդոնացույ» մէջ (ըստ Յ. Քիրտեան ձեռագրաց հաւաքածոյին օրինակին), «Հանդէս Ամսօրեայ», 1967, հոկտեմբեր-դեկտեմբեր, սյուն. 424 եւ 425:

¹⁰ «Բազմավէպ», 1961, թ. 1—2, էջ 51:

2. Մաշտոց-Գանձարան, 1530, Արճէշ, «ի գրունս Սուրբ Գէորգեայ զօրավարին, գրիչ՝ Յովանէս¹¹: Հիշատակարանում կարդում ենք՝ «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս եւ յաղօթս ձեր զհոգեւոր հայրն մեր՝ զտէր Գրիգորիս կաթողիկոսն զԱղթամարցին, որ զգիրքս ծաղկեր է»¹²:

3. «Պատմութիւն Աղեքսանդրի», 1536 թ., Վարազ, գրիչ եւ ստացող՝ Մարգարէ¹³ աբղ. Արճիշեցի¹⁴: Լուսանցքներում գրիչը բազմիցս հիշատակում է Աղթամարցուն՝ «ԶԳրիգորիս կաթողիկոսն յիշեցէք ի Քրիստոս զնկարող այսմ գրոցս» (թ. 43ա) կամ «ԶԳրիգորիս կաթողիկոսն նկարող գրքիս» (թ. 134ա եւ այլուր)՝ նրան կոչելով «իմաստուն քարտողար» (թ. 2բ) կամ «քաջ քարտող (թ. 133բ), «փառաւոր եւ հրաշագարդ հոգեւոր Տէր» (թ. 10ա), «քաջ հռետոր եւ անյաղթ ֆլիսոփայ հոգեւոր Տէր» (թ. 28բ)¹⁵: Զեռագրում տեղ են գտել նաեւ «Պատմութեան» համար Գրիգորիս Աղթամարցու հորինած կաֆաները (տե՛ս գրչի նշումը՝ «Ի Գ(ո)րիգորիս Կաթողիկոսէ ասացեալ առաջին կաֆէդ յիշեցէք ի Քրիստոս», թ. 8ա):

Բազմաշնորհ արվեստագետը տիրապետել է նաեւ գրչության արվեստին: 1525 թ. նա ինքնագիր հիշատակարան է հավելել մի Մաշտոցում՝ ընդօրինակված 1458 թ. Հակոբ գրչի կողմից (հետագայում նվիրաբերվել է Զուղայի Ս. Աստվածածին եկեղեցուն)¹⁶:

Սակայն Գրիգորիս Աղթամարցին առավել նշանավոր է որպէս տաղերգու: Նրա ստեղծագործական ժառանգության երեւելի մասն են

¹¹ Գրիչ Հովհաննէս քահանա Արճիշեցին եղել է նշանավոր գրիչ Հովհաննէս Մանկասարենցի թոռը: Այս մասին նա նշել է ձեռագրի հիշատակարանում՝ «մեծ պապուն իմ՝ Մանգասարին» (թ. 384ա): Նրա ուսուցիչներն են եղել Հովհաննէս Բաղիշեցին եւ Մարգարե Արճիշեցին: Տե՛ս Գ. ԱՐՔ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին, «Հանդէս Ամսօրեայ», 1930, թ. 1–2, սյուն. 44–45:

¹² ՄՄ, ձեռ. 2^մ 962, թ. 325ա. Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ ԼԶ–ԼԸ. Գ. ԱՐՔ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին, սյուն. 44–46:

¹³ «Աղեքսանդրի պատմութեան» նշված ընդօրինակութուններում գրիչն իր անվան վերջավորութիւնը տարբեր կերպ է արձանագրել:

¹⁴ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Բ., կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1967, ձեռ. 2^մ 473 (էջ 460). ձեռագրի մասին տե՛ս ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ [ՅՈՎՍԷՓԵԱՆՅ], Գրիգորիս Աղթամարցի (գրական-կենսագրական նոր նիւթերով), «Արարատ», գիտական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. էջմիածնի, 1919, Ա.–ԺԲ., էջ 11–14. Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ ԽԴ–ԽԶ. Գ. ԱՐՔ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին, սյուն. 44–45. Յ. ՔԻՐՐՏԵԱՆ, Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցիի կաֆաները «Պատմութիւն Մեծի աշխարհակալին Աղեքսանդրու Մակեդոնացու» մէջ, սյուն. 424–425, 432–433:

¹⁵ Տե՛ս նաեւ թ. 46բ, 57բ–58ա, 101բ, 124ա, 135բ, 138բ, 156ա:

¹⁶ Զեռագիրը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (այսուհետեւ՝ ՄՄ), 2^մ 959, ինքնագիր հիշատակարանը տե՛ս թ. 309ա–բ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին, սյուն. 43–44. Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ ԼԲ–ԼԳ:

կազմում հոգեւոր տաղերը, որոնք, ըստ մինչ այժմ կատարած ուսումնասիրությունների¹⁷, հետեւյալն են՝

«Առ Յիսուս Փրկիչ»՝ «Դու ես յԱդինայ դրախտէն», «Գանգատ առնեմ սիրով քեզ»,

Քրիստոսի հաշկելոյթյան՝ «Արեգակն արդարութեան»,

«Ի Ս. Աստուածածինն»՝ «Անեղին տաճար», «Արքային փակեալ պարտեզ», «Տապանակ կազմեալ անփուտ», «Արեգակնափայլ գեղով» «Ահա այգիք մեր ծաղկեցան» (յերգ երգոց գրոցն),

«Ի Ս. Եկեղեցի»՝ «Գովեմ զքեզ մարմնով հրեշտակ»,

«Առ Ս. Անտոն Թեբայեցի»՝ «Աստուածանկար պատկեր»:

Այս տաղերը երգվել են: Պահպանվել են մի շարք ձեռագրական հղումներ, որոնք ցուցում են, թե որ տաղերի ձայնեղանակով պետք է կատարվեն դրանք. այսպես՝ «Արքային փակեալ պարտեզ» տաղն ունի «Առաջնաճաշակի պտղոյն ձայն»¹⁸, «Տապանակ կազմեալ անփուտ»-ը՝ «Առաջնաճաշակ պտղոյն»¹⁹, իսկ «Մաքուր պատկերով նման հրեշտակի» տաղը՝ «Մեր Տէրն է բազմերին գունն է»²⁰ նշումը:

Վերոնշյալ ցանկից երաժշտական բաղադրիչով պահպանվել է միայն «Անեղին տաճար» տաղը, որը տվյալ դարաշրջանից ու տարածաշրջանից մեզ հասած հազվագյուտ երգվող նմուշ է եւ եզակի արժեք է ներկայացնում: Այն եղել է շատ սիրված ստեղծագործություն²¹՝ Տիրամորը գովերգող եւ նրան դիմող բանաստեղծի սրտաբուխ եւ անկեղծ զգացմունքի, ինչպես նաեւ հարուստ բառագանձով ստեղծված պատկերավորության շնորհիվ: Ըստ ձեռագրական տվյալների՝ տաղը կարող էր կատարվել Ս. Աստվածածնին նվիրված բոլոր տոներին, ինչպես հա-

¹⁷ Տաղերի մասին տե՛ս Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ, Գրիգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը: Յաւելուած: Աղէքսանդրի պատմութեան կաֆաները, Թիֆլիս, 1898. Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., Գրիգորիս Աղթամարցի, ուսումնասիրություն, քննական բնագրեր եւ ծանոթագրություններ Մ. Ավրաբեգյանի, Երեւան, 1963. Հ. ԲԱՆՁԻՆԵԱՆ, Գրիգորիս Աղթամարցու ներդրումը հայ հոգեւոր քերթութեան մէջ, «Էջմիածին», 2018, Ը., էջ 84–100:

¹⁸ Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ 1: Հեղինակը հղումը քաղել է իր ձեռքի տակ գտնվող Շավարշ վրդ. Սահակյանի Տաղարանից (թ. 3)՝ ընդօրինակված 1619 թ. Եւդոկիայում գրված մի ձեռագրից: «Առաջնաճաշակ պտղոյն» տաղը վերագրվում է Հովհաննես Երզնկացի Պուլկին:

¹⁹ Ձեռ. ՀՊԻ 745 (հին՝ 797), 1909, գրիչ՝ Մխիթարեանք, տեղի՝ Վիեննա, թ. 12ա (ընդօրինակությունը կատարված է 1605–1629 թթ. բնագրից), Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ., կազմեց Հ. Համազասպ Ոսկեան Մխիթ. Ուխտէն, Վիեննա, 1963, էջ 284. Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ 7:

²⁰ Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ 84, Տաղարան Շավարշ Վ. Սահակյանի, թ. 3:

²¹ Հ. Ն. ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ ՀԸ:

վաստում են նրան նախադասվող «Տաղ Սուրբ Աստուածածնին», «Տաղ Աստուածածնայ», ինչպես նաև «Տաղ Աւետեաց»²² խորագրերը:

Հնագույն ընդօրինակությունը գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մի ժողովածուում, որը նաև Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործություններն ընդգրկող մեզ հասած ամենավաղ գրչագիրն է.

1. Տաղ Աստուածածնին ի յԱղթամարցի Գրիգորիսէ ասացեալ. Անեղին տաճար, Բանին բարերար, գերագոյն գովեալ Տիրամայր [...] (տէս գունավոր ներդիրը): Նրան հաջորդում են՝

2. Տաղ Աստուածածնին ի Գրիգորիսէ Ախթամարց[ւոյ]. Անեղին տաճար, Բանին բարերար [...] (ձեռ. Հ^մ 1330, Տաղարան, 1563 թ., Կաֆայ, «ընդ հովանեաւ սուրբ տաճարիս սրբոյն Սարգսի զաւրեղ զաւրավարի եւ որդոյն նորա Մարտիրոսի», թ. 173ա)²³,

3. [Սկիզբը թափված] (ՄՄ, ձեռ. Հ^մ 2676, Կանոնագիրք Հայոց, Տաղք, ԺԶ. դ., տեղի՝ անյայտ, թ. 208ա),

4. Տաղ Աստուածածնին ի Ախթամարցի Գրիգորէ ասացեալ է. Անեղին տաճար, Բանին բարերար [...] (ՄՄ, ձեռ. Հ^մ 7709, Ժողովածոյ, 1608–1658 թթ., Կաֆայ, թ. 11բ),

5. Անեղին տաճար, Բանին բարերար [...] (ՄՄ, ձեռ. Հ^մ 7707, Տաղարան, 1611 թ., տեղի՝ անյայտ, թ. 282բ),

6. Այլ տաղ Գրիգորիսի. Անեղին տաճար, Բանին բարերար [...] (ՄՄ, ձեռ. Հ^մ 2398, Ժողովածոյ, 1613 թ., տեղի՝ անյայտ, թ. 174 ա),

7. Տաղ Սուրբ Աստուածածնին ի Գրիգորիսէ կաթողիկոսէ ասացեալ: Անեղին տաճար [...] (ձեռ. Հ^մ 976, Ժողովածոյ, 1613–1623 թթ., տեղի՝ անյայտ, թ. 16ա)²⁴,

8. Անձինք Սուրբ Աստուածածնին Գրիգորիսէ («Ա–Ք»). Անեղին տաճար, Բանին բարերար [...] (ՄՄ, ձեռ. Հ^մ 1637, Տաղարան, ԺԷ. դ., տեղի՝ անյայտ, թ. 230բ),

²² Տէս, օրինակ, ՄՄ ձեռագրեր՝ Հ^մ 3357, Ժողովածոյ, ԺԹ. դ., թ. 86բ. Հ^մ 7701. Տաղարան, 1768 թ., տեղի՝ անյայտ, թ. 4բ. Հ^մ 8219. Ժողովածոյ, 1829 թ., տեղի՝ անյայտ, թ. 124ա. Յուցակ Վենետիկի, հտ. Ե., ձեռ. Հ^մ 1835, Տաղարան, 1786 թ., թ. 1բ (սյուն. 898). ձեռ. Հ^մ 1789. Տաղարան, ԺԸ. դար, թ. 36բ (սյուն. 924). ձեռ. Հ^մ 2350, Տաղարան, ԺԸ. դ., տեղի՝ անյայտ, թ. 30բ (սյուն. 944). Յուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ եւ մասնաւորաց, կազմեց Արտավազդ արքեպս. Սիրմէեան, առաջնորդ հայոց Հալէպի, Երուսաղէմ, 1935. ձեռ. Հ^մ 50, Տաղարան, 1662, Կ. Պոլիս, թ. 6 (էջ 99) եւ այլն:

²³ Յուցակ Վենետիկի, հտ. Ե., սյուն. 673:

²⁴ Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ., կազմեց Հ. Հ. Ոսկեան Մխիթ. Ուխտէն, Վիեննա, 1963, էջ 562:

9. [Անխորագիր] Անեղին տանար, Բանին բարերար [...] (ՄՄ, ձեռ. Հ^մ 5623, Տաղարան, 1653 թ., տեղի՝ անյայտ, թ. 110բ),

10. Այլ տաղ յազնիւ. Անեղին տանար, Բանին բարերար [...] (ՄՄ, ձեռ. Հ^մ 2393, Ժողովածոյ, Ժէ. դ., տեղի՝ անյայտ, թ. 173բ),

11. Այլ տաղ քաղցր եւ անուշ. Անեղին տանար, Բանին բարերար [...] (ձեռ. Հ^մ 807, Տաղարան, Ժէ. դ., տեղի՝ անյայտ, թ. 161բ)²⁵,

12. Տաղ Սուրբ Աստուածածնին ի յԱղթամարցի ասացեալ. լաւ եղանակաւ ասա, եւ զիս յիշեա՛. Անեղին տանար. Բանին բարերար [...] (Օր. 6449 (110), Ժամանակ եւ տեղի՝ անյայտ, թ. 15)²⁶:

Տաղը հորինված է այբբենական ծայրակապով («Ա—Ք»): Եզրափակիչ տան մեջ Աղթամարցին հիշատակում է իր անունը՝ «Ով եղանակէ, / զԳրիգորիսն յիշէ»։ այսպես է ամենավաղ ձեռագրում եւ այլուր (ՄՄ, ձեռ. Հ^մ 2394, 2398, 5623, 7709 եւ այլն)²⁷:

Երաժշտական բաղադրիչով միակ նմուշը ձայնագրված է Արմաշի Չարխափան Ս. Աստվածածնի վանքի երաժշտապետ Համբարձում Չերչյանի ձեռամբ եւ զետեղված է հայկական նոտագրությամբ ձեռագրերից մեկում՝ «Տաղ եւ մեղեդի Աւետեաց եւ Ծննդեան» խորագրով²⁸: Գրական հենքը կազմում են առաջին հինգ տողերը.

Անեղին տանար,
Բանին բարերար,
Դերագոյն գովեալ, Տիրամայր,
Դու յամէն լեզուէ.
Տիրամայր, որ զԱստուած ծնար:

²⁵ Ցուցակ Վենետիկի, հտ. Ե., սյուն. 816:

²⁶ F. C. CONYBEARE. A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, Oxford University Press, 1913, p. 282. վերջին թերթերը կորսված լինելու պատճառով ձեռագիրը հիշատակարան չունի, սակայն ըստ կազմողի՝ գրված է Ժէ. դ. վերջին կամ ԺԸ. դ. սկզբին բնորոշ բոլորգրով:

²⁷ Հետագայում երբեմն գրիչները հեղինակի անունը փոխարինել են «զգրիչս յիշէ» կապակցությամբ. տես, օրինակ, ՄՄ, ձեռ. Հ^մ 2393:

²⁸ ՄՄ, նորագույն հավաքածո, ձեռ. Հ^մ 103, թ. 4բ-5ա:

ԳՐԻԳՈՐԻԱՆ ԱԹԱՄԱՐՑԻ
ԱՆԵՂԻՆ ՏԱՃԱՐ

Ա - նե -

ղին տա -

ճար, բա -

նին բա - րե -

րար,

գե - րա - գոյն

գով եալ

Տի - րա - մայր
Տի - րա - մայր

դու որ յա - մեն
զԱստ - ուած

լեզ - ծը - ուէ:
նար:

Տաղն ընթանում է հազվագյուտ՝ վերնախաղ հիմքով ԳԿ ձայնեղանակում, որն ընդհանուր առմամբ հոգեւոր տաղերգության մեջ սակավ է հանդիպում: Այդ ձայնեղանակում են հորինված «Ձայնագրեալ Պատարագ»-ում տեղ գտած տաղերից մի քանիսը՝ Կոստանդին Սրիկ Սսեցու (ԺԳ. դ.) «Խաչն ի նախնումն», Պետրոս Ղափանցու (ԺԸ. դ.) «Կանայք ամենայն» եւ Սիմեոն Երեւանցու (ԺԸ. դ.) «Տէր ողորմեա՛: Արի Աստուած» աղոթքի գրական բնագրով հորինված մեղեդիական տարբերակներից մեկը²⁹: Ձեռագրական աղբյուրներում վկայություններ են պահպանվել նշյալ ձայնեղանակով կամ, ինչպես ընդունված էր ասել՝ «գույնով» երգվող եւս մեկ տաղի մասին, որով պիտի կատարվեր Աղթամարցու տաղը.

1. «Տաղ Սուրբ Աստուածածնին: Անճառ Միածնին գոյն է: Անեղին տաճար, Բանին բարերար, գերագոյն գովեալ Տիրամայր»³⁰:

2. «Տաղ Սուրբ Աստուածածնին ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ: Անեղին տաճար: Անճառ Միածնին ձայն է»³¹:

«Անճառ Միածնին Հօրն Երկնաւորին» սկզբնատողով տաղը՝ նվիրված Ս. Հակոբ Մծբնա Հայրապետին, որ ձեռագրերում հաճախ ընծայվում է Առաքել վարդապետին³², պատկանում է Առաքել Սյունեցուն (մոտ 1350—1425 թթ.): Այն գրված է հատուկ տաղաչափությամբ՝ 5/5/5+3/5, որը, ըստ Հ. Մ. Պոտուրյանի, «եզական» է միայն Սյունեցուն³³: Այս չափը բնորոշ է նաեւ հեղինակի մի քանի այլ, այդ թվում նաեւ՝ երաժշտական բաղադրիչով պահպանված «Դասքն հրէական»³⁴ եւ «Աստուածն ամենի»³⁵ տաղերին:

²⁹ Տէն «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (այսուհետեւ՝ «Ձայնագրեալ Պատարագ»), Վաղարշապատ, 1878, էջ 169, 222 եւ 223: ԳԿ զարտուղի հին ձայնեղանակի մասին տես Ն. ԹԱՆՄԻՋՅԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ հայ երաժշտությունը V—XV դդ., Երեւան, 1985, էջ 228—229 եւ 268—269:

³⁰ Ձեռ. Հ^մ 405, Տաղարան, ԺԶ.—ԺԷ. դդ., տեղի՝ անյայտ, թ. 24բ. տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակովբոս վրդ. Տաշեան Մխիթ. Ուխտէն (այսուհետեւ՝ Տաշյան ցուցակ), Վիեննա, 1895, էջ 857:

³¹ Հ. Ն. Վ. ԱԿԻՆԵԱՆ, նշվ. աշխ., էջ 10, Տաղարան Շավարշ Վ. Սահակյանի, թ. 3:

³² Տէն, օրինակ, Տաշյան ցուցակ, էջ 857:

³³ Տէն Հ. ՄԿՐՏԻՃ ՊՈՏՈՒՐԵԱՆ, Առաքել Սիւնեցի եւ իր քերթուածները, Վենետիկ, 1914, էջ Ծ եւ 202: Այս մասին տես նաեւ Հ. ԱՆԱՍՅԱՆ, Հայկական մատենագիտություն, Ե.—ԺԸ. դդ., հտ. Բ., Երեւան, 1976, սյուն. 92:

³⁴ Հ. ՄԿՐՏԻՃ ՊՈՏՈՒՐԵԱՆ, նշվ. աշխ., էջ Ծ եւ 211: «Դասքն հրէական» սկսվածքով տաղը ձայնագրել է Կոմիտաս վարդապետը. տե՛ս ԿՈՄԻՏԱՍ, Երկերի ժողովածու, հտ. Ը., Հոգեւոր ստեղծագործություններ, խմբ.՝ Ռ. Աթայան, Գ. Գյուղակյան, Գ. Դերոյան, Երեւան, 1998, էջ 143: Դրա շարունակությունը կազմող տողերի՝ «Ով պարտիզպան» սկսվածքով մեկ այլ տաղի ձայնագրություն է կատարել Ն. Թաշճյանը՝ ղեկավարելով «Ձայնագրեալ Պատարագ»-ում, էջ 161—162: Տաղերի մասին տես Ն. ԹԱՆՄԻՋՅԱՆ, նշվ. աշխ., էջ 313—318:

³⁵ Ձայնագրությունը՝ Ն. Թաշճյանի. տես «Ձայնագրեալ Պատարագ», էջ 220—221: Տաղի մասին տես Ն. ԹԱՆՄԻՋՅԱՆ, նշվ. աշխ., էջ 311—313:

Նշյալ գրչական հղումները մեզ ուղղորդեցին բացահայտելու, որ բացի ձայնեղանակային գործոնից, «Անեղին տաճար» եւ «Անճառ Միածնին» տաղերին միավորում է եւս մեկ հանգամանք. Գրիգորիս Աղթամարցին տաղը հորինել է Առաքել Սյունեցու բանաստեղծություններին հատուկ տաղաչափությամբ՝ յուրաքանչյուր բանաստեղծական տան երրորդ տողի վերջում հավելելով «Տիրամայր» կոչականը եւ առավել թախանձագին երանգ հաղորդելով խնդրվածքին: Սրանից զատ, ակնառու է նաեւ Աղթամարցու բանաստեղծության հորինվածքային հարազատությունը Ս. Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ» եւ «Աշխարհ ամենայն» երգերի հետ՝ նկատի առնելով այբբենական կարգը եւ յամբ-անապեստյան հնգավանկ տողերը, այն տարբերությամբ, որ Շնորհալու յուրաքանչյուր տառով գրված երեքական տողի փոխարեն այստեղ առկա է մեկը:

«Անեղին տաճար» տաղի երաժշտական մտահղացքն իրենից ներկայացնում է մեկ ամբողջական կառույց՝ դրամատուրգիական զարգացման բնորոշ հանգույցակետերով: Բանաստեղծական տան յուրաքանչյուր տողը համապատասխանում է երաժշտական մեկ առանձին, ավարտուն նախադասության: Մեղեդին բաղկացած է երկու ինքնուրույն մասերից՝ երկու տարբեր երաժշտական նյութերի համադրությամբ: Դրանցից առաջինում («Անեղին տաճար» եւ «Բանին բարերար») տիրում է խաղաղ եւ անվրդով, խորհրդածությամբ լի տրամադրություն, որը երկրորդում («Գերագոյն գովեալ» բառերին համապատասխան) փոխարկվում է հուզախուռով եւ փոթորկուն ալիքի՝ նոր երաժշտական նյութով, զարտուղությունամբ՝ դեպի ձայնեղանակային այլ ոլորտ, ինչպես նաեւ բարձր հնչադասությամբ՝ դառնալով ստեղծագործության գագաթնակետը: «Տիրամայր» բառին համապատասխանող հատվածում, ինչպես նաեւ վերջին երկու տողերում («Դու յամէն լեզուէ», «Տիրամայր, Որ զԱստուած ծնար») նախորդ հուզական լիցքն աստիճանաբար մարում է՝ վերադառնալով նախկին խաղաղ հանգրվանին ու վերահաստատելով սկզբնական քնարական-լուսավոր երանգը: Այս մարումների հետնախորքին, ահա, երեւակվում է ԳԿ-ի հին ձայնեղանակը՝ իր վերնախաղ հիմքով:

«Անեղին տաճար» տաղի ուսումնասիրությունը մեզ տանում է դեպի Ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը, որի նկատմամբ Աղթամարցին մեծ պաշտամունք է տածել՝ իր երկերում փոխառելով նրա տաղերի լեզուն, բառազանձը, գործածելով մեծ բանաստեղծի մտածողությանը բնորոշ խորհրդաբանությունն ու այլաբանությունները: Դա

ականհայտ է, մասնավորապես, հետեւյալ տաղերում՝ «Ահա այգիք մեր ծաղկեցան», որ հորինված է Աստվածաշնչյան «Երգ երգոց»-ի եւ Նարեկացու «Հաւուն հաւուն»-ի ազդեցութեամբ, այնուհետեւ՝ «Արեգակնափայլ գեղով», որում երեւակվում են «Աչքն ծով»-ից եկող «Աչեր ծովի ծովունիս», «Աստղ վառի վառ պայծառ» եւ այլ նույնաբանություններ³⁶:

Եւ ահա, բացի գրական բաղադրիչից, Աղթամարցու տաղերի երաժշտական բաղադրիչը եւս կրել է Նարեկացիական ազդեցութեան դրոշմը: Դա ականառու կերպով դրսևորվել է «Անեղին տաճար» տաղում՝ միջնամասի զարտուղող մեղեդիական դարձվածքում («[գերա]գոյն գովեալ» բառերին համապատասխան), որը հարազատորեն արձագանքում է Նարեկացու՝ Ս. Աստվածածնին նվիրված «Աչքն ծովի ծով» տաղի՝ ստորեւ բերվող հատվածներին, որ քաղել ենք Հ. Չերչյանի³⁷ եւ Ն. Թաշճյանի³⁸ ձայնագրություններից: Հատկանշական է, որ տաղերն աղերսվում են նաեւ իրենց հիմնական՝ ԳԿ ձայնեղանակի տեսանկյունից.

Չերչյան

ի ծո [վ]

Թաշճյան

ի ծո [վ]

Չերչյան

յա - ու [լուռու]

Թաշճյան

յա - ու [լուռու]

³⁶ Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործության մեջ Նարեկացու ազդեցության եւ բառագանձի կիրառման մասին տես Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՅԱՆ, նշվ. աշխ., էջ 20 եւ հետո. ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԳ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, Անտիպ տարբերակ մը Գրիգորիս Աղթամարցույ Աստուածածնայ տաղին, «Հանդէս ամսօրեայ», 1967, յուլիս-սեպտեմբեր, սյուն. 315–316. Հ. ԲԱՍՏԻՆՅԱՆ, նշվ. հոդվածը, էջ 91 եւ հետո:

³⁷ ՄՄ, Նորագույն հավաքածո, ձեռ. Հ^մ 103, թ. 5ա-5բ:

³⁸ «Ձայնագրեալ Պատարագ», էջ 96–97:

Նարեկացու տաղին բնորոշ մեծակերտ-զարդարական ոճը մեծ ծաղկում է ապրել կիրիկյան երաժշտական մշակույթում, երբ մեծահմուտ վարպետները, ժամանակի պահանջներին համապատասխան, վերանայում եւ ճոխացնում էին տաղային նմուշների երաժշտական բաղադրիչները: Սակայն, ինչպես նշում է Ն. Թահմիզյանը, «Աչքն ծով»-ի այս տարբերակում պահպանվել են նրա նախնական ուրվագծերից շատերը³⁹, որոնց շարքին պետք է դասել նաեւ խնդրո առարկա հատվածները: Պատահական չէ, որ նախքան Աղթամարցին նշյալ տիպական մեղեդիական դարձվածքները կիրառություն են գտել կիրիկյան անհայտ հեղինակների «Ազատեա՛ր զգերեալսն», «Բանին Հօր» եւ այլ տաղերում:

Այսպիսով՝ Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործական սկզբունքների եւ գեղարվեստական ճաշակի ձեւավորմանը նպաստել եւ նրա ստեղծագործության մեջ արտացոլվել է նախընթաց երաժշտական մշակույթն իր տարակերպ դրսևորումներով: «Անեղին տաճար» տաղի արմաշական գրառումը մեզ պատկերացում է տալիս հեղինակի ոճին բնորոշ առանձնահատկությունների, երաժշտական ուրույն մտածողության մասին: Տաղի հատկանշական գծերն են կերպարի վառ եւ լիակատար մարմնավորումը, մտահղացքային ամբողջականությունը, գրական շարադրանքի եւ երաժշտական բաղադրիչի սերտ կապակցվածությունը: Մեղեդու ինքնաբերական հորդումը, երգային լայնաշունչ ծավալումը, նրբին ու հեզասահ անցումները Ս. Աստվածամոր հրաշագեղ եւ լուսե պատկերի կերտումն են:

Ս. Աստվածածնի կերպարը, երաժշտաբանաստեղծական այս մանրապատկերից զատ, Աղթամարցին կերտել է նաեւ 1530 թ. նկարազարդած Մաշտոց-Գանձարանում: Այստեղ նրբաճաշակ արվեստագետը վառ արտահայտչականությամբ եւ բազմազուն երանգապնակով է վրձնել Ս. Աստվածածնի Ավետման ցնծալի տեսարանը, որ հայ մանրանկարչության լավագույն նմուշների թվին է դասվում⁴⁰ (տե՛ս գունավոր ներդիրը):

Գրիգորիս Աղթամարցին՝ հայոց միջնադարի տաղանդաշատ մշակութային գործիչը, քաջահմուտ է եղել եւ բանաստեղծական արվեստի, եւ երաժշտության, եւ մանրանկարչության մեջ: Այս համատեքստում «Անեղին տաճար» տաղը մի եզակի հատակոտոր է՝ եռյակ արվեստների խորհրդանշական միաձուլման փայլուն օրինակ:

³⁹ Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ, նշվ. աշխ., էջ 223:

⁴⁰ Նշենք, որ Գրիգորիս Աղթամարցու մանրանկարչական ժառանգության համապարփակ ուսումնասիրությունը դեռեւս իրականացված չէ:

РЕЗЮМЕ

Григорис I Ахтамарци (XVI в.) был Католикосом Ахтамарской епархии Армянской Апостольской Церкви (1512—1544 гг.), одним из выдающихся деятелей армянской культуры, поэтом, музыкантом, писцом и миниатюристом. Единственным тагом из его творческого наследия, сохранившимся вместе с музыкальным компонентом, является таг «Нерукотворный храм», представляющий собой уникальную ценность. Таг был обнаружен нами в рукописях с новоармянской нотописью, дошедших до нас из монастыря Пресвятой Богородицы села Армаш (Провинция Никомедия в Малой Азии). Таг — типичный образец монументально-декоративно стиля с широко распевной, свободно разворачивающейся мелодией, изящными пассажами, ритмически свободной структурой. Характерными чертами тага являются яркое и полноценное художественное воплощение образа, композиционная целостность, тесная взаимосвязь литературного текста и музыкального компонента.

Формированию творческого стиля Григориса Ахтамарци способствовали разнообразные проявления музыкальной культуры предыдущей эпохи, нашедшие отражение в его произведениях. Нами выявлено определенное интонационное родство с тагом Св. Григора Нарекаци (X—XI вв.) «Очи — море», посвященным Пресвятой Богородице.

Стиль стихосложения и глас, в котором написан таг, характерны для сочинений Аракела Сюнеци (XIII—XIV вв.). Очевидно также стилистическое влияние песнопений Св. Нерсеса Шнорали (XII в.).

Одним из великолепных творений Григориса Ахтамарци является миниатюра «Благовещение», которую отличают тот же утонченный вкус, яркая выразительность и красочная палитра. В триединстве поэзии, музыки и миниатюры проявился многогранный талант великого художника, мастерски создавшего на языке трех искусств чудесный и лучезарный образ Пресвятой Богоматери.


SUMMARY

Grigoris I of Aghtamar (16th century), Catholicos of the See of Aghtamar of the Armenian Apostolic Church from 1512 to 1544, is one of the most important figures of the Armenian culture, known as a poet, musician, copyist, and miniaturist. The

only ode in his noteworthy creative legacy that has been preserved with its musical component is «Աննդին տանար» (“Temple of the Uncreated One”), which is of unique value. We discovered it in one of the manuscripts with new Armenian notation, which came to us from the Holy Theotokos Monastery of Armash (Province of Nicomedia in Asia Minor). The ode is a typical sample of monumental-decorative style with an unrestrained chanting and freely developing melody, fine passages and free rhythmic structure. It is distinguished by its bright and perfect imagery and the wholeness of the concept along with the harmonious association between the poetic text and the musical component. The aesthetic principles of Grigoris of Aghtamar were shaped by various manifestations of the musical culture of the previous era, which were reflected in his work. We have identified a certain intonation association with the ode «Աչքն ծով ի ծով» (“Eyes Like Sea”) by St. Gregory of Narek (10th – 11th centuries), also dedicated to the Holy Theotokos.


The versification and the mode of the ode are typical of the poetry of Arakel of Syunik (13th – 14th cc.). The stylistic influence of the chants by St. Nerses the Graceful (12th c.) is also evident.

One of the magnificent creations of Grigoris of Aghtamar is the miniature “The Annunciation”, which is distinguished by the same refined taste, vivid expressiveness and colorful palette. The triune nature of poetry, music, and miniature manifests the multifaceted talent of the great artist, who masterfully created a miraculous and luminous image of the Holy Mother of God employing the means of those three arts.





Աւետում. ՄՄ, ձեռ. Դժ 962, Մաշտոց-Գանձարան, գրիչ՝ Յովանէս,
ծաղկող՝ Գրիգորիս Աղթամարցի, ք. 322բ:



ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՈՒՄ

(Սաս Երկրորդ)
ԺԹ. ՂԱՐԱՎԵՐՁ ԵՒ Ի. ՂԱՐԱՍԿԻԶԲ

Սկիզբը՝ նախորդի

1880-ական թթ. սկիզբ առած հայոց ազատագրական հայդուկային պայքարի փուլն ունեցավ իր նախակարապետները, մարդիկ, ովքեր դեռ հայդուկ չէին դարձել, բայց մեծ գործ էին կատարում ազատության կայծը բորբոքելու, ժողովրդի ոգին բարձրացնելու գործում: Այդ առումով հիշատակության արժանի են երկու նվիրական անուններ՝ Հակոբ սարկավազ (Տեր-Ղեւոնդյան, Գալֆա Հակոբ) եւ Մարգար վարժապետ (Մարգար Ամիրյան)¹:

Ժամանակի համեստ ու խոնարհ մտավորականներից էր Մշո Վարդենիս գյուղի Ամրոյան գերդաստանում 1859 թ. ծնված արժանավոր շառավիղ Մարգար վարժապետը: Վարդենիսում գրաճանաչ դառնալուց հետո նա 1872 թ. դառնում է Ս. Կարապետի «Ժառանգավորացի» սան: Հինգ տարի սովորում է այնտեղ, իսկ ավարտելուց հետո երկու տարի ուսուցչություն է անում: 1879 թ. վերադառնում է հայրենի Վարդենիս, ձեռնամուխ լինում գյուղի վարժարանի շենքի կառուցման աշխատանքներին, որ ավարտվում են 1882 թ.: Դպրոցի ծախսերը հոգալու համար 1883 թ. մեկնում է Կ. Պոլիս՝ գումար հանգանակելու: Այդտեղ շփվում է ազատագրական գաղափարներով տոգորված անձանց հետ, պատրիարքարանի հանձնարարությամբ մի տարի դասավանդում Դերջանում, ապա վերադառնում Վարդենիս, լծվում հարազատ գյուղի դպրոցական գործին: Նրա ուշադրության կենտրոնում էին մատաղ սերունդը, երիտասարդությունը՝ եւ ավագները: Վերջիններին նա համախմբում էր, տոգորում ազգօգուտ գործունեություն, ներշնչում ինքնապաշտպանության գաղափարը:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 475:

Նրա շնորհիվ Վարդենիսը դառնում է ազատասիրական գաղափարներով ներշնչված մի օրինակելի գյուղ, որը չէր հաշտվում թուրք պաշտոնյաների եւ քրդական վայրագությունների հետ, յուրացնում էր զենքին զենքով, սրին սրով պատասխանելու մարտավարությունը²:

Արեւելահայերի հետ կապեր հաստատելու համար նա մեկնում է Կովկաս: Այդ ժամանակ տեղի ունեցավ Գյուլիգարի առեւանգումը, եւ ընթանում էր հայտնի չարագործ Մուսա բեկի «գաղափարություն», որին մասնակցելու համար Մարգարը վերադառնում է Կ. Պոլիս, կապեր հաստատում տեղի հեղափոխականների հետ: Որոշ ժամանակ անց Վանից Կ. Պոլիս աքսորված Մկրտիչ Խրիմյանի հանձնարարությամբ նա վերադառնում է Մուշ: 1888 թ. ապրիլ եւն սաստկանում քրդական վայրագությունները: Մուշի շրջանի գյուղերից մեկի բնակիչների վրա (որոնք գնում էին Վարդենիս՝ հարս բերելու) քրդերը հարձակվում են հարսին առեւանգելու նպատակով: Հայերը դիմադրություն են ցույց տալիս, որի ժամանակ սպանվում է մի քուրդ: Քրդերը բողոքում են կուսակալին, թե հայ ֆիդայիները Մարգար վարժապետի ղեկավարությամբ Հակոբ սարկավագին փախցնելու ժամանակ սպանել եւ վիրավորել են իրենց: Ձերբակալություններից խուսափելու համար Մարգար վարժապետը լեռն է բարձրանում³:

Կառավարական պաշտոնյաների համար անհանդուրժելի էր զենք գործածող «գլավուրը», այդ պատճառով անհրաժեշտ էր ամբաստանություն «թխել» Մարգար վարժապետի վրա: Ձեռնարկում է մի նոր արշավանք, որ այս անգամ՝ Ավզուտ գյուղի վրա, որի ժամանակ սպանվում է մի թուրք ոստիկան: Կառավարությունը ձերբակալում է մի խումբ ավզուտցիների եւ ահալոր կոտանքների տակ ստիպում վկայություն տալ, թե կովին մասնակցում էր Մարգար վարժապետը, որի ձեռքով էլ սպանվել է թուրք ոստիկանը: Վարժապետը ձերբակալվում է այդ հորինված մեղադրանքով եւ փակվում Բաղեշի բանտում: Հապշտապ կազմակերպված դատի ժամանակ թուրքական դատարանը Մարգար վարժապետին մեղադրում է պետական դավաճանության մեջ իբրեւ խռովարար: Այդ որակումով 1893 թ. հունվարի 27-ին նա կախաղան է բարձրացվում⁴:

Սարգիս Բդեյանը խոստովանում է. «Իր միակ թերութիւնը ան էր, որ ինք նուիրած էր իր գիւղի, իր համայնքի եւ իր ազգի լուսաւորութեան,

² Տէս նույն տեղում, էջ 477:

³ Տէս նույն տեղում:

⁴ Տէս նույն տեղում:

փրկութեան, ազատութեան սուրբ գործին: Իր շնորհիւ էր, որ Վարդենիսի մէջ աւելի կանուխէն մուտք գործած էին ազատամտութիւնը, ազատութիւնը... Վարդենիսի անունը հոմանիշ էր ընդդիմութեան. Ան էր, որ առաջին անգամ ըլլալով՝ արգիլեց քիւրտերու մուտքը հայ գիւղին մէջ... Բնաւ յանցանք չունէր, ոեւէ քոմիթէի ալ չէր պատկաներ, իր պարտքը կատարած էր իբրեւ վարժապետ, այդ էր արդէն իր անունն ալ Մարգար վարժապետ...»⁵:

Համեստ մտավորականների գործունեությունն ունենում է իր դրական հետեւանքները: Հնազանդ հայ շինականների մեջ աստիճանաբար հայտնվում են ինքնապաշտպանությանը եւ դիմադրությանը հակված գյուղացիներ, ժողովրդական վրիժառուներ: Դրանց առաջիններից մեկն էր Արաբոն՝ Առաքելը՝ (Առաքել Մխիթարյան) (մկրտության անունը՝ Ստեփանոս): Եթե սկզբում նա գործում էր մենակ, ապա 1880-ական թթ. կեսերից 1885 թվից միավորում է իր Ֆիդայի քաջարի ընկերներին՝ (ալիզնանցի Լեւոնին, խիանցի Գալշոյի Մանուկին, ահրոնքցի Ադամին, Մզդենքցի Գեւորգ Չաուշին): Նրանք Տարոնի տարբեր գյուղերից էին: Նրանց կողքին թուրք-քրդական ուժերի դեմ կռվում էր Մխո Շահենի խումբը: Հայոց պարբերականների՝ այդ թվում «Մշակ»-ի, իսկ հետագայում նաեւ «Հայրենիք»-ի էջերում նկարագրված է այս երկու քաջարի խմբերի համատեղ գործողությունները Տարոնի գյուղերի ինքնապաշտպանական մարտերում: 1889 թ. Բերդակ գյուղում նրանք ձերբակալվում են, իսկ 1890 թ. փախչում թուրքական բանտից: Կովկաս հեռացած Արաբոն վերադարձից հետո 1893 թ. իր 16 հոգանոց խմբով խնուսում պարտության է մատնում թշնամի ուժերին, սակայն չհասած Մշո դաշտ, Գեալառաշի ձորում թուրք եւ քուրդ հրոսակների դեմ կռվում, անհավասար մարտում զոհվում է:

«Հնչակ»-ի, «Մշակ»-ի, իսկ 1890-ական թվերի առաջին կեսին «Դրոշակ»-ի էջերում ներկայացված են Փոքր Հայքում ծավալված ֆիդայական պայքարի առանձին դրվագներ: Նկարագրված են մեծ Ձեւոնների, Թորոս Ծառուկյանի (1870–1893 թթ.) ղեկավարությամբ եւ փոքր Ձեւոնների կողմից թուրք քրդական հարստահարիչների դեմ պայքարի ամբողջական դրվագներ: Մեծ չափով անդրադարձ կա Ժիրայրի (Մարտիրոս Պոյաճյան) գործունեությանը: «Հայրենիք»-ի 1891 հուլիսի 16-ի, 1893 թ. հուլիսի 19-ի, օգոստոսի 3-ի, 1895 թ. հուլիսի 20-ի եւ օգոստոսի 5-ի, 1957 թ.

⁵ Նույն տեղում:

նոյեմբերի թիվ 11 համարները, «Հայք» պարբերականի 1891 թ. նոյեմբերի 1-ի, 1892 թ. դեկտեմբերի 15-ի, 1893 թ. դեկտեմբերի 15-ի, «Մշակ»-ի, 1892 թ. փետրվարի 15-ի, 1893 թ. նոյեմբերի 13-ի, 25-ի «Հնչակի» 1893 թ. ապրիլի 25-ի, մայիսի 15-ի, 1894 թ. դեկտեմբերի 23-ի, 1895 թ. մարտի 5-ի, հուլիսի 31-ի «Դրօշակի» 1893 թ. նոյեմբերի եւ 1894 թ. սեպտեմբերի գրեթե բոլոր համարները նվիրված են այդ նշանավոր հայդուկապետի գործունեությանն ու 1894 թ. մարտի 25-ին նրան կախաղան բարձրացնելու թուրքական դատարանի վճռին:

«Հնչակի» 1891—1898 թթ. «Դրօշակի» նույն տարիների գրեթե բոլոր համարները, ինչպես նաեւ «Արձագանք»-ի, «Նոր դարի», «Հայքի», «Հայրենիքի», եւ «Արմենիայի» համարների մեծ մասը, վերաբերում են հայդուկային պայքարի առանձին ջոկատների (ինչպիսիք էին՝ Երզնկայում եւ Սեբաստիայում գործող Գալուս Արիսյանի (Մնձուրի Առյուծ), Ռուբեն Շիշմանյանի եւ Հովհաննես Մինասյանի (Մինասօղլու), ավելի ուշ Դանիել Չաուշի, Վասպուրականում գործող Չաթնի եւ Շերոնի խմբերը) գործունեության, նրանց մղած հերոսական կռիվների լուսաբանմանը: Հայտնի է, որ այդ պարտիզանական պատերազմին իր մասնակցությունը բերեց նաեւ արեւելահայությունը: Արեւելյան Հայաստանում եւ Պարսկաստանի տարածքում ստեղծվում էին հայդուկային ջոկատներ, որոնք անցնելով Երկիր՝ մասնակից էին դառնում ազատագրական կռիվներին: Թիֆլիսում լույս տեսնող գրեթե բոլոր հայկական պարբերականներն անդրադարձել են ժԹ. դարավերջին, ազատագրական պայքարին մասնակցելու համար Երկիր անցած եւ կռիվներում մեծ համբավ վաստակած արեւելահայ այնպիսի հայդուկապետերի գործունեությանը, ինչպիսիք էին՝ Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան), Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) եւ ուրիշներ:

Վերը նշված արեւմտահայ եւ արեւելահայ պարբերականները հստակ անդրադարձ են կատարել Սերոբ Աղբյուրի, Գեւորգ Չաուշի, Գուրգենի եւ Վազգենի, Անդրանիկի հայդուկային խմբերի հերոսական գործունեությանը: Մեծ ոգեւորություն մը եւ հիացմունքով է խոսվում Սերոբ Աղբյուրի խմբի մղած հերոսական կռիվների, հատկապես Բաբշենի եւ այլ վայրերի հաղթական ճակատամարտերի մասին: Դարավերջին արեւմտահայության զինված պայքարի ծավալումն օրինաչափորեն դնում էր արեւմտահայությանը զինելու հարցը: Կազմակերպվում էին զինատար խմբեր, որոնք մեծ դժվարություններ հաղթահարելով՝ Ռուսաստանից,

Անդրկովկասից ու Պարսկաստանից զանազան ուղիներով ու միջոցներով գենք էին փոխադրում Երկիր: Կարսը, Երեւանը, Ալմաստը, Ուրմիան եւ Երկրի սահմանին մոտ գտնվող այլ բնակավայրեր ժամանակի ընթացքում վերածվեցին կարեւոր հենակետերի: Դարավերջի հայ պարբերականները, անդրադառնալով այս կարեւորագույն խնդրին, նշում էին ազատագրական պայքարը գլխավորող կուսակցությունների նյութական անձուկ վիճակը, զինատար ուղիների դժվարանցանելիությունը եւ օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ պատճառները, որոնց հետեւանքով արեւմտահայությունը զինելու խնդիրը չուժեց եւ մնաց որպէս հրատապ լուծում պահանջող հարց նաեւ ազատագրական պայքարի հետագա փուլերում: Հնարավոր չեղավ հայտնի ֆիդային Արմենակ Ղազարյանի (Հրայր) առաջարկով քրդերի հետ դաշինք ստեղծել ընդդէմ օսմանյան կառավարողների: Այս ամենը բացասական առումով իր կնիքը դրեց հայոց ազատամարտի ընթացքի վրա: Առաջին հերթին դա դրսեւորվեց Սասունի 1891—1894 թթ. ազատագրական պայքարի ընթացքում:

1894—1896 թթ. հայ ժողովրդի պատմության մեջ դժվար եւ տառապանքով լի տարիներ եղան: Դրանք սուլթան Աբդուլ Համիդ Բ.-ի կողմից հայ ժողովրդի նկատմամբ կազմակերպած առաջին ցեղասպանությունից տարիներն էին, երբ զոհ գնացին շուրջ 300 000 հայեր: Թուրքական սուրն առաջին հերթին հնձեց հերոս սասունցի լեռնականների շարքերը, որ բարբարոսների առաջին զոհերը դարձան: 1890-ական թթ. ազգային ազատագրական պայքարն սկսվեց Սասունի լեռներից: 1891 թ. սկսվեց Սասունի լեռնականների հերոսական ինքնապաշտպանությունը: «Հնչակ»-ի (1892 թ. №11, 12 1893—94 թթ.), «Նոր դար»-ի, «Արձագանք»-ի (1891 թ. հոկտեմբեր եւ նոյեմբեր, ինչպէս նաեւ 1894 թ. սեպտեմբեր №108, 1895 թ. հունվարի №3, 6 /18/), «Արմենիա»-յի, «Դրօշակի» 1893 թ., 1894 թ. համարների զգալի մասում լայնորեն լուսաբանված են Սասունի ապստամբության պատճառները, ընթացքն ու պարտության պատճառները, ինչպէս նաեւ դասերը: Վերը թվարկված հայ պարբերականների մեծ մասը նշում է, որ հնչակյանները գործուն մասնակցություն են ունեցել Սասունի հերոսամարտերին: Նրանցից առաջինը Միհրան Տամատյանն էր, որ 1891 թ. հաստատվելով Սասունում, նրանց մեջ քարոզեց Հայաստանի ազատագրության գաղափարը: Թեեւ 1893 թ. մայիսին թուրքերին հաջողվեց իրենց ձեռքը գցել Մ. Տամատյանին, բայց նրան փոխարինելու եկած գործիչները, որոնց մեջ հատկապէս աչքի էին ընկում Մեծ

Մուրադը (Համբարձում Պոյաճյանը), Հրայրը (Արմենակ Ղազարյան), Գեւորգ Չաուշը (Գեւորգ Ադամյան), Շենիկի տանուտեր Գրգոն (Գրիգոր Մոսեյան) եւ ուրիշներ իրենց վրա վերցրին Սասունի ազատամարտի հետագա կազմակերպումն ու ղեկավարումը⁶:

Վերոնշյալ պարբերականների 1891 թ. համարներում մշտապես կարելի է հանդիպել քրդական ցեղերի՝ դեպի Սասուն արշավանքների եւ հերոս լեռնականների ցուցաբերած կատաղի դիմադրության վերաբերյալ նյութեր (ոչ միայն Շենիկում, Սեմալում, այլեւ Ծովասարում, Գելիգուզանում, Վերին Խուլբում եւ Անդոքում)⁷: Թուրքական կառավարությունը, տեսնելով սասունցիների համառ դիմադրությունը, փորձեց խորամանկորեն ձեռքարկել ինքնապաշտպանության ղեկավարներին, սակայն դա նրան չհաջողվեց: 1892 թ. մայիսին «Հնչակ» թերթն արձանագրում է. «Յատուկ թղթատարով մի մեծ ու ծանր լուր հասաւ վերջին վայրկեանին՝ Հնչակեան յեղափոխական կուսակցութեան նախաձեռնութեամբ մայիսի առաջին օրերը Սասնոյ գաւառի եւ Մշոյ դաշտի մի քանի գիւղեր ապստամբել են կառավարութեան դէմ: Մի քանի անգամ Մուշից եւ Բաղէշից զօրքեր են ուղարկուել ապստամբների վրայ, բայց ջարդուել են»⁸: Թուրքական իշխանությունները Սասունում 1891—1892 թթ. լեռնականների դեմ, բացի քրդական ցեղերից, հանեցին նաեւ համիդիե հեծելազորային ջոկատներ ու ոստիկանական կանոնավոր ուժեր: Հետ մղելով բոլոր հարձակումները՝ սասունցիները հայտնվեցին օսմանյան պետության դեմ կիսապատերազմական վիճակում:

1894 թ. հունիսին սուլթանի հանձնարարությամբ Սասուն արշավող զորքերի ղեկավարությունն ստանձնեց Անատոլիական 4-րդ բանակի հրամանատար՝ արինոուշտ Զեքի փաշան: Նրա 12-հազարանոց թուրքական կանոնավոր զորքը հարձակման անցավ մի քանի ուղղություններով: Շուրջ երկու շաբաթ սասունցիները, չնայած իրենց փոքրաթիվությանը, հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքական զորքին ու քրդական խուժանին: Ըստ «Հնչակ» թերթի հաղորդումների, չկարողանալով արագ կերպով ընկճել սասունցիների դիմադրությունը, Զեքի փաշան դիմեց խորամանկության: Նա հաշտություն առաջարկեց սասունցիներին, որոնց մի մասը զենք-զինամթերքի եւ սննդի պակասության պատճառով որոշեց ընդունել առաջարկը: Զնայած Մուրադի, տանուտեր

⁶ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ, Սասունի պատմություն, Եր., 1985, էջ 181, 182:

⁷ Նույն տեղում, էջ 185:

⁸ «Հնչակ», 23-ը մայիս, 1892 թ.:

Գրքոյի, Տեր-Քաջի հորդորներին, չհավատալ կեղծ խոստումներին, մոտ 200 դյուրահավատ սասունցի օգոստոսի 15-ին լքեց դիրքերը եւ շարժվեց դեպի թուրքական բանակատեղի: Այստեղ նրանց շրջապատեցին ու սրի քաշեցին: Հակառակորդն անցավ նոր հարձակման: Անդոկի, Կեպինի եւ Տալվորիկի բարձունքներում սասունցիները վերջին մարտերը տվեցին թշնամուն, շատերը զոհվեցին հերոսի մահով: Նրանց կողքին ընկան նաեւ բացառիկ տոկունություն եւ անձնագոհություն ցուցաբերած սասունցի կանաչք: Խուսափելով թշնամու ձեռքն ընկնելուց՝ նրանցից շատերը գերադասեցին անդունդը նետվել: Օգնություն չակնկալելով որեւէ տեղից, մնալով միայնակ, օգոստոսի 24-ին Սասունն ընկավ: Սկսվեց խաղաղ բնակչության ջարդը, որն ըստ «Արձագանք» թերթի տվյալների կազմում էր 7 հազար մարդ⁹: Ձերբակալվեցին ու թուրքական բանտ նետվեցին Մուրադը, Գեւորգ Չաուշը եւ մի խումբ մարտիկներ: Մեծ տերությունների ճնշմամբ այս ամենին հաջորդեց բարենորոգումների մայիսյան ծրագիրը, որն այդպես էլ կյանքի չկոչվեց, եւ Հնչակյանների ղեկավարությամբ 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսում կազմակերպվեց Բաբ Ալիի (թուրքական կառավարության նստավայր) ցույցը: Այն, ըստ «Հնչակ» թերթի, ավարտվեց ամբողջ քաղաքում հայերի ընդհանուր ջարդով, որին զոհ գնաց մոտ երկու հազար մարդ¹⁰: Ցույցից հետո թուրքական կառավարությունը խստացրեց հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ, պատժիչ միջոցներ սկսեց կիրառել հայ ազատագրական պայքարի հետագա վերելքը կանխելու, հայոց զինյալ պայքարն արմատախիլ անելու համար: Սակայն նրա ծրագրերը չիրականացավ, քանզի պայթեց Զեյթունի 1895—1896 թթ. ապստամբությունը: Հայ ազատագրական պայքարի արժվաբույն Զեյթունն իր հերոսական մաքառման շնորհիվ կարողացել էր պահել ներքին ինքնուրույնությունը, որի հետ չէր կարողանում համակերպվել սուլթանական կառավարությունը: 1880-ական թթ. վերջերից նորից գործի էր դրվել Զեյթունը հայաթափելու եւ հիմնահատակ ավերելու, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճնշումների մի ամբողջական համակարգ: Հարկային ծանր լուծը, հայատյաց կառավարիչներ նշանակելը, հայ ազդեցիկ գործիչների նկատմամբ հալածանքներն ստեղծել էին պայթյունավտանգ վիճակ: «Մշակ» թերթը թարգմանաբար տպագրել է Հալեպի անգլիական հյուպատոսի վկայությունը, որ «Զեյթունում հայերի

⁹ «Արձագանք» 1894 սեպտեմբեր, №108, 18/30/, նույն տեղում, 1895, հունվար, №6, 6/18/:

¹⁰ Յավելուած «Հնչակի», №16, 1895:

վիճակը սոսկալի է աղքատության պատճառով: Երբ հնչակյան գործիչները հարաբերությունների մեջ մտան զեյթունցիների հետ, պարզվեց, որ իշխանությունները նրանց գործը խիստ հեշտացրել են, եւ ժողովուրդը պատրաստ էր դիմելու ապստամբության»: Սկզբնապես հնչակյան կենտրոնը ծրագրել էր մեծ ապստամբություն բարձրացնել եւ միաժամանակ ոտքի հանել Զեյթունի, Հաճնի եւ Դյորթ-Յուլի հայությանը, բայց դա չհաջողվեց: Ազատության դրոշը պարզեց միայն հպարտ Զեյթունը:

Լեռնականների ելույթին միասնական ու կազմակերպված բնույթ տալու գործում վճռական դեր խաղացին Զեյթուն ժամանած հնչակյան գործիչները՝ Աղասին (Կարապետ Թուր-Սարգսյան), Մլեհը (Ասատուր Տամդաճյան), Հրաչյա Մարալը (Գրիգոր Ղարիբյան), Ապահը (Պետրոս Գմբձյան), Զելլաթը (Կարապետ Ղրփանոսյան)¹¹: Նրանց նպատակն էր ապստամբությանը հաղորդել համաժողովրդական բնույթ: Այստեղ նրանք ստացան Ենիտունյան իշխանական գերդաստանի, հատկապես Նազարեթ Չաուշի անվերապահ աջակցությունը, որ հեղինակություն էր բոլոր զեյթունցիների համար: Վերջինիս նախաձեռնությամբ Մութ ձոր կոչվող վայրում 1895 թ. հոկտեմբերի 12-ին գումարված ժողովում որոշվեց կենաց ու մահու կռվի դուրս գալ թուրքական բռնակալության դեմ: Նույն այդ ժամանակ, ըստ «Մշակ» թերթի հաղորդած տեղեկության, Բ. Դուռը հարկադրում է հայոց պատրիարքին հեռագրով պայքարը դադարեցնելու կոչ անել, որը ժամանակ շահելու միջոց էր¹²: Հենց հոկտեմբերի 15-ին բախում տեղի ունեցավ կառավարական զորքերի հետ¹³: «Արձագանքի» (1895 թ. 5(18) նոյեմբեր, №128), «Մշակի» (1895, 1896 թ.), «Դրօշակի» (1896 թ.), «Հնչակի» (1895–1896 թթ.) համարների մեծ մասում բերվում է իտալական հյուպատոս Հենրիկոս Վիտոյի վկայակոչումն առ այն, թե ինչպես Սանդուխի ճակատամարտում հայերը փայլուն հաղթանակ տարան, թշնամուն պատճառելով 1000 զոհ, իսկ իրենք շատ քիչ կորուստներ ունեցան: Միաժամանակ վերոնշյալ թերթերի հոգվածագիրները զեյթունցիների ռազմավարական տաղանդն ու հերոսությունները, խիզախությունը եւ քաջությունը ընդգծելու համար շատ հաճախ բերել են բնորոշ դրվագներ, որոնցով այնքան հարուստ է Զեյթունի պատմությունը: Զեյթունի 1895–1896 թթ. ապստամբությունը վերլուծելիս նրանք

¹¹ Լ. ՄԿՐՏՁՅԱՆ, Զեյթունի ապստամբությունը 1895–1896 թթ., Երեւան, 1995, էջ 107:

¹² «Մշակ», 1896, 6 ապրիլի, №39:

¹³ Տես Հ. ՊՈՂՈՍՅԱՆ, Զեյթունի պատմություն, էջ 339:

այն դիտել են իբրեւ 1890-ական թթ. ազատագրական պայքարի իրադարձությունների տրամաբանական շարունակություն, հատկապես Սասունի 1894 թ. հերոսամարտի շարունակություն, որ ի տարբերություն նախորդի, ավարտվեց հաղթանակով¹⁴:

Վերոնշյալ պարբերականներից իմանում ենք, որ 1895 թ. հոկտեմբերի 18-ի առավոտյան զորանոցը հանձնվել է, թուրքական ամբողջ կայազորը գերվել է: Ձորանոցի վրա բարձրացել է ապստամբ Ջեյթունցիների կարմիր դրոշը՝ «Ջեյթունի անկախ իշխանություն» մակագրությամբ: Նույնիսկ ստեղծվել է հեղափոխական ժամանակավոր կառավարություն՝ Աղասու նախագահությամբ: Շուտով չերքեզ Մուստաֆա Ռեմզի փաշայի հրամանատարությամբ թուրքական արեւելյան բանակը Մարաշից, իսկ Ալի բեյի գլխավորած արեւմտյան բանակը Ադանայից 30 հազար զինվորներով եւ անկանոն զորամասերով, լեռնային հրանոթներով շարժվեցին Ջեյթունի վրա: Դեկտեմբերի 2-ին թուրքական բանակները հարձակման անցան, սակայն անհաջողություններ կրեցին, իսկ մարտերից մեկի ժամանակ վիրավորվեց Ռեմզի փաշան: Թուրքերը նույնիսկ դեկտեմբերի 23-ին գրավեցին զորանոցը, բայց այլեւս չկարողացան առաջ շարժվել: Ետ մղվեցին նաեւ Ռեմզի փաշային փոխարինած էդհեմ փաշայի գրոհները: Ջեյթունի իրադարձությունները գնալով ավելի մեծ հնչեղություն էին ստանում՝ Բ. Դուան համար անհետաձգելի դարձնելով հարցի կարգավորումը:

Մեծ տերությունների միջնորդությամբ 1896 թ. հունվարի 30-ին Բ. Դուան եւ Ջեյթունի ապստամբների միջեւ ստորագրվում է 5 կետից բաղկացած մի համաձայնագիր, որով համաներում էր հռչակվում: Հնչակյան գործիչները պետք է պետության ծախսով հեռանային Ջեյթունից, պետք է վերադարձվեր զենքն ու զինամթերքը, պետք է կրճատվեին հարկերը եւ Ջեյթունում պետք է քրիստոնյա կառավարիչ (գալմազայմի) նշանակվեր: Թուրքական բանակը պետք է հեռանար Ջեյթունից՝ այնտեղ թողնելով միայն մեկ զորամաս¹⁵:

Հնչակյան մամուլը լայնորեն արձագանքեց այս իրադարձություններին, այն համարելով մեծ հաղթանակ, որը «ոգեւորութեան հզօր աղբիւր հանդիսացաւ, ցոյց տուեց, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանական

¹⁴ Տե՛ս «Մշակ», 1896, 4 մայիսի, №51, 21 մայիսի, №58, 30 մայիսի, №62, 6 հունիսի, №65, 15 հունիսի №69:

¹⁵ Տե՛ս «Հնչակ», 1896, №3:

բնագրը դեռեւս արթուն է, իսկ նրա ոգին ստրկացած չէ ու տեւական պարտութիւններից յետոյ էլ այն ընդունակ է ըմբոստանալու ու յաղթանակներ տանելու»¹⁶։ «Հնչակ» թերթը, որը մարտերի եռուն շրջանում լայն քարոզարշավ էր ծավալել ի նպաստ զեյթունցիների, այժմ՝ հաղթանակից հետո, իր էջերում տպագրում էր հողվածներ ու հաղորդումներ, որտեղ լուսաբանվում էին ապստամբության հետ կապված բազմաթիվ դեպքեր ու մանրամասներ։ Միաժամանակ պետք է նշել, այն իրողությունը, որ անկողմնակալ լրատվության հետ մեկտեղ, «Հնչակը», կուսակցության հեղինակությունը բարձրացնելու միտումով, երբեմն ընկնում էր ծայրահեղությունների մեջ։ Օրինակ՝ 1896 թ. ապրիլի 15-ի համարում «Հնչակը» չափազանցված է ներկայացնում թուրքերի ու քրդերի զոհերի թիվը։ Ըստ նրա՝ Զեյթունի ապստամբության 4 ամիսների ընթացքում թշնամին տվեց ավելի քան 13 հազար սպանված։ Անշուշտ չափազանցություն է եւ այն, որ Ռեմզի փաշան ուներ 110 հազարանոց բանակ¹⁷։ Փաստորեն Զեյթունի ապստամբությունը ցույց տվեց, որ ժողովրդական համաձայնության, կամքի ուժի, ոգու արիության ու խիզախության միաժամանակյա դրսեւորումը կարող է աննախագեպ արդյունքների հասցնել։

1890-ականների կեսերի հայ ազատագրական շարժման առավել արտահայտիչ դրվագներից է 1896 թ. Վանի ինքնապաշտպանությունը, որի վրա հատուկ ուշադրություն է դարձրել ժամանակի հայ մամուլը¹⁸։ Հողվածագիր հեղինակները միշտ ընդգծել են 1896 թ. իրադարձությունների բացառապես ինքնապաշտպանական բնույթը, եւ որ վանեցիները զենքի դիմեցին՝ նպատակ ունենալով խուսափել համընդհանուր կոտորածից։

Վանի պաշտպաններին առաջնորդում էին Մկրտիչ Ավետիսյանը, Պետոն, Մարտիրը եւ ուրիշներ։ Վեց օր շարունակ հերոսաբար դիմադրելով հարձակվող մեծաքանակ զորքերին ու համիդիե գնդերին՝ քաջարի վանեցիներն ի վերջո համաձայնեցին՝ զինաթափվելու եւ քաղաքից դուրս հեռանալու Անգլիայի հյուպատոսի առաջարկին։ Սակայն Պարսկաստան տանող ճանապարհին շրջապատվեցին համիդիե զինվորների եւ քուրդ հրոսակների կողմից եւ անձնուրացաբար կռվելով նահատակվեցին. փրկվեց միայն 30—35 հոգի։ Վերոնշյալ հողվածներում հավուր պատշաճի

¹⁶ Նույն տեղում։

¹⁷ Հնչակ, 1896, №8։

¹⁸ Տե՛ս «Դրօշակ», 1896 թ. №13, 19, 22, 23, «Արձագանք», 1997 թ., հունվար 13, «Արմենիա», 1996 թ., օգոստոսի 19, սեպտեմբերի 23, հոկտեմբերի 7, նոյեմբերի 7, 1897, մայիս 19, «Անահիտ», 1899 թ., №1, «Հնչակ», 1896 թ. որոշ համարներ։

մերկացվում են եւրոպական տերությունների դիվանագիտական խարդավանքները, այդ թվում անգլիացի հյուպատոսի խոստումը դրժելու փաստը, բացահայտվում նրանց մեղսակցությունը հայկական սարսափելի ջարդերին: Բերվում են նաեւ բազմաթիվ ազդեցիկ հատվածներ համաշխարհային ճանաչում վայելող անհատներին՝ ի պաշտպանություն արեւմտահայության՝ համակրական ելույթներից, որոնք սակայն, ըստ էության ոչնչով չօգնեցին ցեղասպանվող ժողովրդին: Ի պատասխան Վանի ինքնապաշտպանության մասնակիցների կոտորածներին՝ 1897 թ. հունիսի 25-ին 253 դաշնակցական մարտիկներից բաղկացած արշավախումբը Վարդանի, Իշխանի (Հովսեփ Արղունյան), Նիկոլ Դումանի եւ այլոց գլխավորությամբ, վրեժխնդիր ոգու պոռթկումով առաջնորդվելով, Ատրպատականից անցավ թուրք-պարսկական սահմանը եւ Խանասուրի դաշտում հարվածեց Շարաֆ բեկին՝ քրդական մազրիկ ցեղին: Այդ ցեղը մեկ տարի առաջ աշխույժ մասնակցություն էր ունեցել դեպի Պարսկաստան նահանջող Վանի ինքնապաշտպանության մասնակիցներին կոտորելիս: Լուրջ կորուստներ պատճառելով մազրիկ ցեղին եւ կռվի բռնվելով հարեւան քուրդ աշիրեթների հետ՝ արշավախումբը նահանջելով վերադարձավ Պարսկաստան: Պարբերականները մեկ տարի անց իրենց առանձին համարներում ընդգծելով, որ արշավախմբի առջեւ դրված հիմնական ռազմական խնդիրը՝ մազրիկ ցեղի ցեղապետի եւ արյունարբու բեկերի ոչնչացումը չիրականացավ, սակայն այն նոր լիցք հաղորդեց անկում ապրող ազատագրական պայքարին: Հայ մամուլի տված տեղեկություններից պարզվում է, որ դարավերջին հայոց ազատագրական պայքարի մարտավարության մեջ փոփոխություն կատարվեց: Հայկական հարցի, հատկապես Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի վրա եւրոպական երկրների ուշադրությունը գրավելու նպատակով, որոշվեց դիմել զինված միջամտության, որն սպառնալիքի տակ կոչներ եւրոպայի շահերը եւ կստիպեր սուլթանական իշխանությանը զիջման գնալ: Նման ձեռնարկ էր 1896 թ. օգոստոսի 14-ին դաշնակցական 26 մարտիկներից բաղկացած խմբի գործողությունը՝ Բաբկեն Սյունու գլխավորությամբ, որը գրոհեց Օսմանյան դրամատունը՝ գրավելով այն: Նա զոհվեց, սակայն գործողության մասնակիցները դրամատունը տասներեք ժամ պահեցին իրենց ձեռքում: Սպառնալիքն ավելի քան ազդեցիկ էր, որը լուծվեց միայն Կ. Պոլսի ռուսական դեսպանության միջամտության շնորհիվ, որը ժխտողական վերաբերմունք ուներ նույն ձեռնարկի նկատմամբ: Չնայած

ձեռնարկի մասնակիցներն անարգել հեռացան Թուրքիայից, սակայն այն թանկ նստեց պոլսահայության վրա, որոնք Աբդուլ Համիդի կարգադրությամբ ենթարկվեցին կոտորածի:

1894—1896 թթ. իրադարձությունները հայ ազատագրական պայքարի բարձրակետն էին: Թեև դրանք միջազգային սպասված արձագանքը չունեցան, բայց ակնհայտ դարձավ, որ Օսմանյան կայսրությունում հայոց ազատագրական շարժումը դարձել է ռազմաքաղաքական լուրջ գործոն, որը հնարավոր չէ անտեսել: Աբդուլ Համիդը հարկադրված էր բանակցություններ սկսել հայ ազգային կուսակցությունների հետ:

ԺԹ. դարավերջին, 1898 թ. իր երկրորդ ընդհանուր ժողովում Դաշնակցությունը փոխեց ազատագրական պայքարի իր մարտավարությունը: Հրաժարվելով հայդուկային կռիվների մարտավարությունից ՀՅԴ-ն անցավ ընդհանուր ապստամբության համար երկրի ուժերի կազմակերպմանը: Ընդ որում, բուն երկրում մարտական ուժերի ու ռազմամթերքի կենտրոնացման վայրեր են ընտրվում Վասպուրականն ու Սասունը, որտեղ դրա համար կային առավել նպաստավոր պայմաններ: Նման մարտավարություն էին որդեգրել նաև Հնչակյան եւ Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները:

Ոգեւորված հայ ազատագրական պայքարի ժամանակավոր դադարից եւ հայոց ազատամարտի նոր մարտավարությունն ընկալելով որպես նրա թուլության եւ պարտության նշան՝ թշնամին ամենուրեք հարձակման էր անցել: Մատնությունների հետեւանքով նահատակվեցին Վասպուրականի եւ Տարոն-Սասունի ազատագրական պայքարի վերջին տարիների ճանաչված առաջնորդներ Վազգենը (1898 թ. հունվար), Գուրգենը (Բաղդասար Մալյան, 1899 թ. ապրիլ) եւ Աղբյուր Սերոբը (Սերոբ Վարդանյան, 1899 թ. հոկտեմբեր): Նրանց փոխարինելու եկան Անդրանիկն ու Գեւորգ Չաուշը: Հայկական պարբերականները («Հնչակ», «Դրօշակ», «Մշակ», «Վան-Տոսպ», «Նոր դար», «Հայրենիք»), անդրադառնալով այս կարեւոր իրադարձություններին, միաժամանակ ներկայացնում են նաեւ Բիթլիսցի Մուշեղի, Առաքելի, Մակարի եւ այլոց քաջագործությունները, հատվածներ են բերվում նրանց նվիրված երգերից: Այս պարբերականները միաժամանակ վկայում են, թե ինչպես իշխանությունների ակնհայտ հովանավորությամբ ուժեղացան հայերի նկատմամբ քրդական աշիրեթների ճնշումները, առավել ծանրացան տուրքերը, հաճախակի դարձան թալանը, սպանությունները,

հողերի բռնագրավումները, հայերի աքսորումն իրենց բնակավայրերից ու դրանք մուհաջիրներով (Բալկաններից գաղթեցված մահմեդականներ) բնակեցնելը: Զբաղարարվելով դրանով, կառավարությունը, իբրև ապահովության համար, հայկական գյուղերը լցնում էր զորքերով, որոնք ապրելով հայերի հաշվին՝ պատուհաս էին դառնում նրանց համար: Ամեն ինչ արվում էր՝ արմատախիլ անելու հայ ազատագրական շարժումը: «Ստեղծուել էր յուսահատական մի վիճակ,— 1899-ին գրում էր «Մշակը»,— որը երբեմն ժողովրդին դրդում էր ամենածայրայեղ քայլերի»¹⁹: Գործը նույնիսկ հասավ նրան, որ 1901 թ. Տարոնի հայություն մեջ զանգվածաբար ուղղափառություն եւ այլ դավանանքներ ընդունելու շարժում սկսվեց եւ համապատասխան դիմումներ ուղղվեցին Վանի ռուսական հյուպատոսին:

Նման պայմաններում ազատագրական շարժման մեջ խիստ դժվարանում էր հայդուկային պայքարի մարտավարության հաղթահարումը եւ դրանց լիովին հրաժարումը: Եթե ժողովրդական ապստամբության կազմակերպման կողմնակիցները (ի դեմս Հրայրի (Սասուն-Տարոն), Վարդգեսի (Վասպուրական) եւ նրանց համախոհների), խուսափելով աղմուկից, անիմաստ համարելով մանր կռիվներն ու բախումները՝ ջանքեր էին գործադրում ժողովրդական զանգվածներին կազմակերպելու, զինելու եւ ընդհանուր ապստամբության պատրաստելու համար, ապա հայդուկային պայքարի մարտավարության նախընտրողները (ի դեմս Անդրանիկի (Անդրանիկ Օզանյան), Գեւորգ Չաուշի ու նրանց համախոհների) փորձում էին վրեժխնդրական խիզախ ձեռնարկումներով կանխել բռնությունները, ոգեւորել ժողովրդին եւ նրան դուրս բերել յուսահատական վիճակից:

Մարտավարական երկու գծերի հակադրությունը Տարոն-Սասունում շարունակվում է մինչեւ 1902 թ. գարուն, երբ որպես Դաշնակցության լիազոր Սասուն է հասնում Վահանը (Վահան Մանվելյան): Վահանաի ժամանումը նպաստում է Հրայրի եւ հայդուկների միջեւ տեղի ունեցող վեճերի դադարեցմանը: «Մշակ»-ի, «Դրօշակի» եւ «Անահիտ»-ի, 1901 եւ 1902 թթ. համարների մեծ մասում ներկայացվեց եւ լայն արձագանք ունեցավ Աղբյուր Սերոբի սպանությունն իրականացրած եւ ընդհանրապես Սասունի հայության դահիճ, քուրդ ցեղապետ Բշարե Խալիլի ահաբեկումը՝

¹⁹ «Մշակ», 1899, 21 մայիսի, №142:

մեծ ճանաչում բերելով Անդրանիկին եւ բարձրացնելով նրա հեղինակությունը ազատագրական կռիւների մարտիկների շարքերում²⁰:

Այդ նույն պարբերականները ընդգծում են, որ դարասկզբին հայդուկների մղած կռիւներից ամենանշանավորը եւ ամենահերոսականը Սբգ. Առաքելոց վանքի կռիւն էր՝ Անդրանիկի գլխավորութեամբ: Ունենալով ցուցադրական-քարոզչական բնույթ՝ նրա նպատակն էր ժողովրդին դուրս բերել հուսահատական վիճակից եւ կրկին անգամ մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել արեւմտահայությունյան խնդրի վրա:

1901 թ. նոյեմբերի սկզբին Անդրանիկն ու Գեւորգ Զառւշը շուրջ 30 հայդուկի եւ մոտ 20 զինված գյուղացիների հետ մտնում են Մուշից ոչ հեռու գտնվող Սբգ. Առաքելոց վանքը եւ այն վերածելով ինքնապաշտպանական ամրոցի՝ կռիւներ են սկսում վանքն անմիջապէս պաշարած թուրք-քրդական մեծաքանակ ուժերի դեմ: Վանքը գրավելու վերջիններիս փորձերն ապարդյուն են անցնում: Կռիւների 11-րդ օրը թուրքական զորքերի հրամանատարությունն ստանձնած Բիթլիսի նահանգապետը բանակցություններ է սկսում՝ հայդուկների պահանջներն իմանալու համար: Ցանկանալով վերջ տալ իրենց համար անցանկալի կռիւն՝ իշխանությունները պատրաստ էին անգամ որոշ զիջումներ անելու: Նրանց հետ բանակցություններ վարող Անդրանիկը, Գեւորգ Զառւշն ու Հակոբ Կոտոյանը ներկայացնում են հետեւյալ պայմանները. Ներում շնորհել քաղաքական բանտարկյալներին, տասանորդի տուրքը հավաքել իրենց՝ գյուղացիների միջոցով, զինաթափ անել ու պատժել հայկական գյուղերն ավերող քրդական զինված հրոսակախմբերը, հայերին վերադարձնել նրանցից զավթված հողերը, վերացնել հայերից տուրք գանձելու քուրդ ցեղապետերի իրավունքը եւ այլն: Այս պահանջներից մասամբ բավարարվում է միայն առաջինը, ուստի կատաղի կռիւլ վերսկսվում է: Թուրքական բանակում շուտով համաճարակ է բռնկվում, մյուս կողմից՝ պաշարվածների զինամթերքն սպառվում է: Վերջին հանգամանքն ստիպում է, որ նոյեմբերի 27-ի գիշերը հայդուկները, սպիտակ սավաններով փաթաթված, աննկատ հեռանան վանքից: Սբգ. Առաքելոց վանքի կռիւլ մեծ տպավորություն է թողնում Տարոնի ու Սասունի հայություն վրա: Միաժամանակ արձագանք գտնելով արտասահմանյան մամուլում, այն նոր թափ է հաղորդում արտաքին քարոզչությանը:

²⁰ «Մշակ», 1901, 16 սեպտեմբերի, №215, «Անահիտ», 1902, №8, «Դրօշակ», ապրիլ, 1902, թիւ 4 (124), «Հնչակ», 1902, մայիսի, №2:

«Դրոշակ»-ի, «Հորիզոն»-ի, «Մշակ»-ի եւ «Հայրենիք»-ի համարներում տպագրված հոդվածների հեղինակները եզրակացնում էին, որ Սբց. Առաքելոց վանքի կռիվը, ժողովրդի բուռն դժգոհության հետեւանքով Սասունում թուրքական զորանոցի կառուցման փորձի ձախողումը եւ նմանատիպ այլ իրադարձություններ վկայում էին հայ ազատագրական պայքարի աշխուժացման մասին²¹։ Թեեւ Վահան Մանվելյանի Սասուն ժամանելուց հետո 1902–1903 թթ. հայդուկային գործունեությունն առերեւոյթ դադարում է, եւ շուրջ երկու տարի արտաքին հանգստության քողի տակ կազմակերպչական եռանդուն գործունեություն է ծավալում Հրայրը, սակայն նրա ծրագրերը կիսատ են մնում։ Իշխանությունների համար գնալով ակնհայտ է դառնում այն վտանգը, որ ներկայացնում է Սասունը։

1902 թ. սկսած՝ կառավարությունն ուժեր է կենտրոնացնում Սասունի մատուցներում՝ նպատակադրվելով կանխել վերահաս ապստամբությունը։ Հետեւելով Սասունում ծավալվող դեպքերին՝ հայությունը նույնպես բնազդով զգում է այն վճռորոշ նշանակությունը, որ ստացել էր Սասունը հայոց ազատամարտի համար։ Ակնհայտ էր, որ այստեղ էր որոշվելու հայոց ազատագրական պայքարի ապագան։ Հատկապես կովկասահայության շրջանում ծավալվում է Սասունին օգնելու շարժում։ Այդ նպատակով վերադարձ է կատարվում զինված արշավախմբերի կազմակերպման գործեակերպին, որից հայ ազատագրական շարժումը նախորդ տարիներին առժամանակ հրաժարվել էր։ Դրանցից առաջինը Թորգոմի՝ «Մրրիկ» ձիավոր խումբն էր, որ դուրս գալով Կարսից եւ հաղթահարելով մեծ դժվարություններ՝ 1903 թ. ամռան սկզբներին անվնաս հասավ Սասուն՝ խիստ բարձրացնելով ժողովրդի մարտական ոգին։ Փորձառու եւ ընտիր մարտիկներից բաղկացած այդ խմբի հայտնվելը Սասունում բացահայտ մարտահրավեր էր իշխանություններին, որոնք շտապում էին օղակի մեջ առնել Սասունը՝ այն համարելով ապստամբ շրջան։ Վերոնշյալ պարբերականների տեղեկատվության համաձայն կառավարությունը Սասունի դեմ արշավանք սկսեց 1904 թ. գարնանամուտին։ Թուրքական 10 հազարանոց բանակը գլխավորում էր ռուս-թուրքական նախորդ պատերազմում հռչակված Քեոսե բինբաշին։ Բացի կանոնավոր զորքերից Սասունի դեմ դուրս բերվեցին նաեւ մի քանի հազար զինված քրդեր։

²¹ «Դրոշակ», հունվար, 1901, թ. 1(112), «Հորիզոն», Թիֆլիս, 1912, 11 նոյեմբերի, «Մշակ», ապրիլ, 1901, №215, «Հայրենիք», հունիսի 25, 1904, թ. 259:

Նրանց դիմագրավում էին միայն 200 փորձված հայդուկներ եւ շուրջ 800 զինված սասունցիներ:

«Դրօշակ»-ի եւ «Հնչակ»-ի 1904 թ. համարներում շարադրված բազմաթիվ հոդվածներ վկայում են, որ 1904 թ. ապրիլի սկզբներին հակառակորդը վճռական գրոհի անցավ: Իրենց համար հենակետեր ընտրելով Տափըք, Գելիեգուզան, Շենիկ, Իշխնձոր եւ Տալվորիկ գյուղերը՝ սասունցիները համառ դիմադրություն ցույց տվեցին: Ապրիլի 11-ին հատկապես կատաղի կռիվներ տեղի ունեցան Շենիկի ճակատում, որտեղ Թուրքական հեծելազորը, հանդիպելով հայերի համառ դիմադրությանը, ստիպված էր նահանջել: Առաջին անհաջողություններից հետո Թուրքական հրամանատարությունը ապստամբության ղեկավարներին առաջարկեց զենքը վայր դնել: Որպես պատասխան Անդրանիկն ու Հրայրը հայտարարեցին, որ զենքը վայր կդրվի 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի իրականացման դեպքում: Թուրքական կողմը վերսկսեց հարձակումը: Ապրիլի 13-ի կատաղի կռիվներում զոհվեց Հրայրը: Անդրանիկի, Գեւորգ Զառլի եւ Սեբաստացի Մուրադի մարտիկների անձնուրաց գրոհները, սակայն ստիպեցին թշնամուն մեծ կորուստներ տալով դարձյալ լքել մարտադաշտը: Կենտրոնական ճակատում՝ Գելիեգուզան գյուղի դեմ թշնամին 12—14 հրանոթ դուրս բերեց: Սկսվեց Գելիեգուզանի մեծ կռիվը: Թեեւ ապրիլի 19-ի անհավասար մարտը եւս հաջողություն չբերեց թշնամուն, բայց ապրիլի 20—22-ը նա շարունակում էր համառ գրոհները՝ մեծ զոհերի գնով քայլ առ քայլ գրավելով հայկական դիրքերը: Ապստամբության ղեկավարների համար պարզ էր, որ հնարավոր չէ երկար դիմադրել՝ բավարար զենք ու զինամթերք չունենալու պատճառով: Անհրաժեշտ էր մտածել անգն ժողովրդին կոտորածից փրկելու մասին:

Վահանի հրահանգով Սեբաստացի Մուրադը, 115 զինյալների հետ կռիվներով ճանապարհ բացելով, Սասունի անգն բնակչությանը եւ վիրավորներին իջեցնում է Մշո դաշտ՝ խնդիր ունենալով այդ ընթացքում նաեւ զինամթերք ձեռք բերել՝ պայքարը շարունակելու համար: «Դրօշակ»-ի եւ «Հայրենիք»-ի, «Ազատամարտ»-ի եւ «Հորիզոն»-ի համարներում²² նշվում է, որ Գելիեգուզանից հետո ապրիլի 23-ին ընկավ նաեւ Տալվորիկը, բայց դրանից հետո էլ Անդոքի եւ Քեփինի բարձունքներում

²² «Դրօշակ», 1904, թիվ 4—5, (145—148), թիվ 8, էջ 110, թիվ 9, էջ 84, «Հայրենիք», 1904, հունիսի 25, թիվ 259, «Հորիզոն», Թիֆլիս 1910, №144, «Ազատամարտ», Թիֆլիս, 1917, 29 սեպտեմբերի:

ապստամբները 8–10 օր շարունակում էին անհավասար կատաղի մարտերը թուրքական զորքերի դեմ: Կռիվները տեւեցին մինչեւ մայիսի կեսերը: Թշնամին, տիրանալով Սասունին, հաշվեհարդար տեսավ այնտեղ մնացած խաղաղ բնակչության հետ՝ ավերի ու թալանի ենթարկելով, ամայացնելով գյուղերը: Պահը հարմար գտնելով՝ սուլթանը ցանկանում էր Սասունի հայությանը մշտապես բնակեցնել Մշո դաշտում, բայց, ի վերջո, տեղի տալով սասունցիների սպառնալիքներին ու մեծ տերությունների հյուպատոսների միջամտություններին, նա հարկադրված էր հրաժարվել այդ ծրագրից»²³:

«Դրօշակ»-ի, «Մշակ»-ի, «Վան-Տոսպ»-ի, «Արարատ»-ի եւ «Հայրենիք» օրաթերթի²⁴ հաղորդումներից պարզվում է, որ Սասունի անկումով պայքարը չդադարեց: Կռիվների ասպարեզ դարձավ նաեւ Մշո դաշտը: 1904 թ. մայիս-հուլիս ամիսներին, պարտիզանական մարտավարությանն ապավինելով՝ հայդուկները տասնյակ մեծ ու փոքր կռիվներ մղեցին թուրք-քրդական կանոնավոր ու անկանոն զորամասերի դեմ: Նրանց գործողությունները հատկապես աշխուժացան Վասպուրականից զինամթերքի զգալի պաշարով Սեբաստացի Մուրադի վերադառնալուց հետո: Բերդակի, Մկրագոմի, Դերիկի, Գոմբրի, Դերգեվանքի, Գոմսի եւ հատկապես Կուրավուրի կռիվները, թեեւ հերոսական էին եւ հարյուրավոր զոհեր խլեցին թշնամուց, բայց այլեւս չէին կարող փոխել իրադարձությունների ընթացքը:

Սասունի 1904 թ. ապստամբությունը հայոց զինյալ պայքարի վերջին զանգվածային պոռթկումն էր Արեւմտյան Հայաստանի տարածքում: Չնայած գործադրված ճիգերին՝ այն մնաց մեկուսացված եւ չվերաճեց համազգային ապստամբության: Այդ պայմաններում կրկին առաջնային նշանակություն ձեռք բերեց ժողովրդին կազմակերպելը, նրա ուժերը համախմբելը եւ ապագա ելույթներին նախապատրաստելը, որը շարունակվեց ընդհուպ մինչեւ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը:

Այսպիսով հայ պարբերական մամուլը սկսած ԺԹ. հարյուրամյակի երկրորդ կեսից մինչեւ Ի. դարասկիզբը հանգամանորեն ներկայացրել է հայոց ազատագրական պայքարն իր բոլոր փուլերով՝ դառնալով հայոց ազատամարտի պատմության համար լավագույն սկզբնաղբյուր:

²³ Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ, Ազատագրական շարժումները Արեւմտյան Հայաստանում, (1898–1908 թթ.), Երեւան, 1999, էջ 133:

²⁴ «Մշակ», 1908, №35, «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, №12, էջ 8–9, №13, էջ 6–7, «Արարատ», էջմիածին, 1908, , №3, «Հայրենիք», 1905, մարտի 4, «Դրօշակ», Թիֆլիս, 1904, թիւ №9, էջ 123, 1905, թիւ №12, էջ 24:

РЕЗЮМЕ

В статье освещается отклик армянской прессы на восстание Зейтуна в 1862 году, которое было первым шагом осуществления идеологии освободительной борьбы армянского народа начавшейся со второй половины XIX века. Армянские периодические издания, такие как «Мегу», «Цахик», «Масис», «Восточная пресса», «Западная пресса», «Аракс», «Крунк Армении», «Пундж», «Мегу Армении», «Базмавеп», «Арцив Васпуракани» печатали статьи, мемуары, сообщения.

С помощью критического анализа статей в армянских периодических изданиях, которые являлись первоисточниками, выявляются и показываются отважные протесты и бои армянского народа, роль тайных патриотических отрядов в истории освободительной борьбы армян в 1870—1880 годах.

Особое внимание уделено героическим боям в Малой Армении, в Тароне, Зейтуне, Сасуне а так же двуликой политике европейских государств по отношению к освободительным движениям армян.


В периодических изданиях детально обсуждались вопросы освободительной борьбы, политических связей и отношений того времени. Вышеупомянутые журналы, а также партийная пресса, такие как «Дрошак», «Гнчак», «Армения», «Азатамарт», «Горизонт», «Айреник» представляли самые важные эпизоды, которые имели решающее значение в жизни и борьбе за свободу в Западной Армении, такие как самооборонные бои в Ване в 1878 и 1896 годах, в Тароне в 1878 году, в Зейтуне в 1876—1878 и 1895—1896 годах, в Сасуне в 1891—1894 годах и в 1904 году.


SUMMARY

The article elucidates the responses of the Armenian press to the rebellion of 1862 in Zeitun against the Turkish tyranny, which was the first step of implementing the liberation ideology of the Armenians, which started in the second half of the 19th century. The Armenian periodicals “Meghou”, “Tsaghik”, “Massis”, “Eastern press”, “Western press”, “Araks”, “Krounk of Armenia”, “Pounj”, “Meghou of Armenia”, “Bazmavep”, “Artsiv Vaspourakani” published articles, memoirs, reports and so on.

The critical analysis of these articles, which serve as primary sources reveals the brave revolts and self-defensive fights of the Armenian people, the role of secret groups and organizations, as well as of volunteer groups in the history of the liberation movement in 1870–1880s. Special attention is paid to the heroic fights in Armenia Minor, Taron, Zeitun, Sassoun, as well as to the hypocritical policy of European countries toward these Armenian liberation movements.

The article states that the above mentioned periodicals together with the party press, such as “Droshak”, “Henchak”, “Armenia”, “Azatamart”, “Horizon”, “Hayrenik”, touched upon the most important and crucial events in Western Armenia, particularly the heroical episodes of self-defensive combats in Van in 1878 and 1896, Taron in 1878, Zeitun in 1876–1878 and 1895–1896, Sassoun in 1891–1894 and in 1904.





ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆ

Փիլիսոփայական գիտ. դոկտոր, ՄՄ

ՆՈՐԱՅԱՅՏ ԻՍՅ ՄԱՏԵՆԱԳԻՐ «ՓԻԼՈՎՆ»-Ը ԵՒ ՆՐԱ ՃԱՈՐ

Պեռագրերի ուսումնասիրությունը միշտ էլ կարող է հետազոտողին հաճելի անակնկալ մատուցել: Դրա հավանականությունը մեծ է հատկապես լիովին չուսումնասիրված հայերեն ձեռագրերի պարագային: Այդ է հաստատում տարաբնույթ ժողովածուներում, մասնավորաբար Ճառընտիրներում, Տոնապատճառներում ամբարված նյութի ուսումնասիրումը, ինչը թույլ տվեց նկատել հետեւյալ մատենագրական միավորը, որն արձանագրված է ՄՄ հայերեն ձեռագրերի ցուցակներում. «Խաւաք Փիլովնի. Հարցումն վասն փողոյն, եթէ զինչ է փողն, որ հարկանի» վերնագրով: Ճառում Ս. Գրիգոր Լուսավորչի անունով բերված վկայության փաստն ինքնին ցույց է տալիս, որ գործ ունենք ոչ թե թարգմանական, այլ ինքնուրույն մատենագրության պատկանող մի գրության հետ: Երկի միակ ընդօրինակությունը պահպանվում է թիվ 948 ձեռագրում, որ ԺԲ. դարից է: Այս փաստը ենթադրում է, որ ճառի խորագրում հիշված «Փիլովն»-ը ապրել է ԺԲ. դարից առաջ: Երկը բովանդակում է Ավագ շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար նախատեսված ծիսական ընթերցումների ընդհանուր վարդապետական բացատրությունը: Քանի որ Ավագ շաբաթվա բուն խորհուրդը միտված է ապագային, ուստի ճառը սկսվում է վախճանաբանական խորհրդածությամբ: Ահեղ դատաստանի սկիզբն ազդարարող փողի ձայնը լսելի է ոչ թե բոլորին, այլ՝ բացառապես նրանց՝ «որք խոստովանին զՔրիստոս»: Դանիելի մարգարեության համապատասխան գրվագի (Դան. է. 9) վկայիչումով աստվածաբան հեղինակը ցույց է տալիս, թե Որդու իրականացնելիք դատաստանին նախորդում է Հոր դատաստանը: Այնժամ հարություն են առնելու Մովսեսն ու Ահարոնը, եւ կարգալու են տախտակների վրա արձանագրված օրենքները,

իսկ մարգարեները մարգարեանալու են իրենց մարգարեությունները, եւ քահանաները հաշվետու են լինելու իրենց կատարած գործերի մասին: Մարգարեների խոսքերը խորհրդաբանորեն նույնացված են աղամորզու մեղքերի խոստովանությանը:

Ճառում տեղ գտած որոշ բացատրություններ ընդհանրության մասնակի եզրեր են հայտնաբերում սուրբգրային մեկնության հարուստ ավանդույթի հետ: Հստ այսմ Ավագ շաբաթվա օրերի խորհուրդը բացատրելիս հեղինակը դիմում է այդ ավանդույթի մեջ կարեւորագույն տեղ զբաղեցնող այլաբանական, տիպաբանական մեկնության եղանակին: Այսպես, երեքշաբթիին ընթերցում են Նոյի պատմությունն ընդգրկող դրվագը, որի լուսաբանությունը կատարվում է Առակաց Թ. 1—3 տեղիի օգնությամբ. «Շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն. յայտ է, թէ եւթն սիւն զեղծն շաբաթ սրբոց Քառասնորդացն ասէ: Եւ տուն կոչէ զեկեղեցին եւ զհեթանոսս: Եւ որ ասեն. զէն զէնիս իւր եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր: Այս ընթերցումսն առակախաւսս Սողոմոն զՈրդոյն Աստուծոյ ի վերայ խաչին ասէ եւ ի վերայ սեղանոյն: Եւ որ ասէ. խառնեաց ի խառնելիս զգինի իւր. քանզի առեալ զբաժակն արհնեաց եւ ետ աշակերտացն իւրոց: Եւ որ ասէ. Առաքեաց զճառայս իւր, կոչեաց ի ճաշ իւր: Արդ, ո՞ր են ծառայքն, թէ ոչ մարգարէքն եւ առաքեալքն...»: Համամ Արեւելցու Առակաց մեկնության մեջ կարդում ենք. «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն. Արդ, բունն հարէք զբանէս, որ է «Քրիստոս Աստուծոյ զարկութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն». եւ նորա շինած տուն իմանի երկին եւ երկնից երկին համ այն եւ աշխարհս բնակչաւք, զորս անպատում իմաստութեամբն շինեաց, յորում բնակէ անճառ Սուրբ Երրորդութիւն: Եւթն սիւնս, որ ասէ, թէ կանգնեաց յերկինս ի վեր, այսինքն՝ թիւն եւթանց կամարս եւ խորանս իմանալի եւ աւանք յախտենականք: Եւ յերկրի աստ զնշանաւ թիւս հագարացն ի դարագրութիւնս իմանամք ի սկզբնէ եւթն, ըստ նմանութեան անշարժ կայիցն, որ յերկինս:

Եզեն զէնիս իւր եւ խառնեաց ի խառնաբանս զգինի իւր. Չայս տնաւորէնութիւն Բանին է իմանալ, յորժամ «Բանն մարմին եղել եւ բնակեաց ի մեզ». Եզեն զէնիս իւր զնոսս անուանէ, որ վասն հաճոյիցն Աստուծոյ մատուցին զինքեանս պատարագ ի հոտ անուշից: Իսկ եթէ՝ խառնեաց ի խառնելիս զգինի իւր. այս իմանի աշխարհակեցոյց մահն Քրիստոսի, եւ յեղումն անապական արեանն զեւաւորպէս զառն անարատ՝ բառնալով զմեղս աշխարհի: Եւ խառնեաց զարիւնն իւր ընդ արեան սրբոցն յանխառնելիսն: Եւ գինի անուանի զուրախութիւն երկնաւորացն եւ երկրաւորացն:

Պատրաստեաց զսեղան իւր. Չիսկն լուսոյ, զի ի նմա պատրաստեցաւ ան-
մահ վայելումն մարմնոյ եւ արեան Տեառն:

Առաքեաց զծառայս իւր բաժր քարոզութեամբ. Արդ, ծառայք նորա առաքե-
ալքն էին, որք ի նմանէ առաքեցան՝ կոչել զտիեզերս ի սեղան անապական չարչա-
րանաց տնաւրէնութեանն Զրիստոսի, որ է անհամեմատ խառնանարան եւ անպա-
տումն ուրախութիւն հաւատացելոց»¹:

Խիստ վերապահելի ընդհանրություն կարելի է նշմարել հրապարակ-
վող ճառի եւ Համամ Արեւելցու Առակաց մեկնության համապատասխան
տեղիի մեկնություններում. եթե նմանությունները պայմանավորված
են ակներեւ տիպաբանությամբ, ապա տարբերությունները՝ ժանրային
առանձնահատկություններով. եթե այս ճառը ունի եկեղեցաբանական
բնույթ, ապա մեկնությունը (իր ժանրի սահմաններում)՝ զուտ բացատ-
րական: Հստ այսմ բնագրի տողատակում արձանագրված են մեկնողա-
կան ավանդույթի հետ եղած աղերսները կամ տարբերությունները:

Ճառը հրապարակվում է պահպանված միակ ընդօրինակության՝ թիվ
948 գրչագրի հիման վրա: Այն ժողովածու է. ժամանակ՝ 1196 թ., գրիչ՝ Հով-
հաննես (որդի Սարգիս բժշկի), թերթ՝ 298, գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր (եր-
կարթագրից բոլորգիր անցման հատկանիշներով):



¹ ՀԱՄԱՄ ԱՐԵՎԵԼՑԻ, Մեկնութիւն Առակաց Սողոմոնի, զոր արարեալ է Համամայ ուրումն
իմաստնոյ, «Մատենագիրք Հայոց», Թ. դար, հտ. Թ., Անթիապ-Լիբանան, 2008, էջ 469 [346–355]:

ԽԱԽՍՔ ՓԻՆՈՎՆԻ. ՀԱՐՑՈՒՄՆ ՎԱՍՆ ՓՈՂՈՅՆ, ԵԹԷ ԶԻՆՉ Է ՓՈՂՆ ՈՐ ՀԱՐԿԱՆԻ

Ոչ ոսկի եւ ոչ արծաթի եւ ոչ այլ ինչ արուեստաւոր, զոր ի յայսմ աշխարհի հարկանեն առաջի հզաւրաց եւ թագաւորաց, զոր եւ սուրբ Գրիգոր վկայեաց եւ ասէ. «Միթէ փողն եղջերուի ուռուցեալ թռալից գոչէ փողն այն»², այլ բարբառ Աստուածութեանն մտանէ ի Գաբրիէլի բերանն եւ հնչէ ընդ ծագս տիեզերաց, եւ դողան ի ձայնէ փողոյն, եւ երկիրս հրով վառեալ այրի: Եւ ոչ եթէ ամենայն ազգք լսեն զձայն փողոյն, այլ լինին խռովք, այլ որք խոստովանին զՔրիստոս, նոքա լսեն զձայն փողոյն, որպէս ինքն՝ Տէրն յայտ արար (տէն Մատթ. ԻԴ. 31): Արդ, այս խոստումնս մեզ է հաւատացելոց հեթանոսաց եւ աւետիքս, քանզի մեք լսեմք զձայն փողոյն յայնժամ կատարի մարգարէութիւնն Դանիէլի, որ ասէ. «Մինչեւ աթոռս անկանէին»³ եւ Հինաւորցն նստէր» (Դան. Է. 9) որոց ի յայտ է, եթէ Հայր յառաջ ցուցանէ քան զՈր/(47բ)դի գալ ի դատաստան, եւ ոչ եթէ աթոռք ի գետին անկանին, այլ հրեղէն գուգքն ունին զաթոռովն զփառս Հաւրն ի վերայ ատեն գոյէ, եւ դպրութիւն հրաշիցն բանին (տէն Դան. Է. 10): Յառնեն Մովսէս եւ Ահարովն, եւ ընթեռնուն զտախտակս առաջի հրեական ազգին, եւ ամենայն մարգարէքն իւրաքանչիւր մարգարէութիւն մարգարէանան, եւ ամենայն քահանայքն համարս տալոց են վասն ժողովրդեան իւրեանց, զոր հովեցին յաշխարհի: Որպէս ասէ Պաւլոս, եթէ ընդ ոգւոց ձերոց համարս տացեն առաջնորդքն (տէն Հռոմ. ԺԴ. 12) եւ դպրութիւնք հրաշիցն բանին (Դան. Է. 10): Եւ արդ, ո՞ր է, եթէ ոչ խաւսք մարգարէիցն, քանզի ամենայն մարդ զմեղս բերանով իւրով ընթեռնու եւ կարգա: Յայնժամ փայլէ Խաչն յարեւելից յաւուր ուրբաթու, յայնժամ կատարի բանն Դանիէլի, որ ասէ, եթէ՝ «Տեսանէի, որ ընդ ամպս երկնից իբրեւ զՈրդի մարդոյ գայր եւ հասանէր մինչեւ ցՀինաւորցն, եւ նմա տուաւ աթոռ եւ պետութիւն եւ դատաստան» (Դան. Է. 13): Արդ, ո՞վ է «Որդի մարդոյ», եթէ ոչ ինքն՝ Քրիստոս, եւ «Հինաւորցն»՝ Հայր⁴, որպէս

² Տէն ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի, «Մատենագիրք Հայոց», Ե. դար, հտ. Բ, Անթրիաս-Լիբանան, 2003, էջ 1489 [8]:

³ ձեռ. արկանէին:

⁴ «Հինաւորց, որ է անսկիզբն Հայր», «Հինաւորցն՝ Արարիչն արարչութեան աւուրցն...». տէն ՎԱՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ, ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՅԻ, ԹՈՎՄԱ ՄԵՇՈՓԵՅԻ, ՄԵԼԻՆՈՒԹԻՆՔ մարգարէութիւն:

եւ ինքն՝ Տէրն ասէր. «Ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ» (Հովհ. Ե. 22): Եւ արդ, տես, զի Հայր գա յառաջագոյն ի դատաստան, եւ կազմէ զատեանն, եւ դպրութիւնք հրաշից բանին (Դան. է. 10), զի մի պատճառս գտցին արինազանցքն⁵, քանզի մարգարէին խաւսիւք յան/(48ա)դիմանէր, յորժամ դիցէ զթշնամիսն ի ներքոյ ոտից նորա (հմմտ Սղմ. ՃԹ. 1, Ա Կոր. ԺԵ. 25), նստցի յաթոռ նորա, եւ առնէ դատաստան, որպէս ասէ Պաւլոս. «Յորժամ հնազանդեցուցանէ նմա զամենայն» (Ա Կոր. ԺԵ. 28): Արդ, տես, եթէ ոչ Որդին անհնազանդ է Հաւրն, այլ ասէ, քանզի Հայր բարեխաւսէ առ Որդի ասելով, եթէ՝ խնայեալ խոստովանողս անուանդ քո սրբոյ: Արդ, այս բանքս Պաւլոսի աւետիք են մեզ՝ հաւատացելոցս:

Ընդէր աւուր երկուշաբաթուն ընթեռնուն զկանոնական զգիրս: «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր» (Ծննդ. Ա. 1). քանզի երկուշաբաթն Զատկին արինակ բերէ զգալստեանն ի դատաստան, եթէ երկու աւուր ցուցանէ զգալուստն Տեառն, վասն այնորիկ զմովսիսական գիրսն ընթեռնուն, որ յայտ է, եթէ յորժամ յառնեն Մովսէս եւ Ահարոն, եւ ըստ կարգի, որ պարգեւեցաւ մեզ՝ զհեթանոսացս, որպէս ասէ Աստուածաբան. «Սա է տաւնից մերոց տաւն եւ ժողովրդոց ժողովարան»⁶: Կատարեցաւ խորհուրդ մեծ ի շաբաթոյս այսորիկ մարգարէիւք եւ առաքելովք, սաղմոսիւք եւ սուրբ աւետարանաւն, զոր Յակովբոս եղբայր Տեառն կարգեաց զընթերցուածս, եւ Կիրեղ զտաւնս հաստատեաց, եւ ետ վարդապետ մեզ՝ հեթանոսացս, եւ սովաւ խրատիմք եւ վարժիմք՝ առնուլ զտախտակս եւ ընթեռնուլ առաջի հրեական ազգին:

Յաւուր երեքշաբաթին զջրհեղեղն զծով/(48բ)ասաստ բարկութիւնն, զի ընթերցուածս Նոյի, քանզի խրատեաց զմեզ երկնչել եւ զարհուրել որպէս եւ ի ինքն ասէր զքանքարն ի սուրբ Աւետարանն (տէս Մատթ. ԻԵ. 15–28) եւ ի Զիթենեաց⁷ լերինն, յորժամ հարցանէին ցՏէրն յԱռակաց իմաստութենէն. «Շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն» (Առակ. Թ. 1): Յայտ է, թէ «եւթն սիւն» զեւթն շաբաթ սրբոց Քառասնորդացն ասէ: Եւ «տուն» կոչէ զեկեղեցին եւ զհեթանոսս, եւ որ ասեն. «Զէն

թեանն Դանիէլի, աշխ. Մ. Արաբյանի, Գ. Ներսիսյանի, Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 92, 329:

⁵ Էպպես տարբեր է Հովհաննես Ծործորեցու մեկնութիւնը. «Ոչ եթէ յառաջ նստի Հայր եւ ապա Որդի գայ, այլ ամենեքեանս ի միում նուագի լինին, բայց բանս զամենայն կամի պատմել ի հարկէ այսպէս ձեւանայ...». անդ, էջ 243:

⁶ Տէս «Գրիգորի Աստուածաբանի Անձ[խանձի] եպիսկոպոսի խաւսք յամենասուրբ Պասալ եւ ի հեղգութիւնն», ՄՄ, ձեռ. 1500, թ. 737բ:

⁷ ձեռ. Զէթենեաց:

զգենլիս իւր եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր» (Առակ. Թ. 2): Այս ընթերցուածիս առակախոս Սողոմոն զՈրդոյն Աստուծոյ ի վերայ խաչին ասէ եւ ի վերայ սեղանւոյն: Եւ որ ասէ՝ «Խառնեաց ի խառնելիս զգինի իւր». քանզի, առեալ զբաժակն, արհնեաց եւ ետ աշակերտացն իւրոց (տէն Մատթ. ԻԶ. 27): Եւ որ ասէ. «Առաքեաց զծառայս իւր, կոչեաց ի ճաշ իւր» (Առակ. Թ. 3, Մատթ. ԻԲ. 3—4): Արդ, ո՞ր են «ծառայքն» թէ ոչ մարգարէքն եւ առաքելքն, եւ աստ քահանայքս են, որ հրաւիրեցին զմեզ ի սուրբ Զատիկն՝ հաղորդել ի սուրբ մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ: Այն «ճաշ» եւ «զուարակ» կոչի: Քրիստոս պատարագ կոչի՝ ի սուրբ ի Զատիկն հաղորդել ի սուրբ մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ:

Եւ յաւուր չորեքշաբաթուն ընթեռնուն ընթերցուածն արբահամեանս, եւ որ ասէ Աբրահամ ցՍառայ, եթէ՝ «Փութեա եւ թրեա գրիւս երիս ալեր նաշոյ» (Ծննդ. ԺԸ. 6). զԵրրորդութեան խոստովանութիւնն ասէ⁸: Եւ թաղումն նկանակին ի մոխիրն՝ զթաղումն տերունական մարմնոյն ի գերեզմանին ասէ: Եւ որ ասէ //(49ա) «Աբրահամ որթ մատաղ, զոր մատոյց «Աբրահամ արինակ էր Քրիստոսի պատարագին ի վերայ խաչին: Եւ որ ասէ, եթէ՝ Եղիցի ի Սողոմ հուր եւ ծծումբ⁹ եւ այրեսցի. յայտ է, եթէ զդժոխոց զայրումն եւ զկործանումն ասէ: Ընդէր ընթերցուածս այս ի յաւուր չորեքշաբաթուն, որպէս ասէ Մովսէս. «Զի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ իւրմէ, այրեսցէ եւ իջցէ մինչ ի դժոխս ներքինս» (Բ. Օր. ԼԲ. 22): Քանզի հուրն Աստուածութեանն այս է: Եւ որ ընթեռնուն յԱւետարանս զերեք բանն, յայտ է, թէ զհրեական ազգն յամալթ առնէ եւ զԵրրորդութեանն խոստովանութիւնն ի մեզ հաստատէ. երեք բանս այս է:

Եւ յաւուր հինգշաբաթուն ընթեռնուն ընթերցուածք զայս Աբրահամու, որ, յայտ է, մարմնոյ եւ արեանն Քրիստոսի արինակ էր ընթերցուածս այս, որպէս խաւսեցաւ Աստուած ընդ Աբրահամու եւ փրկեաց զԻսահակ. կենարար Տէրն մեր յաւուր հինգշաբաթու զմարմին եւ զարին իւր ետ աշակերտացն եւ փրկեաց զմեզ: Աբրահամ ընթերցուածովս զայս խորհրդածէ: Եւ յաւուր ուրբաթու զխաչելութիւնն նշանակէ՝ վկայութեամբ Պաւղոսի ընթերցուածովս եւ ութ սաղմոսիւքն Դաւթի մարգարէին, եւ ութարեա թլփատութեամբն եւ մարմնանալոյն: Եւ զչորս աւետարանքն ընթեռնուով՝ զչորս նիւթս մարմնոյն Քրիստոսի զմարմնանալոյն արինակ էր ի հողոյ, ի ջրոյ, ի հրոյ //(49բ), ի յաւոյոյ:

⁸ «Եւ երիս, զի երիս ետես՝ իմացաւ զերրորդական խորհուրդն...». տէն ԵՂԵՆ, Մեկնութիւն Արարածոց, «Մատենագիրք Հայոց», Ե. դար, հտ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 829 [14]:

⁹ ձեռ. ծրծում

Զայտ ի դուռն եկեղեցւոյ կարդան, առաջի խաչին Գողգոթայ, որ յայտ է, եթէ կատարին ընթերցուածքս սաղմոսիւք եւ աւետարանաւք: Քանզի Զաքարիայ զայս ընթերցուածս. «Եւ ծանիցեն քանանացիքն զխաշինսս պահեստի իմոյ, եւ այն բանն Տեառն» (Զաք. ԺԱ. 11): Եւ դարձեալ, եթէ՝ «Կռնեցին զվարձս իմ երեսուն արծաթի» (Զաք. ԺԱ. 12), որ յայտ է, եթէ զկաշառն Յուդայի ասէ, զոր էառ ի հրէիցն, որ ետուն ի տաճարն Սողոմոնի, զոր առին ի Յուդայէ եւ զնեցին զագարական բրտի գերեզման աւտարաց (տէս Մատթ. Իէ. 9): Եւ Պաւլոս ասէ. «Ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ. 14), որ յայտ է, եթէ զխաչն ցուցանէ մեզ պարծանք հեթանոսացս: Եւ Եսայի ասէ. «Զթիկունս իմ ետու ի հարուածս եւ զծնաւտս իմ՝ յապտակս, եւ զերեսս իմ ոչ դարձուցի յամաւթոյ» (Ես. Մ. 6): Քանզի զթուք եւ զապտակ պատմեաց մեզ Եսայի զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր էառ վասն մեր: Եւ դարձեալ Եսայի ասէ. «Վա՛յ անձանց նոցա, զի խորհեցան խորհուրդ չար առանձինն» (Ես. Գ. 9), եւ ասեն վասն խաչելութեանն Քրիստոսի: Արդ, վայ հրեական ազգին ասէ Եսայի: Եւ դարձեալ ինքն Տէր ի դատ եկեսցէ, այսինքն՝ զգալն ի կամաւ, որ չարչարանս, որպէս ասէ Պաւլոս. «Մինչդեռ տկարք էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ» (Հռոմ. Ե. 6): Եւ դարձեալ ասէ, եթէ՝ «Հաշտեցաք ընդ Աստուծոյ ի ձեռն մահուան Որդւոյ նորա» (Հռոմ. Ե. 10), որոց ի յայտ է, եթէ հաշտութիւն մեզ հեթանոսացս տա: Եւ դարձեալ Պաւլոս ասէ. // (50ա) «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զաւրութիւն Աստուծոյ» (Ա. Կոր. Ա. 18), զի գրեալ է, որոց ի յայտ է՝ կորուսից զազգն հրեական եւ փրկութիւն մեզ՝ հեթանոսացս տա Պաւլոս: Եւ Եսայի ասէ. «Մեք նորա վիրաւքն բժշկեցաք ամենիքեան» (Ես. ՄԳ. 5):

Եւ դարձեալ Երեմիա ասէ. «Եկայք, արկցուք փայտ ի հաց նորա» (Երեմ. ԺԱ. 19), որ յայտ է, եթէ «փայտ» խաչն ասէ¹⁰, «հաց»՝ մարմինն Քրիստոսի: Եւ դարձեալ Եսայի ասէ. «Իսկ դա ո՞վ է, որ դիմեալ գա յԵդովմա. կարմրութիւն ձորձոց ի բոսորա» (Ես. ԿԳ. 1), եւ դարձեալ ասէ. «Ընդէ՛ր կարմիր են ձորձք սորա, եւ հանդերձք սորա իբրեւ հնձանահարի» (Ես. ԿԳ. 2), որոց ի յայտ է, եթէ որդի զՔրիստոս ասէ, եւ «Եդովմ»¹¹

¹⁰ «Զինչ իցէ փայտն. խաչեսցուք զնա». տէս Ս. Յովզան ՈՍԿԵՐԵԱՆ, Մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայ, աշխ. 2. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2015, էջ 212: «...փայտ զխաչն ասէ եւ հաց՝ զմարմինն զիջեալն յերկնից». տէս Մխիթար Գոշ, Մեկնութիւն համառատ մարգարէութեանն Երեմիայի, «Մատենագիրք Հայոց», ԺԲ. դար, հտ. Ի., Երեւան, 2014, էջ 210 [107]:

¹¹ ձեռ. եղեմ

զԱստուածութիւնն ասէ Եսայի, «կարմիր ձորձք» զքղամիդն ասէ, որ զգեցուցին նմա անաւրէնքն (տե՛ս Մատթ. Իէ. 28), «հնձան»¹² կոչէ զմարմինն, զոր հոսեաց կողահոս աղբերն ի վերա խաչին: Նա կոչի «հնձան», որպէս գինի ճմլեցաւ արիւնն ի վերա խաչին ի փրկութիւն մեզ: Եւ դարձեալ Պաւլոս ասէ այս ընթերցուածովս. «Ունիմք մեք համարձակութիւն ի մոտս սրբութեանց արեամբն Քրիստոսի, որ նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ եւ կենդանի ի ձեռն վարագորին» (Եբր. Ժ. 19), որոց ի յայտ է՝ տաճար զմարմին Տեառն ասէ, որ հեղաւ ի վերա խաչին: Եւ Յովէլ ասէ. «Եկեացէ հասցէ Տէր Աստուած մեր, եւ ամենայն սուրբք նորա ընդ նմա, ցուրտ եւ պարզ եղիցի ար մի, եւ արն այն յայտնի Տեառն, ոչ տիւ իցէ եւ ոչ գիշեր» (Զաք. ԺԴ. 5–6). այս ընթերցուածս զհրէիցն լրբութիւնն ասէ եւ զանամաւթութիւնն/(50բ): «Յուրտ եւ պարզ», զի «յայտնի է արն այն յայտնի է Տեառն», զոր ի խաչելութեանն ասէ, որպէս ասէ մարգարէն ի միւս ընթերցուածին. «Նսեմի արեգակն ի միջաւրէի եւ խաւարի լոյս ի տուէ» (Ամովս Ը. 9), որոց ի յայտ է, եթէ զխաւարումն արեգականն ասէ, յորժամ Տէրն ի խաչին:

Եւ դարձեալ Պաւլոս ասէ այս ընթերցուածովս. «Քրիստոս եկեալ քահանայապետ» (Եբր. Թ. 11), եւ դարձեալ ասէ. «Ամենայն ինչ արեամբ սրբեր» (Եբր. Թ. 22), որոց ի յայտ է՝ Քրիստոս ի վերա խաչին էր, եւ սրբեաց զմեզ: Զի որպէս արիւն ցլուց եւ նոխազաց առեալ ցանէր զբանական եւ կահաւն խորանին, նոյնպէս էհեղ զարիւնն ի վերայ խաչին, եւ սրբեաց զմեզ: Դարձեալ Պաւլոս ասէ յայս ընթերցուածս. «Զի որք սրբին եւ որք սրբեն ի միոջէն են ամենեքեան» (Եբր. Բ. 11): Եւ դարձեալ, եթէ՝ «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց» (Եբր. Բ. 12). յայտ է, թէ յառաքելոցն անուանէ «եղբարս» եւ Պաւլոս՝ զմեզ յայսր ընթերցուածիս: Եւ դարձեալ ասէ. «Պատուիրեմ քեզ առաջի Յիսուսի Քրիստոսի, որ վկայեցաւ առաջի Պոնդացւոյ Պիղատոսի» (Ա Տիմ. Զ. 13), որոց ի յայտ է, եթէ զգատապարտութիւն Տեառն ասէ, որ կայր դատապարտեալ առաջի Պիղատոսի: Արդ, զայս ընթերցուածս ընթեռնուն առաջի խաչին Գողգոթայի, եւ կատարեն զմարգարէին զտեսչութիւնն, եւ երեք Աւետարան ընթեռնուն, որպէս ասէ Մատթէոս¹³, եթէ՝ «էր ժամ երրորդ, եւ հանին զնա ի խաչ» (Մրկ. ԺԵ. 25): Քանզի Մատթէոս¹⁴ «երրորդ ժամ» զայն ասէ, յորժամ եկն աւձն եւ մարտեաւ ընդ Եւայ, յերրորդ ժամու ճաշակեաց պտղոյն եւ յա/(51ա)

¹² ձեռ. հնձան

¹³ Պետք է լինի՝ «Մարկոս»:

¹⁴ Պետք է լինի՝ «Մարկոս»:

նձն էառ: Արդ, այս աւետարանագիրս զայս ասէ ի խաչ ելանելն Տեառն, եւ միւսն՝ զվեցերորդ ժամուն զխաչելութեանն զճաշակումն լեղոյն ասէ (հմմտ. Մատթ. Իէ. 34, Ղուկ. ԻԳ. 44): Եւ դարձեալ Մատթէոս ասէ. «Բազում մարմինք ննջեցելոց յարեան եւ յետ յարութեանն մտին ի քաղաքն սուրբ, եւ երեւեցան բազմաց» (Մատթ. Իէ. 52–53):

Արդ, մինչ էր Տէրն ի խաչին, զհարգ յարեան ննջեցեալքն մինչդեռ զգոթիս չէր աւարեալ. յայտ է, եթէ հոգիք տղաոցն են, զոր կոտորեաց Հերովդէս ի Բեթղաէմ, քան զի ոչ կարաց սատանա ըմբռնել զնոսա. սոքա էր, որ յարեան, յորժամ էր Տէր ի խաչին¹⁵: Արդ, զկնի այսր ընթերցուածիս եւ աւետարանիցս եւ սաղմոսացս, մտանեն յեկեղեցին եւ անդ¹⁶ կատարեն զժամն, որ յայտ է, եթէ պատեալ սուրբ կտաւաւքն զմարմինն Տեառն աւրինակեաց, Յովսէփ եւ Նիկողեմոս ի պատելն ասացին «Սուրբ Աստուած», եւ խոստովանեցան զնա Աստուած¹⁷, եւ զմի Աւետարանն ընթեռնուցուն յեկեղեցին: Եւ զնան յաւուր շաբաթուն, մտանեն յեկեղեցին եւ սաղմոսեն. «Եղիցի անուն Տեառն աւրհնեալ յաւիտեան» (Սղմ. ՀԱ. 17): Քանզի այս սաղմոս աւետիք են մանկանց¹⁸ հեթանոսաց՝ կոչել որդիք յուսոյ ի ձեռն յարութեան:

Եւ ընթեռնուն զմովսիսական զգիրսն. «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր» (Մննդ. Ա. 1), քանզի զայս ընթերցուածս ընթեռնուն. ուսուցանէ զնել ի գերեզմանի զԱրարիչն արարածոց: Եւ զկնի նորա զաբրահամեան ընթերցուածսն, քանզի զպատարագեալն Քրիստոսի աւրինակ էր //(51բ) ի վերայ սեղանոյն, եւ զկնի նորա յԱրարածոց ընթեռնուն. «Եւ խաւսեցաւ Աստուած ընդ Մովսէսի» (Ելք ԺԲ. 1). քանզի այս ընթերցուածս զէնման աւրինակ է, որ ասաց Աստուած ընդ Մովսէսի, եթէ զենցեն զոչխար ի վերա սեմոց տանն (տէս Ելք ԺԲ.): Զոչխարն աւրինակ

¹⁵ Ավետարանական այս տեղիին այլ բացատրութիւն է տրված «Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ՝ ասացեալ ի Յարութիւնն Քրիստոսի եւ վասն մեռելոցն, որք յարեան ի ժամ խաչելութեանն, թէ ուստի էին եւ ոչք եւ քանիք» ճառում. «Որպէս եւ վկայէ աւետարանագիրն Մատթէոս, թէ՝ «Բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան եւ յետ յարութեան նորա մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց»: «Բազումս» կոչէ զյարուցեալսն, եւ «բազմաց» ցուցանէ զերեւեալն, այսինքն՝ հարցն եւ որդւոցն եւ եղբարցն, որ դեռեւս կենդանիք էին, ոմանց հարքն եւ մարքն եւ կիսոց՝ որդիքն եւ ալլոց՝ եղբարքն, որք ճշմարիտ խոստովանողք եւ աշակերտք էին Քրիստոսի. զնոսայն յարոցն եւ ոչ բազմամեա մեռեալս, զորս ոչ ոք ճանաչէր...». տէս ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՅԻՆ, Ժառք, աշխ. Հ. Քրիսեյանի, Ս. Էջմիածին, 2013, էջ 574. հմմտ անդ, էջ 540:

¹⁶ ձեռ. անտ

¹⁷ «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, մեծի իմաստասիրի, պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի, զոր վասն հաւատոյ գրեալն էր», «Մատենագիրք Հայոց», Ը. դար, հտ. 2, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 552–553 [96–97]:

¹⁸ ձեռ. մանգանց

բերէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, սէման աւրինակ բերէ խաչին: Վկայէ բանիս իմում Աստուածաբան, եթէ՝ «Երեկ ոչխարն զենաւ եւ շաղախեցան սեամքն»: Ոչխար ասէ զՔրիստոս՝ հեղուլ զարին ի խաչին: Ողբաց Եգիպտոս զանդրանիկսն իւր, ողբաց սատանա զկործանումն իւր: Երեկ խաչակից եղաք Քրիստոսի, այսաւր ընդ նմա կենագործիմք¹⁹: Վկա ե բանիս իմում Պաւղոս՝ փողն եկեղեցոյ, եթէ՝ «Հին մարդն մեր խաչակից եղեւ նմա» (Հռոմ. 9. 6), քանզի Տէր մեր Յիսուս Քրիստոս էառ պատկերն Ադամայ եւ եղեւ երկրորդ Ադամ: Որպէս ասէ Մովսէս. «Անիծեալ լիցի մարդ, որ կախեալ կա զփայտէ» (Բ Ծր. ԻԱ. 23): Արդ, ոչ եթէ Տէրն մեղս ինչ արար, որպէս ինքն իսկ ասէր, եթէ՝ «Ո՞վ յանդիմանեացէ զիս ի ձէնջ վասն մեղաց» (Հովհ. Ը. 46), քանզի զանէծան Ադամայ ինքն էառ, եւ կոչեցաւ շարագործ, կախեցաւ զփայտէ, զի զմեզ ազատեաց: Վկա է բանիս իմում Պաւղոս, եւ ասէ, եթէ՝ «Որ ոչն գիտէր զմեղս, վասն մեր մեղս արար, զի մեք եղաք նովաւ արդարութիւն Աստուծոյ» (Բ Կորնթ. Ե. 21): Աւրինակէ զերիս տիւս եւ զերիս գիշերս լինել «ի սիրտ երկրի» (Մատթ. ԺԲ. 40) եւ զնեղութիւնն բարձրաձայնեալ ասելով զյարութիւնն աւրինակելով եւ զմարգարէիցն զենումն, եւ զկնի այն /// (Թերթ ընկած 52ա) ե ցուցանեն զԱրարիչն ընդ արարածս, վերափոխեն զմարդիկ առ Աստուած, եւ անուն Տեառն փառաւորեսցի յաւիտեան:


РЕЗЮМЕ

«Слово Филона. Вопросание о трубе, о том, что такое трубить». Гомилия под этим названием находится только в рукописи XII века (Матенадаран им. Маштоца, рук. 948). Это значит, что автор этой гомилии жил и творил до XII века. Само свидетельство из творения Григория Просветителя говорит о том, что автор этой гомилии — армянин. Гомилия содержит богословское толкование церковных чтений для каждого дня Страстной недели. Поскольку тайна Страстной недели касается эсхатологического будущего, то это труба Страшного суда — голос, которой слышат только те, кто исповедуют Христа. Гомилия имеет экклезиологический характер. В ней обнаруживаются лишь некоторые общие места с экзегетической традицией, которые указаны в публикации.

¹⁹ «Գրիգոր Աստուածաբանի... խաւար յամենասուրբ Պատրիարք եւ ի հեղգութիւն...», ՄՄ, ձեռ. 1500, Թ. 737ա:

SUMMARY

One can find the homily entitled “Philo’s words: On the trumpet that can be sounded” in manuscript N 948 of Matenadaran after Mashtots (manuscript library) that dates back to the 12th century. This means that the author of this homily lived and worked prior to the 12th century. The very fact that the homily includes evidence in the name of St. Gregory the Illuminator shows that the author of this homily is Armenian. The homily contains a theological interpretation of the church lections of each day of the Holy Week. Since the mystery of the Holy Week concerns the eschatological future, this is the trumpet of the Last Judgment, and its sound is heard only by those, who profess Christ. The homily has an ecclesiological nature. There are only some common places with exegetical tradition in the homily, which are listed in the publication.



ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ, ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ,
ՀԱԿՈԲ ԽԱԹԼԱՄԱՋՅԱՆ, ՍԱՍՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵԼՆԻ ՉԱԼԹՐ ԳՅՈՒՂԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Չալթր հայկական մեծ գյուղը ՌԴ Դոնի Ռոստովի մարզի հայաբնակ Մյասնիկյանի (Մյասնիկովսկի) շրջանի վարչական կենտրոնն է։ Հայտնի է, որ այն հիմնադրել են Եկատերինա Բ. կայսրուհու (1762—1796 թթ.) հրամանով 1778 թ. Ղրիմից Դոնի ավազան գաղթած հայերը։ Նորաստեղծ բնակավայրը Չալթր անվանումն ստացել է համանուն գետակի անունից, որի ափին հաստատվել են Ղրիմի Օրթալանկ գյուղի բնակիչները²։

Վ. Բարխուդարյանի վկայակոչմամբ՝ «Ակադեմիկոս Ս. Պալլասը, 1793 թ. ճամփորդության ժամանակ անցնելով Չալթր գյուղի փոստային գծով, թողել է ուշագրավ դիտողություններ։ Նա նկատում է, որ գյուղը բաղկացած էր 90 տնից, որոնց մեծ մասը եկեղեցիների նման կառուցված էր սրբատաշ քարից ու կավից։ Տները կառուցել էին Ղրիմի իրենց բնակարանների ձևով։ Անցնելով օջախի (բուխարա, կրակարան) մոտից՝ մտնում ես երկու շատ մաքուր սենյակներ՝ ցածր պառկելատեղով։ Բակում տեղավորված էին մյուս հարմարությունները՝ խոհանոցը, նկուղը եւ այլն»³։ Դ. Վարդումյանը գրում է, որ Չալթր գյուղը «նախապես տեղավորված է եղել փոքր գետակի ափերի բլրալանջերին եւ շատ բանով դեռեւս հիշեցրել է հայկական բնակավայրերը՝ տները դասավորված են եղել միմյանց մոտ ազգակցական թաղերի սկզբունքով։ Հին ազգակցական թաղերի մնացուկները դեռեւս պահպանվում են գյուղի այդ մասում։ Հետագայում, հատկապես սովետական տարիներին, գյուղը տարածվել է մերձակա

¹ Սույն աշխատանքը կատարվել է Նոր Նախիջեանի հայոց համայնքի եւ նրա այլէթնիկ միջավայրի հետ եղած կրոնամշակութային կապերին նվիրված պատմաազգագրական հետազոտության շրջանակում, որը ֆինանսավորվել է Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդարանի կողմից՝ ՀՀ Գիտակերպման միջոցով։

² Տե՛ս Օ. Халпахчьян, Архитектура Нахичевани-на-Дону, Ереван, 1988, էջ 10։

³ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջեանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.), Երեւան, 1967, էջ 94։

հարթավայրում, խիստ ընդարձակվել եւ գրեթե միացել է հարեւան Ղրիմին (Թոբզի), որը նույնպես իր հերթին տարածվել է դեպի Չալթր: Այդ ընթացքում խիստ փոխվել է բնակավայրերի հատակագիծը՝ բնակարանները դասավորվել են խճուղիների ու փողոցների կամ, ինչպես տեղում ընդունված է ասել, «գծերի» («*Линия*») երկայնքով, որն ակնհայտորեն ռուսական գյուղական բնակավայրերի կառուցապատման ազդեցության արդյունք է»⁴: Ազգագրագետի ենթադրությամբ՝ «Ղրիմից այստեղ գաղթելուն պես, ըստ երեւույթին, կառուցվել է հիմնականում երկու տիպի բնակարան՝ քաղաքատիպ-կղմինդրածածկ եւ գյուղատիպ՝ ճլախոտով ծածկված»⁵:

Եկատերինա Բ. կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով, Ղրիմի թերակղզուց Դոնի անմարդաբնակ տափաստաններ գաղթած հայերին տրված բազմակողմանի արտոնությունների (առևտրատնտեսական, տեղական ինքնակառավարման, ազգային-կրթական, եկեղեցադավանական եւ այլն) ու նորաբնակների՝ տեղում համակերպվելու հաստատակամության, համառ աշխատասիրության շնորհիվ արդեն քառորդ դար անց Չալթր գյուղի տների թիվն ավելի քան կրկնապատկվում է. 1817 թ. Վենետիկի Մխիթարյան միաբան Մինաս Բժշկյանը, շրջագայելով Նոր Նախիջևանի հայկական հինգ գյուղով, նշում է, որ «Հօրդալանկ. ունի 200 տունս Հայոց, եւ զեկեղեցի յանուն Համբարձման»⁶: Վարդապետը չի մոռանում հայտնել նաեւ հայկական այդ գյուղերի (Չալթր, Թոփտի [Ղրիմ], Մեծ Սալա, Փոքր Սալա [Սուլթան Սալա], Նիսվիթա) բնակիչների ընդհանուր թիվը 1817 թվականին՝ 2815 բնակիչ⁷: Ուշադրության արժանի է փաստը, որ Մ. Բժշկյանը Չալթրը կոչում է նրա ղրիմյան անվանմամբ: Դրանից հետեւում է, որ տեղացիները մի տեւական ժամանակ իրենց գյուղի անվանակոչության մեջ երկու ձեւն էլ գործածել են, ինչն անգամ այսօր տարածված սովորություն է հայկական միջավայրում առհասարակ:

Չալթրի աշխարհագրական դիրքը մեծապես նպաստում է տեղի բնակչության թվաքանակի անընդհատ աճին, որը վճռորոշ նշանակություն պետք է ունենար նրա՝ հայկական գյուղկենտրոն ճանաչվելու

⁴ Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ, Ռոստովի մարզի հայերի մշակույթի եւ կենցաղի նմուշներ, ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր. հասարակական գիտություններ», թ. 12, Երեւան, 1961, էջ 92:

⁵ Անդ:

⁶ «Ճանապարհորդությունն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոյ ի նախնեաց Անի քաղաքին, շարագրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք Տն. Հ. Մինասայ Բժշկեանց վարդապետի ի Մխիթարեան ուխտէն, առաջնորդի ի Տաւրիա», Վենետիկ, 1830, էջ 394:

⁷ Տէս անդ:

գործում: Վ. Բարխուդարյանն իր աշխատություններում ներկայացնում է Չալթրի բնակչության աճի ուշագրավ տարեգրությունը. 1793 թ.⁸ 405 բնակիչ, 1835 թ.⁹ 1375, 1850 թ.¹⁰ 1744⁸: Հետաքրքիր է, որ մեկ տասնամյակում՝ 1897–1907 թթ., Չալթրի բնակչությունը 5206-ից հասել է 6545-ի, իսկ 1913–1914 թթ. գյուղն ուներ 7117 բնակիչ⁹: Գյուղացիները հիմնականում զբաղվել են հացահատիկի մշակամամբ: Չալթրի սպիտակ ցորենը պահանջված է եղել: Աշխարհահռչակ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը գրում է. «Չալթրյան եւ ղրիմյան հայերը հայտնի էին որպես լավ հողագործներ: Նրանց ցորենը (գարնովկա) իր որակով հայտնի էր նույնիսկ փարիզյան հացավաճառներին....»¹⁰:

Չալթրը, ինչպես եւ Դոնի հայկական մյուս չորս գյուղը, թեեւ հեռու են գտնվել Հայաստանից, բայց մշտապես եղել են Մայր հայրենիքի կողքին, սատարել են հայրենակիցներին օրհասական պահերին, իրենց նպաստը բերել համահայկական ձեռնարկներին, մասնավորապես չալթրցիներն Առաջին աշխարհամարտին կամավորագրված հայորդիներին օգնել են սնունդով եւ հագուստով¹¹: Միաժամանակ օգնություն են ցուցաբերել արեւմտահայ գաղթականությանը. «Այսպես՝ 1915 թ. գարնանը Չալթր գյուղը 600 պարկ ալյուրի հետ երկրագործական եւ գյուղացու տնտեսությանը անհրաժեշտ այլ գործիքներ է ուղարկում գաղթականներին»¹²: Ս. էջմիածնի հոգեւոր ճեմարանի կառուցման համար Չալթր գյուղը նվիրաբերել է 150 ուրբի¹³:

Չալթրցիների եկեղեցասիրությունն արտահայտվում է նրանց ջերմեռանդ ու հոգատար վերաբերմունքով գյուղի Ս. Համբարձում եկեղեցու (1871 թ.) նկատմամբ, որը գործել է անգամ խորհրդային աստվածամերժողական տարիներին՝ չհաշված Հայրենական մեծ պատերազմի ժամանակահատվածը: Չալթրի Ս. Համբարձում եկեղեցին Գ. Գրիգորյանի դիտարկմամբ՝ «...ճարտարապետական ձեւերով հարազատ չէ հայկականին»¹⁴: Դոնահայ եւ առհասարակ հայկական ճարտարապետության

⁸ Տէս Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, նշվ. աշխ., էջ 123:

⁹ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861–1917 թթ.), Երեւան, 1985, էջ 63, տողատակ 73:

¹⁰ Տէս անդ, էջ 129:

¹¹ Տէս անդ, էջ 211, 212:

¹² Անդ, էջ 215:

¹³ Տէս անդ, էջ 198:

¹⁴ «Դիվան հայ վիմագրության», պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխ.՝ Գ. Գրիգորյանի, Երեւան, 1999, էջ 151:

գիտակ Հ. Խալփախչյանի պարզաբանմամբ՝ ցարիզմի ձգտումը ազգային փոքրամասնությունների կյանքի բոլոր ոլորտներում հասնել առավելագույն ռուսացման, արտահայտվել է արվեստի այդ ճյուղում եւս¹⁵։ Նա միաժամանակ հայտնում է ուշագրավ տեղեկություն, որ Դոնի ավազանում սկզբում հայկական գյուղական եկեղեցիները կառուցվում էին փայտից, հետագայում նրանց տեղում կանգնեցվում էին քարաշեն տաճարներ¹⁶։ Դոնի գյուղերի եկեղեցիները թեեւ պատկանում են զմբեթավորների տիպին, բայց իրենց հատակագծային ու ծավալատարածական ձեւերով տարբեր են եւ ունեն առանձնահատկություններ¹⁷։ Մասնավորապես Չալթրի Ս. Համբարձում եկեղեցին առանձնանում է իր կուռ համաչափությամբ եւ նորնախիջեւանյան պաշտամունքային շինություններին հատուկ ճարտարապետական տարրերի առկայությամբ¹⁸։ Այն պատկանում է արտաքուստ եւ ներքուստ խիստ ընդգծված խաչաձեւ-զմբեթավոր շինությունների տիպին, որն ավելի է արտահայտվում արեւելյան խորանին կից ավանդատների բացակայությամբ¹⁹։ Եկեղեցին պսակված է զույգ պատուհաններ ունեցող ութանիստ զմբեթով։ Նախամուտքի քառասյուն հարդարանքը հիշեցնում է անտիկ ճարտարապետությունը։ Եկեղեցուն կից է բարձր քառահարկ զանգակատունը։ Ս. Համբարձում եկեղեցու պատերին արձանագրություններ չկան։ Վիմագրեր պահպանվել են գերեզմանատանը։ Դեռեւս 1967 թ. Դոնի տարածաշրջանի հայկական արձանագրությունները հավաքելիս՝ Գ. Գրիգորյանը նկատել է. «Յարդ գործող այս գերեզմանատան տապանագրերը հիմնականում թվագրված են ԺԹ. դարով։ Ավելի վաղ թվագրություն ունեցողները չեն պահպանվել»²⁰։ Կարծես ԺԸ. դարավերջի երկու տասնամյակի ընթացքում վախճանվածների (սրանք հիմնականում Ղրիմից օտար վայրեր ներգաղթածներն ու Չալթրի հիմնադիրներն են) մասին են ասված դոնահայերի ասացվածքի հետեւյալ խոսքերը. «Պանդուխտին գերեզմանը գետնին հետ հավսրովիլ է»²¹։

Մեր կողմից 2017 թ. ամռանը Չալթրի գերեզմանատանը գրանցվել են հետեւյալ տապանագրությունները.

¹⁵ Տե՛ս Հ. ԽԱԼՓԱԽՉՅԱՆ, նշվ. աշխ., էջ 12–13։

¹⁶ Տե՛ս անդ, էջ 99։

¹⁷ Տե՛ս անդ։

¹⁸ Տե՛ս անդ, էջ 103։

¹⁹ Տե՛ս անդ։

²⁰ «Դիվան հալ վիմագրության», պր. VIII, էջ 152։

²¹ «Դոնի հայերի առանձներն ու ասացվածքները», գրի առավ եւ կազմեց Շահեն Շահինյանը, Ռոստով, 1973, էջ 11։


1. Տապանաքար, ավազաքարից, 6 տող (սկզբնամասը ջնջված).



ԽԱՍ ՀԱՆԳՉԻ / ՄՐԱՐՄԻՆ... /
ԽԱԹԼԱՄԱՃԻԵԱՆԻ, / ԾՆԼԵԱԼ 1833 ԹՎԻ
ՀԼՈՒՆՎԱՐ ԼԻ 15-ԻՆ, / ՎԱՎՃԱՆԼԵԱԼ 1906
ԹՎԻ / ՕԳՐՈՄ ՏՈՍԻ 13-ԻՆ:

Խաթլամաջյանի անունը թեև ջնջված է, բայց կարծես տառահետքերով վերականգնվում է ՄԿՐՏԻՃ(՝): Հետաքրքիր է, որ ՎԱԽՃԱՆԼԵԱԼ-ի փոխարեն փորագրված է ՎԱՎՃԱՆԼԵԱԼ: Փորագրիչը, անշուշտ, նախապես որոշված ՎԱԽՃԱՆԼԵԱԼ բառում «խ» տառի փոխարեն սխալմամբ քանդակել է «վ»: Մկրտիչի հայրը եղել է Մարգարը, հետեւապես՝ ջնջված երկրորդ տողում եղել է ՄԿՐՏԻՃ ՄԱՐԳԱՐԵԱՆ: Մկրտիչը նկարիչ Սեյրան Խաթլամաջյանի ապուլապան է:

2. Տապանաքար, ավազաքարից, 1 տող.



Սա

Անշուշտ, փորձ է արվել հիշատակագրություն փորագրելու, սակայն անհայտ պատճառներով մնացել է կիսատ: Սա բառը գրված է բոլորգիր:

3. Տապանաքար, ավազաքարից, 3 տող.

ԱՍՏ է ՄԱՐՄԻՆ ՍԱՀԱԿ / ԽԱԹԼԱՄԱՃԻԵԱՆԻ, / ՎԱԽՃԱՆԼԵԱԼ 1907 ԱՄԻ, 84 ՏԱՐԼԵԿԱՆՈՒՄ:

Ուշագրավ է, որ առաջին բառում նույն «Տ» տառը փորագրված է երկաթագիր, իսկ վերջինում՝ բոլորգիր («տ»):


Խաթլամաջյան տոհմից 1846 թ. հիշատակվում է Դանիկ Խաթլամաջին, որը Դոնի հայկական գյուղերի եւ Նոր Նախիջեւան քաղաքի



աղայական դասի միջև ընթացող հողային վեճերի պատճառով ծագած սուր բախումների ժամանակ նախատեսվող բանակցությունների համար գյուղացիների կողմից ընտրված երեք պատվավոր ծերերից մեկն էր, որոնք մեկուսացվեցին եւ երկու ամիս պահվեցին Նոր Նախիջեւանի բանտում²²:

Ի դեպ, խաթվամաշյանները ամենամեծ տոհմն են համայն Դոնի գյուղերում եւ Նոր Նախիջեւանում: Այսօր նրանք, Ռուսաստանից բացի, բնակվում են շուրջ 10 երկրում:

4. Մահարձան, գորշավուն, արեւմտյան երեսին 7 տող.



ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՄԱՐ/ՄԻՆ ԱՍՏՈՒԱԾ/ԱՏՐԻ ԳՐԻ-
ԳՐՈՐԵԱՆ/ ԽՏՐՈՂԱՆԵԱՆ,/ ԾՆԵԱԼ 1872 ԱՄԻ
/ 6 ՕԳ ՈՍՏՈՍԻ, ՎԱԽԼՃԱՆԵԱԼ 1911/ ԱՄԻ
16 ՆՈՅ ԼԵՄԲԵՐԻ:

Փորագրիչը ՕԳ ՈՍՏՈՍ, բառի համառոտագրությունում՝ ՕԳ., մոռացել է դնել «Գ» տառի փոքր ստեղծը, որի արդյունքում վերջինս նմանվել է «Կ»-ի:

Խտրողությանները բնիկ չաթրցիներ չեն. նրանք Չաթր եկել են Նոր Նախիջեւանից ԺԹ. դարասկզբին: Այնտեղ եղել են քաղաքային մանր ազնվականության ներկայացուցիչներ: Խտրողությանները երբեմն գրվել են նաեւ խղրայաններ կամ խղիրայաններ: Խտրողությաններն այսօր փոքրաթիվ են՝ շուրջ 10 ընտանիք, որոնք բնակվում են Դոնի Մյասնիկյանի շրջանում եւ Ռոստով քաղաքում:

5. Տապանաքար, ավազաքարից, 3 տող.


ԱՍՏ Է ՄԱՐՄԻՆ / ԽԱՋԱՏՐԻ ՓՈԽԴԵԱՆԻ, /
ԾՆԵԱԼ 1863 ԹՎԻՆ, ՎԱԽԼՃԱՆԵԱԼ 1913:

ԱՍՏ Է ՄԱՐՄԻՆ
ԽԱՋԱՏՐԻ ՓՈԽԴԵԱՆԻ
ԾՆ. 1863 թ. ՎԱՒ 1913

Փուլյանները բնիկ չաթրցիներ են: Նրանց մեծ մասն այսօր եւս ապրում է հայրենի գյուղում եւ Դոնի Ռոստով քաղաքում:

²² Տե՛ս Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմություն (1779–1861 թթ.), էջ 355:

6. Մահարձան, գորշավուն, արեւմտյան երեսին 8 տող.




ԱՍՏ ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ ՄԱՏԹԷՈՍԻ / ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ / ԹՈԽԹԱՄԻՇԵԱՆ, / ԾՆԼԵԱԼ Ի 3-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ / 1859 ԱՄԻ ԵՒ / ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 6-Ն ՄԵՂՏԵՄԲԵՐԻ / 1906 ԱՄԻ:

Վերջին տողը, որում թվականն է, գժվար է երեւում:

Թոխթամիշյանները նույնպես բնիկներ են: Նրանք մեծ մասն այսօր ապրում է Չալթր գյուղում եւ Դոնի Ռոստով քաղաքում:

7. Տապանաքար, օրորոցաձեւ, փոքր, 5 տող.


ՅԻՇԱՏԱԿ ԵՂԲՂՈՐՆ՝ / ՕԼԱՆՅԱՆ ՆԱՀՂԱՂՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ / 1913–1916, / ՂԴԱՄԲԱՐՁՈՒՄԻՑ՝:



Տապանագրությունը կատարված է բոլորգիր:

Օլանյանները տեղաբնիկներ չեն. նրանք Չալթր եկել են Սուլթան Սալա գյուղից, անգամ գալու թվականն է հայտնի՝ 1815 թ.²³: Օլանյաններն այսօր, բացի Չալթրից եւ Դոնի Ռոստովից, բնակվում են նաեւ Մոսկվայում ու Երեւանում: Հայաստանում նրանք գրվում են Ալանյաններ:

8. Տապանաքար, գորշ ավազաքարից, 7 տող.



ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՄԱՐՄԻՆ / ԱՋԱՐԻԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ / ԱԹՈՆԵԱՆ, / ԾՆԵԱԼ ԵՒ 30 ԱՊ ՂԴԻԼԻՂ ... / ՎԱԽՃԱՆԵԱԼ ԵՒ ... / ... / ...

Տապանաքարը խիստ հողմնահարված է, գրվածքն ամբողջությամբ չի վերականգնվում:

Աթոյաններն ի սկզբանե զբաղվել են առեւտրով եւ աշխատել կրթության ոլորտում:

²³ Տե՛ս ГАО, Ф. 376, ОП. 1, Д34, Л. 1806-19, 6406-65:

Նրանց մի ներկայացուցիչ Առաջին աշխարհամարտի ընթացքում վարել է Չալթրի գեղջավազի պաշտոնը: Ըստ Վ. Բարխուդարյանի աշխատության՝ «Գաղութ» պարբերականի 1915 թ. 35-րդ համարում հրապարակվում է մի հոդված, որի համաձայն՝ Չալթր գյուղի ավագ Գ. Աթոյանը, առանց որեւէ հիմքի, «զոռալայության» երկու օրով ձերբակալում է թեմականավարտ Գ. Զալաչյանին²⁴: Վ. Բարխուդարյանի գնահատմամբ՝ «...սեփական հողամասերը մեծացնող եւ այլ ուղիներով հարստացող գյուղերի պետերը, իհարկե, ինչպես եւ պետք էր սպասել, աստիճանաբար ընդարձակում են նաեւ իրավասությունները, դառնում ինքնիշխան ու օրինազանց»²⁵:


9. Տապանաքար, նույնատիպ, 10 տող.

ԱՍՏ / ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ ՎԱՐԴԱՆ /
ՊՕՂՈՍԻ / ՓՈԽՏԵՅԵԱՆՑ, / ԾՆԼԵԱՂ
Է Ի 8 ՅԼՈՒՂՆՎԱՂՐԻ / 1888 ԱՄԻ ԵԻ
ՎԱՂ ԽՃԼԱՆԵԱՂ Ի / 18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1909/
ԱՄԻ Ի ՉԱԼԹՐ / ԳԵՂՋԻ: Գ. Թ. Խ.²⁶:

ԱՍՏ
ՀԱՆԳՁԻ
ՄԱՐՄԻՆ ՎԱՐԴԱՆ
ՊՕՂՈՍԻ
ՓՈԽՏԵՅԵԱՆՑ
ԾՆԼԵՒԹՅԱՆ
1888 ԱՄԻ ԵԻ
18 ՀՈԿՏ. 1909
ԱՄԻ ԻՋԱԼՐ
ԳԵՂՋԻ Գ ԹԽ

Վերջին համառոտագրված տառերի առնչությամբ Գ. Գրիգորյանը միանգամայն իրավամբ ենթադրել է. «Հավանաբար, փորագրող վարպետի կամ կանգնեցնողի անուն-ազգանվան գլխատառերն են»²⁷:

10. Տապանաքար, նույնատիպ, 5 տող.



.../... ՏԷՐ-/ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ / ՔՐԻ/
ՍՅՈՍ լԱՂ ՏՈՒՐ ԼԵԱՆՑ՝²⁸:

Եղծվածության պատճառով տապանագրության սկզբնամասը չի ընթերցվում: Քրիստոսատուրյանները շուրջ 80 տարի եղել են Չալթր գյուղի հոգեւորականները:

²⁴ Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմություն (1861–1917 թթ.), էջ 141:

²⁵ Տե՛ս անդ:

²⁶ «Դիվան հայ վիմագրության», պր. VIII, էջ 152:

²⁷ Տե՛ս անդ:

²⁸ Տե՛ս անդ:

Մի քանի արձանագրություն նույն գերեզմանոցից, որոնք մենք չենք տեսել, հաջորդական համարակալմամբ մեջ ենք բերում Գ. Գրիգորյանի կազմած ժողովածուից²⁹.

11. Տապանաքարին՝

ՀԱՅԿԱՆՈՒՇ / ԽՈՒՆԻՅԱՆ:

12. Տապանաքարին՝

ՎԱՐԴԱՆՈՒՇ / ԽՈՒՆԻՅԱՆ:

13. Տապանաքարին՝

ՌԵԲԵԿԱՅ / ԽՈՒՆԻՅԱՆ:

14. Տապանաքար, խաչաձև քանդակներով, 8 տող երեսին.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ / ՄԱՀՏԵՍԻ / ԱԾԱՏՈՒՐ / ԽՈՒՆԻՅԱՆԻ, / ԾՆԵԱԼ Ի 12 ՕԳՈՍՏՈՍԻ 1823, / ՎԱԽՃԱՆԵԱԼ Է / Ի 18 ԴԵԿՏ. 1904:

Խռիւյանները (Խըռխըռյաններ) եղել են առեւտրականներ, Չալթր գյուղում ունեցել են մի քանի խանութ: Խորհրդային տարիներին նրանցից շատերը ենթարկվել են հալածանքների: Հայտնի էին իրենց բարեպաշտությունը. այդ տոհմի մի քանի ընտանիք ուխտագնացություններ է կատարել Երուսաղեմի սրբազան վայրեր: Ահա վասիկ, դա է վկայում վերոհիշյալ վիմագիրը:

Նորնախիջեւանցիներին, առհասարակ դոնահայերին քաջածանոթ Երվանդ Շահազիզն ուշագրավ տեղեկություններ է հայտնում տեղի մահտեսիների վերաբերյալ. «Նախիջեւանցիք հեռաւոր ուխտագնացութիւն կատարում են՝ գնալով Երուսաղէմ, Մշոյ Ս. Կարապետ եւ Ս. Էջմիածին: Նոքա շատ են սիրում «հաջի»³⁰ դառնալ, ուստի եւ իւրաքանչիւր նախիջեւանցու մեծ բաղձանքն է, երբ նա հասակն առնում է, գնալ ս. քաղաքը, տեսնել ս. գերեզմանը, ս. գլխադիրը եւ արժանանալ ս. լոյսի տեսութեան: Սովորաբար գնում են Բարեկենդանին, մնում են Ս. Յակովբում ամբողջ Մեծ պասը, տեսնում են զատկական հանդէսները եւ վերադառնում են տուն.... Ս. Էջմիածին նոքա գնում են առհասարակ մեռնորհնէքին՝ Հայաստանեայց Եկեղեցու այդ նուիրական հանդիսին ներկայ գտնուելու...»³¹:

²⁹ Տե՛ս անդ:

³⁰ Արաբ. جاح՝ մուսուլման ուխտագնաց:

³¹ Ե. ՇԱՀԱԶԻԶ, Նոր Նախիջեւանը եւ նորնախիջեւանցիք, Թիֆլիս, 1903, էջ 180:

15. Դամբարանային կառույց երկաթե, կիսականգուն վիճակում, շուրջը՝ ձուլածո 10 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ / ՄԱՐՄԻՆ / ՔԵՐՈՎԲԷԻ / ՍԵՐՈՎԲԵԱՆ / ԽՈՒՌՏԱԵԱՆ, / ՈՐ ԾՆԵԱԼ Է / Ի 27 ՅԻՆԻՍԻ / 1883 ԱՄԻ, ՎԱԽՃ. 1899 ԱՄԻ Ի 29 / ՀՈԿՏԵՄԲԵՐԻ³²:

Ուշադրության արժանի է հանգամանքը, որ հայր ու որդի անվանակոչված են ի պատիվ հրեշտակների, որոնք հարատեւ փառաբանում են Աստծուն, պահպանում Նրա գահը, հովանի լինում երկրային խորաններին:

Խուռտայանները եղել են հմուտ երկրագործներ ու այգեգործներ, ինչպես գրեթե բոլոր չալթրցիները, որոնք զբաղվել են հացահատիկային բույսերի մշակմամբ, անասնապահությամբ, նաեւ եղել են ճանաչված արհեստավորներ:

Չալթր մեծ գյուղի եզերքին կանգնած է կարմիր աղյուսից կառուցված մի նորաշեն հուշարձան, որի վրա ագուցված է տեղական գորշավուն շերտաքարից պատրաստված խաչքար: Այն ունի դոնյան հայկական տապանաքարերին բնորոշ պատկերաքանդակներ. կենտրոնում քանդակված է լուսաշող խաչ, որի ճառագայթների թիվը կարծես խորհրդանշում է 12 առաքյալներին, ամենավերելում Սուրբ Երրորդությունը խորհրդանշող երկու կիսաշրջան է (Ղրիմ, Դոն): Դրանցից ներքեւ հավերժության երկու նշան է (արեւ, լուսին, որոնք իրար հետ պատկերվում են դեռեւս հայկական ժայռապատկերներում, ինչպես նաեւ միջնադարյան խաչքարերի վրա): Խաչի բնին պատկերված է թեք տախտակ՝ ինչպես բնորոշ է ռուսականին: Խաչի պատվանդանից՝ բնի երկու կողքերին վեր են խոյանում նիզակ ու գավազան: Խաչքարի կողքին՝ պատի վրա ամրացված սեւ վահանակի երկլեզու գրությունն ազդարարում է.


ՃԱՄՓՈՐԴ, ԿԱՆԳՆԻՐ ԵՒ ԵՐԿՐՊԱԳԻՐ
ԱՌԱՋԻՆ ԶԱԼԹՐՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ПУТНИК, ОСТАНОВИСЬ И ПОКЛОНИСЬ
ПАМЯТИ ПЕРВЫХ ЧАЛТЫРЦЕВ

Այդ հուշակոթողի մոտ կան մի քանի միանման շիրմաքարեր:

³² «Դիվան հայ վիմագրության», պր. VIII, էջ 152:

16. Տապանաքար, գորշ ավազաքարից, միայն թվականը.



1839

17. Տապանաքար, նույնատիպ, միայն թվականը՝ այն էլ հակառակ փորագրված.

1840

1840

Մշուսների վրա որեւէ գիր առկա չէ: Դա գուցե եղել է առաջին չաթրցիների կամքը:


РЕЗЮМЕ


Большое армянское село Чалтырь — административный центр Мясниканского района Ростовской области Российской Федерации, населенный армянами. Известно, что его основали армяне-переселенцы из Крыма в Донской бассейн по указу императрицы Екатерины II (1762—1796) в 1778 году. Армянские надписи Донского региона, в том числе и села Чалтырь, в 1967 году собрал и в 1999 году включил в VII том «Свод армянских надписей» (Российская Федерация) Г. Григорян.

Эпиграфическое наследие села пополнялось нами в 2017 году около одним десятком новых материалов из сельского кладбища. В них упоминаются представители известных родов в селе и регионе, которые сыграли важнейшую роль в жизни армянской колонии.

SUMMARY

The Armenian village of Chalter is a big village in Myasnikyan/Myasnikov region in Rostov-on-Don, Russian Federation. It is known that it was founded by the Armenians, who migrated from the Crimea, due to the order of Empress Catherine II (1762—1796) in 1778. The Armenian inscriptions of Don Region, as well as those of Chalter were collected by G. Grigoryan (in 1967) and afterwards were included in the “Book of Armenian Inscriptions” in 1999. The Chalter heritage of inscriptions was supplemented with approximately 10 new inscriptions, found in the cemetery of the village. They contain important information on the representatives of noble families, who greatly contributed to the establishment and prosperity of the community.





ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ 2019 Թ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ 2006-ին հիմնադրուած Մայր Աթոռի Հրատարակչական բաժինն այսօր եւս շարունակում է քարոզչական իր ուրոյն գործունէութիւնը՝ լոյս ընծայելով եւ տարածելով հոգեւոր-ուսուցողական գրականութիւն:

2019 թ. հրատարակուել են մի շարք քարոզգրքեր, աստուածաշնչագիտական եւ վարքագրական բնոյթի աշխատութիւններ: Հայագիտութեան շրջանակներում լոյս են ընծայուել պատմաբանասիրական, վաւերագրական, բնագրագիտական, թարգմանական բնոյթի ժողովածուներ եւ ուսումնասիրութիւններ:

Հրատարակչական բաժինն անդրադարձել է 2019 թ. յոբելեաններին՝ տպագրութեան պատրաստելով Կոմիտաս Վարդապետի եւ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակներին նուիրուած գրքեր: Նշենք նաեւ, որ այս յոբելեանների շրջանակներում լոյս է տեսել «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթի բացառիկ համարը, որն ամբողջութեամբ նուիրուած էր Հայոց յիշեալ մեծերին: Բացի այս, 2019 թուականը Վեհափառ Հայրապետի կողմից «Ընտանիքի տարի» հռչակուելու կապակցութեամբ հրատարակութեան են պատրաստուել ընտանիքի սրբութեանն ու ազգային աւանդական արժէքներին անդրադարձող ուսուցողական-խրատական բնոյթի գրքեր:

Շնորհակալութեամբ յիշենք Մայր Աթոռի հրատարակչութեան բոլոր հեղինակներին եւ աշխատակիցներին՝ խմբագիրներին, սրբագրիչներին, էջագործներին, տպագրիչներին, կազմարարներին եւ այլոց, որոնց միասնական աշխատանքի շնորհիւ ընթերցողի սեղանին են դրւում արժէքաւոր ու օգտակար հրատարակութիւններ:

Ըստ այսմ 2019 թ. Հրատարակչական բաժինը լոյս է ընծայել՝

Ա. Կոմիտաս վարդապետ (1869–1935 թթ.), Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, փաստաթղթերի ժողովածու, Գիրք ԻԱ., Կազմող՝ Գոհար

Աւագեան, Խմբ.՝ Տ. Աստղիկ արդյ. Կարապետեան, Ամատունի Վիրաբեան, Ս. Էջմիածին, 2019, 288 էջ:

** Նուիրուած է Կոմիտաս Վարդապետի ծննդեան 150-ամեակին: Ժողովածուի մէջ ընդգրկուել են Կոմիտաս Վարդապետի կեանքի, ուսումնառութեան եւ գործունէութեան վերաբերեալ արխիւային անտիպ նիւթեր:*

Բ. Ռազմիկ Դաւոյեան, Համատարած Թումանեան, Ս. Էջմիածին, 2019, 183 էջ:

** Գիրքը նուիրուած է Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակին: Հեղինակի բնորոշմամբ՝ գիրքը հիմնականում եւ գլխաւորապէս նուիրուած է հանճարեղ բանաստեղծի՝ հայ մարդ-անհատականութիւն ու հայ հասարակութիւն կերտելու կամովին ստանձնած առաքելութեանը: Կարեւոր բաժին է յատկացուած նաեւ Թումանեանի եւ Նարեկացու ստեղծագործական ու գաղափարական առընչութիւններին:*

Գ. «Քրիստոնէայ Հայաստան» երկշաբաթաթերթ, Բացառիկ՝ նուիրուած Կոմիտաս Վարդապետի եւ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150-ամեակին, Գլխաւոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոյցեան, Ս. Էջմիածին, 2019, 92 էջ:

** Թերթի այս՝ Բացառիկ համարը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ի մի են բերուած Կոմիտաս Վարդապետին նուիրուած վեց գիտահանրամատչելի նիւթեր. բաժինն աւարտուում է Կոմիտասի մասին նշանաւոր մարդկանց յիշատակութիւններով: Երկրորդ հատուածում ներառուած է Հ. Թումանեանին նուիրուած չորս յօդուած: Դրանցում կարելոր անդրադարձ է կատարուում Թումանեանի ժառանգութեանը: Միով բանիւ համարն էական նպաստ է Կոմիտասի եւ Թումանեանի կեանքով եւ ժառանգութեամբ հետաքրքրուողների համար:*

Դ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս. Հատընտիր պաշտօնական (2010–2018 թթ.), հատոր Բ., Կազմող՝ Տ. Արարատ Բենյ. Պօղոսեան, Ս. Էջմիածին, 2019, 720 էջ:

** Ժողովածուն հրատարակուել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան 20-ամեակի առիթով եւ ներառում է «Էջմիածին» ամսագրում կոնդակները, օրհնութեան գրերը, մաղթանքները, խօսքերը, քարոզները, ուղերձներն ու պատգամները: Բոլոր նիւթերն ունեն իրենց համապատասխան յղումները: Հրատարակուող*

փաստաթղթերն ընթերցողին հնարաւորութիւն են ընձեռում առաւել ամբողջական պատկերացում կազմել Հայ Եկեղեցու վերջին 10 տարիների գործունէութեան մասին՝ ծանօթանալով հովուական, ազգային հիմնարար խնդիրների, ինչպէս նաեւ Վեհափառ Հայրապետի հոգեփրկչական եւ ազգապահպան առաքելութեան հետ:

